This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
THE UNIVERSITY OF MICHIGAN

207

ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]
[illegible] 617

ՎԱՐԴԱՆ

ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ

[illegible]

Vardan, Arewelc'i 1170-1271
Metsin Vardanay ...

ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԲԱՐՁՐԲԵՐԴԵՑՒՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

ԾԱԽԻՒՔ ՆԵՐՔԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ԽԱՉԱՏՐՈՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵՎԻ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊԱՃԵԱՆ
[redacted] 612

ՄՈՍԿՎԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

1861

EREN
2017
Buhr

Согласно отзыва Господина Бероева печатать позволяется. Санктпетербургъ, 9 Октября 1860 года.

Ценсоръ Бекетовъ.

EKLN
207
01.10.99.

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՈԳԵԱՌԱՋՈՒԻ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԼԱԶԱՐԵՎԻ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկու էին օրինակք, յորոց արարաք զայս մեր տպագիր Տիեզերական Պատմութեան Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ՝ մին 'ի մերոյ գրադարանէ եղեալ և անթուական, իսկ միւսն ընդօրինակեալ 'ի Տփխիս յամի Տեառն 1814 Հրամանաւ արքեպիսկոպոսին Վրաստանու՝ Ներսիսի Աշտարակեցւոյ, 'ի գրչագիր օրինակէ հնգետասաներորդ դարու և նուիրեալ 'ի նմանէ Ռումեանցեան Թանգարանին, զոր մեք 'ի ձեռնամուխ լինելն մեր 'ի տպագրութիւն յիշեալ Պատմութեանդ բերել տուաք վասն բաղդատութեան *: Թէև այսպէս երկուց օրինակաց համեմատութեամբ 'ի լոյս ընծայեմք այժմիկ զայդ ցանկալի

* Յառաջ բերեմք աստանօր զպատճէն թղթոյ առաջնորդին Վրաստանու՝ տեառն Ներսիսի, զոր գրեալ էր սորա առ կոմսն Ռումեանցով 'ի նուիրելն իւրում նորին Թանգարանի զօրինակ Պատմութեանն Վարդանայ։ Թուղթդ այդ եդեալ տեսանի 'ի վերջն յիշեալ Պատմութեան՝ նովին իսկ գրչութեամբ գրեալ, որով և բնագիրն Վարդանայ, և ստորագր-

գործ հնախօսն և բազմահմուտ վարդապետին Վարդանայ, բայց և այնպէս ոչ միանգամայն ազատ ’ի թերութեանց գտանի այս մեր տպագիր. քանզի յոլով ուրեք երկոքին ձեռագիրք մեր խանգարեալ և ազճատեալ էին ’ի գրչաց։—Առ այս նուազ՝ ըստ ներելոյ հանգամանաց, լաւ համարեցաք՝ թէ և բազմօք թերի, ’ի լոյս հանել զընագիր մերոյ մատենագրիս, քան թէ ծածկեալ տեսանել զայն ընդ գրուանաւ։ Օ՛թերին լցուսցեն այլոց ընտրելագոյն և հնագոյն օրինակաց բաղդատութեամբ որ զկնի մեր են գալոց ուսումնասէրք։ Մեր էր իղձ ոչ անրեալ ձեռամբ այնորիկ, որ զկնի եկաց կաթողիկոս ամենայն Հայոց։ Հաւաստի եմք, զի քաղցրանալ ունի այդ թուղթ ’ի քիմս բազմաց ’ի մերազնէից, որոց տուեալ եղև ’ի կենդանութեան Հայրապետին վայելել ’ի սէր նորին, որպէս և ինձ՝ գրողիս զայսորիկ տողս։—Եւ այս է պատճէն նամակի նորա.

ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼ ԳՐԱՖ ՆԻԿՈԼԱՅ ՊԵՏՐՈՎԻՉ

ՈՂՈՐՄԱԾ ՏԷՐ

Ընդ դարս յաւիտենից աշխարհիս այսորիկ իսկապէս գովեստից արժանաւոր հոգեշարժ իղձ Ձերումդ Պայծառափայլութեան ըստ եգիպտականն իշխեցողի Պտղոմեայ գրասիրի ’ի լեզուս բազմաց ներբողեալ վերահուշակի։ Բայց ապաքախտ եմք առաւելապէս մեք ամենայն հոգևորականք Հայոց՝ ով պայծառափայլ կնեազ ողորմած Տէր, զի յաւուրս մեր բազմահարուստ գրատուն Արարատեան Աթոռոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի այնպէս կողոպտեալ յաւար մատնեցաւ, մին-

հաղորդ թողուլ արժանագով երկասիրութեան հեղինակիս զմերազնեայ գիտնականս և զօտարազգի հայերէնագէտս, որք 'ի հետազօտութիւն միջնադարեան պատմութեան դէպքերին, որք և — բաց 'ի հնախօս աւանդութեանց — նիւթ բազմադիմի գտանել ունին 'ի սմին առ 'ի ճոխացուցանել և յընդլայնել զտեսարանս պատմութեան ազգացն Արաբացւոց, Թուրքաց, Մուղալ Թաթարաց և Խաչակիր զօրաց յարշաւելն յետնոցս 'ի սահմանս Ասիոյ յազատութիւն փրկչական գերեզմանին, տեղեացն տնօրինա-

չև ինքն ահաւասիկ ամենապատիւ սրբազնագոյն պատրիարգն այնմիկ քրիստոսահիմն Աթոռոյն ամենայն Հայոց՝ Եփրեմ, ամենաջերմեռանդ փութով բազում աշխատեալ 'ի լրումն ըղձից Ձերումդ Պայծառափայլութեան, ցայս վայր ժամանակի հազիւ ուրեմն կարողացաւ երկուց՝ Վարդանայ վարդապետի Բարձրբերդցւոյ և Մատթէոսի երիցու Ուռհայեցւոյ առձեռն բերել զմի մի օրինակ միայն, զառաջինն գրեցեալ յամի Տեառն 1432, և զերկրորդն յամի 1688, յորոց ահա ըստ հրամանի Նորին բարձրագոյն Սրբազնութեան յամի 1814 աստ 'ի Տփխիս քաղաքի օրինակել տուեալ զմի մի յերկաքանչիւրոցն ամենևիմբ համեմատ հեղինակին՝ մատուցանեմ ամենախոնարհաբար 'ի սպասու Ձերում Պայծառափայլութեան 'ի ձեռն հնաւատարմին արարատեան աթոռոյ ամենայն Հայոց՝ հայկազն վեհազնեայ Յովակիմայ Եղիազարեանց։

Այո՛ արդարև երջանիկ բախտաւորութիւն համարեալ լինէր, եթէ գրատուն արարատեան Աթոռոյն նախկին իւր հաստատութեամբն լսէր զՁեր այդպիսի քաղցր ձայն հրաւիրանաց 'ի կոչ հանդիսի Ձերումդ բաղձացեալ ամենասիրելի գըրատան. բայց զի համառօտած բանութիւն աշխարհի յայս-

կանայց և քաղաքին սրբոյ։ Զընդարձա-
կագոյն տեղեկութիւնս զԱյ արդանեայ և
զնորին Պատմութեան բովանդակութե-
նէ ուսումնասէր ընթերցողն գտցէ 'ի
մերում թարգմանութեան գործոյ հե-
ղինակիս 'ի լեզու Ռուսաց, որ զկնի սա-
կաւուց տեսանել ունի զլոյս։

Մ. Լ.։

Մոսկվա
Մայիս, 1861։

միկ գարու տարաբախտ արար և զԱթոռ հայկազնեայց ա-
ռաւել ևս 'ի մասինս յայսմիկ, աղաչեմ՝ զերկուս զայսոսիկ
գրքոյկ փոքրիկ իբրև ընծայ կամ մանաւանդ նշմարանք ջեր-
մեռանդութեան կապտեալ գրատան Աթոռոյն արարատեան՝
ընկալնուլ մարդասիրաբար քեզ 'ի հաճոյս՝ ողորմած Տէր, և
տալ տեղի 'ի կարգս մեծամեծ մատենից բազմութեանց նա-
խագահ բազմելոց յաստիճանս գրատան Ձերում Պայծառա-
փայլութեան։ Եւ եթէ յաջողել ունիցի Տէր, պատհեալ ևս՝
որպէս նորին սրբազնագոյն քահանայապետութիւնն, նոյն-
պէս և մեք ոչ անփոյթ լինիմք հետևիլ յաղագս պլովքն ևս
սպասաւորելոյ Ձերումդ գրատան։

Ողջ լեր, և մեք իսկական ջերմեռանդութեամբ հոգւոյ մե-
րում եմք և մնամք, ողորմած Տէր, Ձերոյ Պայծառափայլու-
թեան ամենախոնարհ ծառայ և մշտնջենաւոր աղօթարար,

ՙՆուաստ արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու և այլոց
ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ։

Հարազատութեան գրքոյս ընդ հեղինակին բնում վկայեմք՝

ՄԻՆԱՍ արքեպիսկոպոս՝ միաբան Սրբոյ Էջմիածնի։

ՄԱՐՏԻՐՈՍ վարդապետ՝ առաջնորդ Ս. Թադէի առաքելոց վա-
նից և վիճակի։

Աւագ քահանայ կաթուղիկէ եկեղեցւոյն Թիֆլիզու Հայոց
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՂԱՄԱԶԵԱՆ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊԱՃԵԱՆԻ
Կարգաթիւ ________

ՆԱԽԵՐԳԱՆՔ

«Առաջ քան զամենայն[1] հայցեսցուք եղեալքս զէն, և սկսեալքս զանսկիզբն, և ստորնայինքս զվերնայինն՝ ոչ զորքանն զամէնն, որ ինքեան միայնոյ է[2]՝ այլ յանհատական փառաց փայլակն ինչ երևման, որով ուղղեսցուք զքաղձանս փափագման մերոյ, և այն՝ — միջնորդիւ և ոչ անձամբ իշխեցեալ — և է նա՝ բարեկամին Աստուծոյ, մեծն Մովսէս։ Նա[3] զի հեզ է քան զամենայն մարդիկ՝ մի զարշեսցի 'ի մէնջ տալ մեզ զձեռն և զգաւազանն որ յԱստուծոյ, յորմէ բուռն հարեալ իմաստնասցուք։ Որպէս նա՝ 'ի հարցանել զանուն Տեառն, լուաւ, եթէ նա է որ էնն, յորմէ բացան նմա խորք իմաստից նորա և անտի վստահացեալ՝ կո-

[1] Մեր օր. Նախ քան զամենայն խնդրեսցուք հայցեսցուք։ — [2] Ուսմ. օր. ոչ զորքանն զամէնն, այլ յանհատական փառաց։ — [3] Ու. օր. մեծն Մովսէս, զի հեզ է։

չեաց զնա Աստուած և Տէր, արարիչ և ստեղծիչ[1] ամենայնի: Զի Թեպէտ և բուռ 'ի Տեառնէ զհւրաքանչիւրն, այլ էիւն հասկացեալ հաւատոց[2], եթէ Աստուած է նա, որով էէ. զի [illegible] [illegible] և անուն նորա Տէր է, ~~զի յիւրմէ եղելոցն ճշմարիտ~~ և դատաւոր է[3]: Եւ զի միշտ էէ և ոչ է եղեալ. քանզի զգոյութիւն յայտնէէն[4] և Աստուածն զարարչութիւն՝ որպէս և զանուն գրոյն առաջին «Արարածք և Ծնունդք» կոչեաց. զի առինչք են սոքա՝ որպէս յայտնիչք և քարոզք, արարածք արարչին և ծնունդք ծնողին: Եւ գիտաց, Թէ մի և միակ էէն, քանզի եղեալքս բազում են. և ոչ է բազմութիւն առանց միոյն, բայց մինն է առանց բազմութեան: Եւ ոչ Թաքեաւ 'ի նմանէ իմաստք Երրորդութեանն. քանզի ծանեաւ, եթէ էն երեք է[5]՝ որպէս և յառնելն զմարդն և 'ի բաժանել լեզուացն և զայլսն[6]՝ խոստովանի զերեքն: Եւ այլ եղեալքս կամ 'ի վեր են քան զմինն և կամ զի աւելի են քան զերեքն, զի անկատարք են. իսկ էն երեք է՝ սկիզբն ունելով և մէջ և կատարումն, քանզի նա է Աստուած առաջին և միջին և վերջին: Եւ Թէ այլ ինչ գտանին այսպիսիք՝ նմանութիւնք են և ոչ իւրք հաւատալիք: Իմացաւ իսկ զէն[7] սկիզբն ամենայնի, քանզի ամենայն ինչ, որ եղեալ է և լինի՝ նախ էութիւն է սկիզբն և յէէն էանայ: Այլ և գիտաց, եթէ

[1] Ռուս. օր. և արեղծող ամենայնի: — [2] Ռ. օր. այլ և իմ հաւաքացեալ հատորս: — [3] Ռ. օր. զի յետոյ եղելոյն էջեան: — [4] Ցերկուսին օր. „զգոյութիւն յայտնէ զէն", զոր մեք ուղղագրեցաք, որպէս 'ի վեր անդր տեսանել ունի ընթերցողն: — [5] Ռ. օր. փանզի ծանեաւ, եթէ է են երեք է: — [6] Ռ. օր. և այլն: — [7] Ռ. օր. իմացանելեան սկիզբն են ամենայնի:

պարզ է էն, որով զեղեալքս պատմեաց, Թանձր և մարմնոյ ծանեաւ [1] ։ Իսկ եթէ բարի է էն՝ և անփոփոխ և անխախտան և անորակ և անքանակ և անորպիսութիւն, քանզի էն բարի ոչ կամեցաւ միայն ունել զբարին, այլ արար բարի արարածս վայելել յանծախելի բարիս արարչին ։ Զի [2] սկսանի այսպէս. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր». — ոչ պատմելով սոցա [3] նիւթ, զի անկարօտ է արուեստաւորն ։ Սակայն արար չորս սկզբունս — ջերմ և թեթև զհուր և զօդ, ցուրտ և ծանր զջուր և զերկիր՝ ունելով ցամաքութիւն և գիջութիւն ։ Նա 'ի սկզբանէ ատաց, զի անժամանակ ցուցցէ [4] զառնելն, քանզի երիւք իրօք [5] պատկերացոյց յինքեան զեղեալն — անժամանակութեամբն և անքանութեամբն և անտեղութեամբն [6] ։ Զի 'ի սկզբանէն ոչ ունի ժամանակ՝ ոչ տարի և ոչ օր և ոչ ժամ և ոչ մասն հատուածի [7]. և ոչ ոք է բաւական գիտել զեղեալքս ամենայն, և ոչ է'ի տեղւոջ վերայ՝ որպէս ինքն Աստուած է ։ Իսկ փոփոխմամբն և շարժմամբ և քանակաւ և որակութեամբ և եղելութեամբն զատչին 'ի բնութենէ արարչին ։

Արդ իմաստութիւնն Աստուծոյ՝ արուեստ և զօրութիւն առնող [8], և բարութիւնն՝ նիւթ անմարմին, զոր նիւթացոյց և տեսակացոյց կամքն առատ և հնարաւոր, և յոչէից ընչացոյց զձև երկնի և երկրի՝ յան-

[1] Բռամ. օր. որով զեղեալքս պատմեաց Թանձր և մարմնաւոր ծանեաւ ։ — [2] Բռ. օր. զոր սկսանի այսպէս ։ — [3] Մեր օր. ոչ պատմելով սորա նիւթ ։ — [4] Բռ. օր. զի անժամանակ ցուցանէ զառնելն ։ — [5] Բռ. օր. երիւք իրօք ։ — [6] Բռ. օր. և անտեղութեամբ ։ — [7] Բռ. օր. և ոչ մասն հատուածի ։ — [8] Մեր օր. և զօրութիւն առնել ։

պատրաստ հիման վերայ եդեալ։ Գանզի երեք կամարք են մի քան զմի [1] վերադոյն հրեղէն և ջրեղէն 'ի վայր քան զնա, և օդեղէն՝ որ է հաստատութիւնդ, — որք երեքեան հողմով խառնեալ՝ շուրջ գան բոլոր զերկրաւ [2]։ Եւ երկիր 'ի վերայ ինքեան ունի զջուր հաստատունն՝ հողմով անդադար 'ի վեր փչեալ, զոր իւր բնական ծանրութիւնն 'ի վեր չթողու թռչել, և յանդընդոց 'ի վեր փչումն 'ի վայր չթողու անկանել։ Եւ բանն Աստուծոյ բարձեալ կրէ թեթևութեամբ զբոլորն։ Եւ ընդ լինել երկնի կենդանածնեցաւ հրեշտակաց հրեղինաց [3], որպէս և գաւառն է նոցա հրեղէն՝ տասնեակ դասուք զետեղեալ, տեղեաւ և փառօք և զօրութեամբ զանազանեալք արտաքոյ չորիցս տարրաց՝ ըստ որում անայլայլականք են և անմահք։ Եւ է երկինն վերին վարագոյր ընդդէմ նոցա և Աստուծոյ, որ է անասելի օրինակին։

Եւ աստն իմաստունք, թէ յառաջին շուրջն [4] երկնից գոյացաւ բնութիւնն, որ է արուեստն Աստուծոյ արարող զօրութիւն, յետ Աստուծոյ թերևս ներգործութիւն տարերացս չորից։ — Եւ յերկրորդն շուրջ կառոյց զհաստատութիւն և վերացոյց զկէս ջրոյն առ երկու իրս պիտանացու, զի բարձցէ զծանրութիւն երկրի զառաւելն, և զի արգելցէ զկիզողութիւն հրեղէն երկնից 'ի մարմնաւորացս։ — Եւ յերրորդ շուրջն ակնարկելով կամացն Աստուծոյ՝ շարժեաց զբոյս և զբանջարս, որոյ սկիզբն բորբոս հողոյն և կատարումն

[1] Ռուս. օր. մին քան զմին վերադոյն։ — [2] Ռ. օր. շուրջ գան բոլորելով զերկրաւորս։ — [3] Մեր օր. կենդանածնեցաւ հրեշտակօք, որպէս և գաւառն է նոցա։ — [4] Ռ. օր. Եւ յառաջին շրջան։

սերմն որ 'ի նմա և գծաուս, որոյ սկիզբն [1] մամուռն մնա 'ի բոյսս, և կատարումն արմատնքին մերձ 'ի կեն-դանիս, յորս արու և էգն է [2] ։ — Եւ 'ի չորրորդ շրջմանն եղև հրաման Տեառն 'ի վերայ լուսոյն, որ խալածն է յարփւոյն։ Եւ եհատ զնա յերիս մասունս և յամանս բազումն՝ — յարեգակն [3] և 'ի լուսին և 'ի բազմութիւն աստեղաց. և յերկոտասան կենդանակերպս [4] եղեն ճա-նապարհ արեգական և լուսնի, և եօթն այլ ևս աս-տեղաց։ Երիւքն [5] առնէ արեգակն զարուն, և յայլ ևս երիւն բարձրացեալ՝ առնէ ամառն, և 'ի Կշիռն ե-լեալ՝ ցածնու երիւքն, գործէ աշուն. և ևս ցածեալ [6] ընդ հարաւ՝ կազմէ [7] ձմեռն։ Եւ յաղագս կարի բար-ձրութեան և ցածութեան աշխարհաց աճէ տիւն մինչև 'ի քսան ժամն և պակասէ մինչև 'ի չորսն։ — Եւ որպէս ասեն իմաստունք՝ չորեքտասան կլիմ է աշխարհս, այսինքն՝ բաժինս. և եօթն կլիմն անբը-նակ է մարդկան, զի վասն յոյժ ցածութեան երկրին ցուրտ է և խաւար, զի միշտ վեց ամիս տիւ է՝ 'ի Խո-յէն մինչև 'ի Կշիռն, և վեց ամիսն գիշեր՝ 'ի Կշռէն մինչև 'ի Ձուկն. իսկ խորին Հնդիկք միշտ հասարակ է՝ — ոչ աճեն ժամքն և ոչ պակասին, այլ մնան երկո-տասանք [8] ։ — Իսկ հնգերորդ շրջմն եղեալ 'ի վեցն [9]՝

[1] Ոուլ. օր. որոյ սկզբն մամուռն։ — [2] Ո. օր. ունի „և կատարումն յարմարքն". իսկ 'ի մերում օրինակի պակասի բառս „յարմարքն", զոր մեք „արմատքնն" ուղղագրեցաք, որպէս և իմաստ բանին ցուցանէ։ — [3] Ո. օր. յարեգական։ — [4] Մեր օր. յերկոտասան կենդանատեսակ կերպս։ — [5] Ո. օր. Երեքն առնէ արեգակն։ — [6] Ո. օր. և ևս ցածացեալ։ — [7] Մեր օր. կազմէ ձմեռն։ — [8] Մեր օր. այլ մնան բաժանէ։ — [9] Մեր օր. ունի „իսկ հնգեկերորդ շրջեալ 'ի վեցն". Ո. օր. ունի „իսկ հնգեկերորդ շրջանէն 'ի վեցն". զոր մեք ուղղագրեցաք, որպէս տեսանել ունիս 'ի վեր անդր։

ել հրաման 'ի ջուր և յերկիր վասն կենդանեաց՝ ըս-
կըսեալ 'ի կառաքոյս և 'ի սպունկս և կատարեալ
'ի մարդն — 'ի կատարեալ կենդանին բանաւորու-
թեամբ, —'ի հազար ազգս՝ գլխաւորութեամբն իւր-
եանց լեւիաթանաւ որ 'ի ջուրս, և բեհեմոթաւն որ
'ի ցամաքային անապատս: Նւ այս է՝ ըստ Արիստոտե-
լի, հոգի ընդհանուր — սնող գոյութեան ամենայնի:

Նւ այլ բնութիւնն շարժէ զգունտն երկնից, և նա
զժամանակն, և նա զտարերսն [1], և նա զտունկս և ըզ-
կենդանիս և զհալական նիւթս — զոսկի և զարծաթ
և զակն և զայլսն, զոր գործէ բնութիւնն ծծմբով և
և ժիպակաւ՝ որպէս ասեն գիտողք: Իսկ 'ի գլուխն
հասուցեալ զանդամոցն յաւրինուածն — որպէս քաջ
պատկերագիրքն զի յոտիցն սկսանին — հրաշագործէ
իմն նոր յաւրինելով բնութիւնս յերկնէ և յերկրէ և որ
'ի մէջս են: Վեցից ձեւաց խառնարհելոց 'ի միոյ պատ-
կերի շինեալ, զի մինն նմանիցէ երիցն [2], որովք մի
հաւատացի [3] ստեղծողին բնութիւնն և էութիւն և
աստուածութիւնն: Գտանելով որ ինչ լինելոցն է զմե-
ղանն, այլ ոչ կարէր արգելուլ Նախագիտութիւնն
զշարժումն յորդառատ բարերարութեանն. այլ և'ի
նոյն իսկ բարերարութենէն ոչ հրաժարէր ստիւք զալ
հիւանդատես այնմ, զոր ձեռօքն ստեղծ. և տուեալ
զնա երկրի՝ մատնէ զաւհճին — մահու կարծէ զմեղ-
սըն [4], և հանեալ զշարութիւնն 'ի նմանէ և ցուցանե-
լով նմա [5] զմեաս օծին և զնենգութիւն չարին՝ այլ մի

[1] Մեր օր. և նա զտարերն: — [2] Ու. օր. զի մինն նման էցէ երիցն: —
[3] Մեր օր. որովք մի հաւատացի բնութիւնն ստեղծողին: — [4] Մեր օր. մա-
հու կարծել զմեղանն: — [5] Մեր օր. և ցուցանել նմա զմեաս օձին:

լուսիցէ նմա, գիտելով զոր ինչ առնելոցն էր զվերըս-տին նորոգումն [1]։ Այլ և ոչ եւս նմա՛ գութն իւր կա-տարեալ զվճիռ մահուն, զոր եհատ նմա. զի ահա ոչ մեռաւ հոգին, այլ հողն հող եղև՝ և բնակիչն մնաց։ Եւ արուեստաւորն կարող [2] է և գթած. և նիւթն 'ի ձեռին նորա, և ժամանակն անմոռաց յա-րութեան 'ի նմա։

Սուրբք սրբոց, գթութիւն և ողորմութիւն քեզ՝ փառք և գոհութիւն։

[1] Մեր օր. զենու օձին, այլ և ոչ եւս նմա փառքն իւր լուսաւորել։ — [2] Ու. օր. և արուեստաւորն լուսաւորեալ է։

Արդ սրովբէիւք բոցապատ ա̀րարեալ Աստուծոյ [1] զդրախտն, որ կայ ընդ արեւելս յերկրի արմատացեալ 'ի կատարս լերինն բարձու, որ հաւասար է գնտին լուսնի՝ անծուրելի պտղով և անթառամ սաղարթիւք, որ ոչ ներգործէ արեգական [2] տիւ և գիշեր, այլ յարփւոյն պայծառանայ և կամ՛ նշողիւք փառացն Աստուծոյ՝ որպէս զմեծ գործ նորա և հրաշալի տեղի, որում ոչ համարեցաւ [3] արժանի յանցաւորն [4] տեսլեան անգամ. այլ յամենայն կողմանց վառեաց զնա հրով՝ 'ի կողմանց և 'ի վերուստ, որպէս պշանթական հուրդ, որ յորժամ անգանի՝ զնիւթն և զտեղին ծածկէ յաչաց, զի մի՛ ժպրհեսցի ոք խնդրել զնա առանց կամացն Աստուծոյ: Ուստի զամն երեսուն ողբացեալ Ադամայ Եւայիւ [5] զանխորհրդութիւնս իւրեանց կուսութեամբ՝ և ապա գիտացին զմիմեանս, յանսանոցն անգեալ յանարգանս. և ծնան զԿայէն՝ հիւանդ ծնողացն ցաւած ծնունդ, որպէս ասեն բժիշկք՝ երբ միով կլիմաւ կոչեցեալք[6]: Եւ զկնի երեսուն ամաց ծը-

[1] Մեր օր. բոցապատ արարեալ սոյն զդրախտն: — [2] Մեր օր. որ ոչ ներգործէ արեգակն: — [3] Մեր օր. որում համարեցաւ արժանի: — [4] Մեր օր. արժանի զանցաւորն տեսլեան անգամ: — [5] Մեր օր. Ադամայ և Եւայիւ: — [6] Մեր օր. ունի. „Երբ միով կլիմաւ կոչեցեալ". Բ. օր. ունի՝ որպէս 'ի բնագրին եդաք: Եւ մին և միւս ընթերցուածն տարտամ ցուցանեն զիմաստ բանին:

նան զԱբէլ և զԱբէլուհի՝ քոյր նորա. և զնա այլ ևս երեսուն ամի՝ սպան Կայէն զԱբէլ, քանզի ուսեալ 'ի ծնողացն պատուել զաստուած պատարագօք պատուականաց և առաջնովք, և վասն սիրելոյն[1] զմիմեանըս՝ ընդ անձին և ընդ եղբօրն մատուցանել: Իսկ Աբէլի ածեալ յանդրանկաց գառանց և 'ի պարարտաց՝ զեւր և զեղբօրն, վասն որոյ հայեցաւ[2] Աստուած նախ 'ի Աբէլ և 'ի պատարագս նորա, և 'ի Կայէն ոչ հայեցաւ[3], զի զյոռին[4] բերեր և ընդ անձին միայն և ոչ մասն եղբօրն: Եւ ոչ եղև ընկալեալ 'ի վերուստ հրով՝ որպէս զԱբէլին: Վասն որոյ 'ի կարծիս եղեալ Կայէն վասն Աբէլի, թէ առնու զնա 'ի դրախտն Աստուած վասն ընդունելի պատարագին և նախանձու վառեալ՝ սպան զնա: Եւ իմացեալ Ադամայ և Եւայի սգացին զնա ամս հարիւր քառասուն: Եւ 'ի կոչելն Աստուծոյ ողորմութեամբ զԿայէն յապաշաւանս՝ ստեաց և յաւել զմեղս 'ի վերայ մեղաց. և առեալ պիսակ 'ի ճակատն՝ որպէս ասեն, և դողդոջումն յամենայն անդամսն: Եւ ծնեալ որդիս և թոռունս՝ յերկարեաց տանջանքն[5], և նախատանաւք մեռանի: Եւ որդիք նորա Ենովք և Գայերիդատ և Մայիէլ և Մաթուսաղա և Ղամէք նման հօրն չարք էին: Որպէս Ղամէք խոստովանի կանանց՝ այր և երիտասարդս սպանեալ, զոր ասեն եղբարք յարդարոյն Ենովքայ, զոր սպան և առ զկանայս նոցա, և ոչ թէ զԿայէն և զորդի նորա, որ նը-

[1] Բուռմ. օր. և վասն սիրոյն զմիմեանս: — [2] Մեր օր. վասն այսորիկ հաճեցաւ: — [3] Մեր օր. և 'ի Կայէն ոչ հաճեցաւ: — [4] Բ. օր. զի զորսն եբեր: — [5] Մեր օր. և յերկրաչեաց եղեալ տանջանօք . . . մեռանի:

ման հօրն ասեն, զոր Աստուած ասաց ոչ ումեք ըս-պանանել զնա։ Այս Գամերայ որդիք՝ Թովբէլ և Յովբաղ և քոյր նոցա Նոյեմի [1] արարին քնարս և երգս և սնգոյրս, և գտաւ 'ի նոցանէ դարբնութիւն պղնձոյ և երկաթոյ։ Իսկ զկնի երկերիւր և երեսուն ամաց ելեցն [2] 'ի դրախտէն եղև որդի մխիթարու-թեան Ադամայ՝ Սէթ, որ յետ երկերիւր և հինգ ա-մին ծնանի զԵնովս, որ և վարս ուղիղս ցուցեալ՝ յու-սացաւ յԱստուած հատուցանել նմա և կոչեաց զա-նուն տեառն Աստուծոյ յօգնութիւն։ Եւ արար գիր և գրեաց յերկուս տախտակս պղնձիս և խեցիս. և մարգարէացաւ, եթէ երկիցս անգամ [3] անցանի աշ-խարհս ջրով և հրով։ Եւ գրեաց զայս և զանուանս ամենայն իրաց, զոր եդեալ էր Ադամ, զի պահեսցեն 'ի պնակիտսն։ 'Ի ջրոյն՝ ասէ, պղինձն մնասցէ, և 'ի հրոյն՝ թրծեալ աղիւսն խեցեայ։ Եւ վասն այսո-րիկ աստուած կոչեցաւ և որդիք նորա որդիք աստուծոյ։ Այլք ասեն, յորդւոց նորա երկերիւր անձինք յիշե-ցին զկեանս դրախտին և ելին 'ի լերինս պահել զկու-սութիւն, և աստի կոչեցան որդիք աստուծոյ. և ապա ձանձրացեալք իջին 'ի լեռնէն Ահերմոնի, և հալա-ծեցին զնոսա եղբարքն իւրեանց։ Եւ որդիք Կայե-նի և դստերքն 'ի քնարս և 'ի սնգոյրս պատրեալ [4] ըզ-նոսա՝ առ ինքեանս դարձուցին առնուլ [5] կանայս, զորս ընտրեսցեն. և արարին այնպէս՝ անցեալք զուխտին

[1] Մեր օր. և քոյր նոյա Նոյեմ։ — [2] Մեր օր. ելանելոյն 'ի դրախ-տէն։ — [3] Ու. օր. եԹէ երկու անգամ։ — [4] Մեր օր. և 'ի սնգոյրս պատրե-ցին զնոսա։ — [5] Մեր օր. առնել կանայս։

Աստուծոյ, որ եղեալ ընդ նոսա — մի՛ առնել[1] խնամութիւն ընդ նոսա։

Եւ ասեն՝ զկնի հազար ամին ելիցն 'ի դրախտէն որդիքն Կայենի եդին իւրեանց թագաւոր՝ Սամիրոս[2] անուն, նոյնպէս և որդիքն Սեթայ՝ Աղորոս անուն, որ եգիտ զթիւն կենդանակերպիցդ և զմոլորակացդ. և 'ի սմանէ անուանեցաւ քաղդէութիւն, որ է հմայութիւն աստեղաց։ Եւ անտի թուեն տասն թագաւոր, և ժամանակ նոցա հազար հարիւր և ութսուն ամ։ Ենովս հարիւր և իննսուն ամաց ծնանի զԿայնան։ Կայնան հարիւր և եօթանասուն ամաց ծնանի զՄաղաղէլ։ Մաղաղէլ հարիւր վաթսուն և հինգ ամաց ծնանի զՅարեդ։ Յարեդ հարիւր վաթսուն և երկու ամաց ծնանի զԵնովք։ Ենովք հարիւր վաթսուն և հինգ ամաց ծնանի[3] զՂամէք։ Ղամէք հարիւր ութսուն և ութ ամաց ծնանի զՆոյ։ Եւ եղեալ[4] եօթն հարիւր յիսուն և երեք ամաց՝ մեռաւ յառաջ քան ըզհայրն քսան և հինն ամօք։ 'Ի հազար վեց հարիւր վաթսուն և վեց ամի ելիցն Ադամայ ծնաւ Նոյ, յորում ժամանակի բազմացան չարիք և յաճախեցին անիրաւութիւնք. զի նախ եգիտ սատանայ իւր զէն զորկրամոլութիւն, ապա զկնասիրութիւն, ապա զսպանութիւն։ Եւ զայս արար սատանայ, զի 'ի շատ խառնիցն լինին կանայք անծնունդ[5], և կենդանիքն սպանանեն զմիմեանս և բառնայ մարդկութիւն. քանզի քան

[1] Մեր օր. որ եղեւալ նոցա՝ մի՛ առնուլ խնամութիւն ընդ նոսա։ — [2] Որ. օր. Սափրայ անուն։ — [3] Աստանօր յերկուսին օրինակս մեր ոչ յիշի անուն Մաթուսաղայի, որդւոյ Ենովքայ։ — [4] Մեր օր. և եղեւ եօթն հարիւր։ — [5] Մեր օր. ապա զապականութիւն, և կենդանիքն ապականէին զմիմեանս։

այր մեռանէր վասն միոյ կնոջ, և ընդ կանայսն միայն ունէին զխաղաղութիւն, ասէ սուրբ Հայրն Եփրեմ։ Իսկ խնամք տեառն ընդդէմ չարին զբազում խառնման առնէր պատճառ ծնանելոյ հսկայիցն անձոռնեաց։ Եւ զի 'ի կանանցն եղև կամաց [1] ախտն' 'ի ծնանելն ըղյաղթանդամ կորիւնսն' մեռանէին մարքն և այրերին ծնեալքն. որ և անձեցեալք և 'ի կոյտս իւրեանց հասակին հասեալք' հպարտացեալք [illegible] անուանէին զինքեանս։ Վասն որոյ զի Աստուած բազմակեաց [2] արար զնոսա, զի փոխանակ դրոյ լինիցին զաւակացն և շատս [3] ծնանիցին։ Աղքա վհատացեալք ընդնաւ ակն ոչ ունէին մահու [4], զոր կարծեալ արարչին և առեալ յաղտեղեալ անձանց նոցա զհոգւոյն շնորհըն' ասաց. «Եղիցին աւուրք դոցա հարիւր քսան, և հոգի իմ մի՛ մնասցէ առ դոսա [5]». և հարիւր քսան ամն ոչ հասարակաց մարդկան յայնմ հետէ, այլ արանց ժամանակին ներումն ապաշխարանաց [6]։ Եւ եղեալ Նոյի հինգ հարիւր ամաց' անբամբաս կենօք յանապատի բնակելով կուսութեամբ, հրամայէ Աստուած կին առնուլ և որդիս ծնանել և արկղ շինել, որ վերաբերի Ջուրց։ Եւ եղև ինքն վեցհարիւր ամաց' ապաշխարութիւն տուեալ ժամանակին. և զի ոչ ապաշխարեցին' կարճեաց զժամանակն [7], զոր առեն ինն հարիւր վաթսուն և երկու ամացն Մաթուսաղայի'

[1] Յուն. օր. և զի 'ի կնոջանեացն եղև կամաց։ — [2] Ա. օր. բազմակեաց արար զնոսա։ — [3] Մեր օր. և շատ ծնանիցին։ — [4] Ա. օր. այքա վհատեալք բնաւին ոչ ունէին մահու։ — [5] Մեր օր. և հոգի [illegible] իմ ոչ մնասցէ 'ի դոսա։ — [6] Ա. օր. ներումն յապաշխարանաց։ — [7] Ա. օր. կարճեաց զժամն։

յաւելեալ և անցեալ 'ի ներքոյ Ջրոյն. վասն որոյ 'ի վեց հարիւր ամին եղև Ջրհեղեղն և կորոյս զամէն [1] կենդանիս՝ բայց յայնմանէ, որ ընդ Նոյի կային 'ի տապանին ընդ ութ բանականսն:

Այլ զթիւ յամելոյն Ադամայ 'ի դրախտին ոչ ոք կարէ գիտել [2], մի՝ զի ժամանակագործ արեգակնս այս ոչ սպասաւորէր դրախտին, և երկրորդ՝ զի որքան անմեղ էր Ադամ [3], ընդ անմահսն էր նորա վիճակն, որք չեն ընդ տարեօք, իսկ զկնի յանցմանն ոչ յամեաց 'ի դրախտն, զի ընդ մահու վճռաւ եմուտ և Աստուծոյ մեռաւ՝ գերագմանի պէտք էին և դրախտն անմահից էր տեղի, վասն որոյ յերկիր հանեալ՝ մտանէ ընդ ժամանակաւ [4]: Եւ անտի համարէ Հոգին զտարիսն 'ի ձեռն Մովսիսի, որ լինի ըստ եօթանասնիցն Թարգմանութեան՝ յելիցն 'ի դրախտէն մինչև ցՋրհեղեղն երկու հազար երկու հարիւր քառասուն և երկու ամ, և ըստ Եբրայեցւոցն հազար վեց հարիւր յիսուն և վեց ամք՝ պակաս եօթն հարիւր ութսուն և վեց ամօք: Եւ զպատճառն ասեն, թէ կնաւէրք էին Հրէայքն՝ կարծեցին զտարիս ամուսնանալոյ առաջնոցն, զի մի՛ ոք արգելցէ [5] զնոսա 'ի տղայութեան առնուլ կանայս, քանզի անմիաբանութիւն նոցա նախ քան զամուսնանալն է: Զի զԱդամ հարիւր և երեսուն ամաց ասեն ծնանել զՍէթ, և Սէթ հարիւր և հինգ ամաց ծնանել զԵնովս: Իսկ յետ ամուսնութեան զժամանակն զոյգ բե-

[1] Ոսկ. օր. և կորոյս զամենայն կենդանիս:— [2] Ու. օր. ոչ կարեմք ասել:— [3] Ու. օր. զի որքան Ադամ անմեղ էր 'ի դրախտին, ընդ անմահսն:— [4] Մեր օր. մտանէ ընդ ժամանակաւ:— [5] Մեր օր. զի մի՛ արգելցէ զնոսա 'ի տղայութեան:

րեն եօթանասնիցն, և 'ի Յարեդէն և 'ի Մաթուսաղայէն և 'ի Ղամեքայն ւՆաբանին դարձեալ, որ առաւել յանդիմանէ զնոցա ստութիւն. զի թէ կըրսերքն շատ պահեցին զողջախոհութիւնն, քանի՞ առաւել աւագքն և լաւքն [1]։

Արդ՝ Նոյ լեալ հինգ հարիւր ամաց ծնաւ զՍեմ, զՔամ և զՅաբեթ, որովք ապրեցաւ 'ի ջրոյն, որ եղև 'ի վեց հարիւր ամին իւրոյ։ Իսկ զկնի ելիցն 'ի տապանէն եկաց [2] այլ ևս երեք հարիւր յիսուն ամ և ծնաւ՝ ասեն, որդի մի այլ՝ Մանիտոն անուն, և դուստրր մի՝ Աստղիկ անուն, որոց բաժանեաց զամենայն աշխարհս, նախ յերիս հատեալ բաժինս ըստ երից որդւոցն, որք ելին 'ի տապանէն — յԵւրոպիա, 'ի Լիբիա և յԱսիա։ Եւրոպիա ծածկեալ ասի, քանզի մասնեաց Նոյ [3] զարևմուտս՝ կցելով 'ի նա յարևելից յԵւմայոն լեռնէ, և ետ զնա Յաբեթի, որ ձգեցաւ ևս մինչև ցլերինս Կասբից և Կովկասու՝ և լցին զկղզիս։ Իսկ մասն ինչ յարևմտից հատեալ՝ ետ Մանիտոնի, որ խնդրեաց յոսկերացն Ադամայ, զոր ունէր Նոյ 'ի տապանն, և ետ նմա զլառունս ծնկացն և գնաց. որ և եգիտ զհաւահմայութիւն և նա է հայր բնակչաց Բրիտանիացւոց [4]։ Իսկ Լիբիա ըն ծոծէն ասի, որ է մեծ սահմանակողմն հարաւոյ [5] յԵգիպտոս, և ամենայն Հնդկաստան և Եթովպիա, զոր ետ Քամայ. և զերկիրն խնկաբեր, որ կոչեցաւ Երջանիկ Արաբիա՝ ետ Աս-

[1] Մեր օր. շատ պահեցին զողջախոհութիւն առաւել աւագքն և լաւքն։ — [2] Ու. օր. և զկնի ելիցն 'ի տապանէն այլ ևս երեք հարիւր։ — [3] Մեր օր. փանկէ ծնանիւաց Նոյա։ — [4] Մեր օր. Բրիտանիացւոց։ — [5] Ու. օր. որ է մեծ սահման կողմն հարաւոյ։

տղըկայ զատեր իւրոյ [1], ուստի եկն տիկինն Սաբայ. զի յայնմ հետէ կանայք ժառանգեն զնա։ Իսկ Եսիա ափռուածայն ասի, որ է արեւելք՝ տայ զնա Սեմայ 'ի Կարմիր ծովէն եւ յԵւփրատայ եւ 'ի Պաղեստինայ եւ յԱ֊սորւոց [2] մինչեւ ցՊարթեւս եւ ցՎրկան եւ ցելսն ա֊րեւու։ Տայ նմա եւ զոսկերս նախաստեղծիցն արկեղք, զոր 'ի բառնանալն Քամայ 'ի վերայ նորա՝ թաղէ 'ի Գողգոթայ եւ 'ի Բեթղեհէմ. եւ եդ նզովս, զի մի՛ յա֊փըշտակեսցեն զմիմեանց։

Խնդութիւն եւ խաղաղութիւն արարածոց քոց եւ բարի բաժին՝ Տէր ողորմութեանց [3]. — քեզ պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս, ամէն։

Յետ աշխարհաւեր ջրոյն յերկրորդում ամին ծը֊նաւ Սեմ զԱրփաքսադ 'ի հարիւր եւ երկու ամին իւ֊րոյ։ Արփաքսադ 'ի հարիւր երեսուն եւ հինգ ամին ծը֊նաւ զԿայնան։ Սա բազմացոյց զքաղդէութիւն եւ ե֊գիտ զկախարդելն աստեղաւք, վասն որոյ որդիքն իւր աստուած համարեցան [4] զնա եւ արարին նմա պատ֊կեր կենդանութեան եւ պաշտեցին զնա։ Կայնան հա֊րիւր քառասուն ամաց ծնաւ զՍաղայ։ Սաղայ հա֊րիւր երեսուն ամաց ծնաւ զԵբեր։ Եբեր հարիւր ե֊րեսուն եւ չորս ամաց ծնաւ զՓաղեկ, որ է բաժանումն. քանզի անհաւան լեալ վիճակացն՝ տուելոցն 'ի Նո֊յէ, վիճէին՝ մինչեւ դարձեալ բաժանեցին ըստ բազ֊մին եւ ըստ սակաւին աճման ազգի մարդկան։ Եւ ա֊պա միաբանեալք ընդ միմեանս սիրով՝ խորհեցան զը֊

[1] Բուռմ. օր. Արաբիա եւ Աստղկայ գաւառին իւրոյ։ — [2] Մեր օր. եւ յԱ֊սորեաց։ — [3] Մեր օր. տէր ողորմեաց։ — [4] Մեր օր. Աստուած համարեցին։

նայլ յարևելս տեսանել զդրախտն, զոր լուեալ էին՝ թէ անտի ելեալ էին նախաստեղծքն։ Եւ իբրև չո-գան զշատ աւուրս, և ահա ծով լայնանիստ անջըր-պետեալ էր զնա յերկրէ. և դարձան անտի՝ խորհե-լով 'ի մտորս, եթէ վասն մեղաց ջուրն աւերեաց զեր-կիր և անց ծովն ընդ մէջ դրախտին, և մեղքն այն այ-սօր գտանի 'ի մեզ[1] և ոչ պակասէ յաշխարհէ։ Եւ արդ եկայք շինեսցուք մեզ աշտարակ պահել զմեզ 'ի գալ պատուհասի մեղաց ջրոյ։ Եւ էր Փաղեկ ամաց հարիւր երեսուն և չորից և ծնաւ նմա Ռագաւ։ Եւ ե-կեալ իշխանացն աշխարհի յերկիրն Սենաար 'ի դաշ-տըն Բաղանէ՝ արկին հիմն քաղաքի և շինեցին զնա վաղվաղակի։ Եւ սկսան ապա շինել զաշտարակն յա-ռաջին ամին Ռագաւու՝ տասն, ոսկեղէն և արծաթե-ղէն սարօղօք, շուրջն դնելով աղիւս՝ խորովեալ հրով զանկեալ թռով, կըրով և կպրով[2], արձակահիմն խո-րանէջ լայնափողոց բացեալ պատուհանաւք լուսա-բերօք. տասն և ակունս լուսարձակս դնել առ պատու-հանաւքն։ Ընխանջ վաստակօք զամառն և զձմեռն գործէին և հողն ձեռն տայր[3]. և շար իւրն մըջմանց՝ յամենայն կողմանց ելողաց և իջողաց այր զայր զըրգ-ռէր և կին զընկերն իւր։ Եւ ոչ ոք ասէր, թէ ես շատ գործեցի քան զքեզ, այլ թէ դու շատ գործեցեր քան զիս, զի դեռ անախտ և անցաւ ունէին զընութիւն։ Եւ մինչև ցքառասուն ամն Ռագաւու ոչ առին պա-րապ գործոյն՝ մինչև հասուցին յօդն անօսր, յոր-

[1] Մեր օր. գտանի առ մեզ։ — [2] Ու. օր. կրով և կպրով։ — [3] Մեր օր. և հողոյն չերան տայր։

ձուտն և մղձկուտն և 'ի սատակողն, յոր Թռչունն ոչ վերանայ, և Թէ ձկտի՝ Թեւակիզեալ անկանի: Եւ ասեն, Թէ զուկին 'ի յատակացն սկսեալ տարան ընդ մէջն մինչև 'ի վեր և հալէր 'ի ջերմուԹենէն, և մարդիկն ջանային ևս հնարիւք անկէզ մնալ. և ոչ կասեալ 'ի գործոյն՝ մինչև ինքն Տէր ողորմեալ դադար տայր [1] առնուլ յանօգուտ ջանիցն: Եւ գտանին զրոյցք 'ի տանն Նեբրովթայ, եԹէ Նախ Հրեշտակ եկն առ Նեբրովթ, որ իշխան էր և որսայր շինողացն կերակուր, և ասէ ցնա. «Ես եմ Հրեշտակ Աստուծոյ՝ կողմնապետ արևելից. — այսպէս ասէ Տէր Աստուած երկնի և երկրի. «լռեցէք դադարեցէք 'ի գալոյդ առ իս, զի ոչ կարէք. այլ ես եկից առ ձեզ 'ի ժամանակի և տաց ձեզ սանդուղս [2], որով կարէք գալ և դուք առ իս»: Եւ ոչ լուան Հրեշտակին: Ապա ինքն ասաց ցէակիցսն իւր [3]. «Եկայք՝ մեք իջցուք և բաժանեսցուք զլեզուս նոցա»: Եւ զի ստեղծուածք ձեռաց նորա՝ 'ի ցասմանէ զարհուրեալք, փախչէին առ նա, ոչ պատժեաց զնոսա, այլ հոտով [4] դրախտին արբեցոյց զնոսա, զի հանդէպ կայր դրախտին գլուխ բրգանն [5]: Եւ այսպէս մխիԹարեալք զմայլմամբ յանձառելի բուրմանէ հոտոյն՝ մոռացան զառաջին լեզուն: Եւ չարար զնոսա վատառակ միւսանգամ քակելով, այլ հողմոյն հրամայեաց գործ, և ոչ զոք սպան 'ի նոցանէ՝ զի ոչ շրջեաց, այլ հոսեաց: Եւ շատ ինչ բարի եղև. մի՝ զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարուԹիւն, և դար-

[1] Ռ. օր. դադարայր դայր: — [2] Մեր օր. և դաց ինձ սանդուխս: — [3] Մեր օր. ապա ինքն ասաց զերանին իւր: — [4] Մեր օր. այլ հրով դրախտին: — [5] Ռ. օր. զի հանդէպ կայր դրախտին գլուխ բրգանն:

ձեալ՝ զի պատճառք իմաստից և գեղեցկութեան 'ի խո-
շոր լեզուէն առաջնոյ և՛ի կազմածև՝ փափկագոյն հել-
լենացւոց և սաստկագոյն հռովմայեցւոց, հոնն ապառ-
նական և ասորին աղաչական, պարսիկն պերճական և
ալանն գեղեցկաձև, գութն [1] ծաղրական, եգիպտա-
ցին խարափաձայն և հնդիկն ճճուող, և հայն ևս ա-
մենազարդ և համեղական. և որպէս ազգի ազգի գոյնք
գեղեցկութիւն առնեն [2] և զանազանութիւնք հասա-
կաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք։ Իսկ ա-
ռաջին լեզուն մնաց առ Եբերայ [3], որ ոչ միաբանե-
ցաւ [4] ընդ այլսն։ Իսկ որպէս մեղքն բաժանեաց յեր-
կու տուն զմարդիկ՝ 'ի Կայենին և 'ի Սեթայն, նոյն-
պէս և աստ երկու եղեն ազգ մարդկան՝ Եբեր և հէ
տանուտէրքն՝ որպէս զի Աստուած միազօր համակ
քաղցրն 'ի մէնջ հարկեալ և տանջէ՝ ևս և կոչի Աստ-
ուած և Տէր. և թէ 'ի յարութեան հասարակ 'ի յԵ-
բերայն [5] խօսի։ Բայց զայս է առել, եթէ ցեղացեղ
և բազմակարօտ մեր բնութիւնս և յոգնանուն երբ
պարզի և մաքրի՝ անկարօտ լինի, զլեզուս հրեշտակաց
առնու՝ ասէ սուրբն Եղիշէ, որով ընդ Աստուած և
ընդ միմեանս խօսին։ Այլ Տէրն ելից զկարօտութիւն
մարդկան՝ զխաչն տուեալ աշտարակ մարդկան յեր-
կինս ելից [6] և զատուցանս առաքինութեան զօրինա-
կըն [7] Յակոբայ ցուցեալ։ Իսկ անդ իսկ կոչեաց հո-

[1] Մեր օր. քանդքն ձայլքնչան։ — [2] Բն. օր. և հայն ևս ամենազարդ և զանազանութիւնք հասակաց։ — [3] Մեր օր. մնաց առ Եբեր։ — [4] Բն. օր. որ ոչ փոխանեցաւ։ — [5] Մեր օր. և թէ 'ի յարութեան հասարակ 'ի յԵբերայն խօսի։ — [6] Մեր օր. աշխարհական մարդկան յերկնելից։ — [7] Մեր օր. և զատուցանս առաքինութեան զօրինակն Յակոբայ ցուցեալ։

գին, որ բաժանեաց զլեզուս նոցա[1]՝ Հրեշտակս Աստուածոյ փոխանակ մարդկան, զի յօժարեսցին առ Հրեշտակս երանել: Կացոյց՝ ասէ, սահմանս ազգաց, ըստ թուոյ Հրեշտակաց Աստուծոյ թուեաց 'ի Հրեշտակս, և յայլ ամենայն լեզուաց կացոյց վերակացուս 'ի Հրեշտակաց Աստուծոյ, զի մի՛ օտարացին ամենևին յԱստուծոյ հեթանոսք:

Բայց Բէլ՝ հպարտացեալ յանձնոնի հասակն իւր, որ էր վաթսուն կանգուն[2], հնազանդեցոյց ինքեան զամենայն իշխանս՝ որպէս աստուծոյ, և ապա արձակեաց՝ բաց 'ի Հայկայ, որ է որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի, որ ոչ պաշտեաց զնա աստուած: Եւ զի եկն 'ի վերայ նորա ծանր ամբոխիւ՝ և սպան զնա Հայկ՝ նետիւ հարեալ 'ի սիրտն[3]՝ պղնձգէ տախտակեաւ: Իսկ որդիքն Քամայ 'ի գնալն յերկիրն կալուածոց իւրեանց տեսին զՊաղեստինէ և զկողմանս Յորդանանու, զի պարարտ և յուռթի էր, բնակեցան անդ[4] ուժովն Բէլայ՝ ազգականին իւրեանց, և զրկեցին զորդիսն Սեմայ. և եղև պատերազմ սաստիկ: Այլ և որդիքն Յեկտանայ՝ Սաբայ և Եւիլայ և Ոփիր[5], իմացան զկազմուած զինուց և խնդրէին իւրեանց տեղի ընդարձակ, զի աճեսցեն 'ի բազմութիւն: Եւ յերեսաց նոցա գաղթէին մարդիկ յամրոցս ինքնագործս: Եւ ապա սկըսան շինել բերդս: Եւ պատերազմողքն գտին մեքենայս առման ամրոցացն, մինչև ձանձրացեալ ազգացն[6]

[1] Մեր օր. խոչեաց հոգին, որ փչեաց զլեզուս նոցա: — [2] Ու. օր. հասակն էր վաթսուն կանգուն: — [3] Ու. օր. հարեալ զսիրտն: — [4] Մեր օր. բնակեցան և անդ: — [5] Ու. օր. և Ոփիր: — [6] Ու. օր. մինչև ձանձրանալ ազգացն:

ցինուիր առնեն նոցա զերկիր զոր և կամեցին։ Նո-
րա Արմայիս զենեկարքեր երկիրն, զոր Արմայ կոչեաց.
և Ուփիր զաշխարհն ոսկեհանաց, որ է Հնդիկք. և
Եւիլայ զերկիրն պատուական ականց, և անուամբ
իւր կոչեաց Եւիլատ։

Այլ Ռագաւ հարիւր երեսուն և երկու ամաց ծնաւ
զՍերուք։ Սերուք հարիւր երեսուն ամաց ծնաւ զՆ-
Նաքովր։ Եւ շինեաց Սերուք զՍրուճ։ Նաքովր եօ-
թանասուն և ինն ամաց ծնաւ զԹարայ։ Թարայ եօ-
թանասուն ամաց ծնաւ զԱբրահամ։ Յայնմ ժաման-
նակի ասեն լեալ զԱմազոնս, որ է կանանց զինուո-
րութիւնք. քանզի զկին ոմն ասեն յազգէն Թորգոմայ
ժառանգ մնացեալ թագաւորութեան ազգին[1]՝ հա-
տեալ արու զաւակացն։ Նա էր քաջասիրտ և արի և
աւերէր զազգս բազումս։ Իսկ եղև զժտութիւն ՚ի զօ-
րացն և կոտորեաց զնոսա և ստացաւ զօր ՚ի կանանց,
և նոյնպէս առնէր՝ եղեալ զաթոռ թագաւորութեան
իւրոյ յԱլեոն քաղաքի[2]։

Յիշեսցուք համառաւտիւք և զմեր նախնին զՅա-
բեթ, որ զկնի ջրոյն ծնաւ զԳամիր՝ ուստի Գամիրք,
և զՄագոգ՝ յորմէ Կեղտք և Գաղատացիք, և զՄեդա՝
որ զՄարս շինեաց, և զԹոբէլ՝ յորմէ Թէտալք և
զՄոսոք՝ որ առ զԼիւրիկիա[3], և Թիրաս, յորմէ մերն[4]
Ասքանաս[5]։ Եւ Թորգոմ ծնաւ զՀայկ և զեօթն եղ-

[1] Մեր օր. ժառանգ մնացեալ յազգին և թագաւորութեանն։ — [2] Մեր օր. և ստացաւ զօրս ՚ի կանանց, և այնպէս առնէր եղեալ զաթոռ թագաւորութեան իւրոյ յալեւան քաղաքի։ — [3] Ռ. օր. որ առ զԼաւրիկիա։ — [4] Ռ. օր. որ մերն Ասքանաս։ — [5] Աստանօր ՚ի մերում օր. տեսանի այս բան խառնակեալ գոլով — և Թորգոմ և յաստանեայցն և ՚ի Թաղլայ կէրք և գերմանացիք, որում հռովմայեցիք և լադինացիք, զոր ոչ աւելորդ համարեցաք յաւել բերել։

բարս նորա՝ զՔարթլոս [1] և զԿովկաս և զայլսն, որք ժառանգեցին զՀիւսիսի։ Իսկ 'ի Հայկայ Արամանեակ, յորմէ կոչեցաւ լեառն Արագած։ Իսկ յԱրամանեկայ Արմայիս, որ շինեաց զԱրմաւիր։ Իսկ Արմայիս ծնաւ զԱմասիա, յորմէ կոչեցաւ Մասիս լեառն։ Իսկ Ամասիա ծնաւ զԳեղամ, որ շինեաց զԳեղարքունի։ Գեղամ ծնաւ զՍիսակ՝ յորմէ Սիւնիք և զՀարմայ, որ ծնաւ զԱրամ, յորմէ ամենայն ազգ կոչէ զմեզ Արմէն։ Զի սա ընդարձակեաց զսահմանս Հայոց, որ զԿապադովկացիս և զպոռոտին և զկիլիկեյն ընդ իւր նուաճեալ՝ Արմենեակ կոչէր։ Իսկ յԱրմենեկայ և 'ի Պոնտոս առաջին Հայք, և 'ի Պոնտոսէ 'ի քաղաքն Մելտենի երկրորդ Հայք, և անտի 'ի Ծոփաց գաւառն երրորդ Հայք, և անտի 'ի քաղաքն Մարտիրոսաց և յԱղձնիս չորրորդ Հայք, և զսեպհական աշխարհն իւր կոչէ Մեծ Հայք։ Իսկ սա ծնաւ զԱրայն գեղեցիկ, որ մեռաւ 'ի Շամիրամայ՝ թողլով զորդի զԱնուշաւան։ Որոց կարգի ազգն այսպէս՝ Պարետ, Արբակ, Զաւան, Փառան, Սուր — յաւուրս Յեսուայ, — Յոնակ, Յամբակ, Առնակ, Նորայր, Վստակ, Կարգամ, Յուան, Ընձակ, Գղակ, Հաւան, Զարմայր, որ յԻլիական պատերազմին ընդ եթովպացւոց զօրուն մեռանի [2]։ Պերճ — յաւուրս Դաւթի արքայի, — Արբուն, Հոյն, Յուսակ, Կայպակ, զոր պսակէ Վարբակէս Մար, որ հանեալ զթագաւորն [3] 'ի Սարդանապալեայ տիրէ Ասորես-

[1] Ուսմ. օր. զՔարթլոս։ — [2] 'Ի մերում օրինակի 'ի Յաւան' էն մինչև ցՊերճն պակասի։ — [3] Նա 'ի մերում և 'ի Ուսմանցաւմեան օր. եղեալ կայ զԹագաւորն, զոր զԹագաւորութիւն ընթեռնուլ պարտ է։

տանի և Նինուէի։ Եւ սա եկին որդիքն Սենեքերիմայ և պատուեցան ես 'ի Պարոյրոյ, զոր յաջորդէ Հրաչէ՝ որդի իւր, որ էր ընդ Նաբուգոդոնոսորայ յԵրուսաղէմ և ած զՇամբատ ընդ իւր 'ի Հայս, յորմէ ազգն Բագրատունեաց։ Նա և յետ Հրաչէի փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փաւոս, Հայկակ, Երուանդ, որ ծնաւ զմեծն Տիգրան, որ սպան զԱժդահակ և զԿրեսոս ըմբռնեաց և արձակեաց. Բաբ, Տիրան, Վահագն, Առաւան, յորմէ առաւենզեանք, Ներսեհ, Զարեհ, Արմոգ, Բայգամ, Վան, Վահէ, զոր սպան Աղեքսանդր մակեդոնացին *։

Իսկ 'ի Քամայ, որ մինչ մեզ անել՝ Քուշ, Մեսարիմ, Նեբրովդ, որ է Բէլ[1]. Նինոս՝ այրն Շամիրամայ։ Ասացուք և զկարգ թագաւորացն[2]՝ Նեբրովթ 'ի Բաբելոն հիւսածու թագիւ պսակեալ և ոչ

* Անփոփոխ դնահեցաք աստանօր զկարգ և զուղղագրութիւն յատուկ անուանցս, որպէս և գտաք իսկ յերկասին գրչագիր օրինակս մեր, և այն՝ զի ընթերցողք բաղդատեսցեն կարասցեն զայնս ընդ շարի հայկազեան նահապետաց, զորս յառաջ բերէ Մովսէս Խորենացի յԱռաջնում Պատմութեան։ Առ դիւրութիւն մերոց ընթերցասիրաց դիցուք 'ի ստորև աստ զայդպիսի անուանսդ, որ և զայս ունին կարգ առ քերթողահօրն Մովսիսի.— „Անուշաւան, Պարէտ, Արբակ, Զաւան, Փառնաս, Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ, Ամպակ, Առնակ, Շաւարշ, Նորայր, Վստակար, Գոռակ, Հրանտ, Ընծաք, Գղակ, Հորոյ, Զարմայր, Պերճ, Արբուն, Բազուկ, Հոյ, Յուսակ, Կայպակ, Սկայորդի, Պարոյր, Հրաչեայ, Փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փաւոս, միւս Հայկակ, Երուանդ, Տիգրան, Բաբ, Տիրան, Վահագն, Առաւան, Ներսեհ, Զարեհ, Արմոգ, Բագամ, Վան, Վահէ։

[1] 'Ի մերում օր. զկնի անուանս Բէլ եդեալ աստանօրէնք զհետագայս անուանս՝ „Բամբ, Անիբիս, Արբէլ, Քայաղ, միւս Արբէլ, Նինոս"։— [2] Զկնի բառիս Թագաւորացն 'ի մերում օր. գրի „առաջին թագաւորեաց Նեբրովթ"։

կռածու 'ի 56 ամին Մերուքայ։ Սա շինեաց զՄօշ քաղաք, որ ասեն զՄապահան, և սա սպանաւ 'ի Տայկայ՝ որդւոյ Թորգոմայ։ Իսկ թագաւորեաց Թիրոս [1] քաղդէացի. յաւուրս սորա գտաւ արուեստ ոսկեհանութեան և արծաթագործութեան։ Իսկ յետ նորա թագաւորեաց Սամիրոս՝ յազգէն Սեմայ, ամս եօթանասուն և երկու. սա սկսաւ [2] դահճեկան և դրամ գործել անուամբ գլոյ [3]։ Իսկ առ սովաւ գտաւ քանդակաց նկարոյ և կազմագործութիւն և չափ և կշիռ և ամենայն բարեկարգութիւն [4]։ Զսմանէ ասէ Մենանդրոս մոգ, եթէ երեք աչս ունէր։

'Ի քսան և հինգ ամին Նաքովրայ էր ծննութիւն Յոբաբայ, որդւոյ Զարեհի, որդւոյ Ռագուէլի, որդւոյ Եսաւայ, որ զամս երեսուն և ութ պատերազմեալ ընդ սատանայի՝ յաղթեաց համբերութեամբ և փառաւորեցաւ։

Յեօթն ամին Թարայի թագաւորեաց Արփիաղատ ամս տասն և ութ, և զկնի Վիլոս աթուրացի ամս վաթսուն և երկու՝ հանեալ զպատիւն 'ի Բաբելոնէ յԱթուր, որ է Նինուէ. բայց Քսարոս ամս թագաւորեաց 'ի Բաբելոն և Սահիրոն եղբայր սորան վնա վասն հանելոյ 'ի նմանէ զԱյնան կուռքն, որ քրմապետ էր [5]։ Սա շինեաց Դամասկոս յԱրամայ հիթացւոյն։ Աբրահամու մօրն Մալքաթու [6] էր անուն։ Իսկ յետ տասն ամի ծննդեան Աբրահամու ծնաւ

[1] Բուռմ. օր. ունի Ցիրոս։ — [2] Մեր օր. և նա սկսաւ դահճեկան։ — [3] Ցերկուսին օր. կայ անուամբ գրոյ, զոր ընթեռնուլ պարտ է խորով։ — [4] Ու. օր. եարգարձագործութիւն։ — [5] Մեր օր. զոր ընծայէր։ — [6] Ու. օր. Մայքաթու։

Թարայ զՍառրայ 'ի Զմրութեայ[1] կնոջէ խորթէ եւ ոչ 'ի մօրէն Աբրահամու՝ որպէս ինքն ասաց ցԱբիմելէք[2], թէ քոյր իմ է՝ ասէ, 'ի հօրէ եւ ոչ 'ի մօրէ։ Եւ լեալ Աբրահամ տասն եւ հինգ ամաց՝ ելեալ[3] խնդրել զԱստուած մինչեւ ցեօթանասուն ամն։ Քանզի պարարտ եւ բազմաշահ երկիրն Քաղդէացւոց դրդուեաց զնոսա յամենայն չարիս, յորում այց արար Աստուած եւ արածել հրամայեաց ճայից բազմաց զանդս եւ զայգիս նոցա բազում ժամանակս։ Եւ խրատքանչէր որք[4] սակաւ ինչ վաստակէր եւ պահէր իբրեւ զատարածոցս, եւ անկան յաղքատութիւն։ Եւ Աբրահամ էր պահապան 'ի հայրենիս իւր, եւ ուսանէր 'ի գիշերի զաստեղագիտութիւն եւ'ի տիւն վաստակէր 'ի պահելն զանդս[5], եւ զամենայն զոհս եւ զուխտս եւ զաղօթս կատարելով պաշտեցեալ դիցն իւրեանց՝ եւ ոչ լինէր դիւրութիւն։ Զնոյն եւ Աբրահամ առնէր եւ մտախոհ լինէր յինքեան, թէ չէ պատուհաս 'ի մերոց պաշտելեացս, վասն զի ոչ կարեն բառնալ, այլ եւ ոչ յարուցանել աստեղացս պարտ է ճանաչել, զի 'ի շարժման կան միշտ եւ'ի ներքոյ հալին։ Եւ յայտ է, թէ գոյ ոմն կառավար սոցա՝ մեզ անծանօթ։ Եւ ապա ընկաւ պաղատանաւք ասել. —«անծանօթ Աստուած, ամենայնի արարիչ[6] եւ այս թռչնոցս, դու հալածեա զսոսա»։ Եւ նոյնժամայն անյայտ եղեն։ Եւ ասաց Աբրահամ. —«ահա գտաք զԱստուած, աւրհնեալ[7]

[1] Մեր օր. 'ի Զմռութեայ։ — [2] Ու. օր. ասաց առ Աբիմելէք։ — [3] Ու օր. ելեալ խնդրել։ — [4] Մեր օր. եւ խարտաքանչէր սակաւ։ — [5] Ու. օր. 'ի պահելն զանդսն։ — [6] Ու. օր. յամենայնի արարիչ։ — [7] Մեր օր. օրհնեալ է տէրութեանն քո։

է անէրութիւն քո, և փառք քո լցցէ զամենայն երկիր»: Եւ պատմեաց 'ի տան Հօր իւրոյ՝ և անախոյթ եղև նոցա զիրացն:

Յայնմ ժամանակի մեռանի Վ_իրա Թագաւորին և առ զԹագն Սինոս՝ որդի նորա, որ չինեաց զկուռս Հօր իւրոյ ոսկեղէն [1] և ընդարձակեաց զՆԹուրի քաղաք և յանուն իւր կոչեաց Սինուէ: 'Ի սորա ժամանակին չինեաց Մելքիսեդեկ զԵրուսաղէմ: Եւ Աբրահամ ոչ դադարէր 'ի խնդրելոյ զերևումն Աստուծոյ. և լուաւ նմա, և ըստ տանելոյ նորա յայտնեցաւ նմա և ասէ.—«Ել յերկրէ քումմէ և յազգէ, և տար ընդ քեզ 'ի զերկեալ վէմակին ձեռ, և քեզ և զաւակի քում տաց զնա»: Եւ առեալ զամենայն Հօր իւրումս և ել ընդ նմա և եկին մինչև 'ի Խառան և նստան անդ տուն: Եւ չինեաց անդ Թարայ մեհեան կռոց. և այրեաց զնա Աբրահամ. և Առան եղբայր նորա կամեցաւ չէջուցանել և այրեցաւ անդէն: Սմանէ ասեն, թէ զիջակէնն նա հնարեցաւ [2] և մեռաւ 'ի տեղւոջն:

Եւ դարձեալ լինի առ Աբրահամ ձայն Աստուծոյ ելանել 'ի Խառանէ. և ել ըստ բանին Տեառն: Նաև այլ կին առնել [3] Աբրահամ և որդի Ռեբեկայ անուն, զորս Թողեալ զամենայն գնաց 'ի Պաղեստինէ եօթանասուն և հինգ ամաց, և ութսուն և եօթն ամաց էր յԵգիպտոս և եկ անտի անմոռաց 'ի տեսանէ: Եւ Հարիւր տասն և հինգ ամաց էր՝ ած զորդին 'ի գնունմն. 'ի Հարիւր քսան և ութ ամին առ զՔետուրա

[1] Ոսկ. օր. յոսկեղէն: — [2] Մեր օր. թէ զեշակեան հնարեցաւ: — [3] Ո. օր. այլ կին առնել:

և վեց որդի ստացաւ 'ի Նմանէ. 'ի հարիւր եօթանասուն և հինգ վախճանեցաւ յերեսուն և եօթն ամին Յակոբայ: 'Ի քառասուն ամին առ Իսահակ զՌեբեկայ և 'ի վաթսուն ամին յղացաւ և գնաց հարցանել 'ի Մելքիսեդեկայ, և նա ասէ.—«Երկու ազգ է յարգանդի քում և երկու ժողովուրդ»: Յեօթանասուն երկու ամին Սահակայ 'ի տասներորդ հարստութեան իշխանեցաւ յԵգիպտոս Եպիս և աստուած կարծեցաւ. զնա Սարապիս ոմանք ասացին: Իսկ 'ի հարիւր երեսուն և եօթն ամին Սահակայ գնաց Յակոբ 'ի Խառան առ Լաբան, և ութսուն ամաց առ զԼիա դուստր Լաբանայ: Յաւուրս Յակոբայ Փարաւոն Թագաւոր Եգիպտոսի օրէնս և դատաւորս եդ, և Ովգեգիս շինեաց զԵլևսին յԱտտիկէ: Յակոբ 'ի հարիւր[1] ամին եկ առ Իսահակ հայր իւր. և մեռասան ամաց էր Ղևի, զի յութսուն և ինն ամին ծընաւ զնա, և յեօթն և տասն ամին վախճանեցաւ Յովսէփ, յերեսուն ամին եկաց առաջի Փարաւոնի, 'ի հարիւր երեսուն ամին էջ Յակոբ յԵգիպտոս, հարիւր քառասուն և եօթն ամաց մեռաւ Ղևի, քառասուն և վեց ամաց ծնաւ զԿահաթ: — Ամենք ընփորձանքն Յոբայ աստ առեն: — Կահաթ վաթսուն ամաց ծնաւ զԱմրամ, Ամրամ եօթանասուն ամաց ծնաւ զՄովսէս, Յովսէփ հարիւր տասն ամաց վախճանեցաւ[2] 'ի վեց ամին Ամրամայ: Իսկ յաւետեացն Աստուծոյ երկու հարիւր վաթսուն և վեց. յորում ա-

[1] Մեր օր. Յակոբ հարիւր տասն ամին: — [2] Մեր օր. Յովսէփ հարիւր տասն վճարեցաւ:

մի Թագաւորեաց յԵգիպտոս Քեբրոն ամս երկոտա-
սան. և յետ նորա Մենափթիս ամս քառասուն և
երեք. — սա առնէր գետասոյզ զորդայն Իսրայելի,
յորմէ ապրեցաւ Մովսէս՝ բարձեալ զնա Թերմութեայ
դստեր նորին Թագաւորին, որ եղև կին Քանթարայ
Թագաւորին Մեմփիս քաղաքի: Եւ երեք հարիւր
յիսուն ամ էր յաւետեացն Աստուծոյ և տասնամեայ
լեալ Մովսէս՝ տուաւ յուսումն յանէսն և յամրէսն:
'Ի քառասներորդ երկրորդ ամին Մովսիսի սկսան զկա-
ւտկոխութիւն որդիքն Իսրայելի: 'Ի քսան և ութ
ամին Մովսէս իշխան եղև և շինեաց զքաղաքն Թեր-
մուպօլիս [1] անուամբ Թերմութեայ, զոր և Մառիս
կոչէին: Իսկ Եթովպացւոցն, որ էին հարկատուք Ե-
գիպտացւոց՝ ապստամբեալ ապստամբեցին և գերե-
ցին զԵգիպտոս և զմայրգիրն Մովսիսի: Եւ գնա-
ցեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ, և առ ըզ-
Թագուհի նոցա զԹեարբաս և զմայրն իւր և դարձաւ
յԵգիպտոս: Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մա-
ռեայ, որ է Թերմութիս, և 'ի մեռանելն Մառեայ
Թաղեաց զնա Մովսէս: Եւ առաքեաց այրն նորա
զՔանթիս՝ չարչարիչն Իսրայելի, սպանանել ըզ-
Մովսէս. և սպան զնա Մովսէս և փախեաւ 'ի Մա-
դիամ: Եւ յանէսն և յամրէսն առին զորդիսն Իս-
րայելի և տարան զնոսա հնգետասան աւուր ճանա-
պարհ ընդ անապատն, և շինեցին զպղրախտն իւրեանց
զհնգետասան տարի: Եւ 'ի կատարման շինուածին
յորդւոցն Իսրայելի առին տղայս ինն հարիւր ութ-

[1] Մեր օր. Թերմապօլիս:

սուն և զոհեցին դիւաց։ Եւ հաւաքեցան առ Նոյա և եդին պահապանս դրախտին և յայնմհետէ առաւել հնազանդեցան դեւք կախարդաց։ Եւ չորք հարիւր դեւք՝ ասեն, ոչ հնազանդեցան, մինչեւ կրկին զոհեցին յանուն Նոյա և ապա եկեալ առին 'ի հաւանութիւն. բայց զչուառ ամիսն անհնազանդեալ՝ գործեն զկամս իւրեանց՝ տանելով զոմանս 'ի մարդկանէ։ Իսկ Մովսէս առ 'ի կնութիւն զՍեպփովրայ՝ դուստր Ռագուէլի որդւոյ Դաթանայ, որդւոյ Յեկտանայ՝ որդւոց անտի Քետուրայ, և ծնաւ 'ի նմանէ երկու որդիս։ Եւ աստ՝ ասեն, առ Դեւկալիոնիւ ջրհեղեղ 'ի Թեսալիա, և առ Փայեթոնիւ յԵթովպիա հրայրեացք և այլ բազում ապականութիւնք 'ի տեղիս տեղիս՝ որպէս Պղատոն պատմէ։ Իսկ Դեւկալիոն Պառնասացւոց կողմանցն թագաւորէր։ Մովսէս լեալ եօթանասուն ամաց՝ արժանի եղև երևմանն Աստուծոյ։ Եւ հրամայէր գնալ յԵգիպտոս և հանել զԻսրայէլ, և նա յապաղէր զտասն ամ։ Եւ եղեալ ութսուն ամաց՝ գնաց յԵգիպտոս 'ի չորեք հարիւր երեսուն ամի աւետեացն Աստուծոյ յեօթանասուն ամէն Աբրահամու. երկու հարիւր քառասուն և հինգ ամ կացին յԵգիպտոս [1] և տասն հարուածովք հարեալ զԵգիպտացիքն՝ ստիպով հանէին զորդիսն Իսրայէլի՝ յերեք հազար ութհարիւր քառասուն և երկու ամի ելիցն 'ի դրախտէն։ Եւ ելին 'ի հինգ շաբաթոջ՝ և 'ի կիւրակէի անցին ընդ ծովն Կարմիր։ Եւ աստի

[1] Մեր օր. երեք հարիւր հինգ ամ մինչեւ 'ի մտանելն Յակոբայ յԵգիպտոս և երեք հարիւր քառասուն և հինգ ամ յաջն յԵգիպտոս։

մի թագաւորեաց Եգիպտոս Փերրոն ամս երեքտա-սան. և յետ նորա Մենափթիս ամս քառասուն և երեք. — սա առնէր գետասոյզ զորդայսն Իսրայելի, յորում ապրեցաւ Մովսէս՝ բարձեալ զնա Թերմութեայ դստեր նորին թագաւորին, որ եղև կին Քանթարայ թագաւորին Մեմփիս քաղաքի։ Եւ երեք հարիւր յիսուն ամ էր յաւետեացն Աստուծոյ և տասնամեայ լեալ Մովսէս՝ տուաւ յուսումն յանէսն և յամբրէսն։ 'Ի քսաներորդ երկրորդ ամին Մովսիսի սկսան զկա-ւակոխութիւն որդիքն Իսրայելի։ 'Ի քսան և ութ ամին Մովսէս իշխան եղև և շինեաց զքաղաքն Թեր-մուպօլիս [1] անուամբ Թերմութեայ, զոր և Մառիս կոչէին։ Իսկ Եթովպացւոցն, որ էին հարկատուք Ե-գիպտացւոց՝ ապստամբեալ ասպատակեցին և գերե-ցին զԵգիպտոս և զմայրգիրն Մովսիսի։ Եւ գնա-ցեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ, և առ ըզ-թագուհի նոցա զԹեւբաս և զմայրն իւր և դարձաւ յԵգիպտոս։ Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մա-ռեայ, որ է Թերմութիս, և 'ի մեռանելն Մառեայ թաղեաց զնա Մովսէս։ Եւ առաքեաց այրն նորա զՔանթիս՝ չարչարիչն Իսրայելի, սպանանել ըզ-Մովսէս. և սպան զնա Մովսէս և փախեաւ 'ի Մա-դիամ։ Եւ յանէսն և յամբրէսն առին զորդիսն Իս-րայելի և տարան զնոսա հնգետասան աւուր ճանա-պարհ ընդ անապատն, և շինեցին զդրախտն իւրեանց զհնգետասան տարի։ Եւ 'ի կատարման շինուածին յորդւոցն Իսրայելի առին տղայս ինն հարիւր ...

[1] Մեր օր. Թերմուպօլիս։

սուն և զոհեցին դիւաց։ Եւ հաւաքեցան առ Նոսա և եղին պահապանս դրախտին և յայնմհետէ առաւել հնազանդեցան դեք կախարդաց։ Եւ չորք հարիւր դեք՝ ասեն, ոչ հնազանդեցան, մինչև կրկին զոհեցին յանուն Նոցա և ապա եկեալ առին 'ի հաւանութիւն. բայց զշուատ ամիսն անհնազանդեալ՝ գործեն զկամս իւրեանց՝ տանելով զոմանս 'ի մարդկանէ։ Իսկ Մ՚ովսէս առ 'ի կնութիւն զՍեպփովրայ՝ դուստր Ռագուէլի որդւոյ Դաթանայ, որդւոյ Յեկտանայ՝ որդւոց անտի Քետուրայ, և ծնաւ 'ի նմանէ երկու որդիս։ Եւ աստ՝ ասեն, առ Գնեւկալիանիւ ջրհեղեղ 'ի Թեսալիա, և առ Փայեթոնիւ յԵթովպիա հրայրեացք և այլ բազում ապականութիւնք 'ի տեղիս տեղիս՝ որպէս Պղատոն պատմէ։ Իսկ Գնեւկալիոն Պառնասացւոց կողմանցն թագաւորէր։ Մ[illegible] լեալ եօթանասուն ամաց՝ արժանի եղև երև[illegible] Աստուծոյ։ Եւ հրամայէր գնալ յԵգիպտոս և [illegible] զԻսրայէլ, և նա յապաղէր զառան[illegible]։ Եւ [illegible] ութսուն ամաց՝ գնաց յԵգիպտոս 'ի [illegible] երեսուն ամի աւետեաց Աստուծ[illegible] մէն Աբրահամու. երկու հարիւր [illegible] ամ կացին յԵգիպտոս[1] և [illegible] բեալ յԵգիպտացիքն՝ սախ[illegible]

[illegible]

կոչեցան Եբրայեցիք, Եբրայն [1] անցէլ թարգմանի. և առին նոր լեզու պարգևօք և այնու երգէին զօրհնեսցուքն և էր նման հայրենի լեզուին: Իսկ եօթն ամիս շարժեցաւ Եգիպտոս և տապալեցան յոլով շենուածք. և ելին արտաքս 'ի շինուածոցն բնակիչքն: 'Ի նմին ամի պարտեցաւ Ամաղէկ 'ի Յեսուայ: — Իսկ 'ի նոյն ամի յամսեանն երրորդի ել 'ի լեառն Սինա Մովսէս: — Ապողինոս՝ իմաստասէրն եբրայեցի, ասէ, թէ նախ Մովսէս յԱստուծոյ իմաստնացեալ՝ արար գիր քսան և երկու, և այնու գրեաց Աստուած զտասն պատգամն և ետ ցՄովսէս. և նովիմբ գրեաց Մովսէս նախ զԵլից գիրսն և ապա զքսան երկու արարածսն 'ի Ծննդոց գիրսն և զայլ երիս գիրսն: Իսկ զօրինակ արարածոցս զգալի խորանաւն եցոյց [2], որ գործեցաւ եօթն ամիս ըստ եօթնօրեայ արարածոցս: Իսկ ունին հինգ գիրքն Մովսիսի զբոյցս երից հազարաց և եօթն հարիւր երեսուն ամաց ըստ Եւսեբեայ:

Աստուածածանօթն Մովսէս կատարեցաւ հարիւր քսան ամաց, և առ զգաւազան նորա Յեսու Նաւեայ ամս քսան և եօթն: 'Ի վեցերորդ ամին Յեսուայ Դանաւոս [3] եղբայր Եգիպտոսի՝ թագաւորի Եգիպտացւոց, յիսուն դստերօք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց, և Եղիմբոս՝ փերծեալ թագաւորեաց, զոր ասեն [4] ամենայն ուստեք քաջացեալ, զի իմաստուն էր: Յութ և տասներորդ ամին Յեսուայ Փիւնիկ և Կադմոս 'ի Թևկրացւոց յԱսորիս եկեալ՝ թագաւորե-

[1] Մեր օր. զի Եբրայն անցել թարգմանի: — [2] Մեր օր. զգալի խորանաւն եկեղեցւոյ: — [3] Ու. օր. 'ի վեց ամին Յեսուայ Դանաւոս: — [4] Մեր օր. զոր ամենայն ասացին:

ցին, և աշխարհն կոչեցաւ Փիւնիկէ և տուն Կադմեայ։ Նա և սորա բերին անդ զիմաստութիւն՝ որպէս Կիկրոպս էած 'ի Մեմփիս քաղաքէ բնակիչս յԱթէնս, և եղև [1] տուն իմաստից։ Նա և Կիկրոպս արար գիր Յունաց, զոր այլք զԿադմոս ասեն։

Կատարեցաւ Յեսու հարիւր եօթն ամաց և դատաւոր եղև Գողոնիէլ ամս քառասուն։ Եփրիկանոս ամս երեսուն զնէ 'ի մէջ Յեսուայ և Գողոնիէլի, և Յոյնք յիսուն ամ ասեն Գողոնիելի, զի ութ ամ ծառայեցին Քուսայ, զոր սմա հաշուեն։ Ըստ թագաւորեաց Եգիպտացւոցն Պելապոս, ուստի Փիլադոս էր բարուախօսն ամենայն կենդանեաց։ Զկնի Գողոնիէլի ծառայեցին Իսրայէլացիքն Եգղովմայ՝ արքային Մովաբու, ամս եօթն և տասն, զոր կցին յամսրն Նաւոդեայ [2], որ դատեաց զԻսրայէլ ամս ութսուն։ Ըստ լցաւ չորս հազար տարին յԱդամայ։ Յետ Նաւոդեայ ծառայեցին այլազգեացն ամս քսան։ Նա և զօրացաւ Սամեգար և սպան 'ի Փղշտացւոցն վեց հարիւր այր մանճով արօրոյն [3]։ Նա և դատեաց զԻսրայէլ Բարակ Գեբովրայիւ ամս քառասուն՝ յաղթելով զծառայութիւն այլազգեաց. — յաւուրս սորա Յոբն կացեալ սպարապետ Աթենացւոց՝ Յոյնք անուանեցան և Նոքա։ Յաւուրս սորա հարիւր իմաստասէրք տեսին զմի տեսիլ 'ի միում գիշերի եօթն արեգական, զոր Սաբիլէ կինն մեկնեաց 'ի վերայ եօթն դարուց [4] և ըղձեցերորդն 'ի Քրիստոս մեկնեաց, որոյ ճառագայթն

[1] Մեր օր. և եղին տուն իմաստից։ — [2] Մեր օր. զոր կացին յամս Նաւասրդեայ։ — [3] Մեր օր. մանուկ արքայն։ — [4] Ու. օր. մեկնեաց 'ի վերայ եօթն դար [illegible]։

թագուցանէր զայլսն։ Զկնի Բարակայ իշխեցին Մա-կեդոնացիք ամս եօթն։ Նա դատեաց զԻսրայէլ Գե-դէոն ամս քառասուն՝ յաղթելով զայլազգեացն։ — Գեդաղ[1] Հիւսն և նկարիչ առա երևեցաւ, որ ասեն՝ թէ շարժէր պատկերն զոր գործէր թուեցեալ։ Ըզ-Գեդէոնի եօթանասուն որդիքն կոտորեաց Աբիմելէք և դատեաց զԻսրայէլ ամս երիս. և զկնի նորա Թով-ղայ ամս քսան և երկու։ — Նա Հերակլէս՝ ասեն զԻլիոն առեալ Հայկանէք[2]՝ սպանանելով զԱնտէոս[3], զոր երկրածին համարէին։ — Յայիր Գաղաադացի ամս քսան երկու. յետ սորա ծառայեցին այլազգեացն ամս ութ, ոմանք ութ և տասն ասեն և յայլսն յարեն Յեփթայի ամս վեց։ — Աղեքսանդրոս զԵղինէ. առ և տնկեաց, և տասն ամ պատերազմ եղև վասն այնր. և յառնուլն զԻլիոն և Հերակլէս խոցեալ ընկէց զինքն ՚ի հուրն։ — Եսեբոն ամս եօթն. և յետ նորա Եղոն տասն ամ, որ չկայ եօթանասնիցն, այլ Եբրա-յեցւոցն։ Աբդոն ամս ութ։ — Նա. Թագաւորեցին Հռոմայեցիք, — առաջին թագաւորն Ենէաս անուն։ Զկնի Աբդոնի[5] ծառայեցին Փղշտացւոցն ամս քա-ռասուն; և ապա յարեաւ Սամսոն փրկել զնոսա ամս քսան։

՚Ի քսաներորդ հինգերորդ ամին սորա եղեն իրքն Հռութայն. — յաւուրս ՚սորա[6] մեռաւ Զևս և

Բայց յուռաք և տեսողք գրոց[2], եթէ որդի էր սա Արշակայ մեծի՝ և ոչ եղբայր։ Նա էր բանն այսպիսի — «Նոյն թագաւորն Պարթևաց խնդրեաց զխելն կծեայ, որ ՚ի Մծբին յապարանս արքայութեան Հայոց. և ՚ի յառնուլն՝ զոսա գիր յունարէն[3], եթէ «Նա գրեցի Եգաթանգեղս, զի մեծն Արշակ ունէր չորս որդիս.— զառաջինն թագաւորեցոյց Խնտալացւոց և զերկրորդին Նխրկացւոց և զերրորդն Պարթևաց և զչորրորդին Հայոց՝ տալով նմա զսահմանն, զոր Հայկն բառացուց զաւակօքն իւրովք և որդւովք եօթն դառներաց իւրոց»:

Երդ կարգաւորեալ զարքունիսն Վաղարշակայ՝ սահէ առ թիւքն զԱրշակ՝ որդի իւր, և զԱրտաշէս որդի նորա, և զայլ արքայազունսն առաքէ ՚ի Հաշտեանն գաւառն։ Նա այս եղև ՚ի կրօնս[4] ամենայն Հայոց թագաւորաց — զմի որ ունել ընդ իւրեանս

[1] Մեր օր. ունի. — ,, և զմխտարինն և զդրապապաւունիսն և զանձարան և զայլ տարողներ խորովլայնն և խոհեմութեան արքայն դպիրս և դռնապանս ,,... Բուռ. օր. այսպէս ունի. — ,, և զմիտարինն և զդրապապաւունիսն և զանձարան և այլ խորովլանէ և խոհեմութիւն արքային ,,. — իսկ մեք ուղղագրեցաք՝ որպէս թուի իսկ ընթերցողն տեսանել կարէ: — [2] Մեր օր. Բայց յուսալ և տեսողք, եթէ որդի էր սա Արշակայ: — [3] Բո. օր. և ՚ի յառնուլն գրութիւ յոյն: — [4] Բո. օր. և այս եղև կրօնս ամենայն Հայոց:

ժառանգ և զայլսն 'ի Հաշտէնս առաքել, զի կացցեն յազատութեան։ Թագաւորեաց Վաղարշակ ամս քսան և երկու՝ մեռանի 'ի Մծբին։ Սա կառոյց զնիզակն յորձաքարի յեզերն ծովուն Պոնտոսի՝ մխեալ արեամբ Թիւնաւոր սողնոց, զոր պաշտեցին Պոնտացիքն՝ իբրև զգործ աստուածոց։ Զկնի սորա Թագաւորեաց Արտաշէս՝ որդի նորա, ամս քսան և չորս յերկրորդ ամին պարսից արքայի, զոր իւր երկրորդ կացոյց և տիրեաց բոլոր ծովու և ցամաքի։ Նա անց յայնկոյս ովկիանու և եհաս մինչև 'ի Սպանիա, և դարձաւ ձերբակալ արարեալ զԿրեսոս՝ Լիդիոյ [1] Թագաւորն։ Սա առանց [2] Թուոյ ունէր զօրս։ Նա յերկրորդ անգամ գնալն յարևմուտս մեռանի 'ի ծովուն։ Նա առնու զԹագն Տիգրան՝ որդի նորա։

'Ի քսան և եօթն ամի Թագաւորութեան Արշականայ սա գերեաց զԵրուսաղէմ և սատակեաց զԿրասոս՝ զօրավարն Հռոմայեցւոց։ Նա կացուցանէ ըզՄիհրդատ 'ի Մաժաք, որոյ որդին ապստամբեալ երթայ առ Հռոմայեցիս՝ առեալ զՊերգեայ քաղաք, և զՄաժաք ընդարձակեալ՝ կոչէ յանուն կայսեր։ Նա զկնի Բարզափրան վերստին գերէ զԵրուսաղէմ՝ ածեալ գերի զՀիւրկիանոս քահանայապետ, բնակեցուցանէ 'ի Վան։ Նոյն Տիգրան Թագաւորեալ ամս երեսուն և երեք՝ մեռանի։ Նա առնու զԹագն Արտաւազ՝ որդի նորա, և բնակեցուցեալ զեղբարս և զքորս իւր յԱղիովիտ և յԱռբերանի՝ որպէս զայլ

[1] Մեր օր. և դարձաւ ձերբակալ արարեալ զԿրեսոս Լիդիոյ Թագաւորն։ — [2] Մեր օր. առանց Թուոյ ունէր զօրս։

Արշակունիս 'ի Հաշտէնս, ինքն խաղայ 'ի Միջագետս։ Եւ Անտոնինոս լուեալ՝ գայ կոտորէ զզօրս նորա, և զնա գերեալ՝ տանի յԵգիպտոս պարգև Կղէոպատրայ դշխոյի։ Եւ առնու զԹագն Արշամ՝ որդի Արտաշեսի, եղբայր Տիգրանայ. և տայ հարկս 'ի Միջագետաց Հռովմայեցւոց յաւուրս Հերովդէի, զոր կացոյց Անտոնինոս արքայ Հրէից։ Եւ յաւուրս Արշաւրայ պարսից Թագաւորի՝ յոյժ տղայոյ, ոչ կարէր օգնել Արշամայ, վասն որոյ հնազանդեցաւ կայսեր և գործաւորս տայր Հերովդի սալակապ առնել զփողոցն Անտիոքայ։ Սա Թագաւորեալ ամս քսան՝ մեռանի։ Եւ առնու զԹագն որդի նորա՝ Աւագայրն, զոր Ասորիք Աբգար կոչեն։ 'Ի սորա երկրորդամին ծնաւ Քրիստոս և ել հրաման Օգոստոս կայսերէ աշխարհագրութեան։ Եւ բերաւ պատկեր նորա 'ի Հայս, և ամենայն Հայք մտին ընդ հարկաւ, սոյնպէս և Ասորեստան [1] և Եգիպտոս և ամենայն Մէջերկրեայք ըստ Հրէից։

Եւ յելիցն Ադամայ՝ ըստ եօթանասնիցն, հինգ հազար հարիւր իննսուն և ութ, ըստ Եհնանոսի՝ հինգ հազար իննսուն և մի, ըստ Ասորւոց՝ հինգ հազար քսան և վեց—և տարին երկոտասանալուսնեայ։

Եւ Օգոստոս երկրորդ ինքնակալ զկնի Յուլիոսի, զոր ասեն փորահան, որ և կայսր կոչեցաւ և Թագաւորեաց զկնի չորեք հարիւր վաթսուն և երկու ամի խափանելոյ աքքայութեան Հռոմայ։ [2]։ Եւ Օգոստոս

[1] Մեր օր. ստպէս և Ասորեստան և Եգիպտոս։ — [2] Մեր օր. զկնի չորեք հարիւր վաթսուն և երկու ամի խափանելոյ թագաւորութեան Հռոմայ։

եւ մեծացաւ 'ի ծնանել մեծին Աստուծոյ եւ ամենակալ արքային. յորում աւուրս եկին մոգքն երկոտասան հազար հեծելովք, եւ լուեալ՝ թէ առ է 'ի Պաղեստին[1]՝ թողին զզօրսն առ Աբգար եւ խնդրեանք, որ մեծ էին՝ գնացին երկոտասան իշխանաւք եւ հազար հեծելովք — Մելքոն պարսիկ, Գասպար հնդիկ, Բաղդասար արաբ՝ ոսկի, կնդրուկ, զմուռ ընդ ինքեանս ունելով։ Զայս գրեաց Ղուկիանոս ոմն Փըուանդ, որ կայր յԵդեսիա առ կայսրն Ոգոստոս. «Գիտասցէ ինքնակալութիւնդ քո, զի եկին 'ի հարաւոյ արեւելից արք մեծաշուքք եւ երկրպագեցին տղայոյ միոյ ծնելոյ 'ի Պաղեստին, հրաման առեալ 'ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա։ Իսկ 'ի դառնալ մոգուցն ընդ այլ ճանապարհ յաշխարհն իւրեանց՝ կոտորեաց Հերովդէս հազար չորս հարիւր վաթսուն եւ երկու մանկունս։ Յերթալն Տեառն յԵգիպտոս՝ Ոգոստոս յԵգիպտոս առաքէ զԱնտոնինոս՝ զօրավարն իւր, որ ապստամբեալ 'ի նմանէ թագաւորեաց։ Եւ Աբգար շինեաց զՍուրհայ եւ անդ փոխեաց զաթոռ իւր եւ զդիւանն 'ի Մծբնայ՝ որպէս Տիգրան շինեաց զՏիգրանակերտ, որ ասի Ամիթ[2]։

Յերեսուն եւ երեք ամի Տեառն մերոյ ծննդեանն մեռաւ Արշաւիր՝ թագաւոր Պարսից, թողեալ երեք ուստր եւ դուստր մի, որք վիճէին 'ի վերայ թագաւորութեան, զոր հաշտութեամբ խաղաղացոյց Աբգար՝ անդ գնալով։ Զաւագ որդին Արտաշէս թա-

[1] Մեր օր. եկին մոգքն երկոտասան հազար հեծելովք եւ լուան, թէ առն է 'ի Պաղեստին։ — [2] Բն. օր. որ կոչի Համիթ։

զաւորեցուցանէ, և զՍուրէն և զԿարէն և զԿոշմ քոյր նոցա պատուէ Պալհաւ անուամբ. և 'ի դաստանայն պատուահէ նմա [1] ցաւ ուրկութեան։ Եւ եկեալ յԵ-դեսէ՝ առաքէ առ Մարինոս՝ զօրավարն Հռոմայ [2], զՄարիհաբ բդեշխն Աղձնեաց և զՇամշագրամ նահապետն Ապահունեաց և զԱնան հաւատարիմ իւր, զի մի՛ խորհուրդ նենգութեան կարծեսցեն զեր-թալն [3] նորա յարեւելս։ Եւ պատահեալ Մարինեայ յԵղեւթերապօլիս՝ լուան բանս բարիս և ելին յԵրու-սաղէմ. և տեսին զՏէրն, զի առնէր նշանս մեծա-մեծս և հաւատացին 'ի նա։ Եւ բերին զտեսեալ նր-շանն Աբգարու և դարձան մեծարեալ զնա և բերին պատկերն, որ եկաց յՈւռհայ մինչև 'ի Նիկիփոռ թա-գաւորն Յունաց, որ տարաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի ձեռն Աբրահամու մետրապօլտի։ Եւ սա եկն Թա-դէոս առաքեալն և մկրտեաց զնա և զամենայն քա-ղաքն, և գնացեալ առ Սանատրուկ՝ կատարի 'ի նր-մանէ յԱրտազ։ 'Ի նոյն վիճակեալ և Բարթուղիմէի՝ վճարի 'ի նոյն թագաւորէ յԱրաբիոն քաղաքի։

Իսկ Աբգարու թագաւորեալ ամս երեսուն և ութ՝ կատարի 'ի Տէր։ Եւ Սանատրուկ տիրէ Միջագե-տաց և շինէ զՄծբին, որ 'ի շարժմանէ փլեալ էր՝ և մեռանի յորսի։ Եւ առնու զԹագն Երուանդ որ-դի կնոջ Արշակունւոյ և կոտորէ զամենայն զաւակս Սանատրկոյ։ Զերծեալ մանուկ մի՝ Արտաշէս ա-նուն, զոր առեալ Սմբատայ անկանի 'ի Պարս առ

[1] Մեր օր. և 'ի դաստանայն պատուականս նորա ցաւ ուրկութեան։ — [2] Մեր օր. զօրավարն Հռոմայ։ — [3] Մեր օր. կարծեսցեն զերթալն նորա յարեւելս։

Գառնիհ ամրոցս վերջին։ Եւ Երուանդ թողու զՄի-հրդատես 'ի Տիրոս և առնէ զնա յոյժ և շինեալ զԵ-րուանդաշատ՝ անդ փոխէ զարքունիս յԱրմաւրոյ։ Եւ 'ի նմանէ հեռագոյն ¹ շինէ զԲագարան անուն կը-ռոց 'ի վերայ Ախուրեան գետոյն։ Եւ քուրմ դնէ զԵրուազ՝ եղբայր իւր, մինչև 'ի յամս քսան և մի, յորում զատանայ Արտաշէս թագաւորեալ և առեալ ճակատ 'ի Մարաց մարզ յԱխուրեան գետ՝ փախչի Երուանդ 'ի քարն և սատակի չարակն այրն այն։ Եւ առնու զԹագն Արտաշէս. սա շինէ զԱրտաշատ 'ի տեղւոջն ², ուր խառնի Մեծամօր 'ի յԵրասխ։ Սա գերի ածեալ յամենայն կողմանց՝ չնթող տեղի ան-գործ 'ի Հայս, և չորեքանկիւնի քարիւ ³ նշանէ զկա-լուածսն. և կարգէ աւուրս շաբաթուց և ամսոց և բո-լորման տարեաց ⁴. և կազմեալ նաւահանգստութեանն և արուեստ որսոյ ձկանց. Թագաւորեալ սմա ամս քսա-սուն և մի՝ մեռանի, որում մահակից լինին ոչ սակաւ ծառայք։ Եւ առնու զԹագն Արտաւազդ որ-դի նորա, որ զկնի աւուրց 'ի յորսս գետամիջին լինի առ կամրջովն ⁵ Մեծամօրի՝ լլկեալ յայսոց։ Եւ առ-նու զԹագն եղբայր նորա Տիրան յերրորդ ամի առաջ-նոյ Պերոզի ամս քսան և մի ⁶, որում երկու ձիք ա-սեն երագունս ⁷, զորս Թևաւորս կոչէին։ Սա մեռանի 'ի ճանապարհին Եկեղեաց՝ պատահեալ նեխի սաստ-

¹ Մեր օր. և 'ի նմանէ հեռանալոյն շինէ զԲագարան անուն կռոց։ — ² Մեր օր. սա շինէ զԱրտաշատ 'ի տեղի, ուր խառնի։ — ³ Մեր օր. և չորեքանկիւնի նշանէ զկալուածս։ — ⁴ Ու օր. և բոլոր տարեաց։ — ⁵ Մեր օր. հիւրանոցն շինէ առ կամրջաւն Մեծամօրի։ — ⁶ Մեր օր. ամս քսանեւմեն և մի։ — ⁷ Ու. օր. որում յետ ասեն երկու երագունս։

[illegible] և [illegible] : [illegible] և [illegible] : Նա [illegible] մինչև [illegible]

[1] [illegible] օր. [illegible] և [illegible] : — [2] Մեր օր. [illegible] — [3] Մեր օր. [illegible] : — [4] Մեր օր. [illegible] — [5] Մեր օր. [illegible]

զաշխարհն Պարսից առնէ աւան՝ փախուցեալ զԱրտաշիր 'ի Հնդիկս, մինչև եկն Անակ և նենգութեամբ սպան զքաջն և մեռաւ ինքն և իւրքն։ Եւ զորդի Անակայ զԳրիգոր առեալ Բուռնդատարայ դայեկի, որ եկեալ զկնի Անակայ և փնացեալ 'ի Կեսարիա և առեալ կին զքոյրն Եւթաղեայ՝ զՍոփի։ Եւ զկնի ամի միոյ դարձաւ 'ի Պարս, և հասեալ անհերոյն տրդելու 'ի Վաղարշապատ քաղաքի, ուր մատնէր Սոփի սնուցանել մանկանն Գրիգորի, ցնա տուեալ այր իւր՝ 'ի գրկացն Ողուհեայ առեալ 'ի ժամ կոտորածոյ ազգին Անակայ և տարեալ 'ի Կեսարիա ընծայեն Գրիգորի[1]։ Եւ վարժեալ անդ յոյն և ասորի գրով և եղեալ երկոտասան ամաց՝ Դաւիթ ոմն ամուսնացուցանէ զնա 'ի դուստր իւր՝ Մարիամ։ Եւ եղեալ երկուց որդւոց՝ մեկնին 'ի միմեանց — Մարիամ 'ի կանանց վանս զնաց երեց որդւովն, և կրսերն զնաց զկնի ճգնաւորի ումեմն Նիկոմաքեայ[2]։ Եւ դարձոյց մայրն զՎրթանէս առ դայեակն իւր, որ և սնուցեալ ամուսնացոյց զնա և։ Իսկ զկնի մահուան Խոսրովու կոտորէ Արտաշէս զպիշատակս նորա, բայց մանուկ մի փոքրիկ Տրդատ անուն՝ Արտաւազդ ոմն նախարար յազգէ Մանդակունի փախուցանէ առ Յոյնս, որ սնաւ առ Լիկիանէ իշխանի։ Եւ լուեալ Գրիգորի զամենայն պատահումն ինքեանց՝ զնաց առ Տրդատ և ծառայէր նմա[3]։ Իսկ միւս եղբայրն Գրիգո-

[1] Ուսմ. օր. 'ի փրկացն Ոգուհեայ առեալ 'ի ժամ կոտորածոյ ազգին Անակայ և վարժեալ անդ յոյն և ասորի։ — [2] Մեր օր. զկնի ճգնաւորի ումեմն Նիկոյ Մաքեա։ — [3] Մեր օր. և ծառայեր նմա։

Ե

րի՝ Սուքիան անուն, առաքեալ եղև առ Աշխադարիւ մեամբ առ Հօրաքեանն, որ էր կին Զաւանչիրի [1] թագա- ւորին Ալանաց, որ և զարքայական չորքս դստե- րինն Պ'ենայց և Գուրգենայ, և Թագաւորութեանց 'ի վե- րայ նոցա. Բայց ունելով աւանն յանուն կոչե- ցեալ Ալանը [2], թէ նա է եղբայր Գուրգենի. բայց Ալանը որդի է քեռն Սնակայ Խոսրովուհեայ, որ էր կին Տիրանայ արքայի, զոր ասեն Թագաւորն Լե- ռնաց Առերես [3]։ Եւ Ալանորդայ առաքեալ զքաջ իւր ըն- Սուքիասն, որդւով Նորաս ձորեկին [4] և զկին ժառանգն ծը- նողաց զնոյն յորկիրն Գուրգենայ, այր և Թագաւորեալ ձորեկն 'ի բարդ սպատահեցանէ։ Եւ նա է, որ եկն 'ի վերայ աշխարհին Յունաց և խնդրէր առնելոյ իւր բա- կայսր Գրիգորեանեանս։ Եւ յարկեցին նորա 'ի ձորե- ճէ՝ խնդրեցաւ այլ որ դրաւոր և զաւակ եղև Տրդա- տայ։ Եւ կանգնեաց կայսերութեամբ՝ ընծայէր զձորէ և ամէն առ կայսր։ Վասն որոյ և Թագաւորեալ՝ զայս առ ձորս Գուրգենի, որ և յառաջին ամին իւրոյ չարչարել զառաջին Սատանայ և արկանել 'ի վիրապն։

Եւ 'ի հնգետասան ամին Տրդատայ գան սուրբ տիկնայքն 'ի ձորս և մարտիրոսանան։ Եւ պատա- հարքն հասին 'ի վերայ Թագաւորին։ Եւ եհան սուրբն Գրիգոր՝ զհիւանդ որ անբուժ առնէին և այլ ևս վասն որ վարդապետելով, ածանէ զաշխարհս 'ի դիւապաշտութենէ։ Եւ 'ի հնգետասան ամին Տրդա-

[1] Մեր օր. որ էր կին որդւոյն Զաւանչիրի։ — [2] Մեր օր. Բայց սմանէ աւին զհօն ամե խաչեցաւ անուան զՑախոբ։ — [3] Մեր օր. Թագաւորն Լփնաց Ոսէրեա։ — [4] Ու. օր. որդւով Նորա Հրապէհա։

ղատայ քահանայանեայ 'ի Տէր, որում [1] փառք յաւիտեանս, ամէն։

Յուլիոս կայսր թագաւորեաց ամս չորս և ամիս եօթն և սպան ներքինի մի 'ի ծածուկ [2] և այրեաց հրով։ 'Ի սմանէ կոչեցան կայսերք Հռոմայ թագաւորքն վասն յաջողելոյն սմա։ Օգոստոս ամս յիսուն և վեց [3]. սա 'ի սպանանելն զԱնտոնինոս և յառնուլն զԵգիպտոս և զԱտրիա Սեբաստոս կոչեցաւ, 'և Աւգոստոս, որ է յաղթող և ինքնակալ։ 'Ի սորա քառասուն և երկու ամին ծնաւ Տէրն։ Տիբերիոս ամս քսան և երկու. 'ի սորա վեշտասանին մեր Տէրն և Աստուածն Յիսուս մկրտեցաւ։ Գայիոս ամս չորս. սա աստուած ես անուանեաց զինքն և սպան զսա աստուած։ Կղօդիոս ամս երեքտասան և ամիս ինն. սորա կինն և որդիքն հաւատացին 'ի Քրիստոս և գտին զխաչն Տեառն։ Ներոն ամս երեքտասան. սա կատարեաց զսուրբ առաքեալսն։ Վեսպիանոս ամս տասն։ Տիտոս որդի սորա ամս երկու, որ առ զԵրուսաղէմ. Դոմետիանոս եղբայր Տիտոսի ամս հնգետասան, սա աքսորեաց զՅովհաննէս 'ի Պատմոս [4]։ Ներուաս մի ամ. սա դարձոյց զՅովհաննէս յԱսիա։ Տրայիանոս ամս ինն և տասն, որ սպան զԻգնատիոս։ Ադրիանոս ամս քսան և մի. սա շինեաց զԵրուսաղէմ 'ի ձեռն Ակիւղասայ աներոյն իւր։ Տիտոս Անտոնինոս, որ կոչեցաւ Եւսեբես՝ որդովքն, ամս քսան և չորս։ Աւրելիոս ամս յիսուն և ինն. Կոմոդոս ամս երեքտասան։ Պերտինաքոս ամս

[1] Մեր օր. և 'ի հնգերորդ ամին Տրդատայ քահանայ լինի ընդհանուր Առաքելոյ, որում։ — [2] Մեր օր. և սպան ներքինի մի ծածուկ։ — [3] Մեր օր. ամս վեշտասան։ — [4] Ու. օր. սա աքսորեաց զՅովհաննէս յԱսիա։

րին, եթէ որդիք են նոցա, որ զթլփատութիւն յանթլ-
փատութիւն դարձուցանէին: Նոքին երկու եղբարքն
և երկու պապքն՝ Գրիգորիս և Աթանագինոս, դաշն
ուխտի՝ կեալ և մնալ 'ի միաւորեալ վերայ. պղծէր
ուխտին՝ առեն, 'ի գլուխ Թագին յահաւոր խորհուր-
դըն: Նա 'ի դառնալն յարևմտից մեծացն աշխարհի՝
լսեալ էին հիւսիսականքն զկոտորն Աղուանից 'ի բանս
Շապհոյ արքային Պարսից: Նա նահապետ ազգին
Աղուանեաց առաջնորդեալ մնանէ յանունն Ուռնայր,
զոր երթեալ Մամիկոնեաց ծննդեան կարգեալ գլխա-
ւորն՝ առաքէր առ Տրդատ. և նա տայր նմա զգաւառն
և յանուան նորա կոչէր տունն Մամիկոնեան: Նա հրա-
կայն Տրդատէս հարկանէր զհիւսիսականսն 'ի Գաւառ-
գարացւոց գաւառին, ուր և սպանէ խոկ զԱնակայն
արքայ՝ զմեծապատերազմ հսկայն:

Յերկուտասան ամին լուսաւորչութեան նորին սուրբն
Գրիգոր զԱրիստակէս առաքէ 'ի Նիկարիա ժողովա-
դրել. վասն առաջին ժողովրդութեան անդ պահե-
լոյն [1] Թագէոսի առաքելոյն և արկանելոյն հիմունս ե-
կեղեցւոյ: Նա տեսան եպիսկոպոսն, զոր արար անդ
սուրբ առաքեալն՝ Թէոփիլոս կոչիւր: Նա յորժամ ե-
ղև 'ի Նիկիա սինհոդոսն և Արիստակէս դառնայր
կանոնական սահմանաւ՝ սուրբ պատրիարքն Գրի-
գոր երթեալ 'ի Տարօն առնէր չորս ամիս առ Անտոն
և Կրօնիդէս, որք և ասացին ցնա, եթէ «Յովանէս
զքեզ (վասն) առաւել փառացդ մնա 'ի ծերութեանդ՝
որպէս զմեծն Մովսէս, զի մի պաշտեսցեն զոսկերս քո

[1] Մեր օր. ժամն առաջին յիւնուսարութեան անդ առնելոյն:

Նորաշինեալ ժողովրդոցն եւ կամ՝ զայրթաւորականսն[1] ՚ի մեծ ռամկական բառախառնութիւն կարծելով», զոր եւ այսպէս խօս-զէ զբնոյ ասելով յաղագս Մ՚անեսայ եւ կատարելագոյն ՚ի լեռն-ական՝ ընդունել ՚ի զաւառարանն. զոր զանել Հոմանոյ թագ-դեցին, ոչ վճարելով զանեն, զոր ցնորս խնայեալ մեծ ծառայեցին. Այսին, թէ՝ յայտնեալ թագաւորն Օ՝ հնոյն խնդրելոյ զեղեւթերն՝ ՚ի սկզբնեան երկնայն ձորոյ, նաւարկ ռամկին, զէ առաջինն[2] զնա եւ ծածկեցեալ զնոքա ՚ի նորոյ Հինանն եկեղեցւոյն Ուղղափառաց, այսպէս եւ՝ ասելով չնկնեցին»: Իւր կայ ամենայն ամենայն, զոր եւ նոքա կարգեալ ընդ՝ առեալ, զՄ՝ բնակարանաց նախիկարացն, որ էր Պ՝րէն զորեղանաւն, եւ յանուն նորա Մեծարքեայ, ուր եւ զերեան նի մնացին ինչ յայլ եւ նա այլք առաջնորդեր էր յայտ եւ յաւերն.

Իսկ՝ առաջին Կոստանդնուպօլսոյ երբեմն զՄ՝ասպանդեր եւ զԼ՝ խիստ այնոցիկ, որ եւ Հայոց Հայաստանեայց զան-մին խորոյ զնորան ՚ի զաւառն Կապադովկիա[3] եւ ՚ի թէմն Օ՝եւ եփրատեանք եւ Ա՝սորեստանեայք եւ Դ՝ալիոն[4] չորրորդն զորս զոր-ցէ զբնակութեան, յորմէ[5] խորտակեալք փախչելոյ ՚ի կողմանս Մեծամօրոյ ամենայն ՚ի Մ՝եծնիոնն, որ է անդրոյ ՚ի լեռնականքն[6], եւ այլք ՚ի Տարօնական կողմն[7], որք բնակութեան առանձին ամենայն կատարեցան[8] յԱյն կեղեցեանսն[9] կոչեցեալ, որ եւ առաւելն մինչեւ ցայսօր. Իսկ[10] առաջինք բառանունքն երկեան Թորգոմեան յայտնին,

[1] Մեր օր. եւ չամ քաղաքակցեցն: — [2] Մեր օր. զէ առաջին զնա: — [3] Ու. օր. ՚ի քաղաքն Կապադովկիոյ: — [4] Ու. օր. Դաղիոն: — [5] Ու. օր. զոր խորտակեալ: — [6] Մեր օր. որ էր անդրոյ ՚ի լեռնախօսմ: — [7] Ու. օր. եւ այլք ՚ի Տարօնական, որք բնակութեան: — [8] Մեր օր. առաւել ամենայն կատարեցին: — [9] Ու. օր. յԵկեղեցեաց յորս կոչեցեալ: — [10] Մեր օր. եւ առաջին բառանունքն:

որ կայ 'ի մերձոյ Ալիս գետոյ, որ այժմ կոչի Քըզըլջա-համամ[1], ուր կառուցին խաչ և դրեցին գերեզմանա-ձևուր անուանս 'ի քարին. զոր գիտացեալ պատանեացն Նախիջևանայ: Իսկ հրամանաւ նորա եկեալ հանին յայրէ անտի յետին և տարան արևել ամաց, զոր Սեխեթանեա ամն կարգեաց, որ է սկիզբն հանգստեան նորա և կառու-ցումն 'ի մարտի ինն: — Յետ այսորիկ խաղաղութիւն խնդրեաց Շապուհ արքայ Պարսից 'ի Կոստանդեայ՝ ննջեալ 'ի Տրդատայ արքայէն: Իսկ նորա հաւանեալ՝ խնդրեաց 'ի նմանէ զԹադէն Պաւլոսի մարգարէի, զոր առ Յովհաննու յորդւոյն Սմբատայ 'ի տանէ Մեծամոլիյ և եղ 'ի գրութիւն Պաւլոսի, որ անկաւ 'ի Բարդեացիսն, և տարաւ 'ի Կիլիկիա և 'ի Պարսս՝ և [2] 'ի Պարսկէ յՄա-զէքանդրիա, որով պատարեցան Մակեդոնացիքն մին-չև ցՄեծափառս, զոր սպան Պարթևն Արշակ, և առ 'ի նմանէ, և եկն մինչև ցՇապուհ, յորմէ խնդրեաց կայսրն, զի օրինակաւն տարցէ իւրն Թադէ[3] և զնո-րայն առ նա դարձուցէ: Իսկ յորժամ եա կարգեալ եղ գերեզմանն 'ի վերայ սեղանոյ և սաստ ծառայիցն Շապհոյ ասացեալ գիւղեանցն: Իսկ նորա աչք կալեալ՝ առին զնորն և զնացին, քանզի խնդրեաց յՄաստու-ծոյ Կոստանդիանոս, զի առ նա մնասցէ սրբոյն Պաւ-ղոսի յիշատակն: — Իսկ սուրբն Տրդատ՝ կոչեցեալ յա-ւագանէն Յովհաննէս, յաղագս պարկեշտ կենացն և չարատեաց բարուցն դեզակուր եղեալ՝ մեռանի յա-նաստուածից ոմանց, թաղաւորեալ առն յիսուն և վեց:

[1] Ուռմ. օր. որ այժմ կոչի ... Վ...ոհանոյ: — [2] Ու. օր. և տարա 'ի Կիւ-րու, 'ի Պարսիկ յԱղեքսանդրիա: — [3] Ու. օր. զի օրինակաւն տարցէ իւր նախատարն և զնորայն:

'Ի սկզբան զԱրիստակէս սպան Արքեղայոս իշխանն Չորրորդ Հայոց 'ի ճանապարհին Ծոփաց. յաղագս միշտ յանդիմանելոյն զնա 'ի գործս իւր չարս: Յաջոր-դէ զաթոռն Վրթանէս եղբայր նորա, մինչ կենդանի էր Տրդատ 'ի յաթոռն և չորս ամի արքայութեան նորա. և զԱրիստակէս տարեալ եղին 'ի Թորդան առ հօրն:

Իսկ զկնի մահուանն Տրդատայ երկրորդ Սանատ-րուկ Արշակունին, զոր կացուցեալ 'ի Փայտակա-րան, Թագ եդեալ խորհէր առնել բոլոր Հայոց, որ և սպանել ետ զմանուկն Գրիգորիս բարբարոսք ազ-գին 'ի Վատնեան դաշտին, զորոյ զմարմինն բերեալ յԱմարաս հանգուցին: Լուեալ զայս մեծ իշխանն Աղձնեաց՝ Բակուր, ձեռն ետ յԱրմիզդ արքայ Պար-սից և խորհէր զՍանատրկոյն. զոր իմացեալ նախա-րարք Հայոց՝ ժողովեցան առ մեծն Վրթանէս և առաքեցին երկու 'ի գլխաւորացն առ Կոստանդին՝ որդի մեծին Կոստանդիանոսի, — որ զկնի մահուան հօրն Թագաւորեաց ամս քսան և չորս, — զի օգնես-ցէ Հայոց և Թագ դիցէ Խոսրովու՝ որդւոյն Տրդա-տայ: Զոր ընկալեալ զխնդիրն առաքէ զԱնտիոքոս զօրագլուխն, որ և Թագ եդեալ Խոսրովու խաղաց 'ի վերայ Սանատրկոյ: Իբրև լուաւ՝ փախեաւ 'ի Պար-սս. և յաւարի առեալ զաշխարհն զօրացն Հայոց՝ դարձան: Իսկ Մանաճիհր Ռշտունի գնացեալ 'ի վերայ Բակուրայ՝ սատակէ զնա. և առեալ գերի բա-զում 'ի կողմանցն Մծբնայ՝ դառնայ, ընդ որս և զեօթն սարկաւագունս սրբոյն Յակոբայ: Իսկ զհետ եկեալ սրբոյն և խնդրեալ[1]՝ ոչ տայր: Իսկ նորա կա-

[1] Ուռմ. օր. և զհետ եկեալ սրբոյն և խնդրելոյ՝ ոչ տայր:

մեկնեալ գնալ առ այլոց՝ գեղջկեկաց առնէր. և այլ-
բոյն խնայեալ՝ զառանցս 'ի տեղի իւր, ամփոփելով զդ-
Մանաճիհր և զաշխարհ նորա, յորմէ չարաչար մա-
հուամբ սատակի, և զաւառն անդստին լինի. մինչև
որդին Մանաճհրի արժանաւոր աշխատութեան յու-
ցեալ և բերեալ հող զինի մահուանն 'ի գերեզմանէ
սրբոյն՝ առաքինի երկիրն հաշտութեամբն Աստուծոյ
բարեխօսութեամբ սրբոյն Յակոբայ։

Իսկ մեծն Կոստանդիանոս ունէր եղբայր մի՝
Դալմատիոս անուն [1], — որոյ էին երկու որդիք՝
Գալլոս և Յուլիանոս, — և երեք որդի՝ առաջին ընդ
անուան իւրոյ հօրն, որում ետ զԿոստանդնուպօլիս
'ի կտակին, զոր գրեաց. և միջինն իւր անուամբն,
որում ետ զՀռոմայ աթոռ. և կրտսերոյն զՀռոմ։
Իսկ խաբեաց միջանկն զկտակարանն և առ զԿոս-
տանդնուպօլիս՝ խոստանալով պահել զանդանդ նո-
րա, զի արքունական էր։ Իսկ կրտսեր առաջին զՀռոմայ
և չոգաւ 'ի վերայ կրտսերոյն փոքուն Հռոմայ։ Իսկ եւ
ընդդէմ նորա հօրեղբայրն Դալմատիոս, առեալ զնա
փոքր եղբօրն և որդւոցն փախեան առ միջինն [2]։

Իսկ 'ի վերջ ամին Կոստանդի [3] բռնացաւ Մագնենտիոս
և յանկարծակի զԿոստաս և զՎետրանիոս և թագ եդ 'ի
Սերմի. և յայն ապստամբն՝ չորք ումանք սպանին ըզ-
Կոստաս և զեղբօրորդի նորա։ Իսկ բռնեալ միջինն եղ-
բայրն՝ զայս սպանանէ զՄագնենտիոս և լինի ինքնակալ և

[1] Յուռմ. օր. Դալմատիոս կոչեցեալ.— [2] Մեր օր. Դալմատիոս և սպան զնա, և չէին որդիք Կոստանդ. այլ զնա կամ եղբայրն և որդիքն փախեան առաջինն։— [3] Մեր օր. և 'ի վերջ ամին Կոստանդի։

կարգէ՝ զԳաղլոս կեսար յԱնտոք և զՅուլիանոս առա-
քէ յուսումն յԱթէնս։ Այլ զկնի այնորիկ ապստամ-
բի Գաղլոս և մեռանի, և Յուլիանոս ապրի աղաչա-
նաւք թագուհւոյն, զոր կեսար կարգէ արևմտեայ կող-
մանն՝ տալով նմա զքոյր իւր զՀեղինէ 'ի կնութիւն, և
ինքն չոգաւ յԱնտիոք։ Իսկ Յուլիանոս յաղթեալ
բարբարոսացն և եղեալ թագ՝ գայ 'ի Կոստանդնու-
պօլիս։ Այլ եղանէ ընդդէմ նորա Կոստանդիանոս՝ ա-
ռեալ միաբանութիւն 'ի Զոյիոսէ[1] և մեռանի 'ի մէջ Կի-
լիկիոյ և Իսաւրիոյ[2]. ասեն՝ զղջացեալ մեռ 'ի վախճանն
և ուղղափառ հաւատով կատարեցաւ 'ի տէրն Քրիս-
տոս։ Զկնի նորա Յուլիանոս ամս երկու և ամիսս
ինն և յետ նորա Յովբիանոս ամ մի, զոր գովէ Մով-
սէս։ Բայց ունինք ասել զնա աղանդողն Արիոսի և
վրիժառու ուղղափառաց, վասն որոյ և խեղդեցաւ
ասեն։ Յետ որոյ Վաղէս ամս չորեքտասան, որ էր
արիոսեան։ Այլ զկնի քառասուն աւուր եղբայր նորա՝
Վաղենտիանոս, կցորդեալ նմա ամս երկոտասան և
մեռանի վասն ուժգին բարբառելոյն խրոխտանօք 'ի
վերայ բարբարոսացն[3]։ Իսկ Վաղէս, որ աքսորեաց
զմերն Ներսէս՝ շանթահար եղեալ[4] սատակի յԱդ-
րիանուպօլիս հրաւիրանաւ գեհենոյն։ Իսկ մերն Խոս-
րով յերկրորդ ամի Որմզդի՝ Պարսից արքային, և 'ի
յութ ամին Կոստանդեայ թագաւորեալ 'ի վերայ
Հայրենեացն ամս ինն՝ շինէ զԴուին, որ ասի Բլուր[5]։

[1] Ուղ. օր. Զոյիոսէ ունի, մերն զՊիոսէ։ — [2] Ցերկուսին օր. կայ 'ի մէջ Կիլիկիոյ և Սորիոյ, զոր մեք Իսաւրիոյ ուղղագրեցաք։ — [3] Մեր օր. խրոխտանօք 'ի բարբարոսացն։ — [4] Ուղ. օր. որ աքսորեաց զմերն Ներսէս՝ շանթահարեալ մեռանի։ — [5] Ուղ. օր. շինէ զԴուին, որ 'ի Բլուր ասեն։

անդ ածելով զճնակիչսն Արտաշատու խորանից խոկ կամաւք, վասն հրախառն օդոյն զնէ զարքունեաւն իւր անդ։ Յաւուրս սորա միաբանեալ 'ի կողմն Ծմակայքն [1] բիւրք երեք տապատակեցին յԱյրարատ, ուր և առաքինացաւ Վահան Ամատունի՝ տատակելով ըզզօրագլուխ նոցա զվառնալն կձակուռ Թաղեաւ, և յաղթահարեալ զօրքն՝ դարձան 'ի կորուստ։ Նայց զօրավարն Վաչէ անկեալ 'ի պատերազմի՝ յիշեալ հրամայեաց զանուն նորա 'ի պատմագրին սուրբն Վրթանէս։ Սատարեալ Խոսրովու զկեանս՝ Թաղի առ հօր իւրում 'ի Կամախ։ Եւ իշխանական Վաստանգեանոս յեօթն և տասն ամին իւրում զնէ Թագ Տիրանայ՝ որդւոյ նորա, և առաքէ 'ի Հայս, որ ոչ զնայր [2] ընդ շաւիղս հայրց իւրոց բարեգործաց։ 'Ի յերրորդ ամի նորա փոխի յաշխարհէս սուրբ պատրիարգն Վրթանէս և դնի 'ի Թորդան։ Եւ առնու զաթոռն սուրբն Յուսիկ՝ որդի նորա, ամս վեց, որ և տեսանէր յանդիմանէր զԹագաւորն վասն պղծոյ գործոց [3] նորա. յորում աւուր բերաւ պատկերն Յուլիանոսի առ Տիրան, և նա զնել կամեցաւ յեկեղեցւոջ 'ի դաւառին Ծոփաց և սուրբն Յուսիկ կոխեաց և մանրեաց զայն առ ոտիւքն։ Եւ սրտառեալ Թագաւորն ջալատիւք հարկանել զնա հրամայեաց մինչև յաւանդումն հոգւոյն, զոր տարեալ եդին առ հօր իւրում։ Եւ եկեալ սուրբն Դանիէլ ծերունի քորեպիսկոպոս՝ լեալ աշակերտ սրբոյն Գրիգորի, անէծ զՏիրան. ընդ որ

[1] Ու. օր. միաբանեալ կողմն Ծմակայքն բիւրք։ — [2] Մեր օր. որ ոչ գնաց ընդ շաւիղս հարց։ — [3] Ու. օր. վասն պղծոյ գործոյն նորա։

զչարեալ թագաւորն՝ խնդրամահ նորուն առնել զնա․ և թաղեցաւ յիւր մենարանին, որ ասի Հացեաց դրախտ [1]։ Իսկ առնու զաթոռն Փառներսեհ Աշտիշատայ՝ այր լաւ [2], ամս չորս․ յորում ժամանակի եկն զօրավարն Պարսից մեծ ամբոխիւ՝ և խաբանաւք առ ինքըն կոչեաց զՏիրան և խաւարեցոյց զաչս նորա [3] 'ի գաւառին Աղահունեաց 'ի գեօղն, որ Արծիւն կոչեցաւ 'ի պատահմանէ գործոյն։ Իսկ եա իրաւունս Տիրանայ ասելոյ [4]՝ «Զերկու լուսաւորս խաւարեցուցի՝ խաւարեցան երկոքին աչք իմ» [5]։ Զսուրբն Յուսիկ առեն միանգամ զխոտացեալ զկին իւր և յայնմանէ ծնեալ նմա երկու որդիս երկուորեակս՝ կոչեցեալ Պապ և Աթանագինէս, որք 'ի սարկաւագութիւն կոչեցեալք, այլ ապաեղութեան տուեալք զանձինս՝ շանթահէզք եղեն 'ի միում աւուր, մնացեալ որդի մի Աթանագինէի՝ Ներսէս անուն, յուսումն 'ի Կեսարիա։ Իսկ 'ի թագաւորելն Արշակայ՝ որդւոյ Տիրանայ, եկն առ նա և կայր նմա 'ի հնազանդութեան՝ կրելով զաւներն պողովատիկ առաջի նորա [6], զոր յղեալ թախանձանօք ածեալ 'ի հաւանութիւն՝ առաքեն 'ի Կեսարիա առնուլ զաթոռն սրբոյն Թադէոսի և Գրիգորի, զոր սուրբ Հոգին հրաշագործեաց իջմամբ աղաւնակերպ [7] 'ի վերայ նորա 'ի զարմացումն տեսողաց։ Իսկ նստեալ՝ բարւոք կարգաւորէր զաշխարհս մեր, շինելով

[1] Մեր օր. որ ասի Հացեաց դրախտ։ — [2] Ցերեկոյեն օր. այր լաւ։ — [3] Ու. օր. առ ինքն կոչեցեալ զՏիրան և խաւարեցուցեալ զաչս նորա։ — [4] Ցերեկոյեն օր. ասելով, զոր ասելոյ ուղղագրեցաք։ — [5] Մեր օր. զերկուս լուսաւորս խաւարեցուցի, խաւարեցան երկոքին աչք իմ։ — [6] Մեր օր. և կայր նմա հնազանդութեամբ, կրելով զբաւանդն պողովատիկ առաջի նորա։ — [7] Մեր օր. հրաշագործեաց իջմամբ 'ի վերայ նորա։

վանորայս և օտարանոցս և հիւրանոցս և տուն հիւան-
դաց և որբոց՝ բառնալով զհակառակութիւն[1] և զա-
նողորմութիւն և զկոծն 'ի վերայ մեռելոց և զազգացն
խնամութիւնս։ Նա և էր տեսանել զաշխարհս մեր այ-
նու հետև իբրև զվերին Երուսաղէմ՝ լի ամենայն բա-
րեձևութեամբ. զոր տեսեալ թագաւորին և նախա-
րարացն և իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ՝ ան-
ուանեին զնա պատրիարգ, «Օհ առ մեզ կան՝ ասէ,
սիւնք անշարժելիք — Բարթուղիմէոս և Թադէոս և
սուրբ Լուսաւորիչն, որ պապն կոչեցաւ 'ի Հռոմ՝
հաւասար այնմ, որ նստի յաթոռն Պետրոսի». զի զա-
ռաջինն չորս միայն էին՝ — յԱնտիոք Մատթէոսին, և
'ի Հռոմ Ղուկասուն, յԵփեսոս Յովհաննու և յԱ-
ղեքսանդրիա Մարկոսին։ Նա և յաւուրս որդւոց մե-
ծին Կոստանդիանոսի Կոստանդնուպօլսեցիք և Երու-
սաղէմացիք համարձակեալ[2] պատրիարգունք կոչեցին
զառաջնորդս իւրեանց։ զԿոստանդնուպօլիս, վասն
զի Յովհաննուն անդ փոխեցին[3], և զԵրուսաղէմ վա-
սըն տնօրինականացն. և մեք՝ ասեն, վստահացուք 'ի
մեծ պարծանս մեր։ Իսկ Սեբաստիոյ և զՄելտենոյ[4] և
զՄարտիրոսաց քաղաքին զեպիսկոպոսն մետրապօ-
լիտ կոչեցին[5] և յօրինեցին զենն դասուց երկնից խոր-
հուրդն 'ի Հայս[6], այսինքն՝ պատրիարգ և մետրապօ-
լիտ և եպիսկոպոս և քահանայ և սարկաւագ և կէսար-

[1] Մեր օր. դառն հիւանդաց և որբոց՝ բառնալով զխախտմունս։ — [2] Մեր օր. Կոստանդնուպօլսեցիք և Թիֆլիսցիք։ — [3] Ռ. օր. զԿոստանդնու-պօլիս Յովհաննու անդ փոխեցին։ — [4] Երկուսին օր. իսկ Սեբաստիոյ և Մել-տինոյ, զոր ուղղագրեցաք՝ որպէս ունենալ ունի ընթերցողն 'ի բնագր-րին։ — [5] Ռ. օր. մետրապօլիտն կոչեցան։ — [6] Մեր օր. և յօրինեցին զենն դասուց երից խորհրդոյն 'ի Հայս։

կուսանք և դպիր և կրօնաւոր և սրբեալ ժողովուրդն։

Յաւուրս յայսոսիկ նշկահեաց Արշակ զՎաղենտինիանոս կայսր. և նորա բարկացեալ՝ սպան զՏրդատ եղբայրն Արշակայ, որ կայր 'ի պատանդի։ Նա և գնացեալ մեծին Ներսիսի՝ պատուի 'ի կայսերէ. և շնորհաւորեալ նմա զանուն պատրիարգութեան և տուեալ ցնա զօրդի սպանելոյն և պարգևս բազումս՝ դարձուցանէ 'ի Հայս։ Իսկ զկնի մահուանն Վաղենտիանու չարափառն Վաղէս՝ լուծեալ զխաղաղութիւն ընդ Հայս, խնդրէ զանձն Արշակայ 'ի ձեռն զօրավարին Թէոդոսի։ Նա և սուրբ պատրիարգն՝ առեալ զՊապ որդի Արշակայ, գնաց առ Թէոդոս և նուէր 'ի դուռըն կայսեր։ Նա տեսեալ զԹագաւորն՝ քարոզէ նմա ուղղափառութիւն, և 'ի չհաւանելն՝ մեռանէր որդի նորա. և բարկացեալ Թագաւորին՝ աքսորէ զնա 'ի կղզի անբնակ եօթանասուն ոգւով զինն ամիս, որք շնորհաւքն Աստուծոյ կերակրեալ լինէին 'ի շաբաթն և 'ի կիւրակէսն ձկամբ, զորս ընկենոյր ալիք ջուրցն հանդերձ փայտիւք և հրով։ Նա որպէս առեն՝ սպանեալ զՎաղէս Գէորգէոս վկայն և հրկէզ լեալ մարտին։ Նա առնու զԹագն մեծն Թէոդոս, և նա դարձուցանէ զսուրբն 'ի կղզւոյն և առնէ նովաւ ժողով ընդդէմ հոգեմարտին հարիւր և յիսուն եպիսկոպոսաց՝ նզովելով զՄակեդոն և զամենայն խմորեալսն 'ի նմանէ։ Նա հաստատեալ պատրիարգն Ներսէս հարիւր յիսուն եպիսկոպոսաց վկայութեամբ՝ դառնայ 'ի Հայս։ Իսկ Արշակայ սպանեալ զԳնէլ եղբօրորդի իւր վասն Փառանձեմայ կնոջ նորա 'ի քըսութենէ Տիրիթայ՝ նզովէ զնա սուրբն Ներսէս և խն-

քըն գնայ 'ի Յոյնս՝ փոխանորդ իւր Թողեալ զԽադ ե-պիսկոպոս Բագրեւանդայ, որոյ շտեմարանքն ամբե-րացան որպէս Եղիշայի կնոջն այրւոյ։ Ընդ այն ժա-մանակս Հայոց արքայն Պարսից գայ յԱրշա-կաւան և առ ինքն կոչեալ զՆերշակ՝ կամէ զնա և տայ տանել յԽնուշն կոչեցեալ դղեակ, ուր և մեռաւ՝ ան-ձին արարեալ արով[1]։ Իսկ սուրբն Ներսէս՝ լուեալ զայս, խնդրէ 'ի կայսերէ Թագաւորեցուցանել զՊապ որդի Արշակայ, զոր և արար իսկ. առաքէ զօրու ծանու 'ի Հայս պատրիարգաւն Ներսիսիւ, ուր եկեալ զտեղն զաշխարհս միաբանեալ Մեհրուժանին Արծրունւոյ՝ ուրացողին զՔրիստոս[2], պարսկական զօրք լցեալ։ Ընդ որս մարտուցեալ՝ սպառեն զպարսկական զօրութիւնք սրբոյն. և զՄեհրուժանն կալեալ Սմբատայ Բագ-րատունւոյ հրացեալ շանթիւք սպանէ զնա՝ նախա-տանաւք սաստկեալ. և հաստատեցաւ երկիրս ընդ ձեռամբ Պապայ ամս եւթն։ Յորում ժամանակի շի-նեաց Անատօլիս՝ զօրավարութիւն Յունաց, յանուն կայ-սեր զԹէոդուպոլիս[3]։ Իսկ Պապ՝ յանդիմանեալ 'ի Ներսիսէ յաղագս չարեաց գործոցն, տայ նմա դեղ մահու 'ի գեղջն Խախ յԵկեղեաց գաւառին զանխո-լաբար. և Թաղեցաւ 'ի Թիլն, որ կալաւ զաթոռն ամս երեսուն և չորս։ Եւ կացոյց Պապ 'ի տեղի նո-րա զՇահակ ոմն սակաւ աւուրս, և ապա զԶաւէն 'ի զաւակէն Աղբահունեաց առանց ձեռնադրութեան Կե-սարիոյ ըստ օրէնի պատրիարգաց, որ պաշտեաց զա-

[1] Ուռմ. օր. [illegible] և [illegible], [illegible]։ — [2] Մեր օր. [illegible] զաշ-խարհս միաբանեալ Մեհրուժանին Արծրունւոյ՝ ուրացողին Քրիստոսի։ — [3] Ու. օր. յորում ժամանակի շինեաց Անատօլիս. Իսկ Պապ յանդիմանեալ 'ի Ներսիսէ։

թոռն ամս չորս։ Իսկ զօրավարին Անտիոքեայ կոչեալ զՊապ խաբանօք[1], կապէ զնա յերկաթս և առաքէ զնա առ Թէոդոս[2], որ չարաչար զնա արժանի սպանանելոյ, այլ հրամայեաց ընկենուլ զնա ՚ի ծով։ Իսկ թագաւորեցուցանէ Հայոց զՎարազդատ ոմն Արշակունի ամս չորս։ Յերկրորդ ամի նորա ննջէ տէր Սահակ. և յաջորդէ զնա Զաւէն՝ եղբայր նորա, լաւ իբրև փեա՝ ամս չորս։ Իսկ Վարազդատա որսացեալ սպանելոյ զքաջն Մուշեղ[3]՝ հալածի[4] յազգէն Մամիկոնէից։ Իսկ Թէոդոս աքսորէ զնա ՚ի Թուլէս կղզի[5] և թագաւորեցուցանէ Հայոց[6] զերկուս որդիսն Պապայ՝ զԱրշակ և զՎաղարշակ։ Յերրորդ ամին Արշակայ՝ ննջէ Զաւէն, և առնու զաթոռն[7] Ասպուրակէս՝ եղբայր նոցունց և առաքինակից, ամս եօթն։ Իսկ բաժանեն զաշխարհս Շապուհ Պարսից և Արկադէոս որդի Թէոդոսի՝ յետ առարեալ ընդ միմեանս։ — Արշակ առնու յանձն զկողմն Յունաց փառս հաստատակցութեան, իսկ Վաղարշակ, որ ունէր ըղձման Պարսից[8]՝ զարևելեան կողմն[9], մեռանի։ Իսկ դնէ ՚ի տեղի նորա Շապուհ զԽոսրով ոմն Արշակունի, որ զկնի երից ամաց մերժի ՚ի տէրութենէն ՚ի քըրսութենէ գործակալաց աշխարհիս, — նոյն՝ որ նորաւոյց յաթոռ պատրիարգութեան զսուրբն Սահակ որդի մեծին Ներսիսի, որ պաշտեաց զսուրբ աթոռն

[1] Ուղղ. օր. Իսկ զօրավարն Անտիոքայ կոչեալ զՊապ խաբանօք։ — [2] Ու. օր. առաքէ զնա առ Թէոդոսիոս։ — [3] Մեր օր. զբռնացեալ զքաջն Մուշեղ։ — [4] Ու. օր. հալածի յազգէն Մամիկոնէից։ — [5] Մեր օր. աքսորէ զնա ՚ի Թուլէս կղզի։ — [6] Ու. օր. Թագաւորեցուցանէ զերկուս որդիսն Պապայ։ — [7] Մեր օր. և առնու զաթոռն Ասպուրակէս։ — [8] Մեր օր. որ ունէր զխղճմ Պարսիցն։ — [9] Ու. օր. զարևելեան կողմն։

ամս յիսուն։ Իսկ Թագաւորն Պարսից կացոյց 'ի տե-ղի Խոսրովու զՎռամշապուհ՝ եղբայր նորին, ամս հնգետասան։

Յեւթն ամին սորա [1] և յառաջին ամին Արտաշէսի որդւոյ Շապհոյ սուրբն Մեսրոպ յօրինէ Հայերէն դպրութիւն՝ քսան և երկու գիր առ Դանիէլի ասոր-ւոյ գտեալ 'ի հին ժամանակաց, որ վասն ոչ պատշաճե-լոյն [2] զընդարձակութիւն լեզուիս անհոգացեալ եղև յառաջնոցն՝ յոյն և ասորի և պարսիկ գրով շատա-ցեալք։ Իսկ Մեսրոպ ոչ կարէր նոքօք փոխել զԱս-տուածաշունչ մատեանս 'ի Հայ բարբառ. վասն որոյ աղօթիւք առեալ զանձն՝ գործակցութեամբ սրբոյն Սահակայ, այլ նմա Աստուած շնորհատուեան զգիրս ա-ջովն իւրով դրոշմեալ առաջի նորա՝ որպէս մեծին Մովսիսի 'ի լեառն Սինայ, և սմա 'ի լեառն Բալուայ, որպէս տեսանէին ցուցանի դրոշմն աստուածադիծ 'ի վիմին և նկարք գրերոյն. և պատուի տեղին խնկօք և ջահիւք միշտ 'ի Տաճկաց և 'ի քրիստոնէից՝ բնակ-չաց տեղւոյն։ Իսկ զի լեալ է Հայերէն գիր 'ի հնումն — վկայեցաւ 'ի ժամանակս Լևոնի արքայի. զի գտաւ դրամ 'ի Կիլիկիա [3] Հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ Թագաւորացն Հայկազանց, զորոյ զԹե-րութիւն ելից նորս մեր Ներսէս աստուածախառն շը-նորհաւք լցեալ — նորոգիչ նորոյս Խաչայրի և կար-գաւորիչ. որ 'ի ձեռն աստուածատուր պարգևացն զԾառազայթ սրբոյ երրորդութեանն առեալ մարգա-րէիւք և առաքելովք և աւետարանչաւք և երկնային

[1] Այլք օր. 'ի հինգ ամին սորա։ — [2] Այլք օր. որ ոչ պատշաճելոյն զընդար-ձակութեան լեզուիս։ — [3] Այլք օր. զի գտաւ դրամ հայերէն գրով։

զատուքն և ամենայն արդարոցն խնդրեսք՝ զայր մեռանէր 'ի Հայաստան աշխարհս և զանձէր յեկեղեցիս մեր զանտասանելի գեղեցկութիւնս՝ 'ի զարդ հոգւոց և մարմնոց [1] և 'ի պարծանս յաւիտենից, զոր ոչ արար ամենայն ազգաց Տէրն բոլորից. քանզի ոչ ճարտարաւք և ոչ միջնորդովք իմաստնոցաւք և առաջնորդեցաք առ նա, այլ 'ի յերկնապարգեւ և յաշխարհաստեղծ աջոյն գրեցաւ մեզ դպրութիւն ուսման: Եւ Տեառն մերոյ և Աստուծոյ յիշատակն կենդանի է 'ի մատեանս մեր՝ զօրութիւն տալով և շնորհս, որք հաւատոցն մտաչեն և բանականանալես. վասն որոյ փառք, պատիւ և գոհութիւն 'ի Տեառնէ ածողին առ մեզ և պայծառութիւն յիշատակի անուան նորա 'ի գիրն կենաց Մեսրոպայ որ է կանաչացեալ, այսինքն՝ յարադուարձ և բերկրեալ հօր մերում տեղի և յիշատակ ընդ առաւել սուրբսն. և մեզ աղօթիւք նորա ողորմութիւն և գթութիւն յԱստուծոյ 'ի համար աշակերտաց նորա և հոգևոր որդւոց:

Զուարճացեալ ապա սուրբ պատրիարգն Սահակ երկնառաք պարգեւաւքն՝ ընտրէ մանկունս առաքինազարդս և առաքէ յազգս բերել յամենայն ազգաց զարուեստ մատենից — զՅովսէփ, զՂեւոնդ, զՅովհաննէս, զԱբրահամ, զԱրձան, զՄուշէ, զԵզնակ, ըզԿորիւն և զայլս. ապա զկնի սակաւուց և զՄովսէս, զԴաւիթ և զԵզնիկ և զՄամբրէ՝ զեղբայրն Մովսիսի. զկնի սոցա և զԱրձան Արծրունի և զԽոսրով և զՂազար պատմագիր: Սոքա թարգմանեցին զամենայն մատեանս 'ի սոյզ օրինակաց սրբոյն Ղեւոն-

[1] Յերկուսին օր. զարդ հոգւոց և մարմնոց:

դէ։ — Նորոգեաց սուրբն Սահակ և փութանակի սրբոց Հայրախօսութեանց՝ զաւետարանն 'ի Շահապայ. — և անդրադարձեալ նշխարացն՝ խնդրեալ յԵստուծոյ, յայտնեցաւ նմա։ Այս եւեւս զբառնալ թագաւորութեան և զքահանայութեան յազգէն Պարթևաց և վերջացեալ անդրէն նորոգել 'ի լման աւուրց։ Այսպէս էր դուստր մի միանձն, զոր առաջ յանուանութիւն Համազասպայ Մամիկոնեայ, յորմէ ծնաւ սուրբն Վարդան։

Ընդ պաշտօնէին այլն Եստուծոյ Մեսրոպ, անցեալ 'ի Վիրս՝ առնէ նոցա գիրս 'ի ձեռն Ջաղէլի ուսումնի, որ աշակերտեցաւ նմա։ Եւ գնացեալ յԱղուանս՝ ստեղծու նոցա գիրս ըստ նոցա լեզուին ձեռամբ Բենիամենի, որ անուն աշակերտեցաւ նմա։ Իսկ Վռամշապուհ թագաւորն կատարեաց զկեանս իւր[1]։ Եւ գնացեալ սուրբն Սահակ առ Յազկերտ խնդրէր զԽոսրով, որ էր 'ի բանդի և վերստին թագաւորեցուցանէ զնա. որ ոչ աւելի կացեալ քան զտարի[2] վախճանի։ Եւ 'ի մեռանելն Յազկերտի նստի յաթոռ Վռամ երկրորդ, որ և բազում չարիս խորհէր ածել 'ի վերայ մերոց հաւատոց[3], զոր իմացեալ սուրբն Սահակ գնայ առ Յունաց և առաքէ զսուրբն Մեսրոպ. և զՎարդան թոռն իւր առ Թէոդոս՝ որդի Արկադեայ. զոր խնդրութեամբ ընկալեալ՝ կոչեն զՎարդան ստրատելատ և զՄեսրոպ վարդապետաց վարդապետ. — և գրեաց հրամայեն կարգել Թէոդոս և պատրիարքն Ատտիկոս և ամճիկս յարքունուստ կար-

[1] Բուզ. օր. եւ Վռամշապուհ բարեաւ կատարեալ զկեանս իւր և վախճանեցաւ։ — [2] Մեծ օր. որ ոչ կացեալ աւելի քան զտարի։ — [3] Մ. օր. 'ի վերայ մերոց հայոց։

գեն։ Նոյն դարձեալ եկեալ առ սուրբն Սահակ և կատա-
րեն զհրամանն։ Յետ այսորիկ առաքէ զՎարդան
առ Վռամ՝ զհաշտութիւն խնդրել և թագաւորե-
ցուցանել զԱրտաշիր՝ որդի Վռամշապհոյ, զոր և
պարսն իսկ։ Իսկ Մովսէս ասէ, թէ զկնի Խոսրովայ
թագաւորեցոյց Յազկերտ զորդի իւր զՇապուհ ամս
երիս, որ և 'ի հանգիւ մահու հօրն գնացեալ՝ մեռա-
նի 'ի զօրացն. և ասեն՝ մնաց երկիրս անիշխան և
շփոթ ամս մետասան։ Նոյն ապա թագաւորեաց Ար-
տաշիր, որ և ատեցեալ եղև 'ի նախարարացն [1] վասն
զազիր գործոյ իգամոլութեան. վասն որոյ աղաչէին
զմեծն Սահակ ընկենուլ զնա։ Նոյն 'ի չհաւանելն նո-
րա՝ ինքեանք երթան 'ի դուռն Վռամայ, կոչել տան
զԱրտաշիր և յղել 'ի Խուժաստան [2]։ Նոյն ընկեցեալ
զսուրբն Սահակ՝ կարգեն 'ի տեղի նորա զՍուրմակ [3]՝
չարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի
հալածի։ Նոյն դնեն զԲրքիշոյ ասորի ամ մի։ Նոյն ապա
զՇմուէլ 'ի նոյն ցեղէ աղքիփեզք [4] և վատավարք,
յորոց տաղտկացեալ [5] նախարարացն Հայոց՝ հա-
լածեն և աղաչեն զսուրբն Սահակ առնուլ զաթոռն,
որոց ոչ հաւանէր. բայց 'ի վարդապետութենէն ըն-
նաս ոչ դադարէր [6], այլ դիեցուցանէր հոգևոր զա-
ւանցն զերկնաւոր աւետիսն 'ի տուէ և 'ի գիշերի։
Նմանք զկնի Բրքիշոյի և Շմուէլի ամեն առեալ Սուր-
մակայ զաթոռն ամս եօթն [7]։ Նոյն սրբոյն Սահակայ

[1] Մեր օր. որ և ատեցեալ եղև նախարարացն։ — [2] Ո. օր. յղեալ 'ի խուժաստան։ — [3] Ո. օր. և ընկեցեալ զսուրբն Սահակ կարգեն զՍուրմակ։ — [4] Մեր օր. ափսէթիեկոյք և վատավարք։ — [5] Ո. օր. որոց տաղտկացեալ։ — [6] Մեր օր. ոչ դադարէր։ — [7] Մեր օր. ամս հինգ։

արարեալ դոյզն ժամանակս 'ի դաւառին Բագրեւանդայ 'ի գեօղն Բլուր՝ կատարի 'ի Քրիստոս և ամփոփի յԱշտիշատ: Զկնի սատակման Վռամայ և տիրելոյն Յազկերտի՝ որդւոյ նորա, զկնի ապա վեցից ամաց կատարի սուրբն Մեսրոպ 'ի Վաղարշապատ և դնի յՕշական գիւղ, խաչանման լոյս երկնաւոր կալով 'ի վերայ դագաղացն՝ մինչև եդաւ 'ի գերեզմանի: Բայց զաթոռն տեղապահութեամբ խնամէր Յովսէփ՝ աշակերտ Մեսրոպայ 'ի Վայոց ձորոյ 'ի գեղջէն Հողոցմանց: Եւ ամենն՝ Սուրբենին կատարէր զձեռնադրութիւնն մինչ կենդանի էր՝ զամս եօթն: Իսկ նախարարացն 'ի մի վայր ժողովեալ՝ կացուցանեն տեղապահ թագաւորութեան զսուրբն Վարդան:

Զայսու ժամանակաւ դարձան 'ի թարգմանութենէ Ղևոնդ, Կորիւն և Երձան, որ դիպեցան 'ի ժողովն Եփեսոսի, զոր արար [1] Թէոդոս 'ի մետասան ամի թագաւորութեան իւրում վասն Նեստորի չարի: Եւ բերին անտի կանոնս [2] վեց գլուխս: Բայց գունդն Հայոց էր որ՝ հնազանդէին Պարսից, էր զի՝ ընդդիմանային պատերազմաւ յորժամ վասն հաւատոյ ոյժ [3] հատանէր, քանզի Շաւասպ Արծրունի և Վնդոյ՝ աւագ նախարարքն, ուրացեալք զհաւատս շինեն 'ի Դուին մեհեան Որմզդի և տուն կրակի և քրմապետ դնեն զՇերոյ [4]՝ զորդի Վնդոյի. զոր լուեալ Վարդան գայր իւրով գնդաւն և սատակէր զՇաւասպ և

[1] Ռում. օր. արարեալ Թէոդոսի: — [2] Ա. օր. և բերին անտի կանոնս վեց: — [3] Մեր օր. վասն հաւատոյ ույժ հատանէր: — [4] Մեր օր. դնեն զՇերոյ:

զմնացորդսն Մուշկան փախստականն առնէր և զպիղծն Մանդոյ յատրուշանն հրոյ արկեալ՝ այրէր, և զՇերոյ 'ի վերայ բագնին կախէր զփայտն, և զմեհեանն շինէր եկեղեցի անուամբ սրբոյն Գրիգորի։ Նա զաւուրսն Յովսէփի ձեռնադրեին կաթողիկոս, որ առաջ զժողովն 'ի Շաղարհի վանս[1], ուր զառուզանաց կանոնն կարգեցին։ Զկնի երկուց ամաց եկեալ զօրն 'ի Պարսից և ըմբռնեալ զնա և զՍահակ և զՎահան և զայլս՝ եղին 'ի բանդի որպէս գերաստանս Վարդանայ հեռագոյն ոստանեալ 'ի յամբռնելն զաւուրսն․ զոր և խոստութեամբ ըմկալեալն զկապանս վասն Քրիստոսի և ոչ յօժարեցան հանել[2] զնոսա մինչև ցժամանակն։ Վասն որոյ 'ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց՝ գնեն զԳիւտ պատրիարք, և 'ի Գուրին փոխեն զաթոռն հրամանաւ նորին Յովսեփայ, յորում մնացեալ հնազանդեցան սրբոյն Վարդանայ նախարարքն Հայոց ամենեքեան, որովք տայր պատերազմ ընդ Պարսս զամս ինն և տասնըն՝ յաղթեալ քաջասուն երկու պատերազմաց մինչև ցկատարումն իւր մարտիրոսութեամբ աւրհնութեամբ սրբոյն Աւահալոյ, որ 'ի ժամ վախճանի իւրոյ յանձնեանն նաւասարդի յերեսուն՝ յաւուր ծննդեգեան իւրոյ աւրհնեաց զնա և զեղբարս իւր՝ զՀմայեակ և զՀամազասպեանն[3], նոյնպէս և սուրբն Մեսրոպ յիւրում կատարմանն՝ յերկրպագութեան մեհեկի ամսոյ, որոց աղօթիւք և աւրհնութեամբ պարգևեսցուք և պահեսցան։ Վանդի ընդ այն ժամանակս եկաց 'ի

[1] Այլ օր. 'ի Շահի վանս։ — [2] Այլ օր. և ոչ յօժարեցին հանել զնոսա։ — [3] Այլ. օր. զՀամազասպեանն։

գերծ [1] Հազարապետութեան Յազկերտի չարամիտն Դենշապուհ, և չոգաւ առ նա սեպուհն Վարազ վաղ-ղեան, որ էր փեսայ Վասակայ՝ Սիւնեաց իշխանին 'ի նոյն ազգէ՝ ատեցեալ և հալածեալ աներոյն իւրոյ; որ և ուրացեալ զՔրիստոս զզուեաց զնա 'ի յանցեան զոր անցայց ընդ Հայս. որ և 'ի նոյն խորհու-թեան սատանայի անկանէր անէր նոքին Վասակ [2], — և՝ եղեն պատճառք այնքան աղէտից, որ եկանց ընդ Հայս, զոր յընդարձակ պատմութիւնն է տեսանել: Իսկ վկայեցին Վարդանեանքն հազար երկու հարիւր երեսունքն 'ի հրոտից երեսուն 'ի մեծատասանն Յազկերտի. և զկնի երկուց ամաց սուրբ երէցն Սամուէլ և սուրբ սարկաւագն Աբրահամ 'ի հրոտից եօթն և սուրբ եպիսկոպոսն Բասենոյ Թաթիկ [3], որ յառաջագոյն տարեալ 'ի Խուժաստան գաւառն տանջանաց 'ի տասն հրոտից: Իսկ սուրբ կաթողիկոսն Յովսէփ և սուրբն Սահակ և Ղևոնդ և երէցն Մուշէ և սուրբ երէցն Արշէն և սուրբ սարկաւագն Քաջաջ — վեցեքեանն սոքա կատարեցան 'ի քանն և Հինդ [4] հրոտից յԱպար աշխարհի 'ի փառս Աստուծոյ, և երանելի մոգպետն՝ մարգանց 'ի տասն: Առաջնորդն ասէ, թէ սառուցեալք զմեծատասան Յազկերտի երկք ամ Մարկիանոսի: Յորում աւուր սուրբն Մովսէս [5] և Մամբրէ և Գրաւիթ եկեալ յուսմանէ՝ հոգացին զառն կաթողիկոսարանին: Իսկ Թուլի, թէ 'ի չինել ժողովոյն Քաղկեդոնի փախճանեալ էր Գիւտ և չէր նստեալ

[1] Մեր օր. փոխէ ընդ այն ժամանակս 'ի գործ հազարապետութեան: — [2] Բ. օր. անկանէր անէր Վասակ: — [3] Մեր օր. Թաթիկ: — [4] Մեր օր. 'ի փառս և երեք հրոտից: — [5] Մեր օր. յորում Մովսէս և Մամբրէ:

Յոհան Մանդակունի։ Եւ բերեալ առ սոսա Թուղթ դաւանութեան՝ ոչ ընկալան, զի արտաքոյ էր ամենայն սրբոց հարցն աւանդից. այլ չոգան Մովսէս և Դաւիթ, Թէ հնար իցէ՝ օգնել ուղղափառութեան։ Վասն զի զառանձինն այսպիսի բանք առ մեզ, Թէ Դաւիթ խօսեցաւ յերկար ընդ Յոհնաղայ և ընդ գլխաւոր երիցն Պողքերայ և ընդ Մամբրէի արքեպիսկոպոսին Կորնթացւոց[1] և կարկեցան և յամօթ եղեն։ Եւ ապա յայն եկաց Մելիտոս մետրապօլիտն Մակեդոնացւոց և ասէ ցՄովսէս. — «Գիտեմ զքեզ և զաշակերտսդ[2] քո՝ — 'ի մանկութենէ կրթեալ էք և թեքեալ 'ի ծոռոմ բանս կոկոզաբանից և կրկնազօնեցն.[3] փիլիսոփայից և ոչ ոք կարէ յաղթել ձեզ՝ այլև նախանձու վառեալ էք, զի ոչ կոչեցաք զձեզ, զի չէր կենդանի պատրիարգն ձեր»։ — Եւ ասէ Մովսէս. «ապաքէն ճանաչես զմեզ, զի անդրանիկք իսկ էաք եկեղեցւոյ և դաստաւորք հայրապետանոցին՝ և ընդէր ոչ կոչեցէք[4] զմեզ և զքաղցրահամութիւնս մեր նախատինս առնես։ Բայց պատճառ ժողովոյն ձեր չէ ծածկեալ յումեքէ, այլ մեք զճշմարտութիւն ոչ թողումք. — մի բնութիւն ասել մարմնացելոյն։ «Ասէ Մելիտոս. «որպէս ասես զմիմն յառաջացեալ՝ ասես զորդի 'ի հօրէ և միացեալ 'ի մարմնի»։ Մովսէս ասէ. «Ոչ բաժանեալ 'ի հօրէ և միացեալ 'ի մարմնի». և այլ այսպիսի բանք բազումք։ Ապա կարծեցաք այսպիսի դալ զժամանակն — զմեզ ամ[5] կոչեալ Գիրոսեայ զաթոռն՝ կա-

[1] Մեր օր. Դաւիթ խօսեցաւ յերկար ընդ Յոհնաղայ և կարկեցան և յամօթ եղեն։ — [2] Մեր օր. և զաշակերտս քո։ — [3] Մեր օր. կրկնաչօնից։ — [4] Ու. օր. և ընդէր ոչ կոչեցէք զմեզ։ — [5] Ու. օր. զժամանակն և զի զդրան ամ կոչեալ զաթեան Գիրոսեայ։

տարի։ Իսկ յաջորդէ զաթոռն նորա [1] Յովհան Մանդակունի իմաստասէր և լի հոգւովն Աստուծոյ, որ բարիոք [2] յօրինեաց զկարգ ձեռնադրութեան և զժամակարգութեան և զձայնս խորհրդոյ։ Իսկ սա թարգմանեաց զերկրորդ Կորնթացւոց թղթոյն և զՅովհան և այլ բազում օգտակար գործոց 'ի կեանս իւր։ Ոմանք 'ի կողմն Յունաց ասեն զԳիրս կաթողիկեայս և զՅովհան 'ի Պարսից 'ի միում ժամանակի։ Եւ տեսք էր ճգնաւորն Անտոն, որ և Թաւթուլ, թողեալ զամենայն ինչ վասն Քրիստոսի Վարուք հարազատութեան երթեալ կրօնաւորէր 'ի տեղւոջն [3], որ այժմ ասի սուրբ Թաւթուլ։ Իսկ զկնի վճարման սուրբ Նահատակացն մերոց չարն Վասակ զկնի և զորդիսն երեք Հմայեկի 'ի դուռն տանէր՝ որպէս զորդիս մահապարտաց, զոր խնդրեալ [4] Աշուշայի Վրաց բդեշխին 'ի Յազկերտէ՝ տայ նմա զանակնունելի պարգևն. որ և աւագն 'ի նոցանէ՝ Վահան, սպարապետ եղև Հայոց։ Քանզի սատակեալ Յազկերտի՝ Պերոզ որդի նորա, սպանեալ զեղբայրն իւր, թագաւորէ և հաշտութիւն առնէ աշխարհիս, և զՎահան կացուցանէ հարկահան արքունի [5]։ Իսկ 'ի քսան ամաց նեղեալ՝ տկարանայ 'ի հաւատոյն. և զկնի հարեալ զնա 'ի սիրտն՝ զղջանայ, և ապստամբեալ յարքայէ հարկանէ զզօրսն Պարսից յոլով անգամ։ Իսկ Վարազվաղեան տիրեալ Սիւնեաց՝ վասն ուրացութեան 'ի բազում աւուրս նեղեալ 'ի գիւղս, խեղդի անդնդոջ. յորում ա-

[1] Մեր օր. և յաջորդէ զնա Յոհան։ — [2] Մեր օր. զկէ բարիոք յօրինեաց։ — [3] Ո. օր. երթեալ կրօնաւորէր որ էր 'ի տեղւոջն։ — [4] Ո. օր. զոր խնդրեաց Աշուշայ։ — [5] Ո. օր. կացուցանէ հարկահան արքայի։

ւոյր սպանաւ ուրացողն Վաչագէն և այլ բազում ուրացողք ընկալան աստէն զառհաւատչեայ գեհենոյն:

Յետ այսորիկ զօրավարն [1] Պարսից Միհրան գայ բազում զօրօք 'ի վերայ Վախտանգայ Վրաց արքայի և յղէ պատգամս առ Վահան օգնել նմա, և գնաց յօժարութեամբ. և 'ի խնդրել պատերազմին վասն զօրքն [2] Վրաց փախեան Թագաւորաւն հանդերձ, այլ և վատօք 'ի Հայոց: Իբրև նահատակեցաւ սուրբն Վասակ՝ եղբայրն Վահանայ, որոյ երեսքն փառաւորեալ փայլէին որպէս Մովսիսին 'ի ժամ կատարելոյն, յորս ոչ կարէին հայել տեսողքն [3]. և իմացան, թէ մեռանելոց է յայնժամ աւուր: Պսակեցաւ [4] և սուրբ սեպուհըն Արծրունեաց Յազդ յամսեանն հոռի 'ի վեշտասան 'ի Ռազուան, զոր ըմբռնեալ Միհրան հարկանէր և հարկէր ուրանալ զհաւատն և կեալ մեծութեամբ. և լուեալ ընդդէմ պատասխանի՝ մեռանի վասն Քրիստոսի և պսակի. նոյնպէս և քաջ սպարապետն Սահակ կատարի 'ի ժամ պատերազմին 'ի վերայ սուրբ ուխտին օրինացն:

Զկնի այսորիկ սպանաւ Պերոզ 'ի Հեփթաղաց եօթն որդւովք: Իբր թագաւորեցուցին զՎաղարշ եղբայր նորա. և կոչեաց զՎահան և ետ նմա զզօրավարութիւն Հայոց. և յետ այնորիկ եթող [5] 'ի նա զմարզպանութիւն: Զկնի Վաղարշու նստի Կաւատ՝ որդի նորա. և յետ նորա Խոսրով՝ ամս քա-

[1] Մեր. օր. յետ այսորիկ զօրականն Պարսից: — [2] Ու. օր. վասն զօրացն Պարսից փախեան: — [3] Մեր օր. որ ոչ կարէին տեսողքն: — [4] Ու. օր. պսակեցաւ և սուրբ սեպուհն: — [5] Մեր. օր. և յետ այնորիկ թողէր 'ի նա զմարզպանութիւն:

ատաւն և ալթ։ Իսկ Վ․ահան [illegible] Ըր-
տաշատու՝ [illegible] ՚ի Պարթևս. յորում ժամա-
նակի [illegible]
՚ի [illegible] Պարթևս և [illegible]
բազումս ընդ նմա։ Իսկ [illegible]
[illegible] և [illegible]
[illegible] Վ․ահան [illegible]. և [illegible]
[illegible][2]։ Իսկ
Վ․ահանայ [illegible], և [illegible]
[illegible] Վ․[illegible][2]։
Ջ․[illegible] և [illegible] և [illegible]
[illegible][3]։ [illegible]
[illegible] Գ․[illegible]. և [illegible] Ներսէս [illegible]
Ի ժամանակս նորա [illegible]
Պարսից [illegible], [illegible] Վ․[illegible]. և եղև մեծ
պատերազմ ՚ի դաշտին [illegible][4], և կոտորեցին
զօրքն Պարսից աղօթիւք սուրբ Հայրապետին Ներ-
սէսի։ Նոյն յայն ժամանակս սուրբն [illegible], որ
է [illegible][5], կատարեցաւ ՚ի Դուին ՚ի [illegible]
[illegible] Վ․ահանայ, զոր [illegible] Վ․[illegible] Գ․[illegible]
[illegible]. և [illegible]
սուրբ Հայրապետին Ներսէսի [illegible]
[illegible] ՚ի [illegible]։
՚Ի նոյն աւուրս Ներսէս [illegible]

[1] Մեր օր. Իսկ [illegible]. — [2] Մեր օր. Իսկ [illegible]։ [illegible]. — [3] [illegible]. — [4] Մեր օր. [illegible]. — [5] Մեր օր. [illegible]։

նաց բազմացոյց։ Զկնի տէր Ներսիսի տէր Յովհաննէս ամս հնգետասան. և յետ նորա տէր Մովսէս յԵղիվարդայ ամս երեսուն[1]։ Սա 'ի տասն ամի հայրապետութեան իւրոյ և յերեսուն և մի ամին Խոսրովու՝ որդւոյ Կաւատայ, և 'ի չորեքտասան Յուստիանոսի, որ զսուրբն Սոփի շինեաց, եդ թուական Հայոց[2] և տումար, յորում ժամանակի լցեալ էր շըրջանակն հինգ հարիւր երեսուն և երկու ամաց։ Իսկ մարզպանն Հայոց Մէժէժ Գնունի[3], որ կալաւ զիշխանութիւն ամս երեսուն և մի։ Իսկ 'ի դիր թուականին էին Պետրոս[4] եպիսկոպոս՝ քերթողն Սիւնեաց, և Ներշապուհ 'ի Տարօնոյ և Աբդիշոյ 'ի Սասնոյ, զոր եպիսկոպոս ձեռնադրեաց Մովսէս, որ և զԿիւրիոն — որ էր ազգաւ Վրացի[5] 'ի գաւառէ Իջաւախաց 'ի գեղջէ Սկուտրի[6], և գիտէր զդպրութիւն հայ և վըրացի՝ ձեռնադրեաց Վրաց կաթողիկոս. և եղև յետոյ քաղկեդոնիկ[7], քանզի 'ի տղայութեանն գնացեալ էր 'ի Յոյնս 'ի Կողոնիա գաւառ և բնակեալ 'ի գեօղն Նիկապօլսի յեզր Գայլ գետոյ, ուր և վարժեցաւ[8] յոյն դպրութեանց։ Իսկ յետ հնգետասան ամին եկն Մովսէս 'ի Դուին և կացոյց զնա վանաց երէց սրբոյ կաթուղիկէին, այլ և քորեպիսկոպոս Այրարատեան գաւառին ամս եօթն։ Իսկ յորժամ մեռաւ կաթողիկոսն Վրաց, առաքեցին իշխանք աշխարհին առ տէր Մովսէս ըստ առաջին կարգի, զի տացէ

[1] Ուռմ. օր. և յետ նորա տէր Մովսէս ամս երեսուն։ — [2] Ցերկրորդն օր. եդեր թուական Հայոց և տումար։ — [3] Ու. օր. Մէժէժ Գնունի։ — [4] Մէր օր. և 'ի դիր թուականին Պետրոս եպիսկոպոս։ — [5] Մէր օր. որ էր ազգաւ 'ի Վրաց։ — [6] Ու. օր. 'ի գեղջէ Խոխոտրի։ — [7] Մէր օր. քաղկեդոնական։ —

[illegible] ։ [illegible] Նորա որդւոյ Նորա [illegible] ։ [illegible] զձայն որդւոյ Նորա [illegible], յորոյ [illegible]

[1] [illegible] — [2] [illegible] — [3] [illegible] — [4] [illegible] — [5] [illegible]

նէ Վաղհրամ գլուխ զօրացն և առնէ զնա փախստական. և նա գնայ [1] առ Մօրիկ կայսր, և գտեալ 'ի նմանէ օգնութիւն՝ դառնայ և տիրէ հայրենեացն։ Իսկ լինի երախտահատոյց՝ թողլով 'ի Մօրիկ զՄիջագետս և 'ի Հայոց զաշխարհն [2], որ Տանուտէրական գունդն կոչի՝ բաց յոստանէն Դունայ և յերկուց գաւառացն, որ է Ոստն Վասեաց և կողմն Արագածու՝ թողու 'ի Մօրիկ 'ի լեռնէն, որ կոչի Ընծակի սար՝ մինչև ցԱռեստ աւան և ցՀացիւնս. որ յանդգնեալ՝ զեղեալ անուանս յարգայէ, փոխէ.—զԱրմինին [3] կոչեցեալ 'ի նմանէ, որ է Առաջին Հայք՝ [4] Երկրորդ Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Սեւաստ. և զԿապադովկիա, յորում մայրաքաղաքն Կեսարիա՝ Երրորդ կոչէ Հայք և առնէ զնա եպարքի. և զՄելտենի, որ ունի զհամանուն իւր գաւառ՝ կոչէ զնա Առաջին Հայք. և զՊոնտոս, յորում մայրաքաղաքն Տրապիզոն՝ Մեծ մասն կոչէ զնա Հայոց. և ըզՉորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Մուփարղին՝ Յուստինիանու նախ զնա գրէ 'ի դիւանն արքունի. և զաշխարհն Կարնոյ, յորում քաղաքն Թէոդուպօլիս՝ Մեծ մասն Հայոց կոչէ. և որ 'ի Մեծ Հայոց մասըն էր առ նոսա 'ի կողմանց Բասենոյ մինչև ցսահմանս Ասորեստանի՝ Մեծ Հայք անուանէ. և զկողմանս Տայոց սահմանաւքն իւրովք Խորագոյն Հայք կոչէ [5].— զայսոսիկ անուանս գրէ 'ի դիւանի։

[1] Մեր օր. և նա երթայ առ Մօրիկ կայսր։ — [2] Ու. օր. թողլով 'ի Մօրիկ զՄիջագետս և զՀայոց աշխարհն 'ի Հայոց աշխարհն, որ։ — [3] Ու. օր. յանդգնեալ անուանս յարէջէ փոխէ զարմինն կոչեցեալ 'ի նմանէ։ — [4] Ու. օր. փոխէ զարմին կոչեցեալ 'ի նմանէ առաջին Հայք՝ Երկրորդ Հայք զնա կոչէ։ — [5] Ու. օր. և զկողմանս Պոնտոսի ներքսագոյն Հայք կոչէ։

Յաւուրս այսորիկ Սմբատ Բագրատունի քաջա-
պէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամե-
նայն թշնամիս նորա. և նորա պատուասիրեալ՝ տայ
նմա զմարզպանութիւն Վրկան աշխարհի, ուր եր-
թեալ գտանէ զազգս Հայոց գերեալ և բնակեալ 'ի
Թուրքաստան յանապատին մեծի, որ Սագաստանն
կոչի՝ մոռացեալ զլեզու և զդպրութիւն. որք տեսեալ
զՍմբատ խրախ լինէին և նորոգէին զլեզու և զգիր։
Նա զերէց մի՝ Աբէլ անուն, տայ ձեռնադրել նո-
ցա եպիսկոպոս մեծի հայրապետին Մովսիսի և հաս-
տատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի։ Նա առեալ
հրաման յարքայէ գայ տեսանել զերկիր իւր. և եկեալ
'ի Դուին սկսաւ շինել զփայտաշէն Գրիգորն 'ի Վար-
դանայ սրբոյ։ Նա պահնակք բերդին բողոքէին 'ի դու-
ռըն, թէ վնասակար է բերդիս. և ելանէ հրաման քա-
կել զբերդն և հեռագոյն շինել։ Նա խնդացեալ Սըմ-
բատ՝ 'ի փառս Քրիստոսի շինէ զեկեղեցին կոփածոյ
վիմօք և տայ ձեռնադրել պատրիարգ զտէր Աբրա-
համ՝ զեպիսկոպոսն Ռշտունեաց, որ շատ ջանա-
ցեալ թղթով 'ի ձեռն Պետրոսի ոչ կարաց դարձու-
ցանել զՎիւրիոն յուղղափառութիւն։ Վասն որոյ
արարեալ ժողով 'ի Դուին՝ անիծեցին [1] զՎիւրիոն հե-
րեսիովտայ։

Նա Մօրիկ կացոյց իւր կողմանն կաթողիկոս զՅո-
հան ոմն, որ նստէր 'ի գեօղն Աւան՝ շինեալ անդ եկեղեցի
—այր սուրբ որ բնաւ չէր խոտորեալ [2] յաղանդն Յու-
նաց։ Յայնմ ժամանակի նախարարքն Յունաց սպանին

[1] Մեր օր. տարարեալ ժողովն 'ի Դուին անիծեն զԿիւրոն հերետիկոսայ։ —
[2] Ու. օր. և բնաւ չտարբերեալ յաղանդն Յունաց։

զՄօրիկ[1] և եղևն Թագաւոր զՓովկաս, որ և եկեալ 'ի Բասէն՝ ջանայր նուաճել զՀայս: Եւ ընդ առաջ երթեալ Աշոտ՝ հարկանէր անչափ կոտորմամբ հրամանաւ Խոսրովու, և առնու զԿարնոյ քաղաք և փոխէ ըզբնակիչսն յԱհմատան՝ տարեալ զՅոհան կաթողիկոս զկնի, որ կայր 'ի գաւառի անդ. որ անդէն վախճանեալ՝ բերեալ դնի 'ի գեօղն Աւան[2], որ կալաւ զկաթողիկոսութիւնն ամս քսան և վեց: Եւ սուրբ պատրիարգն Աբրահամ փոխի զկնի երեք ամի յաթոռոյն և յաջորդէ զնա տէր Կոմիտաս 'ի գեղջէ Աղցից:

Իսկ յիշխանաց կարգի զկնի Մէժէժայ Գարսիկք կացին.—Նախ Դաւինշապուհ, որ ըղձումն մոլութիւնս շատացոյց. և յետ նորա[3] Վարազդատ ոմն, և ապա Սուրէն՝ ազգական Խոսրովու, որ շնայր ընդ կանայս իշխանացն. ընդ որ զայրացեալ Վարդանայ՝ որդւոյ Վասակայ Մամիկոնոյ, սպան զնա և առեալ զընտանիս իւր գնաց 'ի Կոստանդնուպօլիս: Բայց Հերակլ սպանեալ զՓովկաս Թագաւորեցուցանէ զորդի իւր և ինքն խաղայ յարևելս: Եւ Խոռեմ առեալ զՅոյնս հրամանաւ Խոսրովու քննախնդիր մահուանն Մօրկայ և գերէ զԵրուսաղէմ և զփայտն փրկական և զԶաքարիա պատրիարգն Երուսաղեմի:

Յայնմ ժամանակի պատրիարգն Կոմիտաս ընդարձակէ զվկայարան սրբոց Հռիփսիմեանց և պատահէ սուրբ նշխարաց նոցա, և լինի ոչ սակաւ մխիթարութիւն քրիստոնէից. և էր կնքեալ մատանեաւ

[1] Մեր օր. յայնմ ժամանակի նախարարքն Մօրկայ սպանին զնա: — [2] Մեր օր. որ անդէն վախճանեալ՝ բերաւ դին 'ի գիւղն Աւան: — [3] Ոչ. օր. և յետոյ նորա Վարազդատ ոմն:

սուրբ Գրիգորի և սրբոյն Սահակայ, զոր ոչ իշխեաց բանալ, այլ զմուրն եդ 'ի վերայ: Եւ չափ հասակին Հռիփսիմեայ տասն թիզ և չորս մատն: Եւ ասեն զսուրբ Գրիգոր ինն թիզ և զՏրդատ մետասան թիզ:

Նուաճեաց Հերակլ զեսպանս պատարագաւք առ Խոսրով խնդրել զխաղաղութիւն, որում ոչ ետ պատասխանի: Եւ բարկացեալ Հերակլի՝ առնու ընդ իւր զեղբայր իւր զԹէոդոս, երկիցս հարկանէ զզօրսն Պարսից առ Անտիոքաւ և երթայ ընդ Հայս 'ի վերայ Խոսրովու, և զնա ոյժ առեալ Կաւատայ որդւոյ առաջնոյ Խոսրովու՝ սպանանէ [1] զԽոսրով. և խնդրեալ սէր 'ի Հերակլէ՝ թողու 'ի նա զՄիջագետըս: Եւ դառնայ Հերակլ և գայ 'ի Կարնոյ քաղաք: Յորում աւուր յաջորդեալ էր [2] զսուրբ աթոռն Կոմիտասայ տէր Քրիստափոր. և հանեալ զնա — զի առնէր խռովութիւն 'ի մէջ իշխանացն, — դնեն զԵզր Նգացի, զոր կոչեաց թագաւորն 'ի Կարնոյ քաղաք. որ վասն տգիտութեան իւրոյ քաղկեդոնիկ եղև՝ առեալ զաղտք [3] և զերրորդ մասն Կողբայ գին հաւատոյն: Եւ 'ի դառնալն նորա կշտամբեաց զնա Յոհան վարդապետ կաթողիկոսարանին՝ ասելով. «Յիրաւի Եզր կոչեցար, զի յեզր եկեր յուղղափառութենէ». և ինքն չոգաւ յՄողուանս 'ի գլուխ Գարդման գաւառի և ճգնեցաւ խիստ վարուք: Սա գրեաց զերիս գիրս՝ զանուն իւր ոչ դնելով 'ի նոսա. զմինն կոչեաց Խրատ հոգւոյ և զմինն Հաւատոյ արմատ և զմիւսն Նոյեման: Էր սորա

[1] Մեր օր. և երթայ ընդ Հայս 'ի վերայ Խոսրովու՝ սպանէ զԽոսրով: — [2] Մեր օր. յորում յաջորդեալ էր զսուրբն աթոռն Կոմիտասայ: — [3] Մեր օր. առեալ զէաղտէ և զերրորդ մասն Կողբայ. Ու. օր. առեալ զաղտէ:

աշակերտ մի՝ Սարգիս անուն, որ զՍարէլին ախտա-նայր, զոր հալածեալ մերժեաց յինքենէ. զոր սմա համբաւեն ոգէտք։

Յաւուրս յայսմիկ մեռանի Կաւատ արքայ և թագաւորէ տղայ որդի նորա Արտաշիր։ Եւ լուեալ Հերակլեայ՝ յորդորէ զԽոռեմ[1] առնուլ զթագն՝ սպանանելով զտղայն, զոր և արար իսկ. և ետ զխաչն սուրբ 'ի Հերակլ։ Եւ սպանեալ զօրացն զԽոռեմ՝ տան զթագն 'ի Բոր՝ դուստր Խոսրովու։ Եւ զկնի նորա Զամրիկ քոյր նորա, և յետ նորա Որմիզդ թո-ռըն Խոսրովու, զոր խեղդամահ արարին և եդին ըզ-Յազկերտ թոռն Խոսրովու[2]։ — Իսկ Հերակլ զխաչն յԵրուսաղէմ տարեալ՝ կանգնէ 'ի տեղւոջ իւրում։ Յորում ժամանակի կարգէ զօրավար Հայոց զՄժէժ, զոր սպանեալ Դաւիթ Սահառունի՝ ինքն լի-նի իշխան հրամանաւ Հերակլի զամս երիս. որ շի-նեաց զեկեղեցին Մրենոյ և ապա անարգեալ յիշխա-նացն հալածեցաւ. և անկաւ շփոթ մեծ 'ի Հայս՝ ըզ-միմեամբք ելանելով։ Յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիանէ[3]։ Եւ տէր Քրիս-տափոր շինեաց միայնարան 'ի յԱւան Մասեաց և առա-քինանայր բազում ջանացող աղօթիւք։ Յորում ա-ւուրս ժողովեալ յԵդեսիա երկոտասան հազար Հրէ-րէայ՝ ապստամբեցին 'ի Հերակլեայ, որ և երթեալ պա-շարեաց զՈւռհայ, և առեալ զնա՝ արձակեաց կեն-դանի զՀրէայսն յո և կամիցեն[4]՝ ոչ լսելով Թէո-

[1] Մեր օր. և լուեալ Հերակլեայ բորբոքէ զԽոռեմ։ — [2] Ու. օր. և յետ նորա Որմիզդ թոռն Խոսրովու. իսկ Հերակլ զխաչն։ — [3] Ու. օր. ընդարձա-կեաց Եզր զԳայիանէ վկայարանն։ — [4] Ու. օր. յոր և կամեցան։

դորոսի եղբօրն, որ կամեցաւ սատակել զնոսա։ Նոյն գնացեալ անտի ընդ անապատ՝ չոգան 'ի Տաճկաստան առ որդիսն Իսրայելի՝ որպէս առ ազգայինս և կոչէին յօգնութիւն, և կէսք ախորժէին և ոմանք ոչ՝ վասն այլ և այլ աղանդոյ նոցա՝ որպէս երբեմն Եգիպտացւոցն ըստ զանազան պաշտամանց նոցա։

Յայնժամ ապա այր մի յորդւոցն Իսմայելի, ուրում անուն էր Մահամատ Թանգար, որ էր ծնեալ[1] 'ի քաղաքին Մադիանայ մերձ 'ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ՝ յազգէն, որ կոչի Կորեւ՝ որդի Աբդլայ, որ մեռաւն՝ որք թողեալ զնա. որ և յարեցաւ[2] 'ի վաճառական մի և եղև 'ի տան նորա յառաջադէմ։ Մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ՝ առեալ զկին նորա։ Նոյն երթայր ուղտովք յԵգիպտոս. և պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն, յաղանդոյն Արիոսի և Կերինթոսի, որ և ուսոյց նմա 'ի հին մատենիցն զԱստուած և զՏղայութեան գիրս Տեառն մերոյ։ Նոյն 'ի դառնալն 'ի տուն՝ քարոզեաց զոր լուաւն. և հալածեցին զնա ազգն իւր, և եկն յանապատն Փառանու։ Յորժամ եկին երկոտասան հազար Հրէայք և առեալ պատճառս 'ի նոցանէ՝ քարոզեաց որդւոցն Իսրայելի զԱստուած Աբրահամու, և եղև երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն, զոր ետ Աստուած Աբրահամու։ Նոյն լուան նմա և ժողովեցան յՆուելեայ մինչև ցՍուր, որ է հանդէպ Եգիպտոսի։ Նոյն զերկու-

[1] Ոմն. օր. որ ծնեալ 'ի քաղաքին Մաքիանայ։ — [2] Մեր օր. որք թողեալ զնա թէ և յարեցաւ 'ի վաճառական մի։

տասան հազարսն ըստ ցեղիցն Իսրայելի բաժանեցին[1] երկոտասանից նահապետաց՝ հազար հազար արկին յինքեանս. և եղեն երկոտասանից նահապետացն բաժին՝ ազգապետս դնելով ինքեանց, յորոց անուանն կոչեցան իսկ — Նաբէոթ, Կեդար, Աբդիլ, Մաբսամ, Մասմայ, Իդումայ, Մասէ, Քոշէ[2], Դադ, Թեման, Յետուր, Նաբէս Կեդմայ: — Եւ գնացին բանակք բանակս յանապատէն Փառանու յԱրովթ Մովաբու և անցին յայնկոյս Յորդանանու 'ի վիճակն Ռուբենի: Եւ զօրն Յունաց էր յԱրաբիա. հարին զնոսա և փախեաւ Թեոդորոս եղբայր կայսերն մազապուրծ: Եւ դարձան իշխանքն[3] յԱրաբիա և բնակեցան ըստ ցեղից ցեղից: Եւ ժողովեցան առ նոսա ամենայն մնացեալքն յորդւոց Իսրայելի և եղեն զօր մեծ: Եւ յղեն բանս առ կայսր՝ Թողուլ զերկիրն, զոր ետ Աստուած Աբրահամու: Եւ արար նոցա ընդդէմ պատասխանի: Եւ գումարեաց զօրս եօթանասուն հազար 'ի ձեռն ներքինւոյ միոյ հաւատարմի և պատուիրեաց երթալ յԱրաբիա 'ի վերայ Իսմայելի, ուր և սատակեցան իսկ և լցան մեծութեամբ բանակքն Մահմետի: — Եւ էր թիւս մեր վաթսուն և հինգ: — Եւ զի յաջողեաց նոցա խրատն Մահմետի՝ խնդրեն 'ի նմանէ օրէնս և նա զտեղի մեհենից օձիցն, զոր պաշտէին՝ կոչեաց Ալքաուբա, որ է Տուն Աստուծոյ: Եւ կոչեաց զբնակութիւն քաղաքին իւրոյ Տուն Աբրահամու: — Եւ 'ի զօրանալ քրիստոնէութեան զկուռս Դամասկոսի՝ շԱրեմանոյ, որ նա

[1] Մեր օր. ըստ ցեղիցն Իսրայելի երկոտասանից նահապետացն: — [2] Ու. օր. Քոշէ: — [3] Ու. օր. և դարձան իշխանքն յԱրաբիա:

ռաստուն և ուխտ։ Իսկ Վահան շինեաց զեկեղեցին Ար-տաշատու՝ զաւերեալն ՚ի Պարսից. յորում ժամանակի երանելին Տանթայ յԱրշաւունեաց պատկեցաւ ՚ի Զառնաւուխտայ զօրագլխէն Պարսից և այլ ևս բաղումք ընդ նմա։ Իսկ տէր Յոհան կալեալ զաթոռն ամն վեց. և զկնի նորա տէր Բաբգէն ամն եօթն, և զկնի նորա տէր Մուշէ ամն ութ, Սահակ ամն եօթն. և յետ նորա տէր Քրիստափոր փոխնորդ ամն եօթն[1]։ Իսկ Վահանայ բարւոք կացեալ վախճանի, և փոխէ զիշխանութիւնն նորա եղբայր իւր Վարդ ամն չորս[2]։ Զվահանի կէսք քսան ամ և կէսք երեսուն և մի ամն կացեալ իշխան[3]։ Այլ զտէր Քրիստափոր յաջորդէ տէր Ղևոնդ ամն երկու. և տէր Ներսէս ամն ինն։ ՚Ի ժամանակս նորա առաքեաց Խոսրով թագաւորն Պարսից հրոսակս, զի կալցեն զՎարդ. և եղև մեծ պատերազմ ՚ի դաշտին Խաղամախեայ[4], և կոտորին զօրքն Պարսից աղօթիւք սուրբ հայրապետին Ներ-սիսի։ Եւ յայն ժամանակս սուրբն Յիզտբուզիտ, որ է աստուածափրկեցոյց[5], կատարեցաւ ՚ի Դուին ՚ի մայր-քաղաքէն Վահանայ, զի զկնի Վարդայ Պարսիկք իշ-խէին մարզպանք. և զմարմին սրբոյ վկային ամփոփեալ սուրբ հայրապետին Ներսիսի առընթեր կաթողիկո-սարանին շինեալ վկայարան կոփածոյ ՚ի վերայ նորա։ ՚Ի նոյն աւուրս Դեղրան Անկեղաց զղաւս Ծաղկոտանա-

[1] Մեր օր. Իսկ տէր Յոհան կալեալ զաթոռն ամս վեց, և զկնի նորա Մուշէ ամս եօթն, և յետ նորա տէր Քրիստափոր ամս եօթն։ — [2] Մեր օր. Իսկ Վահանայ բարւոք կացեալ փոխէ զիշխանութիւնն։ Ու. օր. Իսկ Վարդայ ամս չորս։ — [3] Ու. օր. և կէսք երեսուն մի կացեալ իշխան։ — [4] Մեր օր. ՚ի դաշտին Խաղամախեայ։ — [5] Մեր օր. և յայն ժամանակս սուրբն Յիզտբուզիտ, որ է աստուածափրկեալ։

նաց բազմացոյց։ Զկնի տէր Ներսիսի տէր Յով-
հաննէս ամս հնգետասան. և յետ նորա տէր Մով-
սէս յԱղխվարդայ ամս երեսուն[1]։ Սա 'ի տասն ամի
հայրապետութեան իւրոյ և յերեսուն և մի ամին Խոս-
րովու՝ որդւոյ Կաւատայ, և 'ի չորեքտասան Յուս-
տիանոսի, որ զսուրբն Սոփի շինեաց, եդ Թուական
Հայոց[2] և տումար, յորում ժամանակի լցեալ էր շրր-
ջանակն հինգ հարիւր երեսուն և երկու ամաց։ Եւ
մարզպանն Հայոց Մեժեժ Գնունի[3], որ կալաւ զիշ-
խանութիւն ամս երեսուն և մի։ Եւ 'ի դիր Թուա-
կանին էին Գետրոս[4] եպիսկոպոս՝ քերթողն Սիւնեաց,
և Ներշապուհ 'ի Տարօնոյ և Եղիշոյ 'ի Սասնոյ, զոր
եպիսկոպոս ձեռնադրեաց Մովսէս, որ և զԿիւրիոն —
որ էր ազգաւ Վրացի[5] 'ի գաւառէ Ջաւախաց 'ի
գեղջէ Ակուրի[6], և գիտէր զդպրութիւն հայ և վը-
րացի՝ ձեռնադրեաց Վրաց կաթողիկոս. և եղև յե-
տոյ քաղկեդոնիկ[7], քանզի 'ի տղայութեանն գնա-
ցեալ էր 'ի Յոյնս 'ի Կողոնիա գաւառ և բնակեալ 'ի
գեօղն Նիկապօլսի յեզր Գայլ գետոյ, ուր և վարժե-
ցաւ[8] յոյն դպրութեամբ։ Եւ յետ հնգետասան ա-
մին եկն Մովսէս 'ի Դուին և կացոյց զնա վանաց ե-
րէց սրբոյ կաթուղիկէին, այլ և քորեպիսկոպոս Այ-
րարատեան գաւառին ամս եօթն։ Եւ յորժամ մե-
ռաւ կաթողիկոսն Վրաց, առաքեցին իշխանք աշխար-
հին առ տէր Մովսէս ըստ առաջին կարգի, զի տացէ

1 Բռում. օր. և յետ Նորա տէր Մովսէս ամս երեսուն : — 2 Ցերեկոյեն օր. Եղեւր Թուականն Հայոց և տումար : — 3 Բռ. օր. Մեժեժ Գնունի : — 4 Մեր օր. և 'ի դիր Թուականին Գետրոս եպիսկոպոս : — 5 Մեր օր. որ էր ազգաւ 'ի Վրաց : — 6 Բռ. օր. 'ի գեղջէ Խոլոպրի : — 7 Մեր օր. քաղկեդոնական : —

նոցա առաջնորդ, և զնա կամեցաւ տալ որպէս 'ի տա-
նէ իւրմէ[1]։ Նա և երթեալ նուաճեաց զամենայն երկի-
րըն։ Նա ապա եկն առ նա Խուժիկ մի նեստորական,
որ Ակիս կոչիւր, այսինքն՝ խոստութիւն, որպէս և ե-
ղեն, որ էր 'ի Կողոնիոյ 'ի գեղջէն Օ.ուստաւորինայ մօտ
"Ակիւդօլսոյ[2], որ լեալ էին միաբանեանց ուսումնակիցք
և աղանդակիցք՝ զնա ձեռնադրէ եպիսկոպոս և կո-
րնչի նովաւ և ամենայն աշխարհաւն. զոր իմացեալ
Մովսիսի եպիսկոպոսի, որ 'ի Ցուրտաւ, որ այժմ
ասի Գանձէնք՝ ծանուցանէ պատրիարգին Մովսի-
սի։ Նա և նա գրէ առ նա թուղթ յանդիմանութեան
և սպառնալեաց. — և նա բնաւ ուրացաւ յերկիւղէ
սրբոյն զաղանդն։ Նա զկնի ժամանակաց մեռաւ պատ-
րիարգն յերեսուն ամի հայրապետութեան իւրոյ, և
Աբիւրիոն յանհոգս եղեալ՝ ընդունի զժողովն Քաղկե-
դոնի։ Իսկ Խոսրով թագաւոր Պարսից մօտ 'ի վախ-
ճանն հաւատոյ[3] 'ի Քրիստոս. և կոչեցեալ առ ինքն
զերանելի կաթողիկոսն, զոր տէր Գիւտ էր ձեռնա-
դրեալ հանդերձ այլովք եպիսկոպոսաւք 'ի գնալն[4] իւ-
րում առ Պերոզ արքայ, որ յանդիմանեաց զմոլորու-
թիւն Պարսից՝ ցանկալով մահու մկրտեցաւ յՆշրանեայ
և հաղորդեցաւ և զկնի սակաւուց կատարեցաւ, և թա-
ղեցին զնա քրիստոնեայք յարքունական գերեզմա-
նըս։ Նա առ զթագ նորա որդի նորա Որմիզդ[5], որոյ
նենգ գործեալ՝ սպանին զնա յիւրում դահճի։ Նա
առնու զթագն որդի նորա Խոսրով, յորոյ վերայ յառ-

[1] Մեր օր. եւ չափեցաւ տեղւ 'ի բանի խորհ։ — [2] Մեր օր. 'ի ներքին Կոստանդնուպօլսոյ մօտ Նիկիոյ պօլսոյ։ — [3] Մեր օր. հաւատացոյ։ — [4] Ոռ. օր. հանդերձ այլովք 'ի գնալն իւրում։ — [5] Մեր. օր. որդի նորա Որմիզդ։

նէ Վաշհրամ գլուխ զօրացն և առնէ զնա փախստա-
կան. և նա գնայ [1] առ Մօրիկ կայսր, և գտեալ 'ի
նմանէ օգնութիւն՝ դառնայ և տիրէ հայրենեացն։
Իսկ լինի երախտահատոյց՝ թողլով 'ի Մօրիկ զՄի-
ջագետս և 'ի Հայոց աշխարհէն [2], որ Տանուտէրա-
կան գունդն կոչի՝ բաց յոստանէն Դունայ և յերկուց
գաւառացն, որ է Ոտն Մասեաց և կողմն Արագածու՝
թողու 'ի Մօրիկ 'ի լինելն, որ կոչի Ընծակի սար՝
մինչև ցԱռեստ աւան և ցՀացիւնս. որ յանդգնեալ՝
փերթեալ անուանս յարքայէ, փոխէ.— զԱրմէնի [3] կո-
չեցեալ 'ի նմանէ, որ է Առաջին Հայք՝ [4] Երկրորդ
Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Սեւաստ.
և զԿապադովկիա, յորում մայրաքաղաքն Կեսա-
րիա՝ Երրորդ կոչէ Հայք և առնէ զնա եպարքի. և
զՄելտենի, որ ունի զհովանոյն իւր գաւառ՝ կոչէ
զնա Առաջին Հայք. և զՊոնտոս, յորում մայրաքա-
ղաքն Տրապիզոն՝ Մեծ մասն կոչէ զնա Հայոց. և ըզ-
Չորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Մուփարղին՝
Յուստինիանու նիստ զնա գրէ 'ի դիւանն արքունի. և
զաշխարհն Կարնոյ, յորում քաղաքն Թէոդուպօ-
լիս՝ Մեծ մասն Հայոց կոչէ. և որ 'ի Մեծ Հայոց մա-
սին էր առ նոսա 'ի կողմանց Բասենոյ մինչև ցսահ-
մանս Ասորեստանի՝ Մեծ Հայք անուանէ. և զկող-
մանս Տայոց սահմանաւքն իւրովք Խորագոյն Հայք
կոչէ [5].— զայսոսիկ անուանս գրէ 'ի դիւանի։

[1] Մեր օր. և նա երթայ առ Մօրիկ կայսր ։— [2] Ու. օր. Թողլով 'ի Մօրիկ զՄիջագետս և զՀայոց աշխարհն 'ի Հայոց աշխարհն, որ ։— [3] Ու. օր. յանդգնեալ անուանս յարքայէ փոխէ զարմենի կոչեցեալ 'ի նմանէ ։— [4] Ու. օր. փոխէ զարմենի կոչեցեալ 'ի նմանէ առաջին Հայք՝ Երկրորդ Հայք զնա կոչէ ։— [5] Ու. օր. և զկողմանս Դուանայ Ներքսագոյն Հայք կոչէ ։

սուրբ Գրիգորի և սրբոյն Սահակայ, զոր ոչ իշխեցին բանալ, այլ զերկուսն եդ 'ի վերայ։ Եւ չափ հասակին Հռիփսիմեայ տասն թիզ և չորս մատն։ Եւ ասեն զսուրբ Գրիգոր ինն թիզ և զՏրդատ մետասան թիզ։

Առաքեաց Հերակլ դեսպանս պատարագաւք առ Խոսրով խնդրել զխաղաղութիւն, որում ոչ ետ պատասխանի։ Եւ բարկացեալ Հերակլի՝ առնու ընդ իւր զեղբայր իւր զԹէոդորոս, երկիցս հարկանէ զզօրսն Պարսից առ Անտիոքաւ և երթայ ընդ Հայս 'ի վերայ Խոսրովու, և զնա ոյժ առեալ Կաւատայ որդւոյ առաջնոյ Խոսրովու՝ սպանանէ [1] զԽոսրով. և խնդրեալ սէր 'ի Հերակլէ՝ թողու 'ի նա զՄիջագետս։ Եւ դառնայ Հերակլ և գայ 'ի Կարնոյ քաղաք։ Յորում աւուր յաջորդեալ էր [2] զսուրբ աթոռն Կոմիտասայ տէր Քրիստափոր. և հանեալ զնա — զի առնէր խռովութիւն 'ի մէջ իշխանացն, — դնեն զԵզր Նգայցի, զոր կոչեաց թագաւորն 'ի Կարնոյ քաղաք. որ վասն ագահութեան իւրոյ քաղկեդոնիկ եղև՝ առեալ զաղտք [3] և զերրորդ մասն Կողբայ գին հաւատոյն։ Եւ 'ի դառնալն նորա կշտամբեաց զնա Յոհան վարդապետն կաթողիկոսարանին՝ ասելով. «Յիրաւի Եզր կոչեցար, զի յեզր ելեր յուղղափառութենէ»։ և ինքն չոգաւ յԱղուանս 'ի գլուխ Գարդմանն գաւառի և ճգնեցաւ խիստ վարուք։ Սա գրեաց զերիս գիրս՝ զանուն իւր ոչ դնելով 'ի նոսա. զմինն կոչեաց Խրատ Հոգւոյ և զմիւսն Հաւատոյ արմատ և զմիւսն Նոյեմակ։ Էր սորա

[1] Մեր օր. և երեքոյ ընդ Հայս 'ի վերայ Խոսրովու՝ սպանէ զԽոսրով։ — [2] Մեր օր. յորում յաջորդեալ էր զսուրբն աթոռն Կոմիտասայ։ — [3] Մեր օր. առեալ զկաշառ և զերրորդ մասն Կողբոյ. Ու. օր. առեալ զաղտք։

աշակերտ մի՝ Սարգիս անուն, որ զՍարգէլին ախտանայր, զոր հալածեալ մերժեաց յինքենէ. զոր սմա համբաւեն տգէտք։

Յաւուրս յայսոսիկ մեռանի Կաւատ արքայ և թագաւորէ տղայ որդի նորա Արտաշիր։ Եւ լուեալ Հերակլեայ՝ յորդորէ զԽոռեմ[1] անուն զԹագն՝ սպանանելով զտղայն, զոր և արար իսկ. և ետ զխաչն սուրբ 'ի Հերակլ։ Եւ սպանեալ զօրացն զԽոռեմ՝ տան զԹագն 'ի Բոր՝ դուստր Խոսրովու։ Եւ զկնի նորա Զամբիկ քոյր նորա, և յետ նորա Որմիզդ թոռըն Խոսրովու, զոր խեղդամահ արարին և եդին ըզՅազկերտ թոռն Խոսրովու[2]։ — Իսկ Հերակլ զխաչն յԵրուսաղէմ տարեալ՝ կանգնէ 'ի տեղւոջ իւրում։ Յորում ժամանակի կարգէ զօրավար Հայոց զՄժէժ, զոր սպանեալ Դաւիթ Սահառունի՝ ինքն լինի իշխան հրամանաւ Հերակլի զամս երիս. որ շինեաց զեկեղեցին Մրենոյ և ապա անարգեալ յիշխանացն հալածեցաւ. և անկաւ շփոթ մեծ 'ի Հայս՝ ըզմիմեամբք ելանելով։ Յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիանէ[3]։ Եւ տէր Քրիստափոր շինեաց միայնարան 'ի յԱւան Մասեաց և առաքինանայր բազում ջանացող աղօթիւք։ Յորում աւուրս ժողովեալ յԵգեսիա երկոտասան հազար Հըրէայ՝ ապստամբեցին 'ի Հերակլեայ, որ և երթեալ պաշարեաց զՈւռհայ, և առեալ զնա՝ արձակեաց կենդանի զՀրէայսն յո և կամիցեն[4]՝ ոչ լսելով Թէո-

[1] Մեր օր. և լուեալ Հերակլեայ թագաւորի զԽոսրով։ — [2] Ու. օր. և յետ նորա Որմիզդ թոռն Խոսրովու. իսկ Հերակլ զխաչն։ — [3] Ու. օր. ընդարձակեաց Եզր զԳայիանեայ վկայարանն։ — [4] Ու. օր. յոր և կամեցան։

դորոսի եղջօրն, որ կամեցաւ սատակել զնոսա։ Իսկ գնացեալ անտի ընդ անապատ՝ չոգան 'ի Տաճկաստան առ որդիսն Իսրայելի՝ որպէս առ ազգայինս և կոչէին յօգնութիւն, և կէսք ախորժէին և ոմանք ոչ՝ վասն այլ և այլ աղանդոյ նոցա՝ որպէս երբեմն Եգիպտացւոցն ըստ զանազան պաշտամանց նոցա։

Յայնժամ ապա այր մի յորդւոցն Իսմայելի, որում անուն էր Մահամատ Թանգար, որ էր ծնեալ[1] 'ի քաղաքին Մաղխանայ մերձ 'ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ՝ յազգէն, որ կոչի Կորեկ՝ որդի Աբդըլլայ, որ մեռաւն՝ որբ թողեալ զնա. որ և յարեցաւ[2] 'ի վաճառական մի և եղև 'ի տան նորա յառաջադէմ։ Մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ՝ առեալ զկին նորա։ Իսկ երթայր ուղտովք յԵգիպտոս. և պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն, յաղանդոյն Արիոսի և Կերինթոսի, որ և ուսոյց նմա 'ի հին մատենիցն զԱստուած և զՏղայութեան գիրս Տեառն մերոյ։ Իսկ 'ի դառնալն 'ի տուն՝ քարոզեաց զոր լուաւն. և հալածեցին զնա ազգըն իւր, և եկն յանապատն Փառանու։ Յորժամ եկին երկոտասան հազար Հրէայք և առեալ պատճառըս 'ի նոցանէ՝ քարոզեաց որդւոցն Իսրայելի զԱստուած Աբրահամու, և եղև երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն, զոր ետ Աստուած Աբրահամու։ Իսկ լուան նմա և ժողովեցան յԻւեղեայ մինչև ցՍուր, որ է հանդէպ Եգիպտոսի։ Իսկ զերկո-

[1] Ոսում. օր. որ ծնեալ 'ի քաղաքին Մաղխանայ։ — [2] Մեր օր. որբ թողեալ զնա էին և յարեցաւ 'ի վաճառական մի։

տասան հազարուն ըստ ցեղիցն Իսրայելի թագաւորեցին [1] երկոտասանից նահապետաց՝ հազար հազար արկին յինքեանս և եղեն երկոտասանից նահապետացն թաժին՝ ազգապետ գնելով ինքեանց, յորոց անուանն կոչեցան իսկ — Նաբէովթ, Կեդար, Աբդիլայ, Մարսամ, Մարսմայ, Իդումայ, Մասէ, Քոդէ [2], Դադ, Թեման, Յետուր, Նաբէս Կեդմայ։ — Եւ գնացին բանակս բանակս յանապատէն Փառանու յԱրաբովթ Մովաբու և անցին յայնկոյս Յորդանանու 'ի վիճակն Ռուբենի։ Եւ զօրն Յունաց էր յԱրաբիա. հարին զնոսա և փախեաւ Թեոդորոս եղբայր կայսերն մազապուրծ։ Եւ դարձան իշխանքն [3] յԱրաբիա և բնակեցան ըստ ցեղից ցեղից։ Եւ ժողովեցան առ նոսա ամենայն մնացեալքն յորդւոց Իսրայելի և եղեն զօր մեծ։ Եւ յղեն բանս առ կայսր՝ Թողուլ զերկիրն, զոր ետ Աստուած Աբրահամու։ Եւ արար նոցա ընդդէմ պատասխանի։ Եւ գումարեաց զօրս եօթանասուն հազար 'ի ձեռն ներքինւոյ միոյ հաւատարմի և պատուիրեաց երթալ յԱրաբիա 'ի վերայ Իսմայելի, ուր և սատակեցան իսկ և լցան մեծութեամբ բանակքըն Մահմետի։ — Եւ էր թիւս մեր վաթսուն և հինգ։ — Եւ զի յաջողեաց նոցա խրատն Մահմետի՝ խնդրեն 'ի նմանէ օրէնս և նա զտեղի մեհենից օձիցն, զոր պաշտէին՝ կոչեաց Ալքաուբա, որ է Դա-ռըն Աստուծոյ։ Եւ կոչեաց զընակութիւն քաղաքին իւրոյ Տուն Աբրահամու։ — Եւ 'ի զօրանալ քրիստոնէութեան զկուռս Դամասկոսի՝ Շամանոյ, որ նա

[1] Մեր օր. ըստ ցեղիցն Իսրայելի երկոտասանից նահապետացն։ — [2] Ո. օր. Քաղդէ։ — [3] Ո. օր. և դարձեան իշխանքն յԱրաբիոյ։

ինքն է Հեփեստոս կաղ՝ տարեալ ընկեցին յանապատ, զոր գտեալ Ցածիկք տարան 'ի մեհեանս օձիցն, և քուրմք օձիցն ոչ կամեցան անդ դնել. այլ հանեալ արտաքոյ՝ արարին տեղի 'ի միոյ ասից 'ի վերայ վիմի և անդ եդին, զոր գողացան Եթովպացի վաճառականք վասն ոսկւոյն [1], զոր ձուլեցին Խամայէլացիքն: Նա եղև պատերազմ սաստիկ 'ի մէջ երկուց ազգացըն: Մինչև մռուացան զայնմանէ՝ ասաց, թէ Երբահամու ոսնահեստն է, յորժամ եկն 'ի տեսանել զորդին իւր զԽամայէլ: Նա քանզի յոյս էր Խամայէլ՝ հարցանէ ցկինն Նորա, թէ «Ո՞ւր է այր քո». և Նա ասէ. «Գնա՝ աղճատեալ աւեոր»: Նա ասէ Երբահամ. «Յորժամ գայ 'ի տուն՝ ասա ցայր քո—փոխեա զդուռն տան քո»: Իսկ յորժամ եկն Խամայէլ և էառ զհոտ հօրն՝ եհարց ցկինն և նա ասաց զոր լուաւն: Նա ինացեալ Խամայէլի՝ եհան զկինն և այլ էառ մինչև ցեօթներորդ կինն, որ մատթեաց զԵրբահամ իջանել յերէն և ծծցէ զուտն: Նա իջոյց՝ ասէ, զմի ոտն, և եդ 'ի վերայ վիմին և տեղի եռ վէմն ոտիցն, և զմի ոտն ոչ իջոյց 'ի գրաստէն, զի երդուեալ տուեալ էր Սառային, — մի իջանել՝ երկուցեալ թէ լինի ընդ Հագարու: Զայս առասպելեաց Մահմետ և հրամայեաց յամենայն կողմանց առնել անդ երկրպագութիւն, և զվիմոմն ասաց շուրջ գալ միտտանի և ասել — լէպպէյք լէպպէյք, և որպէս թէ պատասխանի ումեք առնել—այ այ, տատատ տատատ: Նա անցեալ 'ի ձորն՝ անատուն սպանանեն, և ելեալ 'ի գրաստ փախչեն մինչև

[1] Մեր օր. զոր գողացան Եթովպացիք վաճառականք, զոր ձուլեցին Խամայէլացիքն:

'ի բլուրն Մասեաց: Եւ 'ի փախչելն հանդերձ անկանին կամ զուլամբի[1] — ոչ ոք իշխէ յետս հայել: Եւ 'ի մէջ երկուց վիմացն ընթանալով, զոր կոչեն Սոֆայ և Եբրեայ[2]՝ վիմէ 'ի վէմ երթան եօթն անգամ անհանգիստ, և քարինս ձգեն և Մահմետ՝ ասեն, այսպէս արար և ուսոյց:

Այլ միտումն վազելն վասն ստահակին է, և 'ի ձորն անապատն կատորելն և փախչելն՝ ասեն, թէ զոհ արար առնելոյն դիւաց Մահմետ, զի տեսիլս ցուցանեն նմա, և երեւեալ նմա դևք՝ փախեան: Եւ յերկու վիմամիջէն շրջելն և քար ձգելն լեալ են մէջք նոցա պաշտելեաց նախ քան զկռուսն. — և 'ի պաշտօնն Մահմետի ըստ սովորութեան՝ շուն կատաղի եղ ընդդէմ նորա և նա ձգեաց նմա քարինս, և զնոյն հրամայեաց առնել: Եւ օձք և սողունք, զի ոչ սպանանիցեն[3]՝ զի պաշտելիք են նոցա: Եւ շուն կատորելն այն է՝ որ ասեն, թէ 'ի մեռանելն Մահմետի չկամեցան թաղել՝ ակն ունելով, թէ յառնէ երեքօրեայ նման Յիսուսն մերոյ՝ և շունք կերան զերեսսն, և յորժամ իմացան՝ կատորեցին զշունսն: Եւ յամէն տարի 'ի նոյն ամսեանն[4] հրամայեցին զնոյն առնել: Նա ուսոյց ասել — «մի է Աստուած և ոչ ոք է նմա ընկեր, և Մահմետ ծառայ նորա»: Եւ որ ասեն Հրէի միոյ բանիւ, թէ մարգարէքն խօսեցան որպէս վասն Քրիստոսի և վասն Մահմետայ՝ զայն ասեն, որ Եսայի տեսանէր երկու հեծեալս իշոյ և ուղտու: Եւ յաւուր

[1] Մեր օր. և 'ի փախչելն հանդերձ անկանի կամ զուլամբի: — [2] Ա. օր. Սոֆայ և Եբրեայ: — [3] Մեր օր. զի ոչ սպանանեն: — [4] Ա. օր. և 'ի նոյն ամսեանն հրամայեցին զնոյն առնել:

միում յանկարծակի դիւթութեամբ անյայտ եղև Մահմետ և յետ սակաւու երևեալ՝ ասէ. «Խաղաղութիւն ընդ ձեզ և ողորմութիւն Աստուծոյ և շնորհք»։ Եւ նոքա զարմացեալք ասեն. «Ո՞ւստի՞ գաս և զի՞նչ է նոր ողջոյնդ և զո՞ր Աստուծոյ շնորհք բերեր մեզ»։ և նա, ասէ. «Ես առ գիս Աստուած ՚ի Մաքա ՚ի տուն հօր իմոյ և ձեր՝ Աբրահամու[1], և պատմեաց զկամս իւր, և ՚ի վաղիւն առաքելոց է մեզ զօրէնս»։ Եւ առեալ երինջ մի ծնեալ ՚ի տեղի ժողովոյն, մեկնեաց յորթոյն և գրեաց զոր ինչ կամէր, և յեղջիւրս նորա կապէր[2]. և ՚ի ձեռն հաւատարմաց առաքեաց յանապատ և ՚ի վաղիւն հրամայեաց արձակել։ Եւ ինքն հաւաքեալ զամբոխն՝ մնայր. և եկն կովն բջելով և քոտալով, և հերձեալ զամբոխն՝ խնդրէր զորթն։ Եւ հրամայեաց ունել զնա, և առեալ զթուղթն՝ համբուրեաց և ասաց՝ յԱստուծոյ եկեալ. վասն որոյ մինչև ցայսօր գրեալ են ՚ի սկիզբն Կուրանին Սուրէթ ուլբաքարայ, որ է «կովու օրէնք»։ Եւ հրամայէ եօթն անգամ կատարել աղօթս լուացմամբ։ Եւ փոխանակ փողոցն Իսրայելի ՚ի բարձուէ կանչել՝ վկայ առեալ, թէ «Եղ ՚ի վերայ լերինն Սինայի՝ աւետարանիչդ»։ Եւ Մուէզին կոչեն զձայնողն, որ է «հաւատացիր[3]»՝ և զմատն յականջն ածել, թէ որ կամու և որ ակամայ լսէ ականջովն։ Եւ զՔրիստոս Բան Աստուծոյ և Հոգի կոչեաց։ Եւ սքանչելիք զոր ասեն թէ առնէր — զլուսինն բերեալ ՚ի վայր՝ ասեն, չորս

[1] Մեր օր. ես առ գիս առաքեաց ՚ի Մաքայ տան հօր ձերում Աբրահամու։ — [2] Մեր օր. և կապեաց յեղջիւրս նորա։ — [3] Բռ. օր. որ է հաւատացիր։

կոտոր առնէր և դարձեալ բոլորեալ՝ յերկրնա առաքէր։ Բայց նախ քաղըթ էր իշխան Իսմայելի [1]; և ապա դարձեալ զՄահմետ՝ հաւանի նմա յամենայն բանս։

Եւ յորժամ զօրացան նոքա, երկուցեալ յԵրուսաղէմացւոց՝ զխաչն տէրունի և զամենայն սպաս եկեղեցեացն հանեալ 'ի նաւ՝ տարան 'ի Կոստանդնուպօլիս [2] և ինքեանք հնազանդեցան Իսմայելի, զի կայսըրն [3] այլ ոչ կարաց զօր գումարել 'ի վերայ նոցա։ Եւ նոքա բաժանեալ յերիս մասունս՝ — մի յԵգիպտոս և մի 'ի Յոյնս և միւսն 'ի Հայս. — և եղև ամենեցուն յաղթել։ Եւ որք եկին 'ի Հայս ընդ Ասորեստան հասեալ 'ի Գուռին՝ առին զնա և սպանին որոց ոչ գոյր թիւ, և գերեցին երեսուն եօթն հազար անձինս 'ի ժամանակս իշխանութեան Թէոդորոսի Ռշտունւոյ [4], որ զկնի Գուաթի՝ և բիւր մի 'ի նոցանէ։ Հարին զՊռոկոպոս [5] զօրագլուխն Յունաց, որ նստէր 'ի սահմանս Հայոց վեց բիւրիւ։

Յորում աւուր մեռաւ Եզր և յաջորդեաց զաթոռն Ներսէս եպիսկոպոս Տայոց զկնի տասն ամին Եզրի. բայց յափշտակութիւն եղեալ յանհնարին կոտորելոցն՝ խորհեցաւ փախչել, իբր ոչ բաւական մեծի աստիճանին։ Եւ աղաչեցեալ 'ի բազմաց [6]՝ դադարէ. և հաւաքեալ զբազմութիւն դիականցն՝ թաղէր, և 'ի նմին տեղւոջ շինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի։ Շինէ տաճար սրբութեան և 'ի վերայ վէ-

[1] Մեր օր. բայց նախ թաղքհեր էլխան Իսմայէլէ։ — [2] Ռ. օր. համեալ 'ի նաւ 'ի Կոստանդնուպօլիս։ — [3] Մեր օր. և կայսրն այլ ոչ կարաց։ — [4] Մեր օր. 'ի ժամանակս Թէոդորոսի Ռշտունւոյ։ — [5] Մեր օր. հայքն որ ըզ Պռոկոպոս։ — [6] Ռ. օր. և աղաչեալ 'ի բազմոց։

բաղձին և արկանէ հիմն տաճարի մեծի յանուն սըրբոյն Գրիգորի յառաջապարի, և դնէ 'ի ներքոյ սեանցն չորից զհաստատուն նշխարս սրբոյն Գրիգորի. և զգըլուխն 'ի գզրոցի եդեալ՝ պահէ 'ի պէտս բժշկութեան ախտաժետաց: Ընդ դնեն և զնշխարս Յիզտբուզտայ և զԴաւթի վկային: Նա և զսուրբ Գրիգորի նշխարն առեն բերեալ 'ի Հայս Գրիգորոյ Մամիկոնեայ 'ի դընայն նորա դեսպան 'ի Կոստանդնուպօլիս՝ տուեալ ցնա կին ումն յառաջագոյ, զոր ունէր առ իւր: Նա և նորա գաղտ հանեալ 'ի ծով և անցեալ գայ բերէ անդիտեղի քաղաքին զգանձն անանց մեծութեան: Նա և զծնօտն տայ Եղուանից 'ի խնդրոյ Ջուանշերայ և քեռ իւրոյ, որ էր կին Գրիգորի:

Յայնմ ժամանակի կայսրն Կոստանդին դաւեալ 'ի մօրէն Մարտինեայ՝ սպանի, կացուցեալ զորդի իւր Հերակլեակ թագաւորեցուցանէ զԿոստանդ որդի Կոստանդեայ: Նա և զի ապստամբեալ էր Վարազտիրոց՝ աղաչէ վասն նորա հայրապետն Ներսէս [1], և դնէ զնա կուրապաղատ Հայոց. որ և յառնուլ զիշխանութիւն՝ մեռաւ և թաղեցաւ 'ի Դարօնս առ հօր իւրում քաջին Սմբատայ 'ի պատիւ հօրն. և զԹէոդորոս Ռշտունի զօրավար [2]....

Բայց Մահմետ կալեալ քառասուն ամ զիշխանութիւնն՝ սատակի: Նա և զկնի նորա առին զիշխանութիւն Ումար, Եմր և Եբուբաքր [3]:

Նա և սպանին զՅազկերտ՝ թոռն Խոսրովու, և բարձին զթագաւորութիւն Պարսից, որ և տեւեաց ամս

[1] Յերկրորդն օր. աղաչէր վասն նորա հայրապետութեանն Ներսէսի: — [2] Յերկրորդն օր. պատկառին քաջք ենչ: — [3] Ու. օր. Ումար և Բուբաքր:

չորս հարիւր ութսուն և մի. և զկնի նորա առ զիշ-
խանութիւն Մուաւի: — Եւ Կոստանդնիանոս՝ թոռն
Հերակլեայ, ընկենու զԹէոդորոս յիշխանութենէ և
հրամայէ զօրավարին Ափլեկկիոյ[1] ելանել ընդդէմ Մու-
աւեայ: Նա Վարդ որդի Թէոդորոսի նենգ գործեալ
զօրացն Յունաց՝ կտրեալ զխելս կամրջացն 'ի վերայ
Եփրատու 'ի փախչելն Յունաց: — Նա կացոյց Մուաւի
իշխան Հայոց զԳրիգոր Մամիկոնեան. և եդ հարկ
Հայոց հինգ հարիւր դահեկան: Ոմանք ասեն 'ի Թոր-
դանայ բերեալ զբովանդակ մարմինն Գրիգորի Լու-
սաւորչին. և եկեալ Ներսէհ հրամանաւ Վարդայ
Գործատայ՝ Եղուանից իշխանի, և խնդրեալ զծնօտ
Լուսաւորչին տարեալ եդ 'ի Գըլխոյ վանս կոչեցեալ
տեղւոյն[2]: Եւ այլ զի 'ի հարկէ հնազանդեցան Հայք
Հագարացւոցն, ելանէ բարկութեամբ կայսրն 'ի
Հայս՝ և Ներսէս կաթողիկոս ազերսելով զանձն իջու-
ցանէ 'ի Դուին 'ի կաթողիկոսարանէն. և հաղորդին 'ի
միասին կայսրն և կաթողիկոսն և կան ութ օր 'ի խոր-
հրդեանն ըստ Յունաց սովորութեանն: Նա քարոզե-
ցին զժողովն Քաղկեդոնի: Նա եպիսկոպոս ոմն 'ի վայր
իջեալ 'ի բեմէն եմուտ 'ի մէջ ամբոխին[3], և զկնի հար-
ցեալ կայսերն ցեպիսկոպոսն, «Թէ ընդէ՞ր ոչ հաղոր-
դեցար ընդ քում պատրիարգին». և ասէ. «Դու իսկ
եղև պատճառ, զի յառաջ քան զերկու ամ ժողով
արար և նզովեաց զամենայն հերձուածողս. և առա-

[1] Մեր օր. զօրավարին Պեղէկիոյ, Ա. օր. զօրավարին Պեղեկէոս: — [2] Ա. օր. Ոմանք ասեն 'ի Թորդանայ բերեալ զԳրիգոր, զբովանդակ նշխարս Լուսաւորչին տարեալ եդ 'ի Գըլխոյ վանս կոչեցեալ տեղւոյն: — [3] Մեր օր. և եպիսկոպոս ոմն 'ի վայր իջեալ 'ի բեմէն 'ի մէջ ամբոխին:

ւել եւ զժողովն Բագրեւանդի»։ Նա մեղադրեաց յայլ թագաւորն[1] վասն նենգութեան նորա. և ապա հաղորդեցաւ եպիսկոպոսն և աւրհնեաց զթագաւորն և թագաւորն զնա։ Նա 'ի գնալ թագաւորին երկուցեալ Ներսէս Մուշեղունեաց տեառնն գնաց 'ի Տայս. և զկնի վեց ամի դարձաւ՝ լուեալ զմահ Թէոդորոսի։ Նա շինէ իւր կայս առընթեր մեծ եկեղեցւոյն և կացուցանէ ամբոխութիւն երկու մարդոց ըստ օրինի քաղկեդոնականութեան[2]։ Նա ածէ ջուր 'ի Բասեան գետոյ և տնկէ անտառս և այգիս։ Սա մեծ ժողով առնէր՝ և տասն հարք զտօն վարդավառին փոխեցին[3] և ոչ կարացին առնուլ զմիմեանցն. ապա հրամայեաց ընտրել զարժանն և զայն միայն ունել, զոր և արարին 'ի ձեռըն արբոյն Բարսղի՝ մականուն Ճոն կոչեցելոյ, որ էր առաջնորդ սուրբ ուխտին, որ Դպրավանք կոչի 'ի գաւառին Շնուոյ. որում ասեն, թէ եօթն անգամ ետես զՔրիստոս աքանչելի համարձակութեամբ, վասն որոյ Ճոնընտիր կոչի շարականն, որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր։ Նա մինչ դեռ էր Ներսէս 'ի Տայս՝ Թէոդորոս Մուշեղունի շինեաց զեկեղեցին Շղթամարայ։ 'Ի Դպրավանից տարան զնաշխն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Մարձիոյ կոչի[4]՝ յայնժամ Ճոնեանցն կոչիւր։ Նա տարաւ զնա Սարգիս Ճոնեացն 'ի գաղութ յերեսաց այլազգեաց, ուր արար աքանչելիս ձեռօք Տիմոթ[5] վարդապետին — զկինն Դե-

[1] Թուղ. օր. և մեղադրեցաւ յայլ թագաւորքն վասն նենգութեան նորին։ — [2] Ու. օր. վասն գաղթականութեան։ — [3] Մեր օր. զորն վարդավառին և զին հարց փոխեցին։ — [4] Ու. օր. ոչ Վաղր Ձիոյ կոչէ։ — [5] Մեր օր. չիւսոց Տիմոթ վարդապետէ։

մեծարեայ արքայքն Վրաց յաւերժութենէ առաջ ա-
րարեալ ամենեքին, փառս տայ և տուրս 'ի Հայոց՝ և է
սրբոյն Մ`եարովպայ առ Հռոմեայ, և կամ Բագրատի ար-
քայ Ճ`անին — և ունի զգիր Հայերէն յաւէժ թեմն Վախ-
ճանեալ Ներսիսի մեծ պատրիարգի՝ թագէ յիւրում
ձեռակերպութեն. և առնու զաթոռն Անաստասայ, որ էր
յԱկոռւոյ սենեկապետ Ներսիսի, որ նորին հրամա-
նաւ շինէր զտուրբ Գրիգորն՝ մինչ էր նա 'ի Տայս:
Յաւուրս սորա[1] շինեաց Գրիգոր Մամիկոնեան զկա-
թուղիկէն Երձոյ և զվանքն Դրազարկայ. և Անաս-
տաս շինէ զեկեղեցին Ակոռւոյ՝ եղբայրանոց գնա յօ-
րինեալ և հիւանդանոց: Եւ Գրիգոր[2] իշխանն նոյն
Մուրհան Պատրիկ յաղթէ Թագաւորաց և խնդրեաց
զԲրիսոս. և ետ զնա մկրտել Անաստասայ և եղեալ
ինքն նմա կնքահայր՝ կոչեաց զնա[3] յանուն հօր իւ-
րոյ Գուրիթ և ետ նմա զՋաղ 'ի Կոստայեան: Յայնմ
ժամանակի էր Անանիա Շիրակունի, որ առեալ հրա-
մանս յԱնաստասայ յօրինէ տումար հանապազորդ,
որ մինչ խնդրէր պատրիարգն ժողովով[4] հաստատել՝
կատարի: Նա յաջորդէ զնա Իսրայէլ զինի վեց ամ
պաշտօնէին Անաստասայ: Յաւուրս սորա զԴստաւորաց
անն զօրավարուխ Տաճկաց որ 'ի Հայք՝ վանեալ հալածէ
Ներսեհ իշխանն Վրաց: — Իսրայէլ կացեալ յաթո-
ռըն սուրբ[5] ամս տասն՝ վախճանի. և առնու զգահն
սուրբն Սահակ, որ էր 'ի Ձորոփոր յարքունականաց

[1] Ո. օր. յաւուրս շինեաց Գրիգոր: — [2] Մեր օր. Եւ ... Գրիգոր իշ-
խանն էին Մուրհանն: — [3] Ո. օր. և եղեալ ինքն նմա կնքահայր և զնա յա-
նուան հօր իւրոյ Գուրգէն: — [4] Մեր օր. որ մինչ խնդրէր պատրիարգն ժողովել
հաստատել: — [5] Ո. օր. Իսրայէլ կեցեալ յաթոռն ամս տասն:

Յեօթն ամին տասն արշաւեցին Խազիրք 'ի Հայս և սպանին զԳրիգոր իշխանն և գերեցին զՀնարաւորսն իւրեանց։ Եւ առնու զիշխանութիւնն Աշոտ Բագրատունի՝ որդի Սմբատայ։ Իսկ Մ`աւի իշխանն Իսմայելի խորհեցաւ բառնալ զԹագաւորութիւն Յունաց որպէս զՊարսիցն. և կազմեաց երեք հարիւր նաւ մեծ և յամենայն նաւ հազար այր, և հազար նաւ փոքր և յամենայն նաւ հարիւր այր՝ և արձակեաց զնոսա ընդ ծով՝ և ինքն ընդ ցամաք հասանէ[1] 'ի Քաղկեդոն։ Եւ կորեան ամենայն նաւքն և ինքն փախեաւ 'ի գիշերի և զերծաւ և մեռաւ յԸատրիս։ Եւ առ զիշխանութիւն Մ`րուան որդի իւր, և առաքեաց ոստիկան զՄ`ահմետ անուն 'ի Հայս, որ աւերեաց զՄեան կողմն և գերեաց զորս 'ի նմա, և խարէութեամբ կոտորածեաց զաւուրք Գրիգոր՝ ծառայ մի սպանեալ և ընկեցեալ 'ի խորափիտ մի. և ապա խնդրեալ և գտեալ՝ վրէժխնդիրք լինէին ծայրակատոր արարեալ զկրօնաւորսն և քառասուն այր զփայտէ կախեալ։ Եւ գնացեալ Մ`ահմետի՝ այլ ոստիկան առաքէ 'ի Հայս՝ Աբդլահ անուն, որ կամեցաւ բառնալ զազատազգութիւնն Հայոց և զՍահակ կաթողիկոս կապեալ՝ առաքէ 'ի Դամասկոս, և զիշխանսն Հայոց՝ զՍմբատ և զորդին Դաւիթ, խաչէ 'ի փայտի։ Եւ միաբանեալ իշխանքն Հայոց՝ Սմբատ և Աշոտ և Վ`արդ, կամեցան փախչել 'ի Յոյնս, որոց հետամուտ եղեալ Իսմայելացիքն հինգ հազար հասին 'ի Վ`արդանակերտ և կռուեցան և սրախողխող արարին առ հասարակ յիշխանացն մերոց օգնութեամբն Աստուծոյ, զորոց զունչսն հատեալ՝ առաքէ առ

[1] Ա. օր.՝ արշաւեաց զնա 'ի ծով, և ինքն 'ի ցամաք հասանէ 'ի Քաղկեդոն։

կայսր և առնու զպատիւ կուրապաղատութեան զկնի Աշոտի, որ շինեաց զԴարօնի եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա 'ի մտիցն արեւու մասամբ [1] և 'ի նաւակատիսն գրեաց զորս ըստ պատկերին։ Եւ զնա փոխէ Սմբատ Բագրատունի. և գնացեալ 'ի Տայք [2] ամրանայ 'ի Թուղարս [3]։ Եւ լուեալ զայս Աբդլմելիք հրամայէ Մահմետի, որ էր զօրավար նոցա՝ ելանել 'ի Հայս. զոր լուեալ Սահակայ 'ի կապանսն՝ գրէ աղաչանս, զի հրամայեսցէ Մահմետ առ ինքն գնալ, որ և հասեալ 'ի Խառան և հիւանդացեալ գրէ առ նա աղաչանս թողուլ Հայոց զյանցանսն, զոր և արարն իսկ, և ոչ եկն չարութեամբ յաշխարհս։ Ոմանք զՍկրայ ոմն ամիրապետ ասեն, որ չոգաւ առ նա Սահակ և գրեաց նամակ հաշտութեան և հանդերձ սուրբ մարմնովն առաքեաց յերկիրս [4] զկնի քսան և եօթն ամի պատրիարգութեան, զոր յաջորդէ Եղիայ զսուրբ աթոռն։

Մեռաւ Աբդլմելիք և առ զտեղի Վլիթ՝ որդի նորա, որ հրամայէ Մահմետի բառնալ զազատսն Հայոց 'ի Կամսայ [5] ումեմնէ, որ էր հրամանատար Նախջավանայ. որ խաբէութեամբ հաւաքեալ [6] զնոսա — զոմանս յեկեղեցին Խրամայ և զկէսն յեկեղեցին Նախջավանի՝ այրէ զնոսա 'ի հարիւր յիսուն թուականին։ Եւ զգլխաւոր նախարարսն զփայտէ կախեալ չարչարէին, և զկանայս և զորդիս նոցա խաղացուցին 'ի գե-

[1] Մեր օր. զոր երբեր որդի նորա 'ի մտիցն արեւու մասամբ։ — [2] Ցերկոսին օր. և գնացեալ 'ի Տայն։ — [3] Մեր օր. ամրանայ 'ի Թուղարս։ — [4] Մեր օր. առաքեաց յերկիրս։ — [5] Մեր օր. 'ի կամսայ ումեմնէ։ — [6] Մեր օր. որ խաբէութեամբ հաւատէ։

բութիւն, ընդ որս և զՎահան որդի տեառն Գողթան[1], որ մարտիրոսացաւն։ Զկնի փոխէ Սլեման եղբայր նորա. և զնա Ումար, որ զտուրքն Վահան նահատակեաց։ Իսկ զկնի այրելոյ իշխանացն՝ Սմբատ կուրապաղատ և ընդ նմա նախարարքն գնացեալ յԵգեր՝ առին 'ի կայսերէ զքաղաքն Փոյթ և բնակեցան անդ. և զկնի յաւուրս առեալ զնա և զպաս եկեղեցւոյն՝ եկին 'ի Հայս։ Եւ բարկացեալ Յունաց՝ նզովս կարգեցին նոցա և 'ի զատկի տօնին կարդան։

Բայց մեծն Եղիա երթեալ յԱղուանս զՆերսէս Բակուր՝ զգաւառնողն Քաղկեդոնի ժողովոյն և զտիկինն համախոհ նմա 'ի ձեռն Ումարայ աքսորէ անարգանօք և ձեռնադրէ ուղղափառս 'ի տեղի նորա և ինքն դառնայ 'ի Հայս և կատարի զկնի չորեքտասան ամի աստիճանին։ Եւ յաջորդէ զնա Յովհաննէս իմաստասէրն[2], որ 'ի ներքոյ ագանէր այծեայս ցփսիս և 'ի վերոյ պճնազարդեալ պաճուճէր զանձն, և ոսկի մանրր աղացեալ փչէր ընդ ծաղկեալ ալիս մօրուացն. զոր լուեալ Ումարայ՝ կոչէ առ ինքն և եօթն անգամ արքունական զգեստիւք խիլայէ զնա և առաքէ 'ի Հայս. որոյ եկեալ ճգնէր 'ի պահս և յաղօթս և 'ի լուսաւոր վարդապետութիւնս. որ և արար ժողով 'ի Մանազկերտ Հայովք և Ասորեօք և որբեաց զհաւատս[3] 'ի մարդադաւան աղանդոյն, եթէ ուրեք համարձակէին յԵզրի խոտորմանէն։ Յայնմ ժամանակի գրեաց Ումար առ Լևոն կայսր շատ ինչ բանս և զայն ևս, թէ լուեալ է մեր, թէ եօթանասուն և երկու բաժին են

[1] Մեր օր. որդի տան Գողթան։ — [2] Մեր օր. յաջորդէ զնա Յովհաննէս իմաստասէրն մին։ — [3] Ու. օր. և որբեաց զհօրս 'ի մարդադաւան աղանդոյն։

քրիստոնեայք։ Եւ նա գրեաց պատասխանի, թէ «Երկ-կրպաշտեան են — Յոյնք, Հռոմք, Բաբելացիք, Եգիպտացիք, Եթովպացիք, Հնդիկք, Արաբք, Հայք, Սարակինոսք, Պարսք և Աղուանք. իսկ դուք ընդէ՞ր ատէք, կոչեք զՀռուզի, Սարդի, Խուռասանի, Կնարի, Մուրջի, Բաաղէ՝ անաստուած, Գ. յողէ, որ ուրանան զէութիւն աստուծոյ և զմարդութիւն և զասացեալ քո մարգարէն Համբիրի։ Եւ այն երկու՝ ոմն ասէ զմեզ և ոմն ոչ է խաւսաւէր[1]։ Եւ ձեր գրեանն[2] Ումար և Աբու-թուռաք և Սուլիման Պարսիկ, զոր Հաջաջ ապդա-պետան Պարսից շրջել ջանաց՝ և մերս նոյն է, զի ՚ի սուրբ Հոգւոյն է։ Եւ ՚ի գերութեան ամենայն գրեանն ոչ կորեան, այլ մնացին առ ցրուեալսն»։ — Եւ յոր-ժամ Եզր գրեաց զաստուածաշունչն՝ միաբան գտան հնոյն։ Եւ է ըստ արխաբեառացն հաշմարոյ, թէպէտ եօթն[3] կըր-կնի ոչ առանց մեծի խորհրդոյ։ Իսկ սուրբ պատրիարքն Յոհաննէս եհան յաշխարհէս Հայոց զատուածեալ յոյ-նըն յամենայն տեղիս հրամանաւ Ոմառայ[4]։ Եւ զէշ-խանն դեսպան առնն արձակեաց ՚ի Նեմէ Վ. աւուր ա-նուն առ Յոհան, թէ ընդէ՞ր առնես զայսոր դայդ։ Եւ հիւանդացեալ իշխանն, և անձամբ յորով բժիշկս չըն-կարացին օգնել և մերձ էր ՚ի մահ. և ձեռն եդեալ սուրբն Յոհան, ողջացաւ առժամայն։ Եւ ետեսեալ զարմանչելիսն՝ հաւատաց ՚ի Հայոց ուղղափառութիւն և ոչ ևս դարձաւ ՚ի Յոյնս, այլ եղև կրօնաւոր և ծեր-

[1] Ներքևումն օր. ոմն ասէ զմեզ և այ ոմն ոչ է խաւսաւէր։ — [2] Ձեր-կնոքն օր. և զձեր գրեանն։ — [3] Մեր օր. Եօթներ հինգ կրկին ու առանց մեծի խորհրդոյ։ — [4] Ռ. օր. հրամանաւ յՈմառայ։

նեցաւ¹ այնմ Հեղինէասանն յայտնին, որ Հռովմայեցւոցն կո-
չեցաւ սմնուսակք նորա։ Եւ զխաչն առ ինքն ունէր
բերեալն 'ի գաւառն 'ի Հռոմայեցւոց. — պատրաստէ քաւորք՝ և զու-
րնելով. Թէ կամիս՝ սիրով։ — Յովհաննէս զինքն մեծամեծ
անեանց հատուածի և յաղթողէ զարթնանն Կոստանդ յԱր-
մտորից զեղջէ, որ ընդ մէջս 'ի նաւն կալթողելու-
թեանն յաւուրց² անուանի Տրդատայ, որ շինեաց եկեղե-
ցի՝ անուն առնելով զատուրս կենաց խաչաց զամն երեք-
տասանն, նշխարաց 'ի զեղմ ազգէն Տաճկաց որ 'ի Դու-
ւինէ. Եւ զնա յաղթողէ Տրդատ յԱթենաց զեղջէ՝ այլ
ընդ և առաքինականն, որ եղև 'ի սաղմնյ աղօթից
ապա իսկզբակուածիւն զամն քսան և երկու։

Իսկ զՄեծամբ մտանէ Նորին՝ այլ ընդ և այսպիսիք, որ
զխաչն և զպատուէր եկաւոր յերկրէ և զնոցա սպասնա-
նէր, մինչև խնդրեցաւ յայսպէս շարժ։ Եւ եկաց յետ
նորա Հեշմ, որ առաքեաց զեղբայր իւր Մսլիմ մին-
չև ցՄխիթարեանս ովքս եօթն բիւր։ Եւ միւսանգամ
զնոյն գործեալ և ծախսոցը լինի 'ի զօրութենէ խա-
չին յխառն բիւր առանց։ Եւ կայսր արձակեաց զՄբո-
րիմ պատմելով զխառն Եսուածով։ Արձակէ Հեշմ ըզ-
Մրուան որդի Մահմետի 'ի Հայս, որ եկեալ կացոյց
զՆշան Խազրատոնի կուրապաղատ և կամ պատրիկ
տանդ. և մախսայլին նաև Եմրատ և Գուրիթ և Գրի-
գոր Մամիկոնեանք։ Եւ գնացեալ Մրուան 'ի Վրա-
ցաց քաղաքն Հոնաց՝ դարձաւ յաղթութեամբ։
Օվկնի Հեշմայ նստաւ Վալիթ զազրագործ; որ և Հր-
ամանաւ կուռուացն սպանաւ³։ Եւ եղաւ Սուլէյ-

¹ Ուռմ. օր. և Հեղինէ այն Հեղինեասանն։ — ² Ցերկրպ. օր. յաւուրս անուն Տրդատայ։ — ³ Ու. օր. որ և Հրամանաւ ազատաց։

մեծն և սպան զնա Արտաւան և ինքն տիրեաց։ Իսկ առաջին Հայոց զօրուն[1] ամի ամի հարկիւր հազար դահեկան արծաթիս[2]։ Իսկ էառ Արտաւան զԴամասկոս և խաղա-տաղաւուտեաց զնոսա. — զի կապէր զմարդ 'ի չորս ձիոց, և տաշէր զերեսս նոցա՝ 'ի վերայ երից և չորից ամե-բարշառութեանց[3], որ է ապականութիւն և ընչից զանկու-թիւն և հեշտ զանկութիւն և չարարդն՝ յԱստուծոյ ոչ ունէին անհն պատուհասի։ Զայսու ժամանակաւ ապստամբութիւն խորհեցան իշխանքն Հայոց, և ոչ կամեցան պատրիկն Եշտու. և կարեալ հրաժարեցին զնա Արամեկանեանքն Գրիգոր և Դաւիթ։ Սա է Նախա-նի Թագաւորացն Հայոց[4] և Վրաց. Նշանեն ապա երկու Եղբարք՝ որդիք Հեշման, և երկու ամբարտա-ւանզմին ընդ Արտաւանայ կատարեմամբ արդ յոյժ, որ 'ի միում նուագի անկան 'ի զօրէն երեւան հազար և ապանան Արտաւան։ Իսկ ուրեացին Եղբարք, որ և 'ի Մանկոց պաշտանջէին հարկս. և առաքեցին 'ի Հայս զԻզիտ՝ զառն Նաղէ, և ապա զԻսայի, և ապա զՀամա-սան կառապետ. ընդ որ դառնացեալ Մուշեղ Մամի-կոնեան՝ ապստամբեալ սպան յՒաճայեք երկու հա-րիւր այր, և ապա վեց հազարս։ Իսկ ապա կոտորեաց 'ի մեռուզման միջէ, որ տեսիլն և երագս ասուած պատա-մէր և ասէր, թէ կատարեալ են ժամանակք իսմա-յելի, — ժողովեցան հինգ հազարք, որոց գլխաւորքն Մուշեղ և Սմբատ։

Իսկ զկնի Տրդատայ միւս այլ Տրդատ յաջորդէ ընդ

[1] Յուղղ. օր. և զօրքն Հայոց պէրանիեան ամի ամի։ — [2] Մեր օր. հա-րիւր հազար դահեկանս արծաթոյ։ — [3] Մեր օր. ամբարշտութեան նոցա։ — [4] Մեր օր. Նախնի Թագաւորն Հայոց և Վրաց։

տուրք աթոռն ամս երիս. առաջս Սիոն եպիսկոպոս Եղծ-նեաց՝ այր սուրբ և սքանչելագործ, որ զյորդառատ աղբիւրն ցամաքեալ առ աղօթով Սիոնի կոչեցեալ ընդ հիմն գաւազանաւ հարեալ բխեցոյց, որ զկնի ութ-ամի կատարի։ Նոյն առնու զաթոռն տէր Ներսէս յԱշ-տարակեցի, զոր ասեն թէ մայրն աղքատութեամբ սնուցանէր զնա բացօթեայ մուրացկանութեամբ զըր-տուհար 'ի ձմերայնի և արևակէզ յամառայնի. զոր 'ի սնանել ունէնց 'ի գլուխ հայրապետանոցին՝ ասաց. «ոչ գիտեք թէ պատրիարք սնուցանեմ զորդեայս իմ»՝ որպէս և եղեն — Նախ եպիսկոպոս և ապա պատրի-արք շնորհաւքն Աստուծոյ [1], որ և զկնի երեքտասան ամի կատարի։ Յաջորդէ զաթոռն Յովհաննէս ամս երկու. և ապա Յոբ ամիս վեց, յորոյ աւուրս 'ի գեղջն Բագրեւանդ վանս ակներէն զարդարաց եկեղեցւոյ զպատարագսն յաւանիկանէն՝ սպանեալ քառասուն այր [2] և սաստ յանդիմանութիւն գանձուց։ Իսկ զկնի Յոբայ Մովսէս յաջորդէ զաթոռն, որ էր 'ի Դուինայ՝ ա-ռաջնորդ սուրբ ուխտին Մաղքնեաց, որ և 'ի Օշական երթեալ 'ի գաւառն Շիրակայ՝ մնայ 'ի խուց և ճգնի յոյժ, ուստի հանեալ սանէրին յաթոռն. և տե-սեալ զնա յոյժ նուրգեալ 'ի ճգնութեանցն ասեն. «Յո՞ երթաս». և ասէ. «Մեռել զերեաս զերզել ընդ այլ հայրապետսն». որպէս և եղեն՝ զկնի ամի միոյ վախճանեալ՝ նկարագրի ընդ այլսն [3]։ Նոյ յաջորդէ զնա Գրէգոր յԱրագածոտնէ։

Իսկ յետ Եզդայի Մահմետ՝ որդի նորա, առաքէ

[1] Յուսմ. օր. և առա պատրիարք շնորհացն Աստուծոյ։ — [2] Մեր օր. զդանեին քառասուն այր։ — [3] Մեր օր. վախճանեալ նկարեր ընդ այլսն։

առ Վանն երկու զգիւ մանանեխ և զոր զենի, և չկա-
րող զմտանել։ Բայց անկելոցն 'ի մեծ պատերազմին Տիտա-
ցողացն եկին այսորիկ՝ — երկու որդիք Սմբատայ՝ որդւոյ
Աշոտի, որոց անուանքն Աշոտ և Շապուհ, և Սա-
մուէլի եղբայր մի՝ Շապուհ անուն, իսկ Մուշեղայ
չորս զաւակք և երկու որդիք, անդրանկին՝ Շապուհ
անուն, որք անկան յերկիրն Վասպուրական, զորս
զերկուսին նախարն Սենեքերիմ Արծրունի՝ որպէս թէ
'ի պատմութեան հօր նոցա[1] եղև ազգաւ մեծ. և մի 'ի
քերց նոցա եւ զինքն յամուսնութիւն Գահապետի ու-
մեծին Խաչենկերպացւոյ[2]՝ 'ի Թիկունս առնելով զնա։ Իսկ
որդիքն Սմբատայ՝ Աշոտ և Շապուհ, համարեալ
բաժանեցին զհայրենիս իւրեանց։ Իսկ զի Գահապետն
յախշատակեալ էր զմտան ինչ Արշարունեաց և խորհէր
տիրել 'ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին՝ զայն առնէր
յինքեանս Աշոտ և Շապուհ. և եղեալ զկողմանբք Շի-
րակայ՝ Հայրին զզօրս Խամսայեցին որ անդ, և զբռնեա-
ցին յինքեանս զՇիրակ, զԱշոցք և զգաւառն Տա-
յոց։ Իսկ այսպէս ըստ բախտին եղեալ Աշոտի քաջի՝
չհնէ զԱսամաս և բնակեցուցանէ 'ի նմա զբնտանիս իւր,
և ինքն նախանձեալ նախնւոյն իւրոյ Սմբատայ՝ որդւոյ
Բիւրատայ, իշխանի Սմբատաւանեայ, որ է բերդ 'ի
Այգեր գաւառի։ Փախուցեալ յաւուր միում պաշարեցին
զնա Թշնամիքն՝ մինչ կայր յաղօթս. և անկեալ՝ ոչ
խափանեաց զճակել ընդ Աստուծոյ մինչև ցկատա-
րումն. և այսպէս եղեալ ընդդէմ նոցա[3] կոտորէր յերկուս

[1] Ուռմ. օր. որպէս թէ պատմուտս հօր նոցա։ — [2] Ո. օր. Գահապետի ա- մեծին Խաչենկերպացւոյ Թիկունս առնելով զնա։ — [3] Մեր օր. և այսպէս եղ ընդդէմ նոցա։

զգլխաւոր նոցա, որում անուն էր Լիպարան Աբդլայ[1]. և հարկանէր իբրև արս հինգ հարիւր: Նա առ քաղաք կալեալ[2] որդին Գնունեաց՝ թափել զնոսա յիսմայելացւոցն, որոյ երթեալ հաւասար արարեալ յԱղուանս զատառ, և առ իւրն զումարեալ զամենայն ազգն աղխիւն իւրեանց՝ առնէր բնակութիւն 'ի Տարօն: Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելացիքն ընդ միմեանս՝ հանդչէր երկիրս Հայոց: Իսկ ազատն զօրանալ իշխանքն յիւրաքանչիւր տեղիս. և այլք իշխանն Իսմայելի Աշոտի՝ որդւոյ Սմբատեանն, որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Մոկաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէր զնոսա. և կայսրն առաքէ նմա պատիւ կուրապաղատութեան: Իսկ Գրհատայն ապստամբեալ յիւրմէ իշխանէն՝ գայ նստի 'ի Գնունեաց բռնութեամբ որդւովն իւրով Աբդլայիւ: Իբրև եսես զայն կուրապաղատն Աշոտ՝ առաքէ առ կայսրն Լեւոն օգնել Հայոց — և չէր նա պարապ. զի Մ`քեայէլ ոմն ջանացեալ սպանանել զնա և ոչ յաջողեալ գործոյ, խնդրեալ կայսերն՝ կամեցաւ սպանանել զնա և աղաչեցեալ 'ի թագաւորութեանն մինչև անցցէ մեծ զատկին օր՝ եղաւ 'ի բանտի: Իսկ էր բանդապանն բարեկամ Մ`քեայելի, որ կաշառեաց զմտերիմսն[3], որք էին սենեկապանք արքայի և մօտաւորք: Սոքա յանկարծակի սրովք դիմեցին 'ի վերայ կայսերն յեկեղեցին 'ի ժամ պատարագին, և նորա փախուցեալ առ սեղանն՝ բուռն եհար զնմանէ. իսկ նոքա անո-

[1] Մեր օր. Լիպարան Աբդլայ: — [2] Մեր օր. առ սա քաղաքաւ որդին Գնունեաց: — [3] Մեր օր. որ կաշառեաց զմտերմականսն:

ղորմութեամբ իւր պաշտանացն այնմիկ[1] զնա 'ի անդունդս. և թագաւորեաց Միհրդատ: Եւ եղանէր 'ի խնդիր մեծի զօրավարին Մանուէլի Մամիկոնեայ. և նորա աճանապարհեալ հարիւր յիսուն արամբք անկանի 'ի Կամախ և անկանի առ Մանուէլ իշխանն Խամայեալին, որ ըսպանեալ զեղբայրն Մահմետի՝ ինքն տիրէր Տաճկաց. Եւ նորա յոյժ պատուեալ զնա՝ կարգեաց ռոճիկս աւուրն հազար երեք հարիւր և վեց կշիռ արծաթոյ, և զօր ըստ օրէ պարգևսն անչափ և անկշիռ. Բայց կուրապաղատն Աշոտ տիրեաց 'ի Կարնոյ մինչև ցՏփխիս լեռնանակողմանցն հանդերձ. Բայց տունն Դահուապայ զօրացեալ 'ի Դուլին իբրև հինգ հազարաւ՝ կամեցաւ գնալ 'ի Տարօն[2] յիշխանութիւն Աշոտի՝ որդւոյ Սմբատայ. իսկ ողջախոհն այն և քաջ հաւատացեալն երկու հարիւր հեծելովք և երեք հարիւր հետևակաւք եւ ընդդէմ նոցա՝ չմնացեալ հաւատքեան զօրացն, կոտորեաց 'ի նոցանէ երեք հազարս և հասեալ 'ի բանակս նոցա էառ զամենայն մեծութիւնս նոցա, և դարձաւ խնդութեամբ՝ փառաւորելով զԱստուած: Եւ Շապուհ եղբայր նորա ամրացեալ 'ի կողմանս Դունայ՝ առեալ աւար բազում, դառնայր. և թափեցաւ զօրն 'ի քաղաքէն զհետ նորա, այլ և քաղաքացիքն դիմեալ 'ի վերայ Աշոտեանն տղայոցն զնա և ածին 'ի դուռն քաղաքին՝ և դարձեալ զզօրացն. և խմնցեալ զերեսն՝ չքացուցին և կորեան 'ի միջոյ:

Յաւուրսն յայնոսիկ զայր եպիսկոպոս մի՝ Աշխ-

[1] Մէկ օր. անուղղորդ կապանդակութեամբ ազանձին զնա: — [2] Ու. օր. խօսեցաւ 'ի Տարօն:

կուսայ անուն, առ Աշոտ և Ջանայր դարձուցանել զնա յաղանդն Քաղկեդոնի, զոր լուեալ Նիւրատ ոմն վարդապետ 'ի Միջագետս՝ առաքէ զաշակերտն Նանայ, որոյ եկեալ մարտնչէր ընդ Ապիկուրայ և յաղթէ նմա զօրութեամբ սուրբ Հոգւոյն: Եւ հալածէ զնա իշխանն և հաստատի ևս առաւել 'ի հաւատս սրբոյն Գրիգորի: Յետ այսորիկ վախճանի 'ի մահճի Աշոտ, և առնու զիշխանութիւն Սմբատ որդի նորա ամ մի: Եւ ապա մարտուցեալ ընդ չորից հազարաց հինգ հարիւր արամբք՝ պսակի 'ի Քրիստոս յԻսմայէլականացըն. և եղբարք նորա Դաւիթ և Սահակ և Մուշեղ և Բագարատ առեալ զմայրն իւրեանց՝ չոգան 'ի Մուփարղին առ Խաղափ ամիրայն և սիրով ընկալեալ եղեն 'ի նմանէ: Իսկ Սևադա ոմն 'ի տանէն Ջահապայ չորս հազարօք կռուեալ ընդ Աշոտոյ և ընդ եղբօր իւրում Շապհոյ՝ մեռաւ Շապուհ 'ի պատերազմին. և զկնի երկու ամաց մեռաւ Աշոտ 'ի տան իւրում, և առ զիշխանութիւն Սմբատ որդի նորա և խնամէր զմնացեալ որբսն՝ որդիսն Շապհոյ, բնակեցուցեալ զնոսա յԱնի յապահովս. խաղաղութիւն արարեալ ընդ Սևադայի՝ առնու 'ի նմանէ զպատիւն հայրենի ասպարապետութեան, և ամուսնացեալ ընդ քեռն Գուրթի ծնանի երկու որդիս՝ զԱշոտ և զՇապուհ, որոց քոյրն տուաւ յամուսնութիւն Բագարատայ՝ որդւոյ Աշոտի կուրապաղատի: Եւ Գուրթ՝ եղբայրըն Սմբատայ, շինէ զՕձբերդ:

Յաւուրս յայսոսիկ այր մի յազգէն Պարսից եկեալ 'ի Բաղդադայ՝ Բաբ անուն, արկանէր զբազում 'ի սուր սուսերի յազգէն Իսմայելի՝ գերելով զբազումս,

և ատէր զինքն անմահ. և 'ի միում նուագի սատակէր երեսուն հազար 'ի պատերազմին իւրում [1] ընդ Իսմայելի: Նա եկն մինչև ցԳեղարքունի և մաշէր սրով զմեծ և զփոքր: Նա Մամուն էր 'ի կողմանս Յունաց [2] զամս եօթն և առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ [3] և դառնայր 'ի Միջագետս: — Նա Մանուէլ երթայ դարձեալ 'ի Յոյնս: — Մեռաւ Մամուն և առ զիշխանութիւնն Աբուսահակ եղբայր նորա, որ և առաքէ զԱփշինն ամենայն ուժով 'ի վերայ Բաբանայ 'ի Հայս և ինքն կոտորէ զզօրսն Բաբանայ [4]: Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱփշինէն պարգևս հազարիցս հազար կշիռ արծաթոյ և այլ ևս հարիւր հազար առնու 'ի նմանէ. և զԲաբանայ կտրեալ զոտս և զձեռս [5] հանէ զնա 'ի փայտ: Նա երթայ Ափշինն յերկիրն Յունաց, յաղթէ կայսերն, առնու զԱմուրրիա քաղաք. և գերեալ զնա՝ դառնայ խաղաղութեամբ:

Յաւուրս յայնոսիկ Աբլհերթ ոմն 'ի տանէն Ղահապայ եկ չորս հազարիւք յերկիրն Սիւնեաց. և եկ Բաբգէն ընդդէմ նորա երկու հարիւրօք և ջնջեաց զնա իսպառ:

Իսկ 'ի կարգի պատրիարգացն յաջորդէ զԳէորգ Յովսէփ ամս մետասան. և զնա Դաւիթ ամս երեքտասան, — յորում աւուր ոստիկան ոմն եկ 'ի Հայս՝ Հաւլ անուն, որում ընդդէմ դարձեալ [6] մեռան Արմ-

[1] Ուսմ. օր. տապալէր երեսուն հազար 'ի պատերազմի իւրում: — [2] Մեր օր. և Մամուն էր 'ի կողմանս Յունաց: — [3] Մեր օր. ամուրն Լուլուայ: — [4] Ցերկնաւին օր. 'ի վերայ Բաբանայ և Ափշինն ուտակ 'ի Հայս և ինքն կոտորէ զզօրսն Բաբանայ: — [5] Ո. օր. և զԲաբանայ կտրէ զոտս և գլխոս: — [6] Ո. օր. ընդդէմ դարձան:

բատ և Սահակ՝ Սիւնեաց տէրն: — Իսկ զՅովսէփ յաջորդէ Յովհաննէս՝ այր սուրբ և պարկեշտ, որ զկնի ութ ամի չարախօսեալ զնա առ Բագարատ իշխանն Տօրոս լերին՝ խորհի ընկենուլ զնա. և պատուհասին 'ի տեառնէ չարախօսքն: Եւ ոստիկան ոմն եկեալ՝ Ապուսէթ անուն, կալեալ առաքէ զԲագարատ առ ամիրայն: Իսկ ամբոխն Տօրոսի շարժեալ 'ի բարկութիւն՝ սպանին զԱպուսէթ. զոր լուեալ ամիրայն գումարէ զօր բազում 'ի ձեռն ընդոծնոյ իւրոյ Բուղայի՝ տուեալ պատուէր զնախարարս աշխարհիս կապանաւք առ նա հասուցանել. որոյ եկեալ կատարէր զհրամայեալն. քանզի մտեալ 'ի Տարօն ըմբռնէ զորդիսն Բագարատայ գերելոյ՝ զԴաւիթ և զԱշոտ [1] և զգեղեցկադիտակն [2] Աշոտ հարիւր յիսուն արամբ, բռնադատէր ուրանալ զՔրիստոսի աստուածութիւնն. որում ոչ հաւանեալք՝ դառն տանջանաւք սրոյ և հրոյ և խաչիւ պսակեցան 'ի Քրիստոսէ, որ օր քսան և հինգ էր մեհեկի ամսոյ — զոր տօն կարգեաց սուրբ պատրիարգն Յովհաննէս, և ինքն վախճանեցաւ զկնի քսան և երկու ամի հայրապետութեան իւրոյ: Եւ առնու զսուրբ աթոռն Զաքարիաս 'ի գեղջէն Ձագայ [3]: Եւ Բուղայի կալեալ զիշխանն [4] Սիսական՝ զՎասակ և զեղբայր նորա զԱշոտ և զմեծ իշխանն Առներսեհ 'ի գաւառին Խաչենոյ և զիշխանն Գարդմանայ զԱտրներսեհ, և երթեալ յՈւտի՝ ըմբռնէ զՍտեփաննոս Կոնն — որ 'ի նախնւոյն իւրմէ Սևկոյ որդիք [5] ազգն անր-

[1] Ուսմ. օր. զԴաւիթ և զԱշոտ և զգեղեցկադիտակն... — [2] Ցերկաւոր օր. և զգեղեցկադիտակն այն Արամ: — [3] Մեր օր. Ձագայ: — [4] Ցերկաւոր օր. և Բուղայի կալեալ զիշխանն Սիսական: — [5] Մեր օր. Սևկոյ որդիք. Ու. օր. Սևկոյան որդիք, զոր „Սևկոյ որդիք" ասացաք:

ւանդին — և զիշխանսն Եղուանից զՎռայի՝ խաղացու-
ցեալ տանի առ ամիրապետն, կոչելով զնոսի իւր զսպա-
րապետն Սմբատ խոստովանութեամբ. զոր՝ իբրև չո-
գաւ, ընդ կապեալսն խառնէին և պահանջէին ուրա-
ցութիւն. զոր ոչ կալաւ յանձն քաջ խոստովանողն
Սմբատ, այլ անդէն 'ի բանտին կատարեցաւ 'ի Դրրի-
ռոս և թաղեցաւ 'ի գերեզմանս[1] սուրբ մարգարէին Դա-
նիէլի. և զպատիւ նորա առնու Աշոտ որդի նորա:
Վ_կայեաց և Ստեփաննոս բազում տանջանօք 'ի նմին
տեղւոջ՝ Կոնն կոչեցեալ[2]: Նոյն Գրիգոր Մամիկոնեան
արիաբար պահեալ զհաւատն՝ եղանէ 'ի բանտէն և
գայ մտանէ 'ի գաւառն Բագրեւանդ և կամէր ամ-
րանալ 'ի գաւառն Գաբեղենից 'ի Գաղամածակին[3],
որ և զկնի եօթն ամուրց մեռանի: Նոյն ժամանեալ ոս-
տիկանին Մահմետի, որ 'ի Հայս՝ առաքէ առ Աշոտ
որդին Սմբատայ, զի ուր և իցէ ըմբռնեալ առ նա
տարցի: Նոյն նորա հասեալ զգլուխ մեռելոյն՝ առաքէ
առ նա ասելով, «թէ կամեցար անցանել առ Յոյնս,
և իմ զկնի առաքեալ՝ սպանի, և ահա զգլուխ նորա»:
Նոյն խնդաց Մահմետ և զգացուցանէ Ջ_աֆրի և նո-
րա հրամանաւ պատուէ զԱշոտ՝ տալով նմա զգա-
ւառն Բագրեւանդ և արծաթ եօթն բիւր[4]: Նոյն յայ-
սմ հետէ բարձաւ 'ի Հայոց աշխարհէս ազգն Մա-
միկոնէից:

Բայց աւելի է սոսա զսկիզբն Թագաւորացն Հայոց
և Վ_րաց, որք 'ի Բագրատունեաց անտի սերեցան:
Դ_անզի՝ որպէս ասացաւ, զկնի քաջին Վ_արդանայ

[1] Ցերկոտին օր. և Նաղասէ 'ի փերեզման: — [2] Մեր օր. Կանն կոչեցին: —
[3] Ռ. օր. 'ի գաղղնավայկան: — [4] Մեր օր. և արծաթ հինգ բիւր:

իշխանքն կային ըստ դիպելոցն մինչև 'ի Սմբատ Բագրատունի, և զկնի նորա Աշոտ որդի Վասակայ, զոր կուրացուցին Մահմետականք։ Սմա լինին երկու որդիք՝ Սմբատ — նախնի Թագաւորացն[1] Հայոց, և Վասակ՝ սկիզբն Թագաւորաց Վրաց, որոյ որդի — Ատրնեսեհ. սորա որդի Աշոտ, սորա Բագարատ, որոյ եղբայրն Գուրամ. յետ սմա Գուալիթ՝ որդի Բագարատայ, որ սպանաւ 'ի Գուրամեայ 'ի Հօրեղբօրէ իւրմէ, որոյ որդին՝ Ատրներսեհ. սորա որդի Գուալիթ, սմա եղբօրորդի՝ Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ կին զդուստր Սենեքերիմայ Թագաւորին Վասպուրականի.— այս է կարգն։ Իսկ Հայոց Նախնւոյն Սմբատայ որդի՝ Աշոտ Մսակերն, որոյ որդի Սմբատ Խոստովանող, որոյ որդին այս Աշոտ Բարեպաշտ, որ անուանեցաւ իշխանաց իշխան 'ի յԱլեայ որդւոյ Վահէի հրամանաւ ամիրապետին Ջաֆրայ։ Առ սա առաքեաց Փոտ պատրիարգն Կոստանդնուպօլսի յերեք հարիւր ութ և տասն թուականին զՅոհան մետրապօլիտն Նիկիոյ[2], որ ունէր թուղթ առ Զաքարիա — պատասխանի հարցմանն[3], թէ վասն էր եղև ժողովն չորրորդ։ Նա առաքեաց ժողովել 'ի Շիրակաւանն։ Էր անդ և սարկաւագն Աշոտոյ՝ Նանայ, որ 'ի մահ մերձեցաւ վասն հաւատոյ 'ի Ջաֆրայ և տեսլեամբ յարհաւրաց արձակեցաւ։ Նա էր գրեալ, թէ զկնի յարութեան Քրիստոսի յերեքհա-

1 Յայլ. օր. նախնի թագաւորացն Հայոց։ — 2 Մեր օր. առաքեաց փոր պատրիարքապօլսին Նիկիոյ, որ ունէր թուղթ առ Զաքարիա։ — 3 Մեր օր. պատասխանիս հարցմանն։

բիւր հնգետասան ամի ժողովն Նիկիոյ յ518 ին[1]. — և պատրիարգութեան եկին Սեղբեստրոս 'ի Հռովմայ, Աղեքսանդր Կոստանդնուպօլսի, Աղեքսանդր Աղեքսանդրիոյ, Եւստաթէ Անտիոքու, Արիստակէս Հայոց: Եւ յետ եօթանասուն և երկու ամի երկրորդ ժողով եղև 'ի քսան և հինգ ամի Թէոդոսի. — և պատրիարգք՝ Դամասկոս Հռովմայ, Նեքտարիոս Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս Աղեքսանդրու, Յոհան Անտիոքու, Ներսէս Հայոց: Զկնի քառասուն եօթն ամի Թէոդոսի փոքու եղև ժողովն երրորդ. — և պատրիարգք՝ Կեղեստինոս Հռովմայ, Կիւրեղ Աղեքսանդրիոյ, Յոհան Անտիոքու, Յոբնաղ Երուսաղեմի, և Թուղթ Սահակայ Հայոց: Զկնի որոյ երեւեցաւ Եւտիքէս արշամանդրիտ Կոստանդնուպօլսի, որ շփոթմամբ մի բնութիւն ասէր Քրիստոսի, զոր հալածեաց Փլաբիանոս պատրիարգ. և նա աղաչեաց զքահանայապետն ոմն՝ Լեւոն կոչեցեալ, գրել առ Դէոսկորոս՝ առաջ հրաման ընդունել զնա, զոր և արար. բայց յետոյ զղջացաւ: Եւ արար կրկին ժողով յԵփեսոս քսան և երկու ամօք զկնի Կիւրղի. և անդ պատառեաց զԹուղթն Լեւոնի և կոյծ զԴոմնոս Անտիոքու, վասն որոյ գայ գիր մեղադրանաց առ Թէոդոս: Եւ եղ հրաման, զի ժողով արարեալ՝ վերստին ստուգեն[2]: Եւ նորա կատարեալ 'ի Տէր՝ արար Մարկիանոս յետ չորեք հարիւր վաթսուն և երկու ամի յարութեան Քրիստոսի ժողով զկնի հնգետասան ամի ննջմանն Սահակայ որդւոյ — յորում ամի կատարեցան սուրբ Վարդանանքն —

[1] Մեր օր. գիրք [illegible] 'ի հնգետասան ամի ժողովն Նիկիոյ [illegible]: — [2] [illegible]:

'ի պատրիարքութեան Յոհաննու Մանդակունւոյ, [illegible] 'ի ժամուն: Եւ [illegible] 'ի [illegible] և [illegible] 'ի [illegible] 'ի [illegible]: [illegible] — [illegible] և [illegible] — [illegible] և [illegible] — [illegible] և [illegible] և [illegible] 'ի [illegible] և [illegible]

[1] [illegible]
[2] [illegible]

Գ

Թէոդոս երկու, Լեւոն եօթն, Կոստանդին հնգետա-սան, Լեւոն հինգ, Նիկեփոր մին, Ստաւրակիոս մի, Միքա-յէլ երկու, Վասիլ — առ որով Փոտ, որ զԹուղթն գրեաց եւ առաց, թէ չկայր հակառակութիւն մինչ ՚ի վերջին Ներսէս, առ որով եղեւ Թուականն Հայոց՝ զամս հարիւր եւ չորս, որ ապա արար ժողով ՚ի Դուին ՚ի ձեռն Բարդիշոյ Նսորւոյ, որ եկեալ էր ՚ի Սասնոյ. եւ զՓիլարքսինոսի[1] եպիսկոպոսի ՚ի Նաբուն[2] քաղաքի եւ զՏիմոթէի Կզուն[3] գրեանն Թարգմանեցին։

Եւ ՚ի վեշտասան Թուին սպան Հեան Վարդան զՍուրէն մարզպանն Պարսից եւ ինքն ընտանեօքն եկն առ Յուստինիանոս յերեսուն ամի Թագաւորութեան նորա, եւ ՚ի տօնի խաչվերացին չհաղորդեցաւ ընդ մեզ՝ ասելով, Թէ մեր վարդապետքն չհրամայեցին մեզ. վասն որոյ արար ժողով Թագաւորն հարիւր յիսուն եպիս-կոպոսաց, որ ասի հինգերորդ ժողով։ Եւ յորժամ Մուշեղ հայոց եւ յունաց զօրօքն նուաճեաց Խոսրո-վու զԹագաւորութիւնն եւ դարձաւ պարգեւօք՝ բանն անկաւ վասն հաւատոց[4]։ Եւ արար Մօրիկ ժողով հարիւր վաթսուն եպիսկոպոսաց՝ քսան եւ հինգ ե-պիսկոպոս ՚ի Հայոց էր։ Երար եւ Հերակլ եօթնե-րորդ ժողով. իսկ Մայրոյվանեցին Յոհան ոչ ընկա-լաւ, զոր Թէոդորոս Ռշտունի եւ Ներսէս հալածե-ցին ՚ի Կոմկաս[5]։ Եւ յետոյ եկն ՚ի Հայս եւ արար զոր ինչ կամեցաւ[6]։ Եւ ՚ի Յունաց ՚ի բաց կացին Հայք

[1] Ուսմ. օր. եւ զՓիլոքսենոսի։ — [2] Ու. օր. ՚ի Ներբաղ քաղաքի։ — [3] Մեր օր. եւ զՏիմոթէոսի Կուզոն գրեանն։ — [4] Մեր օր. եւ դարձաւ պարգե-ւօք բանն անկաւ վասն հաւատոյ։ — [5] Ու. օր. զոր Թէոդորոս Ռշտունի եւ Ներ-սէս հալածեցին ՚ի Կոմկաս։ — [6] Ու. օր. զոր ինչ կամէրն։

նզովիւք չափ. և առաւել՝ յորժամ թարգմանեցին զգրեանն Յուլիանեայ Աղիկառնացւոյն[1] 'ի ձեռն Սարգսի: 'Ի ժողովն Մանազկերտոյ 'ի թղթոյն Փոտայ սակաւ ինչ գրեցաւ, որոյ գրեաց պատասխանի Սահակ Մռուտն կոչեցեալ[2], որ եպիսկոպոս էր Տայոց 'ի յԱշունքն. և հալածեալ անտի վասն հաւատոց՝ եկն 'ի Հայս առ Աշոտ:

Դարձեալ 'ի նոյն կայսերէ Վաղէ եկն ներքինի մի՝ Նիկիտ կոչեցեալ, յերեք հարիւր քսան և հինգ թըւին խնդրել յԱշոտոյ թագ՝ բերեալ շատ պարգևս. քանզի Վահան ոմն եպիսկոպոս Տարոնոյ ասէր նմա, թէ Արշակունի իցէ, զի մայրն հայ էր: Նա կամարիլ թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր Արշակունի. և կամէր պսակել 'ի Բագրատունւոյն, զոր կատարէ Աշոտ: Ընդ նմին առաքէ տասն հազար արծաթ ընծայ նորաշէն եկեղեցւոյն՝ որպէս Մամիկոնեանք հինգ գրիւ արծաթոյ ասեն գնել զգուռն աբեղեական սրբոյն Սոփեայ 'ի Յուստինիանէ յիշատակ Հայոց: Նա պատմեաց Նիկիտն, թէ զոսպք զնշխար սրբոյն Գրիգորի Լուսաւորչին 'ի յաղաւհացն 'ի հինգերորդ շաբաթուն շաբաթ օրն, զոր տօն կարգեցին:

Յաւուրս յայսոսիկ եկեր Զաքարիա երթայ անտանէ զՅիսուս որդի Շիրայ[3] և յայժ մեծարէ 'ի նմանէ՝ տեսեալ զնա[4] շատ ինչ պարգևս և զգօշս բառնալ խոյզ 'ի վերայ նորա և մեծանեալ առաջի նորա միշտ. զնա յանձնարդէ Գևորգ 'ի տանէ պատրիարքարանին: Յորում աւուր ընդդարձակեալ մեծին Աշոտ 'ի Վիրս

[1] Բում. օր. չեխեան Ասլանեան. — Մէջ օր. Ասլանեան: — [2] Բ. օր. Մռուտն կոչեցեալ: — [3] Բ. օր. որդի Շէնիոյ: — [4] Բ. օր. առեալ զնա:

և յԱղուանս և զկոմիկատայինան հնազանդեաց. և չէր ինչ պակաս բայց 'ի Թագէ, զոր խորհէին իշխանքն Հայոց. և 'ի ձեռն Յուսէփի այդր տանէին ամիրապետին, և նորա զուարթ սրտիւ տայրէ Թագ և հանդերձս և երիվարս: Զնոյն և կայսրն Ղևոն տայրէ, և աւրհնէ զԹագն տէր Գէորգ յերեք հարիւր երեսուն և վեց Թուին յերկոտասան ամի հայրապետութեան իւրում և յետ հարիւր ութսուն և ութ ամի ծննդեան Տեառն, որ բարձրոք կարգաւորեաց զգօրինութսն Թագաւորութեան ամս եօթն: Յառաջս սորա էր Համամ, որ գրեաց մեկնութիւն Առակացըն և զքերականսն, և զՅոբայ «Ո՞վ է դայն» Թարգմանեաց և զաւրհնութիւնս որ 'ի գլուխս Սաղմոսացըն ասացեալ՝ գիր մի, և զամփոփումն՝ գիր մի: — Եղև Աշոտ արքայ դնէ իշխան Սմբատ զքեռորդի և ինքն կատարի 'ի Քրիստոս եօթանասուն և մի ամաց: Եւ առնու զԹագ նորա [1] Սմբատ՝ որդի նորա, յերեք հարիւր քառասուն և չորս Թուականին ամս քսան և չորս կամակցութեամբ Ղևոնի՝ որդւոյ Վասիլին, որ Թագաւորեաց յետ հօր իւրոյ ամս քսան և վեց — այր առատ 'ի տուրս և ոչ նման Համամի, որ ոչ կայ 'ի լեզու նորա սուտ և չլինէին իրքեանք՝ որպէս ասեն. զի նա որդի Հայի էր և յոյժ սիրէր զՀայս [2]: Իսկ Սմբատ առեալ զպատիւն՝ շինէ զՍուրբ Փրկիչն յԵրազգաւորն, որ է Շիրակաւան՝ ուր օծան իսկ [3], զի նա էր նախապատ Թագաւորացն Բագրատունեաց մինչդեռ չև էր ընդարձակ շինեալ զքաղաքն

[1] Մեր օր. և առնու զԹագն Պաւղ: — [2] Մեր օր. և ոչ սիրէր զՀայս: — [3] Բ. օր. որ և Շիրակ ասեն, ուր օծան իսկ:

Անի, որ կոչի այժմ՝ Թէոդոսու նկարէ բերդն ընդ այսու անուանեալ էր և հին ժամանակաց շինեալ. (ուր Օտայ նախարարացն ամրացեալ պահէր զերդն Տրդատայ և զխուռս և զգանձս Թագաւորացն Արշակունեաց զհետ մահուանն Խոսրովու. և 'ի գալստեանն Տրդատայ 'ի Յունաց աշխարհէն ընդ առաջ նորա եկեալ յԵկեղեաց գաւառն Օտայ և Տաճատ անուն իւր՝ Աշա- ցոյց սէր, և առանձն շնորհակալութիւն բազում. և այս Տաճատ էր, որ տեղեկացոյց զԹագաւորն, թէ Գրիգոր այս Անակայ որդի է).—կոչի Անի և Կամա- խըն այժմ կոչեցեալ բերդ, բայց առաւելն Անի նկարէ բերդն է, ուր ասեն՝ թէ իշխան մի լուծեալ. աւերեալ ամրացեալ՝ ոչ հաւանէր գալ 'ի միաբանութիւն 'ի զաւա- նայն Հայոց 'ի հաւատս, մինչ հնազանդ խնդրեալ. աղա- չանս Գրիգորի՝ ապաշխարեալ զինչն, երկիւղ հանդերձ բերդովն. և ընդ դուռ 'ի վերայ Թագաւորայր զնոյն ան- կանի 'ի Ջուրն և վազվազակի կանգնի 'ի վերայ ափ- ցն, 'ի ձայն բարձր փառաւորէ զԱստուած՝ որպէս թէ զօս գոլով ոտիցն՝ կենդանացաւ 'ի Ջրոյն գոլու- թենէ. զոր տեսեալ և լուեալ իշխանին՝ առ ինքն կոչէ, և տեղեկացեալ միտսն և ողջանոյ ոտիցն 'ի նշան հաւատոյ բժշկութեան։ — Իսկ սպարապետական Թա- գաւորն Սմբատ 'ի Յուսփայ՝ ոստիկանէն Տաճկաց, խեղդամահ լեալ 'ի Դուին վասն Քրիստոսի նշաւա- կի 'ի փայտի. յորմէ և որդի նորա Մուշեղ կատա- րի 'ի Տէր վկայութեամբ՝ դեղակուր եղեալ, և թաղի 'ի Բագարան ընդ հարս իւր։ Եւ զամս եօթն անիշ- խան լեալ երկիրս սպառեցաւ սրով և գերութեամբ։ Իսկ Աշոտ որդի Սմբատայ, որ և Երկաթն կոչեցեալ

վասն արիական քաջութեան՝ անկանի առ Լևոն կայ-
սըր Յունաց՝ կոչեցեալն Կոստանդին։ Յորում աւուր
կատարեցան 'ի Քրիստոս փառաւոր և մեծ իշխան-
քըն՝ Գուռիթ և Գուրգէն 'ի տանէն Գնունեաց 'ի
Դուին քաղաքի յանօրինէն Յուսփայ վկայական ա-
րեամբ պսակեալ, որոց պատուի օր կատարմանն 'ի քը-
սան մարերի ամսեան։ Նա և տուրք Սահակ եպիսկո-
պոս երկու հարիւր դրամ և եօթն եկեղեցականաւք
կատարեցան 'ի Ոխուրականն յահեկի 'ի տասն. և եր-
կու Կիրակոսն 'ի նոյն ամսեան 'ի հնգետասան, դա-
լոց տան գերապայծառ կարգեաց[1] սուրբ պատրիարգն
Յովհաննէս, որ եսես աչօք զխաւարարար ժամանակն
և գրեաց 'ի յիշատակ ապագայիցն դարուց. և տան
սուրբ Թադէոսին Ամրաստայ։

Իսկ Աշոտ պսակեալ 'ի Լևոնէ դառնայ 'ի Հայս
յերկք հարիւր եօթանասուն թուականին և գտանէ
թագաւորեալ զհոմանուն իւր Աշոտ՝ որդի հօրեղ-
բօր իւրոյ, զոր հնազանդեաց 'ի ներքոյ իւր՝ որպէս
և զԳագիկ թագաւոր տանն Արծրունեաց և ըզ-
Մովսէս բռնացեալն յԱղուանս, զորոյ խաւարեցոյց
զաչսն։ Նա մեծապէս գտեալ քան զնոսա և քան ըզ-
Թագաւորն Վրաց "Ներսեհ" կոչեցաւ 'ի մեծայ նոցա
շահնշահ զամս ութ՝ և կատարի։ Նա առնու զթագն
Աշոտ եղբայրն. և զկնի մահուան հօրն գնաց 'ի Վի-
րըս և փեսայացեալ նոցին՝ դառնայ այսրէն և առնէ
ամենայն հայրենեաց իւրոց յերկքհարիւր եօթանա-
սուն և մի թուականին՝ ամս քսան և հինգ։ 'Ի սորա
աւուրս յոյժ բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք

[1] Մեր օր. որոց տան գերապայծառ կարգեաց։

'ի հռոմոց աշխարհէն[1] սակս ուղղափառութեան, և-կեալ յաշխարհս մեր՝ շինեցին յայսմ վանորայս.— Նոքա զՍարգիսՋահար և այլս զհռոմայեցին կոչեցեալ՝ որպէս թէ 'ի հռոմոց եկեալ կոչմանց, և զԳրիգորա-փոխեցին. 'ի նոյնանէ եկեալ առեն շինեցին զՍանահնի Սուրբ աստուածածին: Ըստ նմանեաց և Թագաւորն Ա-բաս զկաթողիկէն 'ի Կարսն զեղեցիկ յօրինուածով: Յորում աւուրս եւ իշխանն Աբխազացւոց, որ յայս-կոյս Կովկասու՝ Բեր անուն, բազում ընկերօք առ Կուր գետով. և լուեալ, եթէ Թագաւորն Հայոց պա-տարագ շինէ եկեղեցի՝ յղէ առ նա և ասէ.—«Գի-տեա զքո կանխագոյն, զի եկեալ եմ աւրհնել զեկե-ղեցիդ ըստ իմում օրինաց Քաղկեդոնի ժողովոյն սահմանադրութեանն»: Իսկ նորա ընդդէմ նորա ե-կեալ հայաստանեայց զօրօք՝ որոյ ձեռամբ տայ առ հասարակ զզօրսն և զԲերն 'ի բուռն առեալ՝ բերէ զնա կենդանի 'ի Կարս և միաբանեալ այլ առաջնորդաւ զե-կեղեցին, և այնպէս բերեալ զանաստուածեալն փախուցանէ զնա ազգին իւրում, զիր երդման առեալ[2], զի յաւիտեան այլ ոչ եկեսցէ 'ի Հայս:

Իսկ զկնի կայսերն Յունաց Լևոնի առնու զԹա-գն Ալեքսանդր ամ մի. և յետ նորա Կոստանդինոս ամս քսան և հինգ:— յԱբասայ և 'ի սորա աւուրս[3] առաւ Մելիտենէ 'ի Տաճկաց յերկք հարիւր ութսուն և ե-րեք թուին: Իսկ յերկք հարիւր ութսուն և ութ Հա-ռուն 'ի Կողոնիա եկեալ զօրօք և անդրէն դարձաւ:— Յետ այսը Թագաւորեաց Կոստանդին որդի Լևոնի յե-

[1] Մեր օր. հալածեալք 'ի Հռոմոց աշխարհէն: — [2] Բ. օր. էին երդման փախեալ: — [3] Մեր օր. յԱբասայ և 'ի սորա աւուրս Մելիտենէ:

ըկէ Հայրիւր իննուն և երկու թուին՝ առնու զԿեչառուս. որ և 'ի քաղան և վէց առնին զՄարաշ առ 'ի Տաճկաց յերեք Հարիւր իննուն և ութ թուին[1] ։ — Զամանէ առէին[2] 'ի մեռեալ աւուր եօթն ամսին ապանեալ ։ Սա ես արկանել 'ի յՆլէս զեա յոլով քաղենս Թղթաց և փախուցեալ զզօրսն Խուճկեցի և կոչեցեալ Թէոդորոսն ։

Իսկ 'ի սուրբ աթոռն զկնի տէր Յովհաննիսի եկաց տէր Ստեփաննոս ամ մի. տէր Թէոդորոս ամս մետասան. և յետ նորա տէր Եղիշէ եղբայր նորին ամս քսան և երկու. և զկնի նորա տէր Անանիա մոկացի ամս քսան և երկու. — սա բազում աշխատութեամբ հնազանդեցոյց զԱղուանս, որ Աղուանիւք թեւակոխեալքն և ձեռնադրեաց արքեպիսկոպոս զկնի Յակոբայ ապստամբի զտէր Սահակ 'ի Բաղաց՝ որդի Գոռանչէր իշխանին, որ շինեաց զամենապայծառ ուխտն Յովհաննու վանս առ ստորոտս անմատոյց գլխեկին Բաղաց. այլ և զԱղուանսն ածեալ 'ի հաւան չձեռնադրել իւրեանց կաթողիկոս առանց աթոռոյ սրբոյն Գրիգորի ։ — Իսկ զկնի սորա եկաց զաթոռն Վահան 'ի Բաղաց ամ մի, որ և սակս կարծիս առնեալ, եթէ դաշնադիր ել Սը-լրայ և պատուիրս եւր ածել, վասն որոյ փոխեն զնա և դնեն յաթոռն զտէր Ստեփաննոս՝ ազգական սրբոյն Մաշտոցի որ 'ի Սևան՝ ամս երկու ։

Իսկ 'ի չորս Հարիւր թուին փոխի սուրբ Թագաւորն Աբաս, և առնու զթագն Աշոտ որդի նորա՝ Ողորմածն կոչեցեալ. որ բազում ուրկանոցս շինեալ՝ առատ ռոճիկօք ուրախ առնէր զնոսա ։ Յոլով անգամ

[1] Երուս. օր. յերեք հարիւր իննուն և երկու թուին զամանէ առէին ։ — [2] Մեր օր. զամանէ առին ։

և անձամբն սրբազանութեամբ և զերաշխաւորութեամբ Թադէոսեա-
ցեալ բարձակելն ամբոխուծանօք ընկեր՝ կոչելով անուա-
նելով Գործեաց Թղթեանս և կարապետութեան՝ բառս Ստա-
կոչեալ, եթէ ամենայնադրք են հաւատովք։ Սա զենդր
պարգեւաց քարոզութեան Նունեայ շինեաց և զամենայն բըն-
գունեան եկեղեցիս [1] յորինեաց 'ի չորս հարիւր երկոտա-
սան Թուին։ Իսկ բարեպաշտութեան կարգն էր՝ Խոստովա-
նողքս, շինեաց զերասանարկ սուրբ ուխտն Աստուածին և
զՏաճկաստան։ Հանդերձ 'ի Կիլիկիա 'ի չորս հարիւր
քսան և հինգ [2] Թուին՝ Թողեալ երկու որդիս, որոց
անուանքն — Աւրամ և Գրագիր և Գուրգէն։ Իսկ 'ի
նմին Թուին սուրբ Մամրէ զԹադէոսն եկեղեցի որդին Աւրամ, որ
և Նոր Տիեզերական կոչեցաւ։ Իսկ սա զամենայն պատ-
րիարքն Նունեայ շինեաց և զամեն կաթողիկէն Հոռոմո-
կեաց. և կարգեաց եղբայրն ժառանգէ զՏաշիր Անտոն-
ւոյն Ձորոյ զատոր և զՄայամն և զԿամսարն [3] և զխոստո-
վանողքն — որ 'ի հաւասար շինեցաւ, որ է խոշոռնի —
և զԽոստովանողս և զԽաղբակեանս [4] — որ է Բադեշոյ 'ի
կողմանս Տաճկաց։ — Իսկ այլ բերդաք անուանեաց և
հաս Գուրգէնայ, զոր Կ_իրք Աստուածածին կոչեն [5]. և
'ի նմանէ սերեցան Թագաւորքն՝ Գուրգէն, Սմբատ և
Կիւրիկէ [6], որոց կանգնեցին եկեղեցիք — Մարգարան և
Ոսկեզուքան։ Իսկ Գուրգէն՝ սակաւ ինչ կեցեալ ընդ
եղբարն [7], հաստատեաց ընկէց փառս կարծեաց ինչ զզօր-
րանաց։ Իսկ Աբրաս Համաւալ [8] 'ի չորեք հարիւր եր-

[1] Ուսմ. օր. և զամենայն Բրիտանն Ներսէսեան յոգնեաց։ — [2] Միւս օր. 'ի չորս հարիւր քսան և հինգ։ — [3] Միւս օր. զՎարդան։ — [4] Ու. օր. զխոստովանողս, որ է Բադեշոյ 'ի կողմանս Տաճկաց։ — [5] Ու. օր. Աստուածոյն կոչեն։ — [6] Միւս օր. և Աւրամին։ — [7] Ու. օր. սակաւ ինչ կացեալ ընդ եղբարս։ — [8] Միւս օր. եւ Աբրա Համաւալ։

տասն և չորս թիւն՝ կատարէր[1]։ Նա և նշանաւորացն կոչէին զհալածեալն Գրիգորի և տասն նոսա[2] զթագն և ածեն նոսա 'ի կնութիւն[3] զԿեսարամարանէ՝ դուստր Աշոտայ Աւանեաց թագաւորի, որ մնացեալ առաքինանալ ըզ-կաթողիկէն՝ 'ի Հրեշտակէ Աստուծոյ յայտնութեամբ, որ խոստացեալ նմա կայր 'ի ձեռնտուութենէ զործոյն և ծնեալ 'ի նմին տանձարի[4] մինչև զԹորոսս եկեալ տու-ցեն ապրանացն։

Յետ զորուք աթոռոյն յաջորդէ տէր Խաչիկ՝ որդ-ւոյն տեառն Սիմէոնեայ[5]՝ ամաց քսան և տասն․ և զկնի փոխէ տէր Ստեփանոս ամս քսան և չորս․ — սա շինեաց զՊետրոսեան որպոյ Հ․ առաքինութեամբ կաթողի-կէին Ռուսայ և փոխեալ ամենայն զԵղիաս նոցա՝ բերեալ մեծաւ Հանդերձիւք, և կարգեաց զորս տան մեծ։

Այլ զկնի Կոստանդեայ կայսեր առնու զթագն Լեւոն, և ապա Կոստանդին և Կոստանդիա մայր իւր, որ խնամակալեցոյց[6] զորդիս և խնդրեն տերանց մեծ աթոռոյն ամեն նորին։ — Յորում առաքեաց կաթողիկոսն 'ի Փոքր-տան Սահակ և Յովհաննէս՝ առաքինիք ազգաւ, յարուցի յեր-թեալն և տասն։ — Նա զկնի Ռ՚կոսթեան, և ապա Լ՚եւոն և յետ նորա Ռ՚կոսթէ, ապա Թէոփիլոս և զկնի Ռ՚ի-քայէլ, ապա Մ՚ալիք և զկնի Լ՚եւոն, ապա Ներսէս և զկնի Թորոմանոս, որ հալածեաց զուղղափառս վանա-ցայս յարեւելից աշխարհս, կանխեալ ձեռն արկանել և 'ի վանորայս Սև լերինն յերկրին իւրում ծանր

[1] Մեր օր. 'ի չորեք Հարիւր երեսուն և ամի Նոյն։ — [2] Մեր. օր. փոյ նմա զԹագն։ — [3] Ո. օր. և տանելն նմա 'ի կնութիւն։ — [4] Ո. օր. և 'ի նոյն տանձարի։ — [5] Ո. օր. տէր Խաչիկ ամբիոն տէր Սիմէոնայ։ — [6] Ցերեկորէն օր. որ խնամակալ որդւոյն։

զօրաց 'ի նախաձեռն Հայկայ, որ և 'ի թագաւորութեանն Թէոդոսի Հռովմայեցւոյ փախստեան մնացին ճանապարհաւ ― յետ նորա Արտաշատայ՝ որդի Ի. Խանեկի, ապա Սամսոնիոս և զկնի Նիկեփորոս, ապա Միքայէլ և ապա Վ. Տարիղ ա- ձեռ յիսուն և երկու:

Իսկ յաղագս Վ. Խաց թագաւորացն սկզբանց, որ կայ 'ի գիրս նոցա, կեթէ Թորգոմ ութ որդւովք եկն յԱյրարատ[1] գաւառ զկնի ջրոյն մեծի, և երեք յորդ- ւոց նորա նախահարք եղեն ― Հայոսն և Քարթլոսն և Կովկասոսն ― և տիրեցին աշխարհաց, և բաժանեալ անուանք կոչեցին Հայս և Քարթլ և Կովկաս[2] ― և տիրեցին 'ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կասբից՝ մինչև ցՄիհրան և ցԱպրում թոռն իւր, որ էառ կին 'ի Պարթևաց Սահակդուխտ անուն 'ի Պարսկաց. որ և անուն գոլով՝ հաւատաց 'ի Քրիստոս և կոչեցաւ զԱ. Խաթանդուր, որ Գուրգասլան կոչեցաւ[3], զի ունէր 'ի վերայ սաղաւարտին պատկեր գայլոյ և առիւծոյ: Սա առ 'ի կնութիւն զդուստր Լ. Լևոնի կայ- սեր. և 'ի սմանէ սերեցան թագաւորք մինչև ցՎախ- տանս, զոր կուրացոյց Աբաս. ― յետ որոյ թագաւորեաց Բագրատ որդի Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմա- ծին, 'ի վերայ Աբխազաց ― այս քան Մխիթարայ և- րեցան ամացն:

Իսկ Վ. Խաց թագաւորութիւնն յառաջքն Սպա- նդարիկեայ ― Գուրգէն՝ որդի Գէորգեանն, առ Չինկաց զԱխթամար. ապա Գէորգէ՝ որդի նորա և զկնի նո-

[1] Ուռմ. օր. Էջե թարգման ... յԱյրարատ: ― [2] Ու. օր Հայոսն և Քարթլոսն և Կովկասոս և ... 'ի ծովէն Պոնտոսի: ― [3] Ու. օր. և նա զԱ. ... , որ և Գուրգասլան կոչեցաւ:

բայր Աբուսահլ, և յետ նորա Շահնշահ որդի նորա, և զկնի եղբայր նորա Գուրգէն, և ապա եղբայր նորա Սենեքերիմ, որ նեղեալ 'ի Պարսից՝ ետ զերկիր իւր 'ի Վասիլ և չոգաւ 'ի Սեբաստիա չորս որդւովք[1], որոց անուանք՝ Դաւիթ, Աբուսահլ, Ատոմ և Կոստանդին, և եղբօրորդիքն՝ Գրիգորիկ, Գագիկ և Աշոտ, — և առնու փոխան զՍեբաստ և զԼառիս և յոլով պառաւտինս[2]: Զկնի սպան Դաւիթ զՓոկաս ապստամբ, և առ գրով զԽաւաւմանէս:

'Ի չորս հարիւր քառասուն և չորս թուին մեռաւ Գագիկ՝ տուեալ զթագաւորութիւն երից որդւոց իւրոց՝ Յովհաննիսի Աբասայ և Աշոտոյ: Զթագն տայ Յովհաննիսի, զԱնի և զՇիրակ, Սուրբ Գրիգոր ձորովն Աշոցաց և զԱնբերդ և զդաշտն Այրարատեան, զԿայեան, զԿածոն և զՏաւուշ՝ գաւառն Աեորդեաց. և զայլ միացեալսն[3] Աշոտի և Աբասայ բաժանէ: Իսկ 'ի վախճանելն նոցա զկնի այնորիկ գայ թագաւորն Ափխազաց Գուրգէ, որդի Բագարատայ, որդի Գուրգենայ՝ որդւոյ Օգորմածին Աշոտոյ, և առնէ իրաւունս 'ի մէջ նոցա և գնայ: Իսկ զի ոմանք յիշխանացն անհնազանդ լինէին՝ գնայ կրտսերն Աշոտ առ կայսրն Վասիլ և առեալ 'ի նմանէ զօր՝ գայ և հնազանդէ զամենեսեան: Յայնմ ժամանակի վախճանեցաւ կիւրապաղատն Դաւիթ անժառանգ գոլով, և տայ անդարձագրով զհայրենիսն իւր 'ի Վասիլ զԱխ-տխուն[4], զՄամրուանն, զքաղաքն Ապահունեաց՝ ըզ-

[1] Ուսմ. օր. և չոգաւ առ նա ընդ չորս որդւովքն: — [2] Մեր օր. պատ-րինս: — [3] Ու. օր. և զդաշտն Այրարատեան, զԿայեան Աշոտի և Աբասայ բաժանէ: — [4] Մեր օր. զախուրեան:

Մանձկերտ և զամենայն ինչս. զոր լուեալ Վասլի կայսեր՝ զայ բանակէր[1] 'ի դաշտին Կարնոյ։ Զայս իմացեալ Յովհաննիսի երկեաւ, և առաքէ առ նա պատարագաւք զպատրիարգն Պետրոս, զոր տէր Սարգիս 'ի կենդանութեան իւրում օծեալ էր իւրով ձեռաւք յԱնի մեծ հանդիսիւ։ Այլ և նեղէր զՅովհաննէս արքայն Վրաց, վասն որոյ պատուիրէ պատրիարգին տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ 'ի Հոռոմն, եթէ պահէ զնա կուրապաղատն 'ի նեղչաց իւրոց. զոր խնդութեամբ լուաւ Վասիլն։ Նա կոչէ առ ինքն ըզԳուրգէն թագաւորն Վրաց, որ ոչ եկն 'ի կոչ նորա. վասն որոյ երթայ զայրացմամբ և աւերէ զերկոտասան գաւառս նորա և դառնայ յերկիրն Խաղտեաց՝ անդ անցուցանել զձմեռն[2]։ Կոչէ առ ինքն զտէր Պետրոս աւրհնել ընդ նմա ջուր 'ի տօնի Աստուածայայտնութեան, ուր երևեալ հրաշալի նշան — լոյս փայլատակեալ 'ի յաջոյ հայրապետին և յօծմանէ սուրբ իւղոյն 'ի հիացումն տեսողաց. և յոյժ գովեցաւ հայրապետն Հայոց։ Նա դառնայ Վասիլ 'ի Կոստանդնուպօլիս և վախճանի 'ի չորս հարիւր եօթանասուն և երեք թուին։ Նա առնու զԹագն Կոստանդին ամս երեք, և զկնի Ռոմանոս փեսայ նորին ամս հինգ, զոր հրամանաւ կնոջ նորա խեղդեցին 'ի բաղանիս. և եղին զՄիքայէլ ամս եօթն։

Իսկ զԱմիր Մումնեաց կարգն բերաք հասուցաք 'ի Ջափր և Թօղաք. քանզի սկսաւ իշխանութիւն նոցա 'ի վաթսուն թուին և դադարեալ շփոթեցան

[1] Ուռհ. օր.՝ գոյ. բնակէր 'ի դաշտին Կարնոյ։ — [2] Ցերեկուսին օր. անդ անցուցանել զձմեռն։

յերկրէն Հայոց չխոտան թեւսքն, և ասա և անոր բռնա-
կալեալ տիրապետեաց 'ի զօրութենէ։ Եւ զօրացուց ազգն
Թէոդորեայ[1] այսպիսի պատմագրաց։ — Եւ 'ի խորա-
սան ինքն յՅաւանեանց՝ Մահմետ անուն, որ անու-
ցեալ էր. Զ. Հաջան զեռ յերկիրն Թէոպաղացւոց[2]՝ ան-
ձէ քաղաքամ զեկեղ 'ի խաղաղականս, որ ասի Ալեպ և բա-
նակեցաւ զանգեղ տաճկաց թիւնս։ Եւ անձամբ նորա և քաղա-
քաւորեալ[3]՝ զնէ զօրս Արաբաց և ասպատակ արար թեւով 'ի
մեծամեծսն Մահմետականս։ Եւ աճեցեալ եղեալ՝ Ալեպեաց
Պարսից և Տաճկաստանեաց, որում անուն էր Կուրղա-
թեկ — այսպէս թագաւորաց Հաջարամայ[4]. որդւոյ Ալեքսանդրեայ մեծ-
պարզելի. Թագաւորութեան նորա Մախմետ անուանին, —
որոյ յիշատակն 'ի Գիրս կենաց — այսպէս առաջ. և յառ-
ջով աշխատ եղէ զատանել զօրագլուխ տաճկատանին ազնո-
րեկ 'ի Թուղրեայ[5], և զնոր շնորհ հայոց Նասուծոյ այս-
պէս. Մահմուտ, զոր ասացաք՝ Աղբէթանայ որդի,
յամենայն կողմանց մեծացեալ, որպէս Նրբաւորի սատանայ.
և երկրորդ զինուորութիւն Մահմետայ որդին 'ի Մահ-
մատ մեծութեամբ եկեալ երկրորդ 'ի Մահմետայ
յերկիր Հայոց քաղաքս և վերայ իշխանութեան
նոցա։ Եւ զօրացաւ նա 'ի Բաղէ քաղաքի յերկիրն
Պլաշխարհաց, և եղ համբաւ զանազան ուժգին մինչև խառ-
նիւ յերկուցեալ ատամբ նման ընծայս, և Արամ և
Լաւրայ Աստի Արգելոս և Վարդան կալէ զնոս։ Եւ ա-

[1] Ուռհ. օր. և պարսից Թուղրեաց։ — [2] Ա. օր. ընդ. Հաճակ եւս Թէոդորոսեաց։ — [3] Եւ րկ. օր. և ... նոյն ... նոյն ... 'ի ... ։ — [4] Մեր. օր. այս ... ։ — Ա. օր. այս ... ։ — [5] Եւ րկ. օր. ... 'ի Թուղրեաց։

առեալ նորա զպատարագն՝ եւ մեծանայ. և եղանի 'ի [illegible] [illegible] 'ի Հրամանս կուոցն Մաժմանայ, [illegible]. և առեալ [illegible] զաւանդն՝ զՄահմետ որդի իւր թողլով անդէն. և գայ 'ի Գուրգան և [illegible] 'ի [illegible]նէն Գուրգանայ չորս Հարիւր Հազար զաՀեկան և սեՀը տայ միով 'ի չորս Հարիւր քառասուն թուին իւրեանց, և անցանէ զայ յԻռէ. — և տէրն [illegible] Ջաղաւլայ [illegible] երեք [illegible] յառաջ [illegible] զԳուէլմին՝ եւ [illegible] առաջ նորա[1]: Նա գայ ԽորաանՀնարին [illegible] և [illegible] նմա երկու Հարիւր յիսուն [illegible] և [illegible] զնա ասէ. «չա՛Հ, [illegible] կարդացեալ ես». և նա ասէ «[illegible]»: — Նա դարձեալ ասէ. «Ճաարկոց խաղացեալ ես». և ասէ «այո[2]»: Նա ասէ. «Թագաւոր 'ի Թագաւորի տուն մտանէ՞, թէ ոչ[3]»: Նա [illegible]. և առ ժամայն կապեալ յղարկէ 'ի Խորասան և զամենայն ինչս նորա առեալ՝ տիրէ [illegible][4]: Նա գայ 'ի Տապարաստան և 'ի Տաւարի և 'ի [illegible] [illegible] Մախսուտի որդւոյ իւրոյ[5] զ[illegible] և ըղ[illegible] և զ[illegible] բռնադատ թողով 'ի նոյին կայ Խորա[6]. և առնու Հարիւր Հազար [illegible] և անցանէ 'ի Դաշտաւուրք 'ի չորս Հարիւր քառասուն և մի թուին իւրեանց: Իսկ Մախսուտն առնու զ[illegible] և զԱսպահան, և [illegible]. և խիղճն լսէ, թէ [illegible] զ[illegible] Համայն քո յԱսպահան: Եւ [illegible]

[1] [illegible] օր. [illegible] յառաջ նորա: — [2] [illegible] օր. [illegible], [illegible] [illegible] [illegible] ասէ՝ այո. [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] — [illegible] [illegible]. [illegible]. [illegible] օր. [illegible] [illegible] ես: — [3] [illegible] օր. [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible] ոչ: — [4] [illegible] օր. [illegible] [illegible]: — [5] [illegible] օր. [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible]: — [6] [illegible] օր. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

անդրէն՝ սատակէ չորս հազար այր, և զառնոյ յինէ. և առ ժամայն բերեն նմա գոյժ մահու հօրն[1], և թէ սուլտանացաւ Մահմուտ՝ եղբայր քո: Նա յարուցեալ գնայ. և կալեալ զեղբայրն՝ կուրացուցանէ[2], և առնու զիշխանութիւն և զաթոռն: Նա քանզի հայր նորա 'ի գնալն յօգնականութիւն ազգին, որոց գլխաւորն կոչէր Խտրղան Գօզրղան՝ 'ի Ճանապարհին պատահէ բանակաց ինչ բազմութեան Թուրքաց, և 'ի զառնալն նոյն ճանապարհաւ մեծաւ յաղթութեամբ՝ առեալ զամիրայն նոցա զՇփաղու՝ բերէ 'ի Խորասան և դնէ 'ի կապանս: Նա ազգի նորա եկեալ, խնդրեցին 'ի հօրէն, և ասաց յորդւոցն[3], և ոչ ետուն: Իսկ նոցա բարկացեալ՝ անցին ընդ Ջահուն ամենայն բանակաւք իւրեանց և զանձինս 'ի մահ եդեալ կռուեցան և յաղթեցին և առին զՆաշաւուր[4], և կոտրեցին զզօրս սուլտանին 'ի Դաղաղանն մօտ 'ի Մրճին[5]: Նա փախստական եղեալ սուլտանն գնայ 'ի Գազնին և անտի 'ի Հնդիկս, և 'ի ճանապարհին սպանաւ: Նա զկոյր եղբայր նորա թագաւորեցուցին 'ի Խազնին. որոյ յերկարեալ 'ի նմին՝ ծնանի որդիս. և մի 'ի միոջէ առեալ ունին զԽազնին մինչև ցայսօր: Իսկ յառաջագէմն 'ի Թուրքաց, որում անուն էր Մուսէփաղու՝ Սալջուքայ որդի, ունէր հինգ եղբօրորդիս[6], որոց անուանքն՝ — Արուսալն, Դաւութ, Չաղր

[1] Մեր օր. և նոյնժամայն բերեն նմա գուժ մահուն հօրն: — [2] Մեր օր. և յաչաց կուրացուցանէ: — [3] Մեր օր. և ասաց յորդւոյն: — [4] Ցերկուսին օր. յաղթեցին և առին զՆշաւուր: — [5] Մեր օր. և կոտորեցին զզօրս սուլտանին 'ի Դաղաղան գաւն մօտ 'ի Մարմին: — [6] Ու. օր. որում անուն էր Մուսէփէ տրղուա սալջուգայ որդի ունէր հինգ եղբօրորդիս. Մեր օր. ունէր եօթն եղբօրորդիս:

բէկ, Ափուղալէք, Տուղրիլ պէկ, որ էառ զիշխանութիւն սուլտանութեան և զամս հնգետասան ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամենայն երկիրն Խորասանայ։ Եւ եկեալ յԱնէ՝ գտանէ երկու շտեմարանս գանձուց՝ լի ոսկւով, և առնու ընդ ձեռամբ և յղէ առ խալիֆայն և խնդրէ աւրհնութիւն։ Եւ նա մեծարէ զնա արամբք պատուականաւք առ ինքն, և տայ նմա ալամ և ընծայք և կարգայ զանուն նորա Իմամբար և դնէ մականուն նմա Գուքնատ ադա. և յայնմ օրէ քարոզեցաւ աշխարհակալ։ Եւ փոխէ զնա Ալփասլան՝ եղբօրորդի Տուղրիլին, որ էլից զամենայն աշխարհ արեամբ. և ունէր որդիս ութ։ Եւ հասանէր յաթոռ թագաւորութեան Մելիք շահ՝ բարի և խաղաղարար. և զկնի Մահմուտ սուլտանն. և յետ նորա աւագ եղբայրն՝ Բարքիարուխ, որ կոտորեաց զնա և առ զաթոռն ամս քառասուն։ Եւ յառնէ 'ի վերայ նորա Գուդուշ՝ որդի Ալփասլանի, զոր վտանգեալ Բակիարուխ՝ եհար զզօրս նորա և սպան ըզԳուդուշն։ Եւ Մահմուտ՝ սուլտան Մահմատի որդին, եհար զԲակիարուխ, տղայ հասակաւ, և առ զսուլտանութիւնն ամս երկոտասան[1]։ Եւ զկնի նորա Մահմուտ՝ որդի նորա, ընդ որ պատերազմեալ Սանջար սուլտան՝ կոտորէ զնա։ Եւ առնու Չաղաղայ իշխանութիւնն և դնէ զնա իբր ազա[2]. և զկնի նորա Գաւութ՝ որդի նորա, եկաց սուլտան, զոր սպանին Մլհէդքն։ Եւ ապա եկաց Տուղրիլ, և զկնի Մասխուտու և ապա որդին Ասլան, և զկնի ուժովն Տուղրիլ[3],

[1] Մեր օր. ամս երեքտասան։ — [2] Մեր օր. և առնու Չաղաղայ իշխանութիւնն և դնէ զնա 'ի Բաղաղայ։ — [3] Մեր օր. Տուրղիլ։

որ կայր մինչ 'ի պատմագիրս ; յիւրում պատուի՝ 'ի տեառնէ աստուծոյ։

՝Նոյն այր ասէ և յաղագս թագաւորին Յովհաննիսի, եթէ եղբայրն նորա Աշոտ 'ի յոտս Խաղնայ կեղծաւորեալ՝ որպէս հիւանդ մերձ 'ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն՝ փորելով 'ի սնարիցն կուսէ որոգայթս և այնու ըմբռնեալ՝ տայ 'ի ձեռս մեծ իշխանին՝ Աբլբատն կոչեցելոյ, սպանանել զնա. և յօժար կամաւք յինքն առեալ՝ տանի դնէ յաթոռն իւր յԱնի՝ ասելով. «զիարդ ձգեցից զձեռս իմ յօծեալն Տեառն և խելագար մի եղիցի 'ի տեղւոջ նորա[1]»։ Զսմանէ ասեն յանհնչանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն մինչև լինել տէր երկոտասան հազար հեծելոց. որ և շինեաց զսուրբ ուխտն Կեչառու՝ որպէս Վահրամ իշխանն զՄարմարաշէնն, զի մի յանցաւորիս միայն իցեմք ճոխք[2]՝ այլ և յանմահիցն գաւառ, ուր կան իսկ զարմիւք իւրեանց 'ի դամբանի՝ ակն ունելով վերնոյն։

'Ի չորս հարիւր եօթանասուն թուին եկ Տուղրիլ բէկն և պատահեաց նմա 'ի Նախջավանի Լիպարիտ հինգ հազար հեծելովք. և փախեաւ յահագին բազմութենէն։ Նա 'ի գալ Խուրքին 'ի Գուլին և սրփռեալ ասպատակս՝ ել ընդդէմ նոցա քաջն Վասակ. և ցուցեալ մեծ քաջութիւնս՝ դառնայ 'ի Աերկևելի՝ և 'ի հանգչելն սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ ըզգլուխն այր մի յանգէտս՝ մեռանի։

Զայսու ժամանակաւ պատրիարգն Պետրոս քի-

[1] Մեր օր. և խելագար մի եղիցի 'ի տեղւոջ նորա։ — [2] Մեր օր. զի մի յանցաւորքն միայն իցեն ճոխք։

նով ինչ Յովհաննէս Թագաւորին գնայ 'ի Վասպուրական և աղաչանաւք ոչ դառնայ: Եպա 'ի ձեռն տուկի կողմանցն ածաւ բռնութեամբ և արգելաւ 'ի Բռըջնի. զոր լուեալ տէր Յովսէփ, կաթողիկոսն Աղուանից՝ գայ և հանէ զնա 'ի բանտէն և տանի ընդ յաթոռն իւր, հանելով զԴէոսկորոս՝ առաջնորդ սուրբ ուխտին Սանահնի, զոր եդեալ էին կաթողիկոս փոխանակ Պետրոսի ամ մի՝ որ և ապա դարձաւ 'ի վանս իւր՝ — այր սուրբ և լի ամենայն առաքինութեամբ:

Յայնմ ժամանակի փոխէ զԳէորգ՝ Վրաց Թագաւոր, որդի իւր Բագարատ. և իշխանն Վրաց Լիպարիտ ապստամբեալ փախուցանէ զնա 'ի խորին Ափխազք և ունի ինքն զաշխարհն իմաստութեամբ[1]՝ ձեռն տուեալ 'ի Միքայէլ կայսրն. որ և 'ի մեռանել իւրում տայ զԹագն Կաղափատու որդւոյ քեռն իւրոյ, որ զկնի սակաւ աւուրց կուրացաւ[2] հրամանաւ Զոյի Թագուհւոյ՝ կնոջն Միքայէլի. յորում տեղւոջ երևեցաւ քար մի՝ ունելով գիր, — «եթէ սուտ Թագաւոր խաւարի»: Եւ Զոյի առնու այր իւր ըզՄոնոմախ[3] և դնէ նմա Թագ. — առ սա գնայ տէր Պետրոս և դառնայ 'ի Սեւաստ, և որդիքն Սենեքերիմայ տան նմա զվանքն, զոր յանուն Վարագայ սուրբ նշանին շինեալ էին՝ ընդ ինքեանս ունելով զխաչն, թէպէտ զկնի անդրէն դարձուցին[4]: Եւ երեք պռաստինս ետ Մոնոմախ պատրիարգին, որ և կեցեալ 'ի

[1] Ու. օր. և չէին ունել յինքեան զաշխարհին իմաստութիւնն. — Մեր օր. և չէին ունել ինքեան զաշխարհին իմաստութիւնն. զոր մեք ուղղագրեցաք՝ որպէս ընթերցողն տեսանէ՛ ի վեր անդր: — [2] Մեր օր. զկնի տասն աւուրց կուրացաւ: — [3] Ու. օր. և Զոյի առնու զայր իւր զՄոնոմախն: — [4] Ու. օր. ընդ յինքեանս առնելով զխաչն, զկնի անդրէն նահանջեցին:

տեղւոյն առ մի՝ կատարի[1] ։ Նոյն առնու զքօղն խռո-չեկ՝ քուերորդին իւր, զոր ձեռնադրեալ էր 'ի կեանս իւր յԱնի. և կեցեալ ամս երկու՝ վախճանի ։ Նոյն միւսյ աթոռն զամս եօթն թագաւորեալ, քանզի 'ի չորս հարիւր իննսուն և երեք թուին մեռանին Յովհաննէս և Աշոտ. և տեառն զթագն 'ի Գագիկ՝ որդի Աշոտոյ ։ Նոյն յի-շեցին Յոյնք զկտակն կորստեան փասն Անւոյ, զի ան-դարձ է՝ ասեն, և հաստատուն զենի մահու կտակն. և կոչեցին երդմամբ զԳագիկ 'ի Կոստանդնուպօլիս՝ որ-պէս թէ անդրէն դարձուցանեն պարգևաւք ։ Նոյն կա-տապան եղին ինքեանք քաղաքին և վերացուցին 'ի նմանէ զերկոսին պսակն՝ զզահ հայրապետութեան և զթագաւորութեան, յակամայս ածեալ զերկոսեա-նըս առ ինքեանս՝ և անդրէն ոչ դարձուցին[2] ։ Վասն որոյ անյոյս եղեալ Գագկայ՝ առնու փոխան զԿալան պաղատոն և զԱրզու և կեայր պանդխտութեամբ առ-ատեցազացն ազգիս[3] ։ Զայսու ժամանակաւ Գրիգոր՝ որդի քաջին Վասակայ, տայ 'ի Մոնոմախ զԲջնին և զԿայյան և զԿայծոն[4], զոր ընդ ձեռամբ իւր ունէր՝ և զդքսութիւն Միջագետաց. որ և առնու ընդ իւր զԱպիրատ զիշխան Վրաց և այլ եւս երկու մագիս-տրոս և երթայ ընդդէմ Իբրահիմայ զօրագլխի Տուղ-րիլ պէկ սուլտանին[5], ուր ըմբռնեցաւ Լիպարիտն և ածաւ առ սուլտանն, և առաքեաց առ նա դաւա-

[1] Ուսմ. օր. և երեք պատարագիս Մանուկին էր պատրիարքին, որ և եկաց 'ի տեղւոյն առ մի և կատարի ։ — [2] Ու. օր. յակամայս ածեալ զերկոսեանս և անդրէն ոչ դարձուցեալ ։ — [3] Ու. օր. և կայր պանդխտութեամբ առեցա-ղացն ազգիս ։ — [4] Մեր օր. և զԿածոն ։ — [5] Մեր օր. և երթայ ընդդէմ Իբրահիմայ զօրագլխի Տուղրիլ սուլտանին ։

նել զհաւատ նորա[1], Նա պատասխանի տուեալ. «իբ-
րեւ տեսից զերեսս քո, առնեմ զոր հրամայես»: Նա
երբև ետես՝ ասէ. — «յորժամ եղէ արժանի տեսանել
զքեզ՝ ոչ արարից զկամս քո և ոչ երկեաց 'ի մահը-
ւանէ». և ասէ սուլտանն. «զի՞նչ կամիս». և Նա ա-
սէ. «թէ վաճառական ես՝ ծախեա զիս, թէ դահիճ՝
սպան զիս, իսկ եթէ թագաւոր ես՝ պարգևօք ազատեա
զիս»: Նա ասէ սուլտանն. «ոչ գնոյ վաճառական եմ՝
և ոչ արեան քո դահիճ կամիմ լինել, այլ թագաւոր
եմ. երթ յո և կամիս». — և արձակեաց զնա պար-
գևօք: Նա զի կայսրն խնդրէր զնա[2]՝ չոգաւ առ Նա. և
առեալ 'ի Նմանէ զօրս՝ եկն 'ի Վիրս. և կալեալ ըզ-
թագաւորն Բագարատ՝ առ կայսր յղեաց և ինքն կա-
լաւ զերկիրն ամենայն:

'Ի սոյն աւուրս կին մի՝ Մամ անուն, գայ 'ի Պար-
սից երեք որդւովք 'ի գաւառն Փառիսոսոյ առ Գրի-
գոր փառաւոր իշխանն: Նա տան որդիքն պատանդ
զմայրն և առնուն զՇօթս և զեղբայրն Շամիրամայ. և
անտի ընտանեցեալ ընդ Եղազեղ ամիրայն[3] Գանձա-
կայ՝ սպանին զնա և առին զԳանձակ և տիրեցին. —
երեց որդին Պարզուան մեռաւ կարճ, և իշխանեցաւ
'ի տեղին Լէլքարի՝ միւս եղբայրն, և առնու զՊար-
տաւ և զՇամքոր 'ի սալարէն: Նա եղբայր նորա
կրտսեր, որ Փատլուն կոչիւր՝ սպանեալ զնա յոր-
սին, առնու զիշխանութիւնն. և սիրոյ աղագաւ գնա-
ցեալ առ Նա Փիլիպէ՝ որդի Գրիգորոյ, ըմբռնէ զնա

[1] Բուն. օր. առաջեաց առ նա դարանալ պհապետ նորա: — [2] Մեր օր. և չայսրն խնդրէր զնա: — [3] Մեր օր. և անտի ընդդացեալ ընդ Աղախենն ամիրային:

'ի կապանս զկնի մահուան հօրն և առնու 'ի նմանէ զՇաշուաշ[1] և զՇօթս։ Կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Գանձակայ՝ սպանանէ և առնու զերկիր նորա։ Նա այսպէս զօրացեալ տիրէ Խաչենոյ և Գորոզոյ և Սևորդեացն՝ և գոռ դնէ ընդ Գագկայ Թագաւորին Ձորոյ գետին, և ընդ Կիւրիկէի Թագաւորին Աղուանից, և ընդ Բագարատայ Թագաւորին Վրաց, և նեղէր զնոսա. տիրէր և Գունայ[2]. և եդ հարկս 'ի վերայ Հայոց երեք հազար դրամ։ «Նոյնպիսի օրինակաւ արք ումանք քաղդէացիք ելեալք յաշխարհէն իւրեանց՝ գան 'ի Գարդման և ասեն ցիշխանն Գարդմանոյ». տուր մեզ զմասն խաչին, զոր ետ քեզ Հերակլ՝ և լինիմք քրիստոնեայք և քո ծառայք». և կատարեցան իղձն։ Նա լուեալ ամիրային Բաղդադայ՝ սպառնայ յոյժ, յորմէ երկուցեալ գնացին յատն Կոմկասու. և յաջողեալք 'ի Քրիստոսէ յոր հաւատացին՝ տիրեցին ամենայն գաւառացն — մինչ զի ոմն 'ի նոցանէ Թագաւորեաց՝ Գուրիթ անուն, որ խընամացաւ ընդ արքային Ձորոյ գետոյ։ Նա կոչեցին զգաւառն Ոանալք, զի անդ ծանեան տեղի բնակութեան իւրեանց։ Նա իշխանն Գարդմանայ կոչեցեալ զնոսա քորեպիսկոպոս վասն լեռնէին Վրաց[3]։

Իսկ զկնի բառնալոյ Թագաւորացն Հայոց 'ի յԱնւոյ՝ եկ 'ի Հայս հօրեղբօրորդին Տուղրիլին՝ Ալփասլան և աւերեաց քսան և չորս գաւառս, զի էր զօրագլուխ սուլտանին. որ և զկնի մահուան նորա սուլտա

1 Ոսկ. օր. և առնու 'ի նմանէ զՇալուաղ։ — 2 Մեր օր. և գնացնէ ընդ Գագկայ Թագաւորին Վրաց և նեղէր զնոսա, տիրեաց և Դւնայ։ — 3 Ո. օր. կոչեցեալ զնոսա քորեպիսկոպոս ընդ լեռնէին Վրաց։

էին[1]: Նա ոչ բարձաւ մինչև 'ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց անզուգականաց՝ Սմբատայ և Գրիգորոյ, որ առեալ զմնունքն Անեքերիմ Հայազարմ, եղին Թագաւոր ժառանգ իւրեանց[2]. զոր և սպանեալ հրամանաւ փատշոյ՝ չիջաւ ծրագն որ անդ, և տիրեցին Պարսիկք[3]: Այս փատշոյն առնու յԱլփասլանայ զԱնի՝ տալով նմա ոսկեկուռ նկարս ծաղկոցի[4]: Նա առաքէր Տէր աւեր քաղաքին զՄանուչէ՝ թոռն նորա յոյժ տղայ, որ զարգացեալ յաւելու 'ի պարիսպն Անւոյ և յամրութիւնս նորա: Նա ած 'ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանս[5]: Նա որպէս մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր 'ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ՝ զթոռն Ապիրատին, զոր ասեն ունել 'ի գլուխս ազատականացն հինգ հարիւր[6] թագս երևելիս, զի տէր էր մեծ զօրաց և բազում ազատաց[7], և էր եղբայր տեառն Խարսղի, որ զկնի Գէորգայ ձեռնադրեցաւ 'ի Հաղբատ կաթողիկոս՝ հրամանաւ և կամաւք Մանուչէի և ամենայն Հայոց: Նա շինեաց քաղաքն Անի ոչինչ պակաս քան զառաջինն[8]:

Իսկ Ալփասլան գնացեալ 'ի յԱլամութ[9]՝ պաշարեաց զբերդ մի ամուր. և տէր բերդին արար մեծ խնդութիւն 'ի տան իւրում, զկնի սուգ յոյժ. և ապա իջեալ առ սուլտանն՝ որպէս թէ 'ի հնազանդութիւն. և 'ի համբուրելն զոտս նորա փողոտեաց զգազանն՝ ար-

[1] Ռուսմ. օր. հայկական էին: — [2] Ի. օր. եղին Թագաւոր ժառանգորդ իւրեանց: — [3] Ի. օր. և տիրեցին Պարսիկք: — [4] Ի. օր. տալով նմա ոսկեկուռ նկարս ծաղկոցի: — [5] Ի. օր. զամենայն իշխանսն, զոր հնազանդեալ էին: — [6] Ի. օր. զոր ասեն ունել 'ի գլուխս ազատ խանանցն հինգ հարիւր: — [7] Մեր օր. զի տէր էր մեծ զօրացն: — [8] Մեր օր. ոչինչ պակաս քան զառաջինն: — [9] Մեր օր. գնացեալ 'ի յԱլամութ:

բեալ արեամբ անմեղաց՝ և բարձաւ ՚ի միջոյ։ Նոյն առ զպատիւ նորա Մ՚ելիքշահ՝ որդի նորա, — այր ողորմած և բարեմիտ՝ առաւել ազգիս մեր, մինչ զի զպատրիարգն Բարսեղ վերացեալ խաչիւ առաջի իւր մուծանէր և պատուէր պարգևաւք և տուրղայիւ գրոյ. որով համարձակեալ առնու զգաւազան և զանուն ՚ի Հոնեցւոյն, որ անձամբ առեալ էր արտաքոյ կարգաց զկաթողիկոսութիւնն[1]։

՚Ի հինգ հարիւր քսան և հինգ թուին սպանին Հոռոմքն զՎասակ իշխան՝ զեղբայր կաթողիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու՝ ՚ի նմին քաղաքի նենգութեամբ։ Նոյն զօրք նորա՝ սփռեցեալք ՚ի Կլայն, ետուն զքաղաքն ՚ի Փիլարտոսն, որ բռնացեալ էր յոյժ յայնժամ ՚ի վերայ բազում գաւառաց՝ Հայ ազգաւ. որ առեալ զքաղաքն՝ խնդրեաց զվրէժ արեան նորա։ Այս Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քըւերորդի[2] տեառն Պետրոսի կաթողիկոսի ՚ի Միջագետըս — այր սուրբ և պարկեշտ, մինչ կենդանի էր Վահրամ և Գէորգ, զոր աքսորեցին տէր Վահրամ և տէր Բարսեղ որ յարևելս, և ՚ի Հաղբատ ձեռնադրեցին զտէր Ստեփանոս կաթողիկոս Աղուանից Թագաւորն Կիւրիկէ. յորում և զՍարգիս աւագ երէցն արքունի դրան արքեպիսկոպոս ձեռնադրեցին երկոքին կաթողիկոսքն սուրբ ուխտին Հաղբատայ՝ տալով վեճակս յերկուց կողմանց։ Այլ և զկնի մահուան տեառն Սարգսի կաթողիկոսի ՚ի տեղին նորա ետ ձեռնադրել Փիլարտոս զԹէոդորոս ոմն։ ՚Ի սոյն աւուրս սպանաւ

[1] Ուռմ., օր. որ անձամբ առեալ էր յարքայէ զկաթողիկոսութիւնն։ —
[2] Ու. օր. զՍարգիս քեռորդի։

Բեղեկ իշխանն Շխրավատունի, որ վասն յոյժ բարու-
թեանն[1] նեղեալ 'ի կայսերէ՝ կոչեցաւ 'ի Հոռոմ, և որ-
ւաւ հայր խոստովանութեան նորա Եփրեմ Հոռոմ՝ ամ
մի։ Նա զի ոչ պատահէր զօրէնս Հոռոմոց՝ խնդրեաց
զնա ապիղծ կրօնաւորին 'ի քաղն՝ զնա զանեալ միայն 'ի
բերդն իւր յԱնդերեան․ զոր խմացեալ զօրաց նորա՝ զա-
հալէծ ամենն զկերպողն անօրէն։

Իսկ զկայսրն Միքայէլ փոխէ Վասանդրոսն ամ մի,
և զկնի Մեսնկիտեան ամիս վեց, և ապա Նէքոս՝ այլ
ախտանի և խնքացի։ Յորում աւուր եղև նշան ինչ
սոսկալի 'ի վանքն Պիզոյ, զոր շինեաց Գուագիկ արքայ․
— այլք երկու անապատաւորք[2] եղեն 'ի տեսլեան․ և-
կին 'ի վանքն և նախ քան զՀօրոցն՝ ասացին զոր տե-
սին։ Մին ասաց, «Թէ տեսանէի զի կանթեղ եկեղեցւոյ
զմքեթերին անկաւ 'ի յատակս եկեղեցւոյն և ոչ շիջա-
ւ լոյս նորա»․ և միւսն․ «Թէ տեսանէի զի անկաւ յերկ-
նից աստղ մի և լոյսն տարածեալ փայլատակէր յեկե-
ղեցին»։ Նա հայր վանացն ասաց․ «Տեսէք՝ զի անկեալ
է 'ի սուրբ խորհրդոյն»։ Նա վառեալ մոմեղէնս և զը-
նացեալ գտին մասն անկեալ[3] 'ի խորհրդոյն 'ի բեմն 'ի
սուրբ պենտեկոստէին յանկարծ տանէ[4]․ որ և զկնի
երեք աւուր գտաւ՝ և զայն երիս աւուրսն չէր ան-
կեալ ոչ 'ի յաւելն և ոչ 'ի յոտս՝ 'ի փառս անձեառ խոր-
հրդոյն․ և զոհացան զԱստուծոյ։

Իսկ զտէրն Անւոյ զԳուագիկ, որ չոգաւ 'ի Կոստանդ-

[1] Բոռմ․ օր․ 'ի այն ժամու պատեալ Բեղլեկին իշխան չերախանի՝ վասն յոյժ բարութեան նեղեաւ 'ի կայսերէ։ — [2] Մեր օր․ այր երկու անապատա-ւորք։ — [3] Մեր օր․ և գնացեալ գտին մասն անկեալ։ — [4] Մեր օր․ անըզ-գոյշ յանէ։

դնուպօլիս՝ շատ աղերսեալ Թէոդորոսին քեռն Զոյի, զի լիցի հոռոմ և այր նմա և թագաւորեսցէ Յունաց[1], և ոչ հաւանեցաւ. բայց զորդին իւր կտրեաց այն 'ի փեսայութիւն Ապլխարիպ որդւոյ Խաչկայ՝ իշխանին Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՎան[2], զԱռնայ, զՊաղպառօն, և զՎամբրօն, զոր առեալ էր 'ի բռնաւորէ: Իսկ լուեալ հօրն գնաց հանել զնա. և 'ի դառնալն՝ յիջեվանս խեղդեցին զնա Հոռոմք: Իսկ պերճն Ապլխարիպ սպան զեղբայր զփեսայն: Իսկ երեց որդին Յովհաննէս փեսայացաւ տուեալ Անւոյ Հոռոմի[3] յուսով ինչ. և եկն յԱնի և չգտեալ հանգիստ՝ չոգաւ 'ի Վիրս և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս մեռաւ տղայիւ՝ Աշոտ կոչեցելով, զոր խնդրեաց կայսրն փեսայ և ոչ կամեցաւ տալ: Իսկ սա չոգաւ առ սուլտանն հրամանաւ կայսեր և ետ նմա զԱնի: Իսկ Կուրդ ոմն ազգական Մանուչէհի զեղբայր սպան զնա և բերաւ 'ի Կոստանդնուպօլիս մարմինն. և նախ քան զգալ մեռեալ որդւոյն՝ մեռաւ հայրն և բարձան թագաւորաքն Անւոյ զայս օրինակ:

'Ի հինգ հարիւր երեսուն և եօթն թուին Պուղպաղամիրայ հրամանաւ Մելիքշահի առ զԳանձակ 'ի Փաղլընեացն, որ Շատտատիք կոչէին: Իսկ Վրաց թագաւորն Բագարատ դարձեալ 'ի կայսերէ՝ առնու ըզհայրենիս իւր. և զկնի նորա Գէորգի որդի իւր[4], որ և գնացեալ զկնի Ափրիկէի 'ի Խորասան առ Մելիքշահ՝ դարձաւ պատուով: Այս Ափրիկէ՝ որդի էր

[1] Մեր օր. և Թագաւորեսցէ յունաց: — [2] Մեր օր. որ ընդ ձեռամբ իւր ունէր զՎանայ: — [3] Մեր օր. Յովհաննէս փեսայացաւ տուեալ Անւոյ Հոռոմոց: — [4] Մեր օր. և զկնի նորա առնու Գէորգի որդի իւր:

Դաւթի, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին: Այս հայրն Դաւթի շինեաց զԼօռի և այլ ևս երկոտասան բերդս, որ կայ Թաղեալ 'ի Սանահին: որոց Թոռունք՝ Աբաս և Դաւիթ, նեղեալ 'ի Մրաց չոգան 'ի տեարսն Առանայ և առին ձեն մի բերդ և կային տառապանաւք: Այլ սուլտանն Մելիքշահ խաղաղասէր և քրիստոնէասէր բարուք տիրեաց 'ի Կասբից ծովէն մինչև 'ի ծովն Պոնտոսի երկոտասան Թագաւորութեանց: Նա բարձեալ աւազ յՈվկիանու տարաւ 'ի Պարսս և էարկ 'ի վերայ գերեզմանի հօր իւրոյ և ասաց »· ահա հայր՝ աւետիս քեզ, զի որդի քո՝ զոր Թողեր տղայ՝ տիրեաց մինչև 'ի ծագս երկրի»: Նա առ սա չոգաւ Փիլարտոս և տկարացաւ 'ի հաւատոցն: Նա Պուղայ մեծ ամիրայն հրամանաւ սուլտանայ եառ զՈւռհայ և սպան արս ազնիւս 'ի փառաւոր իշխանաց Հայոց 'ի մանկութենէ քսու արանց:

'Ի սոյն աւուրս Թագաւորն Պեծենեկաց եկն հազար հազարաւ 'ի վերայ Աղէքսին 'ի Կոստանդնուպօլիս: և քրիստոնէից աղօթեալ զաւուրս ութ՝ ջընջեցին զնոսա բովանդակ, արկանելով հուր 'ի տաղս նոցա, որովք եկեալ էին: —'Ի նմին աւուրս յայտնեցաւ չարութիւն_հոռոմ աբեղայի մի, որ պաշտէր ըզշուն, և մոլորեցոյց արս իբրև բիւր մի և զմայր Աղէքսին՝ մինչ գնել մասն 'ի սուրբ խաչափայտէն Տեառն ծածուկ 'ի կօշկի որդւոյ իւրոյ[1] 'ի ներբանս կոխել միշտ: զոր իմացեալ Աղէքսին՝ կորոյս զամենեսեան և զմայրն եհան 'ի տիկնութենէն:

'Ի հինգ հարիւր քառասուն Թուին մեռաւ կա-

[1] Մեր օր. 'ի չօշկի որդւոյ իւրոյ:

թողիկոսն Պօղոս 'ի Մարաշ, զոր եդեալ էր Փիլարտոս, և սուրբ և մեծ գիտնական Գէորգ վարդապետըն Հայոց, և թաղեցաւ 'ի Կամրջաձոր առ Սանահնեի վարդապետի: Եւ եղև միահեծան սուրբ աթոռն պատրիարգութեան, քանզի տէր Բարսեղ 'ի նմին ժամու ընկէց զկաթողիկոսն Թէոդորոս յաթոռոյ և առ 'ի նմանէ զքօղն և զգաւազանն և զսուրբ Նշանն տեառն Պետրոսի: Եւ շրջեալ 'ի Կեսարիա՝ եկն յԱնտիոք և անտի յՈւռհայ, և լինէր ամենայն ուրեք խնդութիւն մեծ: — ՇԼ խաղաղանէր սուլտանն զեղակուր եղեալ 'ի կնոջէ իւրմէ՝ մծարէ զկեանս իւր 'ի հինգ հարիւր քառասուն և մի թուին: Եւ լուեալ Պուղա ամիրայն, որ 'ի Նիկիա՝ դառնայ յՈւռհայ: — Եւ տէր Բարսեղ երթայ յԱնի: — Եւ թաղեցաւ Մելիքշահն 'ի Մարանդ առ հօր իւրում Ալփասլանայ, որոյ էին երկու որդիք՝ Բարկիարուխ և Սափան կոչեցեալք: Եւ Գուդուզ եղբայր Մելիքշահին սուլտանեցաւ 'ի կողմանս Յունաց. իսկ Բեկիարուխ 'ի վերայ Պարսից և Հայոց, որ և զքեռին իւր զԽամայէլ արարեալ հեջուք: Սա կարի քաղցր և բարեմիտ էր առ Հայս, վասն որոյ խնամ ածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս, ազատեալ զվանորայս և զամենայն եկեղեցականս: Իսկ Գուդուզ տիրեալ Միջագետաց՝ հարկանէր զԹագաւորն Արաբկաց զԻբրէհիմ և առեալ զամենայն բանակս նոցա՝ հարստանայր: Եւ գայր առ նա գիր 'ի կնոջէ Բեկիարուխին, զի գնասցէ 'ի Պարսս և լիցի նմա այր և առցէ զամենայն իշխանութիւն և աշխարհ ինքեան [1]: Եւ նորա խնդացեալ ընդ լուրն՝ խաղայ

[1] Մեր օր. և առցէ զամենայն աշխարհն ինքեան:

անկթիւ բանակաւք և երթայ 'ի դաշտն Ասպահանայ. և յղէ առ նա Բէկիարուխ աղաչանս[1], զի տացէ նմա զԱսպահան՝ և այլ ամենայն տիեզերք նմա լիցին. և ոչ կամեցաւ նորա յանձն՝ յարձակին 'ի մեծամեծս։ Իսկ մեռանի Դուղուշ. և փախչի Ռտուանն՝ որդի նորա յՈւռհա. և նստի և նա սուլտան 'ի Հալապ և 'ի սահմանս նորա[2]։ Իսկ այլ ոմն յազգէ նորա՝ Ալփի-արսլ կոչեցեալ, 'ի կողմանս Յունաց սուլտանեցաւ[3]. և եկեալ յՈւռհա՝ տիրել ջանայր նմա. իսկ Թորոս կուրապաղատն սպան զնա դեղով։ Զկնի աւուրց երեսնից 'ի նմին ամի մեռաւ սուրբ Թորոս կաթողիկոսն 'ի Հոնին՝ լի ամենայն առաքինութեամբ, և թաղեցաւ մօտ 'ի տէր Սարգիս։ Յայնմ ժամանակի եղև 'ի պատճառս մարախաց և երաշտոյ սով սաստիկ, և 'ի յԱնի քաղաք կարի իմն նեղութիւն[4]. ուստի զմեռեալս 'ի սովոյ թաղել ոչ կարէին, և ոչ օրինաց հաղորդել. որ և այր մի անձն քաջութիւն ցուցեալ և սէր առ Աստուած՝ թաղեաց անձինս վեց հազար, Բէկս անուն էր նորա։ Զայսպիսիս լուեալ այր մի մեծատուն 'ի Պարսս և երամակ մի ուղտուց բարձեալ ցորենով՝ գայր 'ի յԱնի. և ոչ ումեք տալ անէր[5], բայց տղայոց. զոր լուեալ՝ բերէին զտղայս յորդ արտասուօք, և նա աճեցուցանէր և կերակրէր զնոսա։ Իսկ 'ի սպառել ցորենոյն՝ ձայն արարեալ ծնողաց մանկանցն, զի եկեալ համբուրեսցեն զուստերս և զդստերս իւր-

[1] Մեր օր. և յղէ առ նա Բէկիէ աղաչանս։ — [2] Մեր օր. նստի և նա սուլտան 'ի Հալապ և 'ի սահմանս նորա։ — [3] Ու. օր. 'ի կողմն Յունաց սուլտանացաւ։ — [4] Մեր օր. և 'ի յԱնի [illegible] նեղութիւն։ — [5] Մեր օր. [illegible] 'ի յԱնի և [illegible]։ — Ու. օր. և [illegible]։

եանց: Նա և իբրև կակաւն բարձեալ մռմռքէին զլու֊
կախառնեալք՝ ահա 'ի բարբառ քաղցր և բարի պղնձ
բարբառեալ ասաց. «Առէք զողջոյն ձեր և գնացէք
'ի տունս ձեր՝ փառաւորելով զտուողն բարեաց՝ Աստ֊
ուած, 'ի մեծութեան խնդում». զոր և արարին նոյն:
Օգնի անցանելոյ ամսոյն [1] ազգ մի սկիւթական, որ
'ի վաղուց ժամանակաց ղօղեալ կայր առ Վրկանօք՝
անուն զլխաւորին Իլխազի կոչեցեալ, եկն եօթն հա֊
զարաւ ընդ միջոցաւ աշխարհիս մինչև յԱնի քաղաք
պատերազմաւ: Նա մեռաւ անդ եղբայր նորա, որ նման
էր Գողիաթու հսկայի՝ 'ի Գորիգորոյ որդւոյ Վա֊
սակայ Թոռին Ապիրատի, որ նահատակեցաւ զկնի ա֊
ւուրց 'ի Կաղզուան [2]՝ զերծուցեալ զամիրայն Անւոյ
'ի մահուանէ Մանուչէի. և տարեալ թաղեցին զնա
'ի Կեչառուս եղբայր տէր Բարսղի կաթողիկոսի և
Մանուչէ, և ամենայն զօր բանակին Հայոց երթայր
զկնի դիոյն [3]: Իսկ Իլխազի երթեալ ընդ Միջագե֊
տըս՝ առնու զԵրուսաղէմ 'ի Փռանգաց՝ հարկանե֊
լով նետ մի 'ի ձեղուն Յարութեանն, որ կայ մինչև
ցայժմ 'ի նշան գործոյն:

'Ի հինգ հարիւր քառասուն և չորս թուին Սուք֊
ման՝ որդւոյ Արթուխին [4], և ամիրայն Սամուսատոյ՝
Պալտուխ [5], որդի ամիր Խազէ՝ գան 'ի վերայ Ուռ֊
հայոյ և դառնան լի ամօթով [6]. զի կուրապաղատն

[1] Մեր օր. զինի անցելոյ ամսոյն: — [2] Մեր օր. որ ձեռնադրեցաւ զինի ատեանց 'ի Կաղզ Վանն: — [3] Մեր օր. և Մանուչէ և ամենայն զօր բանակին Հայոց, իսկ Իլխազի... Մեր օր. և Մանուչէ և բովանդակ զօր բանակին Հայոց: — [4] Ռ. օր. որդի Արթուխեանն: — [5] Մեր օր. և ամիրայն Սամոսատու Պալտուխն: — [6] Մեր օր. և դարձեալ լի ամօթով:

Թէոդորոս իմաստութեամբ և քաջութեամբ պահէր զքաղաքն՝ մինչև ոչ սուլտանն Ռատուան կարաց հըննազանդել զնա:

Դարձեալ 'ի հինգ հարիւր քառասուն և եօթն թուին Խլիճ ասլան՝ սուլտանն արևմտից, թոռն Դըղըրշայ՝ գնայ 'ի վերայ Մելտենոյ. և իշխան քաղաքին Խաւլրիլ՝ աներ կուրապաղատին Թեռհայոյ, դարձոյց զնա անարգանօք: Յայսմ ժամանակի ընու բան մարգարէութեան սուրբ հայրապետին Ներսեսի, որ վասն եւեց Փռանգացն. քանզի մինչ տիրէին Ակիւթացիք Երուսաղեմի և առնուին վարձս մտելոցն 'ի գերեզման, դիպեցաւ կոմս մի փռանգ ազգաւ 'ի խըռանն [1] համարողել և զայրանալ՝ և վասն այնր զանել, մինչև հանին զմի զակն նորա [2] 'ի կապճացն, և ընկեցաւ 'ի վայր. զոր առեալ եդ 'ի գրպանն [3] և տարեալ 'ի Հռոմ ցուցանէր՝ և նախանձու վառէր զբազումս: Եւ եղանէին այլք փառաւորք՝ գլխաւորք զօրաց բազմաց, որոց անուանքն էին այս. — Կոնդոփր և Պաղտոյն՝ եղբայր նորա յազգէ թագաւորաց, զոր առեն ունել զթագն Վեսպիանու, որ աւերեաց զԵրուսաղէմ. և մեծ կոմսն Պայմունդ և Տանկրի՝ քեռորդի իւր, և կոմսն Զնջիլ և Ռոպերտ, որ մեաց կոմս, և միւս Պաղտոյն և Ջօզլին կոմսն [4] — այլք յաղթողք և բազմազօրք՝ յուղի անկեալ գան 'ի Խուզանդիա և սիրով անցեալք 'ի Նիկիա՝ հարին զԽլըճ ասլանն միանգամ և երկիցս, և առին զՆիկիա և

[1] Մեր օր. 'ի դրան — [2] Ո. օր. և վասն այնր գանել մինչև հանել զակն նորա զմի 'ի կապճացն: — [3] Ո. օր. զոր առ եդ 'ի գրպանն: — [4] Մեր օր. և Ջօզլին կոմսն:

հոռոմն յԱլէքսն. և ինքեանք գնացեալ ընդ Սիւլէկէ [1]. առին զԱնտաք և զամենայն ծովեզերայս և զԵրուսաղէմ և եդին թագաւոր, որպէս ծանուցանեն յորովից պատմութիւնք [2]: — Եւ այսու ժամանակաւք եմուտ սուրբ խաչն Նունեայ 'ի յԱնի, այն՝ որ 'ի յուրացմանն Վաչգենի՝ ազգին Վրաց առաջնորդի [3], գաղթեցաւ 'ի խորշս լերինն Պարխարու 'ի ձեռն սուրբ վանականին [4] Անդրէասայ՝ յաշակերտաց սրբոյն Սահակայ, և կացեալ անդ չեօթն ամ. և ապա ազգ արարեալ Մամիկոնեան Գրիգորոյ՝ որդւոյ Ամայեկի, տարաւ 'ի Կապոյտն կոչեցեալ բերդ, և անտի փոխեցաւ 'ի Վանանդ [5] և կոչեցաւ Վանանդայ խաչ: Իսկ 'ի բառնալ տանն Մամիկոնէից յանօրինէն Սուքմանայ՝ բերաւ յԱնի 'ի հայրապետութեան տեառն Բարսղի. և կարգեցաւ նմա տօն կիւրակէն, որ զկնի ութօրէիցն խաչավերաց տօն [6]:

Եւ 'ի հինգ հարիւր քառասուն և եօթն թուին Պաղտոյն կոմսն էառ զԹլպաշար և զՈւռհա. և 'ի միւս ամին սպասալարն Բեկկիարուխին եկեալ [7] յԱնտիոք 'ի վերայ Փռանկին՝ հարաւ 'ի նոցունց իբրև երեսուն բիւր. քանզի գտին 'ի ձախակողմն սրբոյն Պետրոսի զգեղարդն, որով Հրէայք խոցեցին ընդ կատականս զպատկերն փրկչական, ուստի եբուխ արիւն և ջուր, որպէս 'ի տէրունի կողէն: Իսկ պատուեցաւ զէնն՝ ար-

[1] Բռնամ. օր. և քարան յԱլէքսան 'ի Կիւլէկէ: — [2] Ա: օր. և եդին թագաւոր որպէս յորովից պատմութիւնք: — [3] Մեր օր. այն որ 'ի յուրացման ազգին Վրաց առաջնորդի: — [4] Մեր օր. 'ի ձեռն սուրբ վանականին: — [5] Մեր օր. փոխեցաւ 'ի Վանանդ: — [6] Մեր օր. զկնի ութօրէից խաչավերաց տօն: — [7] Մեր օր. սպասալարն Բէկին խորասանին եկեալ:

պէս զատուածամուխն այն, զոր Հայք ունէին. որով զօրացեալ փռանկքն՝ հարին զԹշնամիս իւրեանց և ապա առաքեցին զնա Աղեքսին։

Ի հինգ հարիւր քառասուն և ութ Թուին մեռաւ Կոստանդին՝ մեծ իշխանն Հայոց, որդի Ռուբինայ, որ է հարազատ Գագկայ արքային, որում ակն յայտնի ցուցան[1] նշան մահու նորա.— զի 'ի նմին աւուր անկեալ շանթ 'ի յերկնից՝ հարկանէր զարծաթի ըն-կուտեղն[2], որ կայր առաջի նորա՝ 'ի բերդն Վահկայ կոչեցեալ, և մեռաւ այր մի առ ժամայն, յետոյ ապա և ինքն ինկ, որ բռնացեալ ունէր զգաւառն Մեսաւ։ Եւ Թողու երկու որդիս, Թորոս և Լևոն անուանք նոցա։

Ի հինգ հարիւր քառասուն և ինն Թուին Գանրշման տէրն Սեբաստիոյ, զորմէ ասեն յազգէ Հայոց՝ եկեալ 'ի վերայ Մելտինոյ, և Պէմունդ և Սաղջարդ, որ կային յՄուռհա՝ ելին ընդդէմ նորա և ըմբռնեցան 'ի Դանիմանէ և եղան 'ի բանտի։

Ի հինգ հարիւր յիսուն Թուին յաւուր շաբաթու ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ, այլ յօր կիւրակէին 'ի յինններորդ ժամուն.— զարմացաւ ամենայն երկիրըն՛ Եւ այլ պատճառն էր անուղղայ գործք փռանկին, զի կանանց ետուն զպապասութեան պատուածընկալ սուրբ գերեզմանին։— Եւ 'ի նոյն ամի գայր կոմսըն մեծ՝ Պետևան կոչեցեալ, երեսուն բիւրօք 'ի Կոստանդնուպօլիս և հպարտ բանիւք՝ եպարքոս կոչելով, նախատէր զԱղէքս և առնոյր զօրս 'ի նմանէ՝ յուղարկաւորս ընդ երկիրն Թուրքաց։ Եւ նոցա նենգ գոր-

[1] Մեր օր. առր անձերն յայտնի ցուցան նշան։ — [2] Մեր օր. հարկանէր զարծաթի սկուտեղն։

ծեալ հրամանաւ իւրեանց թագաւորին՝ տարան ընդ անջրդի անապատ և տկարացուցեալ զնոսա՝ մատնեցին Պոնդշմանայ և զօրացն Խլիճ Արսլանայ, մինչ զի երեսուն արամբք միայն զերծեալ Պետևանն[1]՝ անկաւ յԱնտիոք։ Նա յԵրուսաղէմ հասեալ և ուխտեալ՝ դարձաւ անդրէն ՚ի Հռոմ։

՚Ի հինգ հարիւր յիսուն և մի թուին տասն ազգ քրիստոնէից թիւր զատիկ արարին ՚ի ծառազարդարն՝ բաց ՚ի Հայոց և յԱսորւոց, ՚ի չար սերմանցն Իռինի։

՚Ի հինգ հարիւր յիսուն և երկու թուին իշխանն Հայոց՝ Գողն կոչեցեալ Վասիլ, գնեաց զՊէմունդ[2] օգնելով ՚ի գինս տասն հազար դահեկան, որ գնեցաւ հարիւր հազարաւ։ ՚Ի նոյն ամի կոմսն Ուռհայոյ Պաղտոյն գնաց ՚ի վերայ Թուրքին ՚ի սահմանս Մարտինեայ և կալաւ զՈւլի սալար ամիրայն և ած ՚ի յՈւռհայ՝ և յոլով գերութեամբ և հազարս հազարաց ոչխարս։ Յորում ; աւուր գայր պատրիարգն Բարսեղ ՚ի յԱնւոյ և յոյժ պատուեալ լինէր ՚ի կոմսէն. գեղօք և գանձուք։

՚Ի հինգ հարիւր յիսուն և երեք թուին մեռաւ Պոնդշման՝ թողլով երկոտասան որդիս. և առ զիշխանութիւն աւագն Խաղի։ Նա ՚ի նմին ամի մեռաւ Բեկիարուխ սուլտանն, և առ զտեղի եղբայր իւր Տափար։ Նա ՚ի սոյն աւուրս առ Ճօշլին զՄարաշ. և իշխանն Յունաց, որ կայր անդ՝ Թաթուլ, ծախեաց զպատկեր տիրամօրն Թորոսայ՝ որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենի՝ յոլով ոսկւոյ և արծաթոյ։

[1] Մեր օր. Երեսուն արամբք զերծեալ Պետևանն։ — [2] Մեր օր. Գողն կոչեցեալ Վասիլ գնեաց Պեմունդն՝ օգնելով։

'Ի հինգ հարիւր յիսուն և չորս թուին 'ի շփոթել իշխանութեան Պարսից՝ յարեաւ ամիրայ մի Խոզէլ[1] անուն սկիւթացի, էառ զաւանն Լոռի և գնաց մըտանէ 'ի Գնունին բռնութեամբ ուժոյ սպանեալ զԳնունար՝ զեղբայր Մանուչէի[2]: Եւ գնացեալ Մանուչէի առնու զօր 'ի դրանէ Պարսից արքային և գայ սպանանէ զԽոզէլն 'ի վերայ գերեզմանի եղբօր իւրոյ, և ըզԳնունին տայ 'ի ձեռս Պարսից: — Յայնմ ժամանակի պատրիարգն Բարսեղ՝ նեղեալ յազգէ ազգի շփոթմանէն, գնայ յաթոռն իւր յԱնի. և իսկոյն հասանէ խնդրակ 'ի տէր Գրիգորիսէ Պահլաւէ, որ և Վահրամ Վկայասէր կոչեցեալ, «Եթէ հասեալ է ժամանակ իմ, եկ յուղարկեա զիս առ Տէր». — և նա ոչ յապաղեալ՝ յուսով վերջին աւրհնութեան: Եւ պատահէ նմա փորձութիւն ինչ 'ի ճանապարհին[3] 'ի բերդն Մենծկերտոյ[4] մօտ 'ի Բալու — 'ի Յունականաց որ անդ, որք կամեցան կողոպտել զնոսա. բայց նա քաջասրտաբար արիացեալ՝ ոչ ետ ըստ կամաց իւրեանց առնուլ, այլ զոր ինքն թողացոյց[5]: Բայց զխաչն երկաթի՝ ձեռագործ առաքելոյն Թադէոսի, որ տանէին առաջի՝ ընկէց բարձողն 'ի ծովակն, որ զկնի գտեալ եղև 'ի քրիստոնէից 'ի ճաճանչ նշուլիցն գուշակեալ՝ եդին 'ի սուրբ Գրիգորոյ լեառն, ուր կայ գերեզման նորա. և կայ անդէն՝ առնելով պէսպէս սքանչելիս: Իսկ նորա գնացեալ զերկայնաձիգ ճանապարհ և հասեալ 'ի Սպար-

[1] Մեր օր. ամիրայ մը Խուլէլ անուն սկիւթացի: — [2] Մեր օր. բռնութեամբ ուժոյ սպանելով զԳնուն որ եղբայրն Մանուչէի: —— [3] Ու. օր. և պատահէ նմա փորձութիւն ինչ [illegible] 'ի ճանապարհին: — [4] Մեր օր. 'ի բերդն Մենծկերտոյ: — [5] Ու. օր. այլ զոր ինքն թողացոյց:

միր վանքն կոչեցեալ, ուր կայր աւուրս այլն Աստուծոյ առ Իշխանն մեծ Վասիլ: Եւ աւրհնեալ 'ի նմանէ և յանձնեաց [1] 'ի նա զտղայսն ձեռնասունս, որք էին նմա քաւորորդւոյ որդիք [2] Գորգորիս, զոր և անուանէր կաթողիկոս, և Վասիլ՝ եղբայր նորա, — և էին որդիք Աշխարահին: Եւ ինքն ննջեաց 'ի Տէր 'ի տրէ ամիս յաւուր շաբաթու 'ի յիսնակին անմարմնոյն և 'ի տօնի Երեմիայի մարգարէին, և թաղեցաւ 'ի սեղանին: Եւ արարին կոծ մեծ 'ի վերայ նորա Վասիլ և ամենայն ազատազունդքն Հայոց: — Եւ 'ի նմին ամի կատարեցաւ սուրբ ճգնաւորն և մարգարէն Մարկոս 'ի Կոկաց գաւառին 'ի լերան Կոնկռատա մերձ 'ի Մարաշ. որ փախեան և Հինգ ամ ոչ եկեր Հաց և ոչ որ ինչ նման է Հացի, բայց միայն խոտ. որ և ասաց իսկ, «Եթէ յաճախեսցեն չարիք մարդկան և աւերի աշխարհ յայլազգեաց, և փակին դրունք եկեղեցեաց, և զԵրուսաղէմ դարձեալ առնու Խուժքն»: Սա 'ի քսան և երկու տեղիս ջուր եհան [3]: 'Ի նոյն անապատն և ամփոփեցաւ 'ի վանքն Կաստաղոն: Յետ տօնի Աստուածածնին Հինգշաբաթ օր տօն է սմա:

'Ի Հինգ Հարիւր յիսուն և եօթն թուին առաւ Տրապօլիս. զամս մետասան տուեալ խսար 'ի վերայ նորա Թագաւորին Երուսաղեմի և կոմսին Բերդըրան [4]. այլ սակայն տուաւ քաղաքն 'ի Տանկրի՝ տէրն Անտիոքու. վասն որոյ բարկացեալ 'ի վերայ նորա Թագաւորն և Բերդըրանն՝ վերստին առին զքաղաքն և մաշե-

[1] Մէր օր. և յանձնեալ 'ի նա: — [2] Երկոսին օր. որ էին նմա քաւորորդւոյ որդիք: — [3] Մէր օր. սա երկու տեղիս ջուր եհան: — [4] Մէր օր. և կոմսն Պերդունիս. — Բո. օր. և կոմսն Բերդըրան:

ցին սրով և կողոպտեցին. և Ներդըրան ժառանգեաց զտեղին։

՚Ի հինգ հարիւր յիսուն և ինն թուին Մամուռ՝ սպարապետ Պարսից, աւերեաց զամենայն երկիրն Սուհայոյ կոտորածով և գերութեամբ և ՚ի սուգ նստոյց զամենայն քրիստոնեայս։ ՚Ի նմին ամի ՚ի ժամանակի ձմերան ՚ի մթան գիշերի անկաւ հուր ՚ի բարձանց ՚ի ծովն Վասպուրականի, և գոչեցեալ ծովուն անկաւ զցամաքաւն[1] և դարձաւ ծովն ՚ի գոյն արեան, և մեռան ձկունքն։ Նոյն ՚ի լուսանալ առաւօտին կուտեալ կային առ ցամաքաւն՝ իբրև զկայտակոյտս անտառաց։

՚Ի հինգ հարիւր վաթսուն թուին մեծ իշխանն Հայոց կորովի իմաստութեամբ իւրով էառ զքերդն Կէնդռօսկաւիս, ուր սպանին[2] զԳրադիկ Շահնշահաց։ Նոյն զի կենդանի էին սպանողք թագաւորին՝ որդիքն Մանթալիոնի երեք եղբարք, և սպան զնոսա չարչարանաւք և էառ զթուրն և զհանդերձս թագաւորին և զգանձս ամենայն գաւառին, որ կայր անդ ՚ի պահեստի վասն անառ ամրութեան դղեկին, և խաչս և պատկերս և ոսկի բազում յոյժ։ Նոյն տարեալ զդովանդակն ՚ի Վահկայն՝ գոհանայր զԱստուծոյ, և կացոյց յիւրոցն պահապանս բերդին։ Իսկ պատրիարքն Ներսէս այլ ոչ դարձաւ ՚ի յԱնի, այլ անդէն կացեալ ժամանակս ինչ, ապա եդ ՚ի մտի երթալ յԵրուսաղէմ։ Նոյն հրաւիրեալ զեպիսկոպոսս ՚ի վանորայս երկրին և զիշխանսն գալ ՚ի տօն Վարդավառին ձեռնադրել ըզԳրիգորիոս յաստիճան առաքելական, զի ինքն ան-

[1] Ոռամ. օր. ևս քուչեցեալ անկաւ զցամաքաւն։ — [2] Ցերկաւոն օր. որ սպանին զԳրադիկ։

երկրայ զատուածի եղեալ ճանապարհն վճարեցին։ Նա պատահեալ Նմա որոգայթ ինչ 'ի վանքն, որ Շուղըն կոչի՝ շինելով տուն, ուր և 'ի վեր տանելն զհեծանն՝ զերծեալ 'ի ձեռաց՝ անկաւ 'ի վերայ և հրաւիրեաց 'ի մահ[1]։ Սակայն կեցեալ զկնի զաւուրս եօթն՝ տայ Գրիգորի զաստիճանն և ինքն վճարի, ուր և թաղեցաւ անդէն։

'Ի հինգ հարիւր վաթսուն և երկու թուին՝ իբրև լուաւ Դաւիթ ոմն՝ որդի Թոռնկայ, 'ի կղզւոջն Աղթամարայ արարեալ ժողով եպիսկոպոսաց հնգից ձեռնադրեցաւ կաթողիկոս, պատճառելով եթէ Վահանիկն կաթողիկոս եկն առ Ապուսահլ՝ որդի Գագկայ, 'ի Ձորոյ վանս և անդ վախճանեցաւ. և կայր անդ սեղան պատարագի սրբոյն Գրիգորի և գաւազանն և գօտին մաշկեղէն, և հողաթափ մի սրբոյն Հռիփսիմեայ և պերոզոտն ներկեալ արեամբ և շղարշն, որ է դաստառակ՝ մնացեալ անդ 'ի ժառանգաւորաց. և 'ի ժամանակս հալածանացն առբացաւ 'ի կղզին Աղթամարայ. — և զի ասեն աթոռ է և այս թագաւորացն Արծրունեաց՝ վայել է լինել և պատրիարգութեան. սակայն ոչ եղև ընկալեալ՝ թէ և շատից եղև աշխատ ընծայիւք և աղաչանաւք՝ մանաւանդ 'ի յԱնւոյ գլխաւորացն, որոց գրէ մեծ շնորհակալութիւն աւրհնութեամբ պատրիարգին Գրիգորիսի և ամենայն վանորէիւք[2] Սեաւ լերինն և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով։ Բայց մինչ կենդանի էր տէր Բարսեղ՝ մեռաւ պարոն Վասիլն մեծ իշխանաց իշխանն Հայոց,

[1] Մեր օր. և հաւիրեաց մահու։ — [2] Մեր օր. օրհնութեամբ պատրիարգին Գրիգորիսի ամենայն վանօրէիւք։

որ Աստուծոյ յաջողելովն տիրէր բազում բերդից և գաւառաց։ Եւ հոգայ զտուն նորա պատրիարգն Բարսեղ. և նա զիշխանութիւնն 'ի տղայ Վասիլն յազգէ Կամսարական. զի տուն՝ Վասլին էր յայնժամ հաւաքարան թագաւորազանց և ազատաց Հայոց և աթոռ հայրապետաց։ 'Ի նմին ամի մեռանէր մեծ կոմսն Անտիոքու Տանկրի՝ քրիստոսասէր և իրաւադատ, և առ զիշխանութիւնն Ռոճէր քեռորդին իւր[1]։

'Ի հինգ հարիւր վաթսուն և երեք թուին 'ի մարերի երկոտասան դողաց երկիր աղետողորմ ձայնիւ, որ գայր 'ի վերայ լերանց և 'ի դարափուլ վիմաց. և օրն էր կիւրակէ և ձայնն վառ, վասն որոյ և կարծեցաւ՝ թէ օրն է կատարածի աշխարհիս։ Եւ փլան յոլով քաղաքք և մեռան քառասուն հազար, անձինք, զոր թուել կարացին։ Եւ 'ի նմին ամի մեռաւ Գէորգ վարդապետն Մեղրիկ՝ նորոգող սուրբ ուխտին Դրազարկուն, որ էր 'ի Վասպուրական գաւառէ և յԸնալուրն կոչեցեալ գեղջէ, սուրբ և սքանչելի և մեծ ճգնաւոր։ Եւ 'ի գալ տարւոյն անկաւ հուր յերկնից 'ի ճեմիայն Ամթայ, որ է Միհրայն հաւաքման մեղիմանաց՝ և այրեաց զքարաշէն յարկն. և եղանէր բոցն մինչև յերկինս։

'Ի հինգ հարիւր վաթսուն և հինգ թուին Թորոս՝ եղբայր Լևոնի, որդի Կոստանդեայ, կալեալ զորդայ Վասիլն՝ ետ 'ի Պաղտոյն 'ի կոմսն Ուռհայոյ. և նա չարչարեալ զնա՝ էհան զամենայն երկիր նորա — եղաւ աշխարհն 'ի Հայոց։ Եւ Վասիլն գնաց առ Լևոն՝

[1] Մեր օր. մեռանէր մեծ կոմսն Անտիոքայ Տանկրետոս սուրբ և իրաւադատ, և առ զիշխանութիւնն Ռոճէր քեռորդին իւր։

անէրն իւր 'ի Կիլիկէ, և անտի 'ի Կոստանդնուպօլիս, և պատուեցաւ 'ի կայսերէ ազատովքն իւրովք։ Իսկ 'ի միւս ամին գնաց Պաղտոյն 'ի Նզէպն 'ի վերայ Աշխարհին Հայոց իշխանին [1] որդւոյ Վասակայ և եղբօր (Նորին) Լիկոսին, որ էին տեառք հազար զօրականի, որ յառաջ ունէին զԹլպաշար և զՊիրն՝ առեալ 'ի Թուրքաց մեծաւ քաջութեամբ. զոր 'ի խրսար արկեալ ամ մի [2]՝ էառ 'ի նմանէ զբովանդակն. — և նա գնաց առ Թորոս։ Նոյնպէս քակեաց զմիւս իշխանն [3], որ բնակեալ էր յԱրևընդան՝ զԲագարատ, և զԿոստանդին՝ տէրն Կարկառայ՝ զոր մեռոյց 'ի կապանս 'ի բերդին Սամուսատ [4]։

'Ի հինգ հարիւր վաթսուն և եօթն թուին մեռաւ թագաւորն Երուսաղեմի Պաղտոյն և առ զթագն միւս Պաղտոյն՝ կոմսն Ուռհայոյ։ —'Ի նմին ամի մեռաւ և Տափար. և սուլտանն Պարսից, որ և մերձ 'ի մահ եղեալ՝ նա սպանանել զաւագ կինն իւր զԳոհար խաթունն, որ ունէր առաջի իւր աւելն չորս հարիւր կուսանս 'ի սպասու ինքեան՝ թագ 'ի գլուխ. և էր տէր զօրաց բազմաց՝ որոց գաղտ զենուլ նա՝ զի մի, ասէ՝ արասցէ այր զկեղծայր իւր, զի ունէր [5] զխորին աշխարհն Պարսից զԱզկան քաղաք և զԽոզնէ, որ վեց աւուրբ ճանապարհաւ անդր է քան զԱսպահան [6]։ Իսկ զաթոռն իւր յաւագ որդին տայր 'ի Մահմուտն. և

[1] Մեր օր. 'ի վերայ Աշխարհին Հայոց իշխանին։ — [2] Մեր օր. զոր խոսր արգելեալ մի ամ։ — [3] Ու. օր. գնաց առ Թորոսն նոյնպէս զմիւս իշխանն։ — [4] Մեր օր. 'ի բերդին Սամոսատայ. — Ու. օր. զոր մեռոյց 'ի բերդին Սամոսատայ։ — [5] Մեր օր. արասցէ այր զեղծայրն իմ, որ ունէր զխորին։ — [6] Մեր օր. անդր է քան զԱսպահան։

զկրսերն՝ զՄ՚ելիք, զնէր տէր Գանձակայ Հայոց։ — Եւ 'ի գալ տարւոյն մեռաւ Ալէքս, և առ զԹագն որդի իւր Փէրոժէն, որ եղև բարեմիտ առ Հայս և դաւդրէր մօր իւրում, որ մոլեալ 'ի սուտ առաջնորդաց՝ կրկին մկրտելով խաչէր կրկին զՏէրն։ Յայնմ ժամանակի զօրանայր Թագաւորն Վրաց Դաւիթ որդի Գէորգայ՝ որդւոյ Բագարատայ, որ առ զՏփխիս 'ի Պարսից և եհար զՄ՚ելիք սուլտանն Գանձակայ 'ի հարուածս սաստիկս և հինգ հարիւր այս արբահանքս բարձրացոյց 'ի փայտ մահու [1] 'ի Տփխիս քաղաքի։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ զի մեռեալ էր Մանուչէ ամիրայն Անւոյ, Աբլսուար որդի նորա տիրէր նմա — այր անարի և կնամարդի, որ կամեցաւ վաճառել զԱնի վաթսուն հազար դենարի 'ի վերայ Կարուց ամիրային. և ետ բերել նաև ծանրագին և բարձրահասակ 'ի Խլաթայ և դնել 'ի վերայ գմբեթի կաթուղիկէին՝ փոխելով զեդեալն յառաջնոցն. վասն որոյ սըրտառեալ քրիստոնէիցն կոչեն զԴաւիթ և տան 'ի ձեռըն նորա զքաղաքն Անի։ Եւ ընկեցեալ զզէնն առելի 'ի պատուական գլխոյն կաթուղիկէի, զոր ունէր զամըս վաթսուն վասն մեղաց մերոց համբերելով՝ եղին զպսակն զարդու և զԹագն Յիսուսի զպարծանքն Պօղոսի զփրկութեան մերոյ զարեգակն՝ զխաչն աստըւածընկալ։ Եւ հարեալ զժամահարն՝ առ խաչին դաւանեցին զԱստուած զխաչեալն 'ի փրկութիւն հաւատացելոց։ Իսկ Թագաւորն զԱպուլէթ և զորդին իւր զԻւանէ Թողեալ 'ի յԱնի՝ դառնայ յերկիր իւր ընդ իւր

[1] Մեր օր. հինգ հարիւր այր պահանգս բարձրացոյց 'ի փայտ։

տանելով զԱպլուտար որդւովք[1], որք անդէն մեռան և ոչ ևս դարձան։ Իսկ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց՝ առեալ զՍւխախս և զսահմանս իւր՝ — զԳագ, զՏէրունականն, զՏաւուշ, զԿայան, զԿայծոն, զԼօռէ, զՏաշիր, զՄահկանաբերդ և զբոլոր իշխանութիւն Հայոց՝ Կիւրիկէի և Աբասայ հնազանդէր, — և զլեռան Կովկասու և զԹագաւորութիւն Սոնաց, զՄրաճուլս և զԿճէթ[2] և զՀերէթ մինչև 'ի ծովըն Կասբից և զՀարանդ[3] և զՇապուրան քաղաք։ Խնամ ածեալ և անխնամ ազգին Վրաց՝ ընտրեաց մանկունս քառասուն, առաքեաց 'ի Յոյնս ուսանել զլեզուս և առնել թարգմանութիւն և բերել, զոր և արարին իսկ. — երեք 'ի նոցանէ լաւագոյնս գտեալ և մեծաւորս[4], որք և զարդարեցին զազգն անզարդ։ Ոչ էր նա երկմիտ[5] յեկեղեցւոյ և յաղօթից Հայոց, վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխն 'ի ներքոյ ձեռին մերոցն՝ խնդրելով աւրհնութիւնս։ Սա թագաւորեաց զամս երեսուն և երեք, մեռաւ 'ի Տփխիս և թաղեցաւ 'ի Գելաթ 'ի գերեզման հարց իւրոց։ Իսկ էառ զԹագն Դեմետրէ որդի իւր, որ պահեաց նոյնպէս զիշխանութիւն հօրն՝ յաւել ևս զԴմանիս և զԽունան քաղաք առեալ 'ի Պարսից։ 'Ի ժամանակին յայնմիկ որդի մի Աբլուտարայ, որ կայր 'ի Խորասան, իբրև լուաւ զանցս հօրն[6] և զեղբարցն և զմահն Դաւթի՝ գայ 'ի խնդիր հայրենի քաղաքին Անւոյ և աղերսա-

[1] Մեր օր. զԱբլասար։ — [2] Մեր օր. զՄրեխձուլս և զԿախէթ։ — [3] Մեր օր. 'ի ծովէն Կասբից և զՀարանդն։ — [4] Ցերկաւոր օր. լաւագոյնս գտեալ և մեծաւորս։ — [5] Մեր օր. ոչ էր նա երկմիտ յեկեղեցւոյ և յաղօթից։ — [6] Բ. օր. իբրև լուաւ զանցս հօրն։

նաւք խնդրէ յԱպողլենթէ և յաւագաց քաղաքին։ Եւ զի կայր քաղաքն ՚ի մեծի վտանգի ՚ի Թուրքաց, ետ ՚ի նա Ապողլենթ[1]՝ խնայելով ՚ի քրիստոնեայսն, և ես առաւել յորդւոյն իւր յԻւանէ, զի մի՛ կորիցէ ՚ի յաճախ մարտիցն. և ինքն անցեալ գնայ ՚ի տուն իւր։ Իսկ Փատլուն[2]՝ որդին Ապլսուարայ, բարւոք խնամարկեալ քաղաքին և ամենայն սահմանացն՝ արիաբար ջանացեալ՝ տարար խաղաղութիւն, առ և զԴուին և զԳանձակ և եղև անուանի։ Եւ զի կամեցաւ ձեռնարկել ՚ի սուրբ կաթուղիկէն, զկնի երից ամաց եղև ՚ի վերայ (նորա[3]) արհաւիրք ՚ի խոցոտմանէ հրակերպ արանց, որք ելանէին ՚ի բանալեաց եկեղեցւոյն՝ զոր առեալ էր ՚ի ապատաւորէն Գրիգորոյ[4] և ՚ի վաղւեն կամէր կողոպտել ՚ի զարդուէն, զոր նոր զգեցեալ էր առագաստն երկնաւոր զկնի վաթսուն ամաց սգոյն։ Յորմէ տեսլենէ հիւանդացեալ և ահաբեկեալ՝ խնդրեաց աղօթս ՚ի Գրիգորոյ՝ հանելով զնա ՚ի բանդէ կապանաց, յորում կայր. յաղագս զի ՚ի կարճ աւուրսն գնացեալ էր նա ՚ի Վիրսն և ՚ի դառնալն ՚ի Դուին՝ տեսեալ զահագին ժողովն Թուրքաց յոգնախուռն բանակին՝ աղաղակեաց և ասաց. «աւրհնեալ է Քրիստոս Աստուած որդին Աստուծոյ», զոր սովոր էր օր ըստ օրէ առնել յԱնի. քանզի աղօթակից ընկերն ասաց ընդ կատակս յականջս նորա, «եթէ ահա տեղ է աւրհնելոյ զՔրիստոս»։ Վասն որոյ կապեալ զնա և տարեալ ՚ի Փատլուն՝ եդաւ ՚ի զնդան երեկորին՝ կամեցեալ ՚ի նմին

[1] Մեր օր. ՚ի նոյն եւ Ապողլենթ. — [2] Ու. օր. եւ Փատլուն։ — [3] Մեր օր. զկնի երից ամաց եղեւ արհաւիրք ՚ի խոցոտմանէ։ — [4] Ու. օր. զոր առեալ էր ՚ի սուրբ առաքելոյն։

զիշերի սպանանել։ Նա տէր պահեաց զնա այսպէս։ Նչին և վարդապետք յայնմ ժամանակի Յովհաննէս, որ և Մարկաւագ՝ 'ի գաւառէն Փառիսոսյ 'ի քահանայական ազգէ, որոյ յիշատակ ճառագայթիցն փայլին մինչև ցարդ 'ի բանս իւր — և 'ի նմանէ աշակերտեալն՝ Նրեմիա, որ և Ընձրևիկ՝ զամս երեսուն չորակեր եղև և այնչափ հլու վարդապետին իւրոյ, որ 'ի սաստելն երբեմն [1] «Թէ լուռ լեր», զամս երիս ընդ այլ մարդ չխօսեցաւ, բայց եթէ ընդ վարժիչս իւր 'ի կարասիս. — և Սամուէլ երէց Ընեցին, որ զգաւառականն յօրինեաց Կրոնիկոնին [2]. — և նախ քան զսոսա Ընանիա, որ զԸռաքեալն համառօտեաց հրամանաւ կաթողիկոսին Պետրոսի՝ Սանահնեցին։ Իսկ սուրբ վարդապետն կացեալ 'ի ծիր մշակութեան [3] զաւուրս իւր՝ հանգեաւ 'ի հինգ հարիւր վաթսուն և ութ թուին. և զկնի ամի միոյ լծակիցն իւր Ըլաւկայ որդին Դաւիթ, որ Կանոնքն էր դիւրահաս. — և Թողքակերայ որդին [4] կոչեցեալ՝ աշակերտ նորին, և այլ արք ծրգնաւորք 'ի յԸղուանս՝ որպէս Պետրոս Խոնթկայ որդին և Յակոբ սքանչելին. որ յաւուր միում տեսեալ զսատանայ հեծեալ յուս կրօնաւորի միում [5], որ գայր 'ի խոստովանութիւն. և 'ի մօտելն մտրակեալ զնա և խոթմոթեալ անդրէն դառնայր որպէս փախստական [6]։ Նա նա հրամայեաց սպասաւորին ընթանալ զկնի և

[1] Ցերեկոյին օր. որ և Ընձրևիկ, որ զամս երեսուն չորաքեր եղև, և այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ և 'ի սաստելն երբեմն՝ լուռ լեր։ — [2] Ցերեկոյին օր. և Սամուէլ երէց աշխարհէ, որ զգաւառականն յօրինեաց քննիչականն անեղծն։ — [3] Ու. օր կեցեալ 'ի ծիր մշակութեան։ — [4] Մեր օր. և Թողքակերայ որդին։ — [5] Ու. օր. հեծեալ յուս կրօնաւորի փառս։ — [6] Ու. օր. և խոթմոթեալ անդրէն որպէս փախստական։

բերել առ նա բռնութեամբ [1]: Եւ հարցեալ զնա՝ ասաց. «առ քեզ զղջացեալ գամ յապաշխարութիւն [2], և յիշելով զսովորական գործն [3]՝ դարձայ 'ի քէն»: Եւ սուրբն պատմեաց նմա զոր ետես. և նորա լուեալ անկաւ յոտս նորա [4] և խոստովանեալ՝ առ զլուծն ապաշխարութեան: Էին և կանայք թագաւորազունք կրօնաւորեալք [5] կուսութեամբ 'ի Պօրայրն — Խորասու և Մարիամ, առ որս գրէր [6] սուրբ վարդապետն Սարկաւագ զգուշական խրատս:

'Ի հինգ հարիւր եօթանասուն և ինն թուին Խաւրթի՝ որդի Կզին, գայ 'ի Դուին և տիրէ՝ վերաւորեալ 'ի պատերազմին զՓառլուն [7], զոր նենգիչք ոմանք գաղտ խեղդեցին՝ պատճառելով զվէրն որ չէր մահու [8]: Եւ առ զամիրութիւնն կրտսեր եղբայրն Փառլնոյ՝ Խուչէրն. և զկնի սակաւու աւագն Մահմուտ [9]: Եւ անկաւ դարձեալ 'ի թշուառութիւն երկիրն Անւոյ: — 'Ի նոյն ժամանակաց ոչ հեռագոյնս ինչ՝ կամեցաւ Իւանէ, որդին Ապուլէթի, սպանանել զԴեմետրէ և զեղբայր իւր՝ զԴորգի. և նորին հայրն Ապուլէթ փետելով զայլսն [10] առաջի նորա՝ արգել զնա: Եւ էին երկոքեանն արգելեալք 'ի բերդն Գմանեաց պատճառանաւք ինչ խարէութեամբ 'ի մէջ եղբարց, զոր ապա իմացեալ Դեմետրի՝ ասաց Իւանէ. «կալար զիս՝ մամ»: Եւ նա զղջացեալ ասաց. «ոչ՝ արքայ, այլ ե-

[1] Ռում. օր. և բերելով: — [2] Ռ. օր. առ քեզ զղջացեալ յապաշխարութիւն: — [3] Մեր օր. և յիշեալ զամենայն գործն: — [4] Ռ. օր. և լուեալ անձինն յայս նորա: — [5] Ռ. օր. Էին և կանայք թագաւորազունք կրօնաւորք խաստաւնեամբ: — [6] Մեր օր. առ որ գրեր: — [7] Ռ. օր. զփառլունն: — [8] Ռ. օր. զոր չէր մահու: — [9] Ռ. օր. և զկնի սակաւու Մահմուտն: — [10] Ռ. օր. Ապուլէթ փետրելով զայլսն:

տու 'ի ձեռս քո զեղբայր քո, որ խնդրէ զԹագաւորութիւնդ»․ զոր ըմբռնեալ խաւարեցուցանէ և Թողու։ — Յորում ժամանակի լցաւ դաշտն Գաղայ[1] անթիւ և անհամար հեծելովք՝ յամենայն ազգաց յանօրինաց հաւաքեալ, որք կամեցան այրել զտուրբ խաչն, որ յանուն զօրավարին Սարգսի։ Նա 'ի բարկութենէ Տեառն խելացնորեալք[2] և դիւացեալք՝ կոտորէին ըզմիմեանս[3]․ զոր լուեալ Գնմէտրէ՝ երթեալ ժառանգէ անաշխատ զկարասիս նոցա։ — 'Ի սոյն աւուրս պատանի մի յեղբայրցն Փատլոյ, լուեալ եթէ հան նորա՝ Կատայ, 'ի տանէ Բագրատունի՝ քրիստոնեայ էր յազգէ Թագաւորացն, խաղաց հոգի իւր 'ի սէրն Քրիստոսի․ և երթեալ 'ի լեառն սրբոյն Գրիգորի[4]՝ մկրտեալ կրօնաւորեցաւ անդ զամս հնգետասան մեծ ճգնութեամբ և հսկմամբ գիշերաց, մինչ զի տեսանէին լոյս անճառելի փայլատակեալ[5] բորբոքեալ ընդ երդս խըցկանն[6]։ Նա զկնի գնաց 'ի Գորաղարկն և փոխեցաւ 'ի Քրիստոս։

'Ի հինգ հարիւր ութսուն Թուին Իւանէ՝ որդի Ապուլէթի, ապստամբեաց 'ի Գառնի, և հարան զօրք նորա 'ի Խուրթէ․ զորոց կտրեաց զգլուխս՝ եփեաց[7] 'ի Թան, և զգանգսն դնէր 'ի բարձրութեան մնիրայն 'ի շարս քարորմոցն։ Նա 'ի գալ միւս ամին սպանաւ քաջըն Իւանէ նենգիւ 'ի Գնմէտրէէ․ և որդի նորա՝ Փիրքաշ, գնացեալ յամիրապետն Շահի արմէն և առեալ

[1] Մեր օր. յորում ժամանակի լցաւ դաշտն անթիւ։ — [2] Ու. օր. և 'ի բարկութենէ 'ի խելացն ցնորեալք և դիւացեալք։ — [3] Ու. օր. կոտորեցին զմիմեանս։ — [4] Ու. օր. 'ի լեառն սրբոյն Գրիգորի։ — [5] Ու. օր. մինչ զի տեսանէին լոյս անճառելի բորբոքեալ։ — [6] Մեր օր. ընդ երդս խցկանն։ — [7] Մեր օր. զոր կտրեալ զգլխոյն եփեաց 'ի Թան։

'ի նմանէ զԱրշարունիս[1]՝ աւերէր զտունն Վիրաց մե-
ծաւ քաջութեամբ։

'Ի հինգ հարիւր ութսուն և ութ թուին կործա-
նեցաւ Գանձակ 'ի շարժմանէ։ Յօթն ամաւ նախ քան
զայս Շահի արմէն տիրեաց երկրին Խլաթայ և այլ
բազում քաղաքաց, որ էր թոռն Սուքմանայ։ Նա ըս-
պան սա զհանիկն իւր, որ սպանեալ էր զորդիսն, և
կալաւ զիշխանութիւնն։ Նա իբրև զարգացաւ սա՝
կամեցան և զսա հեղձուցանել. որ և զերծեալ Աստու-
ծոյ աջողելովն և տիրեալ երկոտասան քաղաքաց՝ կո-
չեցաւ թագաւոր Հայոց, որ էր Շահի արմէն՝ ըստ
իւրեանց լեզուին. որ և փեսայացոյց ինքեան զՍալ-
տուխ և խորհեցաւ նովաւ բարի առնել աշխարհի։
Յորում ժամանակի էր և Տղլոկուզ աթապէկ[2]. նովին
բարի կամաւք յԱստուծոյ եղեալ երկքին սոքա քրիս-
տոսասէրք և աշխարհաշէնք։ Նոյն Շահի արմէն գնա-
ցեալ 'ի Սասունս՝ յօրանայր 'ի գեղի միում։ Նա լը-
ւեալ Վիգենայ տեառն երկրին՝ երթեալ 'ի գիշերի մի-
ում պատէր զտունն, յորում կայր. և յասելն ումե-
մըն ընդ կատակս[3]. — «այ Վիգէն՝ ո՞ւր ես». եա պա-
տասխանի ընդ երդն և ասէ. «կամ աւասիկ շնորհա-
քըն Աստուծոյ». և կալեալ տանի զնա յամուրն իւր
և զկնի աւուրց արձակէ ուխտիւ և երդմամբ սիրոյ։
Յորում աւուրս եկ 'ի վերայ նորա զօրավարն Պարսից
Տղլոկուզ, և հարեալ գնաց ամօթով. սա էառ զԱմուկ
'ի Հետենկայ և Սասունք 'ի Վիգենայ ամենայն վա-
նորէիւքն պահէր 'ի խոր խաղաղութեան զամս վաթ-

[1] Մեր օր. և տեսեալ 'ի նմանէ զԱշարունիս։ — [2] Ու. օր. յորում ժամա-
նակի էր եղեալ Ցխտող Աբաղայեն։ — [3] Մեր օր. և յասելն ումեմն 'ի կատակս։

սուն։ Յաւուրս սորա եղև սով սաստիկ 'ի Միջա-գետս. և քահանայ մի աւետարան ունէր՝ ոսյ ագ-դաւ, բարձեալ ցորեան իշոց՝ տանէր աղալ 'ի ջաղա-ցսն. և 'ի տեսլենէ տառապելոցն աղէխարշեալ բաշ-խեաց զամենայն աղքատաց և զէշսն վաճառեալ՝ նոյն-պէս արար, և այլ ոչ դարձաւ[1] 'ի տուն իւր. այլ ըղ-ձեցեալ այծեայս՝ շրջէր քարոզութեամբ ընդ քաղա-քս և ընդ գեղս քրիստոսաբար, զի ունէր բանս հան-ճարեղս։ Եւ ետ նմա (աստուած) շնորհս նշանաց. և զղջացեալք 'ի բանս նորա՝ դառնային բազումք 'ի չա-րեաց. և խնամ ածէր որբոց և այրեաց՝ լնլով զկարիս նոցա իւրով միջնորդութեամբ 'ի կարողացն։ Եւ ել համբաւ զնմանէ, և գային յարենային 'ի նա յոլովու-թիւնք ժողովրդոց. և եկն մինչ 'ի Մանծկերտ։ Եւ եղ ընդ՚առաջ նորա Շահի արմէնն՝ մեծաւ հանդիսիւ, և խնդրեաց 'ի նմանէ աղօթս, և եմոյծ պատուով 'ի քաղաքն։ Եւ զի յանդիմանէր զպոռնիկ քահանայ-սըն՝ քսեցին զնա առ Շահն, թէ լրտես է հռոմ թագաւորին՝ և ետուն քարկոծել զնա. յորոյ վերայ տեսին լոյս երկնային զերիս տիւս և զերիս գիշերս. զոր տեսեալ Շահն՝ աւաղեաց զմահ սրբոյն և ետ հրաման պատուել զոսկերս նորա։

'Ի հինգ հարիւր իննսուն թուին եկն Պերփերու-ժանն և առ զԱխլիկիա և տարաւ տամբ իւրով ըզ-Լևոն եղբայր Թորոսոյ և զպատկեր Տիրամօրն 'ի Կոս-տանդնուպօլիս. և անդ մեռաւ Լևոն որդին Կոստան-դեայ[2]։ Եւ զկնի երկու ամաց մեռաւ Փերուժէն և

[1] Ուռմ. օր. և ոչ դարձաւ 'ի տուն իւր։ — [2] Ու. օր. և անդ մեռաւ որդին Կոստանդեայ։

առ զԹագն Ալիռ Մանիլ՝ որդի նորա․ և 'ի նոյն ամի
մեռաւ Թագաւորն Երուսաղեմի — երկոքեան սոքա
'ի յորսի որոգայթեցան՝ վասն խողէ Թագաւորն Յու֊
նաց և վասն նապաստակի՝ Թագաւորն Երուսաղեմի։
'Ի հինգ հարիւր ինսուն և չորս Թուին Զանկի
ամիրայն էառ զՄուռհայ․ և զկնի երկու ամաց էառ
զնա Գօսլինն, որ էր տէր նորա․ և զկնի եօԹանա֊
սուն աւուր սպանաւ 'ի Թուրքաց, որք եկին վերըս֊
տին առին զքաղաքն։ Եւ մեռաւ քաջն և յոյժ հա֊
յասէրն, որում արար ողբս Գէորգ վարդապետ, որ
հայր էր խոստովանուԹեան նորա։ Իսկ 'ի վերանալ
Թուխս Հայոց 'ի վեց հարիւր ամի եկին որդիքն Լեւո֊
նի՝ Թորոս և Ստեփաննէ, և մեծաւ իմաստուԹեամբ
և քաջուԹեամբ տիրեցին հայրենեաց իւրեանց Կիլի֊
կիոյ՝ հարեալ զԱնդրոնիկոս զօրագլուխն Յունաց, որ
կայր անդ երկոտասան հազարաւ․ զոր լուեալ Մա֊
նիլն՝ 'ի վարձու կալաւ[1] միանգամ և երկիցս զՄա֊
սուտ սուլտանն առնուլ գքէն վրիժուց նորա․ որ և
յերկրորդումն սուլտանին անկաւ ահ Տեառն 'ի վե֊
րայ նոցա և փախեան առ հասարակ՝ զմիմեանս սատա֊
կելով, անդէն Թողեալ զընաւ արարս իւրեանց․ քան֊
զի Եղաղուբ՝ զօրագլուխ նոցա, կամեցաւ գնալ երեք
հազարաւ յԱնաւարզայ 'ի կողմանս Անտաքու․ յորոց
վերայ անկեալ Ստեփանէ՝ եղբայր Թորոսին, սատա֊
կեաց զամենեսին։ Եւ 'ի լսել զձայն գուժին դողա֊
յին առ հասարակ, և ոչ մնաց շունչ զօրուԹեան 'ի
նոսա։ Եւ հաղիւ զերծաւ սուլտանն՝ անկեալ 'ի յոր֊

[1] Մեր օր. զոր լուեալ Մանիլէն 'ի վարձու կալաւ։

Ջրս իւր սատակի, տալով զպատիւն Խլիճ ասլանայ՝ որդւոյ իւրոյ:

'Ի վեց հարիւր չորս Թուին — 'ի նմին ժամանակի առին Փռանգք զԱսկալոն քաղաք: 'Ի սոյն ժամանակս եկն Մանիլն 'ի Կիլիկիա և սիրով նուաճեաց զԹորոս, և առեալ զնա և զամենայն զօրս Փռանգաց՝ գնաց 'ի վերայ Հալպայ: Եւ լուեալ համբաւ յաղթողին՝ դարձաւ 'ի տուն. և ծայրաքաղ արարին 'ի նոցանէ Թուրքն երկոտասան հազարս 'ի ճանապարհին: Իսկ Թագաւորն Վրաց Դեմետրէ կալեալ զԹագաւորութիւնն ամս երեսուն և երկու՝ վճարի. և առնու ըզԹագն Դաւիթ՝ որդի նորա, կորովամիտ և բարեսէր. և հանեալ 'ի բանտէ զԹիլքաշն զհօրն կապեալն, դնէ զօրագլուխ և զկնի ամսոյ միոյ մեռանի[1]. — ոմանք ասեն 'ի դաւելոյ Որբելեանց[2] 'ի Սմբատէ և յԻւանէէ վասն 'ի տեղի նոցա դնելոյ զԹիլքաշն՝ բանս եդեալ ընդ Գէորգայ եղբօր Դաւթի զնոսա դնել զօրավար: Եւ առ զԹագն Գէորգի 'ի Թուին վեց հարիւր և հինգ:
— Յաւուրս յայսոսիկ յայտնեցան 'ի Շահապիվանս մարմինք սպանողացն Գնելոյ անփուտ հանդերձիւք և արիւնաշաղախ մարմնով՝ որպէս և սպանան, ըստ անիծից սրբոյն Ներսիսի:

'Ի վեց հարիւր տասն Թուին էառ Գէորգի՝ Վրաց Թագաւորն, զԱնի 'ի Փադլուն ամիրայէն, որ փոխեաց զՇատատ եղբայր իւր: Եւ զկնի յիսուն աւուր եկն Շահի արմէնն բազում հրոսակօք 'ի վերայ հարուածեալ և ախտացեալ քաղաքին 'ի Մոնացն. զոր լուեալ

[1] Մեր օր. և զկնի ամսոյ միոյ մեռանի: — [2] Մեր օր. ոմանք ասեն 'ի դաւել Որբելեանց 'ի Սմբատէ և յԻւանէ վասն 'ի տեղի նոցա դնելոյ զԹիլքաշն:

Գէորգի՝ անդրէն դարձաւ և եհար զնա կոտորմամբ սրոյ, զորոյ զԹիւն ոչ ոք կարաց գիտել. բայց ձերբակալքն էին քառասուն և մի հազար[1]: Եւ Թողոյր 'ի յՈՆիի զՍադունն իշխան, յորոյ վերայ կարծիք ապըստամբութեան եղեն 'ի սրտացաւութեամբ ամրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ Թագաւորն՝ ընկենու զնա 'ի պատուոյ. և նա սրտառեալ գընաց հատուած առ Եղտկուզն, զոր խաբէութեամբ կալեալ երիսԹամն Շաքէոյ՝ բերէ անդրէն առ արքայ[2] և մեռանի. և զիշխանն Զաքարեան՝ զՍարգիս, դնէ 'ի տեղի նորա յՈՆիի: Իսկ Եղտկուզն զայրացեալ՝ չէր ինչ ձեռնհաս առնել, զի չորս հազար Պարսիկ կոբեաւ ընդ Սադունին: Իսկ Թագաւորն Վրաց կուտէ առ ինքն զկովկասային զօրսն և գայ առնու 'ի Դըւինն՝ խստագոյն խայտառակելով զնոսա 'ի սուր և 'ի հուր, բաց 'ի քրիստոնէից որ անդ. և զգագաթունսն Թանեփայս առեալ 'ի Միհրայէ[3]՝ զարդարէ ոսկեԹել հանդերձիւք, և եդեալ 'ի դագաղս՝ բառնայր 'ի յուս մուղրեաց[4] և բոկ ոտիւք տայ տանել մինչև ցըՏփխիս նախագահ քաղաքն իւր՝՝ի վեց հարիւր երկոտասան Թուին. զոր լուեալ Եղտկուզն գայ յայրեցեալն և 'ի քանդեալն Դուին և խոցոտեալ սրտիւ և մռմռեալ իբրև զգազան կատաղի գայ 'ի Մրէն[5] և այրէ անդ զամրոցն. ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ոգիք իբրև չորս հազար: Եւ դառնայ 'ի դաշտ Գագայ և այրել հրամայէ զխաչն հոչակաւոր. վասն որոյ 'ի

[1] Մեր օր. տասն և մի հազար. — [2] Մեր օր. բերէ անդրէն առ արքայ: —
[3] Մեր օր. և զգագաթնանն ջանեփայս առեալ 'ի Միհրայէն: — [4] Մեր օր.
'ի յուս մուղրեաց: — [5] Մեր օր. գայ յԵմրեան:

թարկութենէն Տեառն պատժեալ լինէին 'ի տուէ և 'ի գիշերի 'ի Թիւնաբեր[1] օձից, և զկնի 'ի Թագաւորէն Վրաց ահաբեկեալ[2] փախչի, թողլով զկարասին և զգերիսն անդէն. սակայն գրգռէ զԾովլի սուլտանն՝ զորդի Մահմուտի զԱսլանն, ևածէ յԱնի և զամս չորս պահէ 'ի տառապանս անվար և անհանգիստ՝ մինչև Թագաւորն Վրաց Գէորգի՝ ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն՝ զորդի Մահմուտի զԱսլան, և տայ 'ի նա զԱնի. զի անձամբ չէր ձեռնհաս պահել 'ի բազմութենէ անօրինացն:— Յայնմ ժամանակի աթոռն Հայոց շրջեալ 'ի բազում վայրս 'ի Կարմիր վանքն և 'ի Շուղրն և 'ի Ծովքն՝ գնացեալ դադարէ 'ի Հռոմկլայն կոչեցեալ դղեակն՝ վասն Հռոմաբեղայի ասեն անդ բնակելոյ, յորմէ առին Տաճիկք, և 'ի նոցանէ Վասիլ իշխանն Հայոց, և 'ի նմանէ առին Փռանկք: Եւ 'ի յորսի պատահեալ իշխանն՝ որոգայթիւ մատնի 'ի ձեռս Տաճկաց[3], զոր տարեալ 'ի Հալապ՝ մեռաւ անդէն: Եւ կին նորա, որ 'ի Հռոմկլայն՝ առաքէ 'ի Ծովքն և բերեալ զպատրիարգն՝ տայ 'ի ձեռս նորա, ասելով. «Եթէ կայ որդի իմ յայնկոյս ծովուն առ ծնողսն իմ, երթամ՝ եթէ լինի կենդանի, առաքեցից առ քեզ և տուր 'ի նա[4]՝ որպէս ճշմարիտ աւանդապահ, և եթէ ոչ՝ լաւ քեզ քան օտարաց:»— Եւ գնացեալ՝ առաքէ զորդին. ուրում տուեալ ինչս յոլով[5]՝ դարձուցին անդրէն. զի և ինքն ոչ վստահանայր միայն բնակիլ 'ի մէջ այլազգեաց,

[1] Մեր օր. 'ի Թունաբեր օձից: — [2] Մեր օր. և զկնի Թագաւորին Վրաց ահաբեկեալ փախչի: — [3] Մեր օր. որոգայթիւ մատնել 'ի ձեռս Տաճկաց: — [4] Ու. օր. և տուր նմա: — [5] Ու. օր. յորում տուեալ ինչս յոլով:

քանզի տիրեալ էր Թուրքն բոլոր շրջակայ գաւառացըն: Նոյն սեպհականեցաւ աթոռ Հայոց, զոր բարեպաշտ կինն Ջօսլէն իշխանին[1] շարժեալ 'ի հոգւոյ՝ ետ յերկոսեան հարազատն — 'ի տէր Գրիգոր և 'ի Ներսէս: — 'Ի վեց հարիւր եօթն և տասն թուին կատարեալ տէր Գրիգոր՝ յաջորդէ[2] զաթոռն տէր Ներսէս: Նա սոսա առաքեաց Մանիլն վասն հաւատոյ դաւանութեան. և ետուն գրով յայտ կորովի և հաճելի բնաւից դաւանութիւնս, զոր ունիմք. և կամեցան միաբանութիւն առնել ազգացս՝ և մնաց գործն անկատար, որպէս ցուցանեն ընդարձակ մատենագիրք: 'Ի նմին ամի ահագին շարժ եղև և կործանեցաւ Եզնընկայն 'ի գաւառին Եկեղեաց[3]: 'Ի սոյն ժամանակի առան և մնացեալ դղեակք Կապանին յայլազգիս՝ — Գորհամ և Գեզի և Կաքաւաբերդ վասն սաստկացեալ մեղաց մերոց: Յորում ժամանակի և մխիթարութիւն քրիստոնէից գեղեցիկ պտուղն հասուն և քաղցրաճաշակ՝ պատանին Յովսէփ, վկայեաց Քրիստոսի աստուածութեան և վշտակտուտ չարչարանաւք և աշխարհալուր մահուամբ կատարեցաւ 'ի Քրիստոս յամսեանն ահեկի 'ի քսան՝ և թաղեցաւ 'ի Հաւութառ. որ էր Պարսիկ ազգաւ 'ի գեղջէն, որ Նորաշէն կոչի 'ի սահմանս Գունայ: 'Ի սոյն աւուրս և Գէորգ Աչիկայ 'ի գնալն իւր 'ի Հռոմ յարոյց 'ի մեռելոց զառաջնորդն իւր զԳրիգոր, զոր սպանին յելուզակք 'ի գաւառին Ոնկռաց[4]. — որ և մեղադրէր

[1] Ռում. օր. Եղբօրորդի կնոջն Ջօսլինին իշխանին: — [2] Ռ. օր. նստարեալ տէր Գրիգորոյ աջորդէ զաթոռն: — [3] Մեր օր. խորտակեցաւ Եղնիկոյն 'ի գաւառին Եկեղեաց: — [4] Մեր օր. 'ի գաւառին Ոանկառաղայ:

նմա, «Ո՞վ թէ ընդէ՞ր յանճառելի բարութեանց, յորում կայի՝ դարձուցեր զիս վերստին 'ի թշուառութիւն կենցաղոյս[1] : Եղև նշան 'ի Հռոմայեցին 'ի Հրաշակաւոր սուրբ նշանէն[2] . — ածեալ մանուկ մի կոյր 'ի ծնէ և եդեալ 'ի վերայ աչաց տեղւոյն զղէնն աստուածամուխ՝ նոյնժամայն պատառեալ աչացն տեղւոյ և հոսեալ բազում արիւն՝ կազմեցան աչքն անզաւլատ ամենեքին՝ 'ի փառս Աստուծոյ[3] : Եւ էր 'ի յՈւձնայ 'ի Հօր վանիցն Պետրոս անուն՝ 'ի լինել գործոյն[4] :

'Ի վեց հարիւր քսան և մի Թուին կատարեաց պատրիարգն Եղիսէս զկարգս իւր՝ եօթն ամ. պաշտեալ զպատիւն եօթն եպիսկոպոս հրի՝ այք անուանիք և լուսք — վարդապետք և փիլիսոփայք[5] : Եւ առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնատուութեամբ նորին. և միւս եղբօրորդին Գրիգորիս, որ և Ապիրատն կոչէր՝ չոգաւ 'ի Լամբրոն և խնամէր զՏարսոնի վիճակն :

'Ի վեց հարիւր քսան և երեք Թուին[6] էառ Գէորգ զԱնի երկրորդ անգամ՝ 'ի սադրելոյ Իւանէի ամիր սպասալարի, զի ինքն նստցի 'ի նմա և արասցէ զերէզդարձ քրիստոնէից. և զՇահնշահ ամիրայն տարաւ ընդ իւր աղքայն և այլ ոչ ևս դարձաւ անդրէն : Եւ լուեալ զայս ամենայն Թուրքաստանեաց[7] հաւա-

[1] Ռուս. օր. յանճառելի բարութեանց դարձուցեր զիս 'ի թշուառութեան կենցաղոյս : — [2] Մեր օր. եղև 'ի Հռոմայեցին 'ի հրաշախաւոր սուրբ նշանէն : — [3] Ռ. օր. և հեղաւ արեան բազում՝ կազմեցան աչքն անխաւլատ ամենեքին : — [4] Ցերկոսին օր. և էր 'ի յուձնեայ և հօր վանիցն Պետրոս էր անունն 'ի լինել գործոյն : — [5] Ցերկոսին օր. պատրաստեալ զպատրիան և եօթն եպիսկոպոս հրէ՝ որք անուանէք և լուսք, որ վարդապետ և փիլիսոփայ : — [6] Ռ. օր. 'ի վեց հարիւր քսան և վեց Թուին : — [7] Մեր օր. ամենայն Թուրքաստանեաց :

քեցան 'ի մի, զՇըլփասլանն կոչեցեալ սուլտան ընդ ին-քեանս առեալ՝ գան 'ի յԱնի և աւերեն զտուն Շ իրակայ: Իսկ Իւանէ կամեցաւ տալ զքաղաքն 'ի Թուրքըն[1] և ոչ աջողեցաւ գործն, զի իմացաւ քաղաքն և զգուշացան. և գնաց սուլտանն և աթապէկն իւր սրտաբեկեալ՝ և մեռան երկոքին 'ի միում ամի[2]: 'Ի նմին ժամանակի եւ 'ի բանտէն Սարուց մեծ իշխանն Շապիրատ և եկն յԱնի. — սա եղբայր էր եպիսկոպոսի քաղաքին՝ տեառն Բարսղի, որ աղաչեաց զԹագաւորն Վրաց և ետ փոխան նմա ամիրայ. և առ զնա և եօթն և տասն հազար դահեկանս: Յայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւն իւր. — զեղբօրորդի Թագաւորին զԳւէմնէն[3] և զյոլովս յազատացն յին-քըն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զարքայն մինչ կայր 'ի Սախատա[4] յանհոգս. զոր իմացեալ յառնէ միջէ՝ փախեաւ 'ի Տփխիս, զի սակաւամարդ էր: Եւ անդ Շատուծոյ խնամաւքն հաւաքեցան առ նա բազումք՝ Թողլով զչար խորհուրդն: Եւ յորժամ ուժացաւ կողմն արքային[5] և կամէր գնալ 'ի վերայ ապստամբացն որք 'ի Սախաթէ փախեան յամուրս իւրեանց, և ապա մտին 'ի Լօռէ՝ բաց 'ի Լիպարտէն, որ չոգաւ 'ի Պարսից կողմն երկու որդւովք: Եւ էառ Թագաւորն զամենայն զանձս Օրպէլեանց, և ամենեքին դիմեցին և անկան յոտս Թագաւորին — եղբօրորդին և ընդ նմա այլքն՝ մինչև ինքն իսկ Իւանէ, զո-

[1] Ոսում. օր. չկամեցաւ տալ պէտղութն և ոչ աջողեցաւ: — [2] Ո. օր. մեռան երկոքեանն 'ի միում ամի: — [3] Մեր օր. զԴրէնձէն: — [4] Ո. օր. մինչ կայր 'ի Սահարայ յանհոգս: — [5] Մեր օր. և յորժամ յաժողեցաւ կողմն արքային:

րոյ փաչուն կուրացոյց, և զկրտսեր որդի նորա [1] զԲաղ-թար և զԽնէն՝ զորդի Նիպարտի, սպան և ոչինչ և-ղեն չար խորհուրդքն ամենայն։

՚Ի թուին վեց հարիւր քսան և վեց այլ զՄլփա-լան սուլտանն փոխեաց Տուղրիլ [2], և զՆշլտկուզ՝ Փալ-հաւանն, որ տիրեաց խորին աշխարհին և Խզլա-լան [3] վերին աշխարհիս, որք էին որդիք նորա։ ՚Ի նոյն աւուրս առաւ Ոռաւաքար ՚ի զօրաց հրամանաւ Խա-րաչայ ամիրային Կէչլորոյ [4], որ վաճառեաց զնոսա Խզլանեայ ընդ բազում ոսկւոյ։ Եւ նա բնակեցոյց անդ արս մահապարտս, որք ոչ դադարէին յարեանհեղու-թենէ ՚ի տուէ և ՚ի գիշերի՝ մինչև զքրիստոնեայս ՚ի խաւարային անդունդս ընկղմեալ՝ սովով և դարշա-հոտով ՚ի յառաջնոց մեռելոց սպանանէին [5], որ և եօթն կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վերօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակաց՝ փողոտէին. որոց պատիւ տօնին [6] խառնեցի ՚ի տօն մեր [7] Լու-սաւորչին Գրիգորի։

՚Ի վեց հարիւր քսան և եօթն թուին թագաւորն Երուսաղեմի երեք հարիւր ձիաւորով եհար զՍալա-հադին՝ ՚ի դրանն Երուսաղեմի զօրութեամբ սուրբ խա-չին. որ եկեալ էր առնուլ զԵրուսաղէմ հարիւր քա-ռասուն հազարաւ՝ բարձեալ ընդ ինքեան ջուր վաթ-սուն հազար ուղտօք, որ միշտ կրէին ՚ի գետոց և յաղ-բերաց։ Յառաջ Ասլոթ էր անուն նորա՝ որդի Եյու-

[1] Մեր օր. և զկրտսեր եղբօրորդի նորա զԲաղթար։ — [2] Մեր օր. այլ զԱլփասլան փոխեաց Տուղրիլ։ — [3] և Խզլըզլան վերին աշխարհի։ — [4] Մեր օր. ամիրային Կեչլոյ։ — [5] Մեր օր. սովով և դարշահոտ յառաջնոց մեռելոց սպանանէին։ — [6] Ո. օր. որ պատիւ տօնին։ — [7] Մեր օր. խառնեցի տօն մեր լուսաւորչին Գրիգորի։

թի, առն տառապելոյ Դուինացւոյ[1]. որ և 'ի մեծանալըն կոչեցաւ Ալահաղին, որ է խաղաղութեան հանգիստ:

'Ի վեց հարիւր քսան և ինն թուին[2] Գէորգի եբարձ զգող և զաւազակ յերկրէ. զի ամենայն զօրացն 'ի միասին եղելոյ օրինադրեաց կախել զփայտէ վասն փոքու և մեծի իրաց անողորմ զամենայն մարդ[3], և յոլովք 'ի պատուաւորաց կախեցան: Եւ զգտեալ ինչըս տանէին կախել զփայտէ պատուհասից. և կախեցին մինչև յանաստուն և ցշուն և ցմուկն, և անկաւ ահ 'ի վերայ ամենեցուն. և եղև մեծ խաղաղութիւն: Յայնըմ ժամանակի մեռանէր Մանիլն և կին նորա, զի դուստր էր բռնծին Ընտաքու և կամեցաւ Փռանգ այր առնել և սպանանել զորդին իւր զԱյէքս, որում տըւին զԹագն. և փախեաւ տղայն յեկեղեցին: Եւ ազդ առնեն Ընդրոնիկեայ ազգականին Մանիլի, —եւ դայ սպանանէ զԱեաստոսն, որ կամէր առնուլ զԹագուհին, և զազգն Փռանգաց որ էին 'ի քաղաքին կոտորէ. և որք 'ի նաւ մտեալ փախչէին՝ նփատ ձգեալ 'ի նաւսըն, այրեաց երեսուն հազար այր[4], սպան և զտղայն՝ և առ զԹագն: Եւ առաքեաց կոչել զայր մի Թագաւորազն՝ Փիսիկ անուն, զի և զնա սպանցէ. և նորա զօրացեալ սպան զկոչողն և մեծաձայն գոչմամբ երթայ 'ի սուրբն Սոփի. և շարժեցաւ քաղաքն և չարամահ սատակէ զԸնդրոնիկոս, և զերկու որդիս նորա անմեղ մանկունս ծովամոյն արարին:

'Ի վեց հարիւր երեսուն և մի թուին Խաչարայն,

[1] Մեր օր. առն տառապելոյ Դւինայ: — [2] Մեր օր. 'ի վեց հարիւր վաթսուն և ինն թուին: — [3] Մեր օր. անողորմ զամենայն երկու հարիւր մարդ և յոլովք 'ի պատուաւորացն: — [4] Մեր օր. երեսուն հազար արանց:

որ էառ զՆաւասարդ և խորտակեաց կռանով զխաչն՝ Գորոզոյ խաչ կոչեցեալ, անկեալ 'ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի զտուն իւր, զԿեչրոր և զՍուխտիս և զամենայն ձորն Նորասխայ[1], և երթայ կնաւ և որդւովք 'ի Դուին: — Նա տեսանէր այր մի ահաւոր, որ ասէր ցնա. «Ես եմ խաչն Գորոզոյ, զոր կոտրեցեր[2]. և ահա սպանանեմ զքեզ ձեռօք սիրելոյն քո Շահի արմէնին»: — և պատմեաց զտեսիլն: Նա փախուն գնաց՝ բռնութեամբ զերծեալ, թէպէտ արգելուին զնա վասն երկիւղի տեսլեանն՝ մինչև փակեցին զդուրսն: Այլ նա ընդ պարիսպն իջեալ՝ երկուջնիփով չոգաւ 'ի Մանծկերտ և եկաց առաջի շահին. որ և նոյն ժամայն յարուցեալ՝ եհար զդանակն ընդ սիրտն և սատակեաց զնա: — 'Ի նոյն ամի Սարգիս ոմն խաչենեցի կայր 'ի Գանձակ և առնոյր խարաճ. և ոմն Պարսիկ 'ի յաւագ ուրբաթուն խաչեաց զնա ընդ պարիսպն ասելով. «Խաչակից լեր Քրիստոսին քում»[3]. զոր լուեալ իշխանքն նորա տարան առ ինքեանս ըզՊարսիկն և չարամահ սպանին: 'Ի սոյն աւուրս և Յորդանան ոմն 'ի տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսիւ 'ի Կարնոյ քաղաք: Նա եղան նշխարք նորա ընդ Յովսեփայ և ընդ Սահակայ ազգականաց իւրոց:

'Ի վեց հարիւր երեսուն և երեք թուին մեռաւ Գէորգի՝ Վրաց արքայ, և ոչ գոյր նորա որդի. և Դէմնայն յաչաց և յերանաց յապաւած էր՝ որդին Դաւթի[4]: Նա առնու զթագն դուստր նորա՝ Թամարն,

[1] Ուռմ. օր. և զամենայն տանն Նորասխայ: — [2] Մեր օր. զոր կոտրեցեր: — [3] Ու. օր. խաչակից լեր ընդ Քրիստոսին քում: — [4] Մեր օր. յապաւածէր զորդին Դաւթի:

բերեալ նմա այր որդին Սագոց ազգային՝ զՍուլան, որ առ զԴուին քաղաք: Եւ 'ի գալ միւս ամին մեռաւ Շահի արմէնն անորդի. և աւեր և սուր և գերութիւն բազմացաւ աշխարհաց նորա 'ի շրջակայ ազգացն: Եւ զի թոռն՝ Միքենայ Շահնշահ, քեռորդի տեառն Գրիգորի կաթողիկոսի առընթեր կայր մահուան Շահին[1]՝ առեալ զեւրսն՝ գան անկանին 'ի Սասունք[2]. և անդ անկաւ 'ի ձեռս նորա Բէկթամուրն[3], որ էր իշխան ամենայն տան Շահին[4]: Եւ առնու 'ի նմանէ զբերդն, որ Թառաձեան կոչի, և ուխտիւ արձակեաց զնա. որ և ստեաց ուխտին 'ի տիրելն իւրում աթոռոյ Շահին. և զայն եւս՝ և զամենայն Սասունս եհան 'ի նմանէ և արկ ընդ հարկաւ զեկեղեցիս և զուխտս:

'Ի վեց հարիւր երեսուն և չորս թուին ըմբռնեցաւ Սուքէն 'ի բրնծէն. և թափեաց զնա Լեոն՝ եղբայր նորա որդին Ստեփաննեայ, որդւոյ Լեոնի, որդւոյ Կոստանդեայ, (որդւոյ) Սուքէնայ, որ տիրեաց եօթանասուն երկու բերդից և զօրացաւ 'ի վերայ Յունաց և Պարսից և արար ընդ հարկաւ զԽլիճ ասլան՝ սուլտանն Միջերկրեայ:

'Ի վեց հարիւր երեսուն և հինգ թուին[5] առին Ընեցիք զՏուառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսղի, յանխնայ կոտորելով զորս անդ՝ բաց 'ի կանանց և 'ի մանկտւոյ. զոր լուեալ Ըլիշէրն ամիրայ Գոնեայ[6]՝ ճողէր զմորուսն և սեաւ զգենոյր 'ի վերայ կնոջն և որ-

[1] Մեր օր. առընթեր մահուան Շահին: — [2] Մեր օր. առեալ զեւրսն գէ գան անկանին 'ի Սասունս: — [3] Ու. օր. Բեկթամուրն: — [4] Մեր օր. որ էր իշխան ամենայն տանեն Շահին: — [5] Մեր օր. 'ի վեց հարիւր երեսուն և հինգ թուին: — [6] Մեր օր. զոր լուեալ Ալիշէրն ամիրայ Դունայ:

դեացն որ անդ՝ և 'ի վերայ զօրացն կոտորման. և 'ի քրիստոնէից փառաւորէր սուրբ Երրորդութիւնն 'ի փառս իւր։ Իսկ 'ի վերայ Յունաց թագաւորեաց Փի-սիկն [1], որ և Սահակ. և յորոյ հալածանս և չարչարանս 'ի վերայ հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա [2]։ Վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարգն Գրիգոր՝ եղբօրորդի տեառն Ներսեսի և Գրիգորի կաթողիկոսացն Հայոց, խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ [3]։ Իսկ ոչ լուաւ նմա, այլ գլուխս դարձոյց 'ի կրօնս իւր և զայլ հալածանս արար [4]. ուր կային երեք աթոռ եպիսկոպոսութեանն և հազար վեց հարիւր քահանայք, զորս 'ի մի հաւաքեալ՝ բռնադատէր. յորոց սակաւք զերծան ամբողջ հաւատով։ Իսկ զայսպիսի աղէտս գրեաց տէր Գրիգոր յարևելս խոժոռեալ սրտիւ [5]՝ և ոչ ինչ կարացին առնել։ Առաքէր և նոյն պատրիարգն եպիսկոպոս մի՝ Գրիգոր անուն, 'ի պապն Հռոմայ վասն վտանգին որ 'ի Յունաց կրէին Հայք և զի խնդրեսցեն աղօթս և աւրհնութիւնս՝ որպէս և առաջինքն. զոր կարի մեծարեաց պապն և ետ պատարագ առնել և հաղորդեցաւ, և հագոյց նմա զիւր քահանայական իշխանութեան հանդերձն։ Իսկ հաւաքեաց առ ինքն զամենայն պատուաւորս.— զկայսրն Ալամանաց և զթագաւորն Անկլիզաց և զթագաւորն Փռանցիսաց իւրեանցայնովքն, և զպատրիարգն Ալամանաց, որ ունի

[1] Մեր օր իսկ 'ի վերայ յունաց թագաւորացն Փիլիպն։ — [2] Մեր օր. զի դարձուսցեն յաղանդ նոցա։ — [3] Մեր օր. վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարգն Գրիգոր խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ։ — [4] Ցերկոտին օր. և զայլ հալածանս արար։ — [5] Ռ. օր. խաղաղեալ սրտիւ։

քսան և հինգ հազար ձիաւոր, և զարհի եպիսկոպոսըն Սպահանոյ, որ ունի քսան հազար ձիաւոր, և զարքեպիսկոպոսն սուրբ Յակոբայ, որ տիրէ հինգ հազար ձիաւորաց, և յայսմ կողմանէ զպատրիարգն Երուսաղեմի: Եւ 'ի խորհուրդ մտեալ նոքօք՝ գրեաց գիր [1] հրամանաւ սուրբ առաքելոցն 'ի նոցա երեսաց, —«Եթէ Հայոց պատրիարգն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի 'ի վերայ Հայոց և Յունաց և ամենայն ազգաց քրիստոնէից [2], որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր և եկրաւոր բանալեօք: Եւ վասն զի երկայն ճանապարհ է 'ի մէջ իմ և եղբօր իմոյ՝ Հայոց պատրիարգին, առաքեցի նմա զիմ պատրիարգական վակասըն [3] և զպսակն և զկօշիկսն, զի զայն զգեցեալ՝ պատարագեսցէ մատանեաւ հանդերձ»: Եւ ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր. —«Տար և զգեցո պատրիարգին, և յայնմ հետէ նմա լիցի [4] պատիւ իշխանութեան յաւիտեանս յաւիտենից»:

Եւ 'ի վեց հարիւր երեսուն և վեց թուին եղև՝ զի վաճառականք Սալահադինին անցանէին ընդ Պաղեստինէ՝ չորս հարիւր ուղտուց բարձեալ ազնիւ կարասի, զոր կոմսն Տրապօլեաց իմացոյց թագաւորին Երուսաղեմի և էառ հրաման յաւարի առնուլ. զոր լուեալ Սալահադինին [5]՝ յղեաց և խնդրեաց միանգամ և երկիցս գոնեայ զծառայսն միայն, յիշեցուցանելով զուխտն երդման որ 'ի մէջ իւրեանց, և ոչ լուան. վասըն որոյ զայրացեալ գայ 'ի վերայ նորա: Եւ եկ ընդ-

[1] Ուռմ. օր. գրեցին գիր: — [2] Մեր օր. և ամենայն ազգաց՝ որպէս մեք: — [3] Մեր օր. առաքեցէ նմա զիմ վակասն և զպսակն: — [4] Ու. օր. յայնմ հետէ լիցի պատիւ իշխանութեան: — [5] Ու. օր. զոր Սալահադինին յղեաց և խնդրեաց:

դէմ նորա Թագաւորն Երուսաղեմի երեսուն և վեց հազարաւ 'ի դաշտին Հերմոնի և նենգութեամբ կոմսին Տրապօլեաց զտեղի առեալ յոստ մի անջրդի՝ փակեցաւ 'ի Թուրքաց և ըմբռնեցաւ սաստիկ հարուածովք. և առուան ամենայն քաղաքքն ծովեզերայք[1] և ապա Երուսաղէմ, զորոյ զբնակիչսն ոչ հրամայեաց կոտորել, այլ վաճառել զկեանս նոցա՝ կորեալ զգլխս[2] արուի տասն դահեկան և իգին հինգ, և զայլ ամենայն ինչս[3] իւրեանց առեալ՝ գնացեն յո և կամեցին. և արարին այնպէս: Իսկ անօրէն կոմսն, որ միաբանեալ էր ընդ Սալահադնին 'ի ծածուկ՝ հարեալ 'ի Տեառնէ սատակէր. և երթեալ Սալահադին 'ի վերայ բերդի նորա՝ խնդրէր զկինն և զբերդն. և նա խնդրեաց պատանդս յերևելի արանց, զի գնասցէ առ նա[4] և լինիցի նմա կին: Եւ առեալ 'ի ներքս՝ եհատ զգլուխս նոցա և ընկէց արտաքս, ընդ որ զարհուրեալ՝ 'ի բաց գնացին: Քանզի լուան զհամբաւ զալստեան մեծի Թագաւորին Աղամանաց, որ գայր 'ի գոյժ սգոյ սուրբ գերեզմանին և ամենայն քրիստոնէից՝ հարիւր յիսուն հազար հեծեալ առաքելով ընդ ծով[5], որք եկեալ պաշարէին զԱքա[6]. և ինքն գայր ցամաքաւ անհուն բանակաւք ընդ աշխարհն Յունաց՝ առնլով 'ի նոցանէ ըզՍեռօ քաղաք[7], զՓիլիպուպօլիս, զԱնդրիանուպօլիս[8]

[1] Մեր օր. և տուան նմա քաղաքն ծովեզերայք: — [2] Մեր օր. այլ վաճառեալ զկեանս նոցա՝ կորեալ զգլխս: — [3] Ռ. օր. և զամենայն ինչս իւրեանց: — [4] Մեր օր. զի գնասցէ առ նա: — [5] Ռ. օր. հազար յիսուն հազար հեծելոք առաքելով ընդ ծով: — [6] Մեր օր. որք եկեալ պաշարէին զԱքա: — [7] Մեր օր. առնելով 'ի նոցանէ զԱլխոխոս քաղաք: — [8] Ռ. օր. ըզՓիլիպպոպօլիս և այլ յոլով երկիրս. — Մեր օր. զՓիլիպպոպօլիս և զԱնդրիանուպօլիս և այլ յոլով երկիրս:

և այլ յոլով բերդս և աւանս։ Եւ առաքէր զորդի իւր յառաջագոյն 'ի վերայ Կոստանդնուպօլսի, և խառնէին հալածեալքն 'ի Կիռ Սահակայ մերքն 'ի նոսա [1], և բազում առնէին աւերս 'ի նոցանէ՝ վառեալ նախանձու։ Իսկ Կոստանդնուպօլսեցիքն խնդրեցին ողորմութիւն և ետուն հարիւր կենդինար ոսկւոյ և երկու հարիւր արծաթոյ, և ձրի անցուցին զամենայն բազմութիւնն՝ զոր առեալ էին 'ի Բղախաց և 'ի Բուլղարաց յոլովութիւն գանձուց [2] 'ի յանցանելն ընդ աշխարհս նոցա։ Իսկ որդիքն Խլիճ ասլանայ՝ ոչ լսելով հօրն իւրեանց՝ ուժգին Թուրքումն արարին [3] ընդ նոսա պատերազմ երեսուն և երեք օր՝ ոչ մեկնելով 'ի նոցանէ, մինչև հարան և կորեան 'ի նոցանէ. և այնքան սովեցան, մինչ զի ութ և տասն օր անսուաղ կացին 'ի բերդ հողոյ.—մինչ յԻկոնն [4] կերան վաթսուն հազար ձի, և առեալ զԻկոնն՝ կոտորեցին և նստան անդ [5]։ Եւ երիցս անգամ դեսպան յղեաց առ Լևոն, և հաստատ առ նա։ Եւ իբրև ել յԻկոնէն [6]՝ եհաս գիր 'ի պատրիարգէն Գրիգորոյ, «Եթէ եկայք մեք 'ի Միս [7] քաղաք և մնամք քեզ սաստ»։—Եւ թագաւորն ժողովեալ զամենայն մեծամեծս իւր՝ ետ կարդալ. և 'ի խնդութենէն լացին. և գրեաց պատասխանի, «Եթէ աստի քսան և եօթն ամ [8] քո հրամանաւ

[1] Մեր օր. և խառնէին 'ի հալածելոցն 'ի Կիռ Սահակայ մերքն 'ի նոսա։—[2] Մեր օր. զոր առեալ էին 'ի Բղախաց. Ո. օր. 'ի Բղախաց և 'ի Բուլղարաց յոլովութեամբ գանձուց։—[3] Ո. օր. ուժգին Թուրքումբ արարին.—Մեր. օր. ուժգին Թուրքումն արարին։—[4] Մեր օր. մինչև Կոնն։—[5] Մեր օր. և առեալ զԿոնն կոտորեցին և նստան անդ.—Ո. օր. և առեալ զԿոնն կոտորեցին և նստան անդ։—[6] Ցերկնաբին օր. և իբրև ել 'ի Կոնէն։—[7] Մեր օր. եկայք մեք 'ի Կոնիս քաղաք.—Ո. օր. եկայք մեք 'ի Մոխս քաղաք։—[8] Մեր օր. երեք տասն 'ի քսան և հինգ ամ։

կամիմ բանալ անդաստան Հայոց [1], և ապա գնամ յերկիրն իմ։ Ահա ունիմ թագ և զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց զով որ ընտրես [2]»։ Եւ ասէր 'ի լսելիս ամենեցուն. «Մինչ ոչ տեսանեմ զապարանն իմ և զսուրբ Պետրոս [3], զպատրիարգն Գրիգոր, ոչ ասեմ զոր ինչ կայ 'ի սրտի իմում»։ Եւ եկեալ 'ի Սելևկիա գտեալ հուն [4]՝ անցին ընդ գետն ամենայն զօրն. և թագաւորն ոչ անց ընդ հունն, այլ ասաց ննջել յայնկոյս գետոյն սակաւիկ մի։ Եւ յորժամ խաղաղացան մեծամեծք նորա՝ յարեաւ ինքն և երկու արամբք եմուտ 'ի գետն. և զմին 'ի նոցանէ խլեաց գետն և տանէր՝ և թագաւորն օգնելով նմա՝ չպահեաց—և ինքն կորոյս [5] զքրիստոնեայքն և հեղձաւ 'ի գետն։ Եւ ըզմարմինն առեալ տարան 'ի Սիս. և 'ի զօրացն բազումք [6] նաւեցին յերկիրն իւրեանց, քանզի էր և որդի կրտսեր թագաւորին, և այն ևս մեռաւ՝ երթեալ 'ի յԱքա [7]։ Բայց քանզի թագաւորն Անկլիզաց և միւս ևս այլ ընդ նմա զայնու աւուրբք եկին և առին զԿիպրոս. և լուեալ վասն անգլուխ մնացեալ զօրացն [8], որ զԱքա էին պաշարեալ՝ հասին նոցա 'ի թիկունս. և առեալ զքաղաքն՝ սատակեցին տասն հազար ընտիր այր 'ի զօրացն Սալահադինին, և զինքն իսկ գլխովին՝ որ եկն յայցելութիւն իւրոցն, առաջի եղեալ տարան՝ կոտորելով մինչև յԱսկալոն. և յոլով յամիրայցն ձեռ-

[1] Մեր օր. տու հրամանատ կամ իմ բանալ։ — [2] Մեր օր. զով ընտրես։ — [3] Մեր օր. Մինչ մինչ տեսանեմ զպարանն իմ և զսուրբ Պետրոս. — Ո. օր. մինչ ոչ տեսանեմ զապարանն իմ և զսուրբ Պետրոս։ — [4] Մեր օր. գտին հուն։ — [5] Մեր օր. և կորոյս զքրիստոնեայս։ — [6] Մեր օր. և զօրացն բազումք նաւեցին։ — [7] Ո. օր. երթեալ 'ի յԱքայեայ։ — [8] Մեր օր. վասն անգլուխ զօրացն մնացելոց։

նակալեալ՝ տարան յայնկոյս Ծովուն և վերստին աւուրն զամենայն առեալն 'ի Թուրքաց՝ բաց յԵրուսաղեմէ, որ ասէին մինչև եկեսցէ օր այցելութեան նորա։ 'Ի սոյն ժամանակս ոմն 'ի գլխաւորացն Աղահաղնին գայ 'ի վերայ Անծկերտոյ և պաշարեալ զնա՝ ոչինչ կարաց առնել, զի նորանշան ձիւն եկն 'ի վերայ նոցա 'ի մէջ ամարան, և դարձաւ և սատակեցաւ 'ի ճանապարհին։ Նա Իէկթամուրն [1] շնորհակալեալ քրիստոնէից՝ սկսաւ պատուել և սիրել յայնմհետէ զքրիստոնեայս[2]։ Զայնու ժամանակաւք թարգմանեաց Մխիթար քահանայ պատուելի[3] կաթուղիկեցի զպատճառս խաւարման արեգական և լուսնի 'ի Պարսկէ միոջէ՝ Աճիէ անուն[4], զոր ասէր թարգմանեալ 'ի յունաց 'ի պարսս, և թէ Յոյնք 'ի Քաղդէացւոց մարգարէութենէն ունին. — որ ասէր, թէ արեգակն բնութեամբ ոչ երբէք խաւարի, այլ 'ի լուսնոյն լինի պատճառն, յորժամ 'ի միում կենդանակերպի դիպին արեգակն և լուսին՝ և ժամ իջէ ծննդեան լուսնին և անդ դիպին թանձր ամպքն[5] կոչեցեալ [illegible] և կամ [illegible]։ Զի թէ սոքա մերձ ոչ լինին՝ ոչ է ժամ խաւարման, թէպէտ ժամ իջէ ծննդեան լուսնի՝ և իցեն 'ի միում կենդանակերպի. ապա թէ իցեն՝ խաւարի արեգակն. թէ բոլոր հանդիպէ միմեանց՝ բոլորն խաւարի և թէ մասամբն ինչ առ 'ի շեղ՝ մասն նսեմանայ։ Որ և մեզ երևի՝ պատճառ լուսնին է և ոչ արեգական ամանն, որպէս եղև 'ի վեց հարիւր քսան և

[1] Մեր օր. և Բեկթեմուրն։ — [2] Մեր օր. և սիրել զքրիստոնեայս։ — [3] Մեր օր. և Մխիթար պատուելի քահանայ։ — [4] Մեր օր. Ոճիրէ անուն։ [5] Մեր օր. և անդ դիպին թանձր ամպքն։

հինգ թուին մեծ խաւարումն: Իսկ լուսնին խաւարումն լինի, յորժամ վեց կենդանակերպիւք հեռի լինի յարեգակնէն, և զանայն և զուստն 'ի նոյն կենդանակերպի մուծ ամպքն չտան առնուլ լոյս յարեգակնէն, և ստուեր թանձրութեան երկրի անկանի զլուսնաւն՝ խաւարի լուսինն: Եւ թէ զոյգ և կշիռ միմեանց կայցեն՝ բոլորն խաւարի. իսկ թէ առ 'ի շեղ լինի՝ ապրեալ մասն լուսաւորի յարեգակնէն.— զայս աշխատեալ ծրաբոլորիւն փոխեաց 'ի մերս:— Յաւուրս ժամանակաց այսոցիկ էին փառաւոր իշխանք Զաքարէ և Իւանէ որդիք Սարգսի՝ որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարի, որդւոյ Սարգսի՝ 'ի քրդ ազգէ հաստուածեալ առ թագաւորսն Ձորոյ գետին, որ Բագրատունեաց ազգն է, հաւատացին 'ի Քրիստոս և պատուեցան: Եւ տուաւ նոցա տուն բնակութեան Խոշոռնի. և զի արիագոյնք էին՝ յառաջեցան օր ըստ օրէ 'ի բարձ և 'ի պատիւ: Եւ յաւուրս Թամարի առաւել փառաւորեցան, և ետ նոցա զԼօռի. և ինքեանք քաջութեամբ իւրեանց թափեցին 'ի Թուրքաց յոլով բերդս և գաւառս 'ի սուղ ժամանակի. քանզի 'ի վեց հարիւր քառասուն և հինգ թուին առին զԱնբերդ[1], և 'ի վեց հարիւր քառասուն և ութ առին զԱնի, և 'ի վեց հարիւր յիսուն առին զԲջնի, և 'ի վեց հարիւր յիսուն և երկու առին զԴուին, և 'ի վեց հարիւր յիսուն և հինգ առին զԿարս թագաւորին, և ապա զԳետաբակս և զՉարեքն: Եւ եղ անուն նոցա ընդ ամենայն երկիր:— Բայց Իւանէ խաբեալ 'ի թագուհւոյն Թամարայ՝ տկարացաւ 'ի հաւատոյն և

[1] Մեր օր. և 'ի վեց հարիւր քառասուն և հինգ թուին զԱնբերդ:

անյաջողեալ նմա՝ ըմբռնեցաւ գերի 'ի Խլաթ, և եղբօրըն արիական անուամբ ազատեցաւ դարձեալ՝ տալով ի կնութիւն զդուստր իւր Մելիք Աշրաֆուն՝ տեառն Խլաթայ: Իսկ Զաքարէ՝ աւագ եղբայրն, մնաց յաւագ և 'ի սեպհական հաւատն. սակայն կամեցաւ ըզտօն Տիրամօրն և զխաչն 'ի պատկեր աւուրն[1] տօնել, և զճրագալըյցն չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանեաց պատարագ մատուցանել, և վրանաւ պատարագել 'ի բացեայ դպրօք և սարկաւագաւք: Վասն որոյ առաքեաց առ Լևոն, որ այն ինչ օծեալ էր թագաւոր 'ի Փռանկաց և 'ի Յունաց՝ առաքելով նմա թագ 'ի վեց հարիւր քառասուն և վեց թուին: Նա էր ճոխ և յաղթազգեաց և հարկաշխիր և լծատանջ ամենայն շրջակայ ազգացն: Իսկ նոքա յամեցուցին զպատասխանին, վասն զի (զկնի) տեառն Գրիգորի առ Տէր փոխելոյն էառ զաթոռն Գրիգորիս՝ Տըղայն կոչեցեալ, զոր կալեալ Լևոնի եդ 'ի բանտի զկնի միոյ ամի. որ և կամեցեալ ելանել 'ի բանտէն՝ խեղդի պարանաւ իջմամբն, և մեռաւ կորելով զպարանն[2]: Նա զաթոռն էառ Ապիրատն զամս հինգ, և ապա տէր Յովհաննէս որ և կայր ապստամբ Լևոնի. յորմէ վըշտացեալ թագաւորին Լևոնի՝ դնէ կաթողիկոս զտէր Դաւիթ յԱրքակաղնին և յերկպառակութենէ անտի հազիւ եկեալ 'ի մի կամս՝ ամենեքեան հաւանութեամբ արարին պատասխանի—առնել Զաքարէի զոր

[1] Մեր օր. սոյն կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաչն 'ի պատկեր աւուր տօնել: — [2] Մեր օր. որ և կամեցաւ ելանել 'ի բանտէն՝ խեղդեցին պարանաւ իջմամբն, և մեռաւ կորելով զպարանին. — Ու. օր. որ և կամեցաւ ելանել 'ի բանտէն խեղդի պարանաւ իջմամբն, և մեռաւ կորելով զպարանին:

խնդրէ, «զի չէին ասէ արտաքոյ զրոյց, և մեր է սահմանդ Հայրենի՝ և յաւերմանէ եկեղեցւոյ է խանգարեալ»։ — Բայց 'ի յարևելս միանգամ և երկիցս ժողով եղեալ կատարեալ արանց 'ի Լօռի և յԱնի՝ ոչ եղև ընկալեալ. «գուցէ՝ ասեն, և ամենայն իրք հարկեալ լինիմք գնալ զկնի աղանդոյն Յունաց և Վրաց»։ — Իսկ յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Թամարայ զօրացան քրիստոնեայք, թէպէտ ընկէց զայրն Ռուզ և էառ զՕսն Սոլան[1], որ եկեց զՎիրս գերութեամբ և աւարաւ 'ի Թուրքաց, յորմէ ծնաւ միամօր որդի և կոչեաց զնա Լաշայ։ Նա ինքն կալեալ զթագն զամս քսան և երեք[2]՝ վճարի։ Եւ նստի յաթոռն Լաշայն[3], որ և 'ի զօրացն կոչեցաւ Գէորգի։

'Ի վեց հարիւր յիսուն և ինն թուին մարախն աւերեաց բազում գաւառս։ Յորում ժամանակի մեծըն Զաքարէ աւերէ զտունն Պարսից մինչև ցՄրտաւիլ քաղաք՝ առնլով 'ի նոցանէ զվրէժս արեանն քրիստոնէից. ըստ որում և զաղօթատուն նոցա լցեալ աւարամբք՝ այրել հրամայէր, զոհ լինել իշխանացն որք 'ի Նախջավանոյ եկեղեցիսն, և կուսայքն և մուղրիքն սուրբ քահանայիցն որ 'ի Բագուան մորթեցան և արեամբ նոցա ներկեցան պարիսպք եկեղեցւոյն։ Եւ դարձեալ յայնր կոտորածէ՝ կատարի 'ի Քրիստոս ուղղափառ հաւատով և թաղի 'ի սուրբ ուխտն Սանահնի։

Իսկ 'ի վեց հարիւր վաթսուն և մի թուին թողլով տղայ մի հնգամեայ՝ Ռահնշահ անուն, 'ի պատիւ տէրութեանն Անւոյ կոչեցեալ, զոր դարձոյց յա-

[1] Մեր օր. ընկէց զայրն ռուզ՝ էառ զսոսն զսուլան։ — [2] Ու. օր. և ինքն կոչեալ զամս քսան և երեք՝ վճարէ։ — [3] Մեր օր. և Նստի յաթոռն Լաշայն։

զանդն Քաղկեդոնի Խօշաք՝ զուգակիցն Խուանէի։ Նու զկնի միոյ ամի կատարեցաւ սուրբ և սքանչելի այրն Աստուծոյ վարդապետն Մխիթար[1]՝ վերակոչեցեալն Գոշ, Գանձակեցին. և թաղեցաւ յիւրում ձեռակերտին 'ի Գետիկ, զոր շինեալ էր հրամանաւ Խուանէի քեռորդւոյ մեծի իշխանին Բրդլին, որոյ հրամանաւն եկեալ իսկ էր յերկիրն Վայենոյ 'ի Հինն կոչեցեալ Գետիկ՝ զի յայնմ ժամանակի նա ունէր զՎայեն հայրենեօք 'ի Հասանայ Վայենեցւոյ՝ շինող բերդին։

'Ի վեց հարիւր վաթսուն և երեք թուին զՀայթերք յԽուանէ տուին տեարք նորա—զի մեռաւ Վախթանգ բուն տէր նորա և որդիքն իւր տարաժամ,—և 'ի միւս Վախթանգն Սակռեանց[2]՝ փեսայն Խուանէի, տէր Ներքին Խաչենոյ՝ թողլով երկու տղայս՝ զՀասան, որ և 'ի գգուանաց Ջալալատալէ, և զԶաքարէ, որ և Նսարատալէ, զորս խնամարկէր Խուանէ մայրքն իւրեանց՝ Խորիշահիւ. որ և ապա յՆրուսաղէմ երթեալ՝ ամենամեծ ճգնութեամբ կատարի[3] յոլով դրուատիւ 'ի Տէր։ Նու մեծն Խուանէ՝ անուանի եղեալ քաջ արիութեամբ, առնու զՉարեքն և զամենայն շրջակայս նորա. և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ Վարմայ՝ որդւոյ Զաքարիայ, առնու զՇամքոր։

'Ի վեց հարիւր վաթսուն և ութ թուին առնու զԱրոտն և զմերձակայ դղեակն՝ թէպէտ ոչ զբովանդակըն. քանզի եւր ունէին ընա Հայկազունքն՝ քսան և երեք բերդք[4] կային նշանաւորք, և գեօղք հազար և չորս

[1] Ուռւմ. օր. և օտանչելի վարդապետն Մխիթար։ — [2] Ու. օր. և միւս Վարդանանց Սահակեանց՝ փեսայն Խուանէի։ — [3] Մեր օր. և ամենամեծութեամբ ճըշմարտութեամբ կատարի։ — [4] Մեր օր. տասնևսուն և երեք բերդք կային։

հարիւր, քսան և ութ վանորայք[1], որոց սկիզբն աւերման եղև ՚ի հինգ հարիւր յիսուն և երկու թուին ՚ի պատճառէ երիտասարդի միոջ մատռուակի[2] Մելիքշահ սուլտանին, որ ՚ի գնալն հայկազնի թագակալին[3] ՚ի հնազանդութիւն սուլտանին՝ նեղէր զնա դինուով խստագոյնս, մինչ խոստանալ նմա զդուստր իւր կնութեան։ Եւ նորա հանդուցեալ զգօտին՝ ցուցանէր սուլտանին ըստ իւրեանց սովորութեան։ Եւ զկնի անցանելոյ աւուրց[4] խնդրէր զխոստացեալն. և ՚ի հարկանելն զնա նախատանաւք՝ լինի նախանձաբեկ, և առեալ զյոլովութիւն զօրաց՝ աւերէ զաշխարհն մինչեւ ամենեքին քանդեալ աւերեցաւ, որում այժմ տիրեաց հզօրն Խանէ[5]։ ՚Ի սոյն թուականի փոխի առ Քրիստոս պատուաւորն մեր Լևոն, և առնու զթագն դուստր նորա միամօր՝ Եզիսաբեթ անուն, որ ըստ Փռանգաց լեզուին Զապէլ խաթուն կոչի[6]՝ ածեալ նմա այր զՖիլիպ՝ զորդի տեառն Անտիոքու, զամս երկու։ Եւ զի ատելի էր նմա ազգն Հայոց, և զիւրն մանաւանդ պատուէր զՓռանկսն՝ երդմնազանց եղեալ ուխտին հայադաւան[7] և հայասէր լինել, վասն որոյ և զպատուական թագն և զպազատն առաքէր ՚ի տուն հօր իւրոյ։ Որում ոչ կարացեալ տանել իշխանացն՝ ըմբռնեն զնա յարգելանի, մինչև մեռաւ անդէն։ Եւ տան զաղջիկն Հեթմոյ՝ որդւոյ Կոստանդեայ, մեծահօգի

[1] Մեր օր. փոխանակ ութ վանորայք։ — [2] Մեր օր. ՚ի պատճառս երիտասարդի միոյ մատռուակի։ — [3] Մեր օր. որ ՚ի գնալն հայկազնի ՚ի հնազանդութիւն սուլտանին։ — [4] Մեր օր. և զկնի անցանելոյ աւուրց։ — [5] Ու. օր. մինչև ամենեքին փանդեալ ապաշխարեցան. Մեր օր. որում այժմ տիրեաց Խանն։ — Մեր օր. որ ըստ Փռանգաց լեզուին Զապէլ կոչի։ — [6] Ու. օր. երդմնազանց եղեալ յուխտին հայադաւան։

և շատահանճար պատանեկի, անձնեայ թիկնաւէտ և գեղեցկադիտակ երիտասարդի՝ պսակելով զնոսա պատրիարգին Կոստանդեայ, որ ժառանգեաց զաթոռն սուրբ զկնի մահուան տէր Յովաննիսի՝

՚Ի վեց հարիւր վաթսուն և հինն թուին ոչ յարենէ կամ ՚ի պատուոյ և կամ ՚ի մամոնայէ, այլ ՚ի շնորհաց Հոգւոյն կոչեցեալ և ՚ի հազար լեզուաց վկայեալ։ Նախ քան զձեռնադրելն նորա միով տարեաւ եղև շարժ ահագին և փլաւ պանծուճազարդ եկեղեցին, որ ՚ի Աշկավանս ՚ի մետասանն Յունուարի ՚ի ժամ ճաշոյ, և չորս պատարագող ընդ մեծ զենմանն նուիրեցան։ Իսկ ՚ի յերկինս տեսեալ լինէր ՚ի բոլորից աստղնիզակաձև[1] զամենայն գիշեր, որք երկոքեան ցոյցքն նշանակէին զշարժումն խաղաղութեան աշխարհի ՚ի խռովութիւն նիզակաւ թշնամւոյն՝ որպէս եղեն իսկ։

՚Ի զալ թուականին վեց հարիւր եօթանասուն՝ զօր ինչ օտարադէմ և այլալեզու շարժեալ ՚ի Չին և ՚ի Մաչին աշխարհէն, Մուղալ և Թաթար անուն կոչեցեալ՝ եկին մտին յերկիրն Գուգարացւոց առ դաշտավայրօքն ՚ի կողմանց Նզուանից իբրև թէ քան հազար. և կոտորէին զամենայն կենդանի զորս գտանէին և փութով դառնային. զորոց զհետ մտեալ ամենայն ուժով Լաշայն[2]՝ հասանէ առ գետովն Կոտմանայ. և պարտեալ ՚ի նմանէ ապրի փախստեամբ հանդերձ Իւանէիւ, զորոյ երիվարին ածեալ զՉ.Վրին իշխան ոմն զըրկեալ ՚ի նմանէ[3]։ Բայց Վահրամ տէր երկրին մե-

[1] Մեր օր. էոչ ՚ի յերկինս տեսեալ աստղ նիզակաձև զամենայն գիշեր։ — [2] Մեր լաշն հասանէր։ — [3] Մեր օր. ապրէ փախստեամբ, բայց Վահրամ տէր երկրին։

ծաւ քաջութեամբ գնայ հանդէպ երեսացն սաստիկ կոտորմամբ մինչեւ ց Գարդման, չզիտելով զայլոցն փախուստ[1]:

Եւ վեց հարիւր եօթանասուն եւ մի թուին կամեցան այսրէն դառնալ նոյնք. այլ զի գտին զդեսպանք նոցա կալեալ եւ հաւաք զ[illegible]այս եւ զ[illegible]իրս, եւ տարեալ զհամբաւն՝ ոչ համարձակեցան գալ անդրէն — դարձան գնացին յա եւ գնացին: Եւ 'ի նոյն ամի զօր հատեալ 'ի [illegible]ոնաց, զոր Խոբչախն կոչեն[2]՝ եկեալ 'ի Գանձակ միաբանեցան ընդ նոսա. եւ 'ի գնալ մերոցս[3] վստահութեամբ եւ անզգուշաբար 'ի վերայ նոցա՝ հարըւածեալք դարձան փախստեամբ[4]՝ զբազումս որոց ճարակ տուեալ եւ զոմանս կենդանի կալեալ 'ի փառաւոր ազատացն՝ եղին 'ի բանտի. — ընդ որս եւ զԳրիգոր՝ Իշխանն կոչեցեալ, որդի Խաղբակայ եւ զեղբօրորդին իւր զարիական եւ զքաջ նահատակն[5]՝ Պապաքն անուանեալ. զորոց զվրէժն առին[6] 'ի գալ ամին զօրքն մեր՝ ջնջելով զաւելի մասն Խոբչախին[7] 'ի գալ նոցա յերկիրն Վարդանաշատայ:

Իսկ 'ի վերանալ թուիս մերոյ 'ի համար վեց հարիւր եօթանասուն եւ չորս՝ երկու որդիքն Խորազմ շահին պատեալ եւ նեղեալ 'ի Թաթարաց արեւելից[8] զօրացն հիւսիսայնոյ՝ գան երկու հարիւր հազարաւ,

1 Ուսմ. օր. չգիտելով զայլոցն փախուստ: — 2 Մեր օր. եւ 'ի նոյն զօր հատեալ 'ի Հոնաց, զոր Խփչախն կոչեն: — Ու. օր. եւ 'ի նոյն ամի զօր հատուածեալ 'ի Հոնաց: — 3 Մեր օր. եւ 'ի գնալ մերոյս վստահութեամբ: — 4 Մեր օր. հարուածեալք դարձան փախստեամբ: — 5 Մեր օր. զարին եւ զքաջ նահատակն: — 6 Մեր օր. զորոյ զվրէժ առին: — 7 Ու. օր. զաւելի մասն Խփչախին: — 8 Ու. օր. երկու որդին Խորազմ շահին պատեալ եւ նեղեալ 'ի Թաթարաց:

որպէս ասեն՝ ընդ Եգիպտական երկիր 'ի յոստանն Հայոց, առնուն զնա և լնուն զդաշտն լայնատարած վրանաւք. յորոց վերայ երթեալ մերքս՝ յաղթահարեալ կորնչէին ոչ սակաւք առ գեղաքաղաքին Գառնւոյ՝ աւելի մասն վիժմամբ[1] ընդ խրամս խորխորատին յաստուածասաստ բարկութենէն 'ի վերայ Խանէի յաղագս նոր և օտար չարեացն, զոր գործեաց նա։ Քանզի ըզԳարկեշտ անուն երէց մի մեռեալ՝ հանեալ ետ 'ի գերեզմանէն և այրել, և շուն զենուլ 'ի տեղւոջն վասն յաճախ ուխտականացն երթևեկաց 'ի նշխարս ոսկերաց նորա, զոր պատուեաց Աստուած իջմամբ լուսոյ 'ի վերայ նորա ականերև 'ի բերդաքաղաքին Բջնոյ, ուր և հիմն արկլին եկեղեցւոյ. զոր ոչ կարաց տանել զպատիւ հայադաւան քահանային ելեալ 'ի բանս բանսարկու առըն միոյ, զոր շանթակէզ արար Տէր 'ի նմին գիշերի, յորում 'ի տունջեան զայնպիսի անցս կրեցին։ Իսկ սուլտանն յաղթազգեաց պերճանաւք յանհոգս եզեալ՝ կոխէ բազում տեղիս. և 'ի կրունկն դարձեալ 'ի Գուրջ[2]՝ զկնի ամի միոյ գայ ընդ կողմն դաշտավայրեացն Գագայ 'ի Տփխիս. և բազում ոճիրս գործեալ՝ դառնայ 'ի վերայ Խլաթայ. և առեալ զնա և հաստատեցեալ երթայ 'ի վերայ Ալադին սուլտանին Հոռոմոց և Մելիք Աշրափին։ Նա մեծապէս խորտակումն կրեալ 'ի զօրսն՝ փախչի սակաւուք 'ի Մուղանի դաշտն ամէնունակ զամենայն պէտս մարդոյ և անասնոյ, յորոյ վերայ հասանէ փաղփաղակի Թաթարն[3], որ

[1] Բուռմ. օր. աւելի վասն վիժմամբ ընդ խրամս։ — [2] Մեր օր. և կրունկն դարձեալ 'ի փոհովէժ։ — [3] Բ. օր. զամենայն պէտս մարդոյ, յորոյ վերայ հասանէ. — Մեր օր. յորոյ վերայ հասանէ փաղփաղակի Թաթարն։

հանեալ էր զնա յիւրմէ աշխարհէ յառաջագոյն . և անտի դարձուցանէ զնա 'ի փախուստ դէպ 'ի յԱմիթ . և յանդէտս մեռանի 'ի փախչելն՝ թէ սրով Թաթարին և թէ որպէս ասեն յիւրայոցն ումն մի, զորոյ մերձաւոր[1] սպանեալ է 'ի կարծոյ և սրտառեալ կայր վասըն այնորիկ և յաղագս անհանգիստ շրջեցուցանելոյն զնոսա : Եւ այնպէս խնդրեցաւ վրէժ արեան անձանց անմեղաց : Իսկ Թաթարն կոչեցեալ, որ եկեալ էր յառաջագոյն սակաւուք[2] 'ի վեց հարիւր վաթսուն և ինն թուին՝ կամեցաւ դառնալ 'ի վեց հարիւր եօթանասուն և մի, և ոչ վստահացաւ : Յաւելեալ յինքն անհուն բազմութիւնքն՝ առաջնորդ ունելով զՉարմըղանն կոչեցեալ զօրապետ, գայ 'ի Գանձակ շահաստան . 'ի վեց հարիւր ութսուն և չորս թուին պաշարէ զնա աւուրս մինչև առնու[3] և կոտորէ անողորմաբար բաց 'ի մատաղ տղայոց և 'ի կանանց[4], յորս հաճէին : Եւ յայսմանէ ուժ առեալ՝ մտանեն 'ի թագաւորութիւն Վրաց և բաժանեն զանուանի տեղիս գաւառացն և զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն, զորըս Նուին կոչէին[5] . որք երթեալք յիւրաքանչիւր դըղեակս գաւառացն, զոր վիճակեալ էին՝ և փաղփաղակի մտանեալ լինէին 'ի ձեռս նոցա, 'ի պատուհաս մեղաց մերոց անչափից : Չաղատայ Նուինն էառ զԼօռէ քաղաք և որք՝ յայնր կողմանէ գաւառք . Դուղադայ[6] Նուինն զՔայեան՝ ամրագոյն բերդ, ուստի հանին զԱ-

1 Մեր օր. զոր մերձաւոր սպանեալ էր 'ի կարծոյ : — 2 Ու. օր. եւս Թաթարն կոչեցեալ յառաջագոյն սակաւուք : — 3 Մեր օր. պաշարէ զնա՝ մինչև առնուլ : — 4 Մեր օր. և կոտորէ անողորմաբար 'ի մատաղ տղայոցն և 'ի կանանց : — 5 Ու. օր զորս Նուանին կոչէին : — 6 Մեր օր. Դուղադայ Նուինն :

ւազ՝ տէրն երկրին. և մեծն Զարմղանն[1] զԱնի և ըզ-Կարս և զմերձաւորս իւրեանց. Պատաղայ Նուրինն զկողմանս չորքեան Պետապահուց և զԱրդանաշա-տու[2]. իսկ Մողար Նուրինն կոչեցեալ՝ 'ի բաժնի առեալ զերրորդ գաւառաց մեծ իշխանին Վահրամայ, նախ առնու զՇամքոր հնարիւք: Իսկ Վահրամ որդւովն իւրով՝ Ախթուղայ կոչեցեալ[3], փախչի 'ի տեղեաց 'ի տե-ղիս մինչև գիտաց, եթէ խնայեն 'ի հնազանդեալսն, որք կամաւք խոնարհին ընդ ձեռամբ նոցա: Իսկ ապա ե-կեալ՝ առնոյր զառեալն 'ի նոցանէ զդղեակն և զգաւա-ռըն որ սեպհական լեալ էր նոցա 'ի հայրենեաց, որ և զամենայն առեալ էին — զՏաւուշ, զԿածարեթ, զՏէրունականն, զԴրգեվանքն կոչեցեալ, զՄածնա-բերդն, որ էր Ախսարթանայ Կիւրիկեանց յազգէ թա-գաւորաց, և զՆորբերդն, որ էր Վասակայ թագա-ւորին. և զՔաւազին անմարտնչելի ամրոցն, և ըզ-Գագ անուանի բերդ և գաւառ 'ի Գագկայ թագա-ւորէ շինեալ, ուր կայր սուրբ և հռչակաւոր ուխտն յերևանի աշխարհի խաչ և եկեղեցի կազմեալ և ա-ւրհնեալ 'ի սրբոյն Մեսրոպեայ վարդապետէն և թարգ-մանչէն Հայոց, որ կայ 'ի գլուխս Գագայ և հայի 'ի դաշտն լայնանիստ և երկայնատարած. — և զայլ ամրոցս և զայրն վիմափոր, որ կային 'ի մայրիս և 'ի ծործորս և 'ի ձորակս գաւառաց, գեղից և ագարա-կաց. որք և ամենեքեան տուեալ լինին 'ի ձեռս նոցա 'ի սուղ ժամանակս անվաստակ և առանց աշխատու-թեանց: Զի գիտասցուք, եթէ ձեռն Տեառն է, որ

[1] Մեր օր. և մեծ Չար մղանն: — [2] Մեր օր. Պատաղան Նուրինն անկե-րոպեալս և զԱրդանաշատու: — [3] Մեր օր. Ախթուղայ կոչեցեալ:

եւ զաշխարհս մեր առաջի աչաց մերոց կերակուր օ-տարաց, ընդ որս և զաղէտաւորն զայն և զգայթա-կղեցուցիչն ակարագունից.— Նախ քան զատացեալսդ սկիզբն 'ի սրբութեանց իւրոց և 'ի սրբոց արարեալ՝ — առեալ լինէր, նեղեալ 'ի կապօտութենէ պիտոյից և ա-ւելի 'ի Ջրոյ՝ քարայրն վսեմականին[1] համբաւատենչ և արդիւնական վարդապետին՝ Աստնական կոչեցեալ, յորում ինքն իւրովքն ամրացեալ էր աշակերտաւք[2] և այլովք յոլովիւք՝ 'ի նա ապաւինելովք գաղթանօք[3] .ո-րոց տուեալ զանձն[4] փոխանակ՝ քրիստոսաբար զնայ զե-րի, ազատելով զնոսա ։ Նու ժամանակս ինչ շրջեալ ընդ բանակս խժական ազգին՝ վաճառի քրիստոնէիցն որք 'ի բերդն Գուգայ, որք գնեցին՝ ոչ հրէաբար 'ի սաՀ նա-խատանաց, այլ տիրանման յազատութիւն փառաց՝ յիսուն դաՀեկանաւ աւելի քան զՏէրն — այնքան ժլատ էր վաճառողն տեառն և դիւրագին և Թեթև ունէր[5], որում ինքն էր արժանաւոր ։ Յետ որոյ կե-ցեալ ամս հնգետասան 'ի փառս Աստուծոյ և յօգուտ բազմաց՝ հանգչի 'ի Քրիստոս 'ի բազմավաստակ ծրգ-նութեանցն 'ի խորանս լուսաւորչացն աշխարհի՝ 'ի մարտի ամսեանն 'ի տասն և ութ, 'ի տասն արեգ ամ-սոյ հին զուգիւն, յաւուր շաբաթու յազուհացսն 'ի յիշատակի Ոսկեբերանի և եղբարց իւրոց, և ընդ մեզ մե-ծին Աւուրցն Երուսաղեմայ հայրապետին, առնելով տօն[6] վերին Երուսաղեմի փոխմամբն իւրով . որ աստէն

[1] Ուղղ. օր. փարոսքն վասն ամենայնին համբառնալոյն ։ — [2] Ու. օր. յոր բառս ինքն եւրովքն անցանելով աշակերտօք ։ — [3] Մեր օր. 'ի նա ապաւինելովք գաղթանօք ։ — [4] Ցերկուսին օր. որոց պատեալ զանձինս փոխանակ ։ — [5] Ու. օր. դիւրաբեկին և ճեճեռուն էր ։ — [6] Մեր օր. առնելով տօն ։

տօնիչ և գգուիչ էր զաւակաց նորա՝ որդւոցն լուսոյ, 'ի փառս փեսայի նորա անմահ Թագաւորին Յիսուսի և Հօրն իւրում և Հոգւոյ Սրբոյ[1]: Հարիւրապատիկն աստէն Թողեալ անուն քաջութեան յաշակերտս իւր և'ի գիրս գանձուց եկեղեցւոյ, զորս ամբարեաց 'ի շընորհացն Աստուծոյ և 'ի յստակ մտաց ծննդականաց յեօթն հարիւրթուէն յանժամանակն գնացեալ յաւիտեանն:

Արդ 'ի վեց հարիւր ութսուն և հինգ Թուականէն Հայոց մինչև յեօթն հարիւր չորեքտասանս, յորում եմք մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց ընդ իշխանս և ընդ իշխանութիւնս որ յայսմ կողմանէ ծովուն մեծի—ընդ Պարսս և ընդ Աղուանս, ընդ Հայս և ընդ Վրաս և ընդ աշխարհն՝ Հռոմոց կոչեցեալ, ուր էին բնակեալ Հայք[2] և Ասորիք և Յոյնք՝ Տաճիկք և Թուրքմանք—գրեալ են մանրամասնաբար հայրն մեր և ընդ սուրբս Աստուծոյ փառաւորեալն Վանական վարդապետ, և հարազատն մեր՝ Կիրակոս վարդապետըն հօրն համանման[3], զոր մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել. այլ համառօտ բերեալ միայն զԹիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց յիշատակաւք 'ի լրումն մերոյ գործառնութեանս՝ յոլով ժամանակօք սկսեալ և Թերի Թողեալ, պատկառելով 'ի գլորղացն պատուոյ, զոյս վերագոյն յիշեցաք: Թէպէտ և չկարէ բան և նիւԹ պեղել և յիշումն ածել զլորդութիւն բազմութեան մեղաց և յանցանաց և անզգամութեան մերոյ՝ ըստ որում և ոչ զհատուցումն

[1] Մեր օր. հօրն իւրում եւ հոգւոյն սրբոյ: — [2] Մ. օր. որ էին բնակեալ Հայք: — [3] Մ. օր. Վանական վարդապետին հօրն համանման:

վրիժուց արդար դատաստանին Աստուծոյ, մանաւանդ եթէ զոյ հնար թուել զհատուցումն [1] և զհամար չարեացն մեր ոչ բնաւ. որում յաղթեաց և միշտ յաղթէ խորոցն խորք և անդնդոցն անդունդք, գթութեանց Աստուծոյ անբաւութիւնք: Որում շնորհք և գոհութիւն և փառք և պատիւ և աւրհնութիւն անթուական և անոլորտ յաւիտենիւն 'ի բոլորից և 'ի մասանց [2], յարարածոց իւրոց՝ յիմանալեաց և 'ի զգալեաց. յորոց և ամենն ասասցի [3] անսպառ և անեզր էիւն անվախճանիւ:

Արդ 'ի վեց հարիւր յիսնում և մի թուին Հայոց Բաչու Նուինն փոխեաց զիշխանութիւնն Զարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երևելի, մեծատուն և երկիւղած 'ի տեառնէ, զՍումեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զըՍտեփաննոս և զեղբարսն իւր հինգ,

Եւ 'ի վեց հարիւր յիսնում և երկու թուին զամենայն աշխարհն՝ Խոռոմոց կոչեցեալ, և զանուանի քաղաքն զԿեսարիա նախ՝ ապա զՍեւաստ, —յորս խնայեցին 'ի կոտորելոյ, զի վաղ եկին 'ի հնազանդութիւն— ապա զԵրզնկայ, —զոր յանխնայ կոտորեցին և գերեցին [4], քանզի ընդդէմ դարձան—և զայլ աշխարհս և զգաւառս, ուր մանաւանդ ազգ Հայոց վշտատեսաց բնակեալ էին: Զի համարագիր թուականին ՈԴԲ էր

[1] Ուամ. օր. Թուել զհատուցմանն: — [2] Մեր օր. գոհաբանութիւն և պատիւ և աւրհնութիւն անթուական և անոլորտ յաւիտենական 'ի բոլորից և իմաստնոց յարարածոց: — [3] Մեր օր. յորոց և ամենն ասասցի անսպառ: — [4] Ու. օր. յորս խնայեցան 'ի կոտորելոյ. — Մեր օր. յորս խնայեցին 'ի կոտորելոյ և գերելոյն, քանզի ընդդէմ դարձան:

խւրն, և ընդ այն գործեցան արդիւնքն՝ արժանաւոր ողբոց և արտասուաց, ոչ միայն բանականաց՝ այլ և անբանից, լերանց և դաշտաց, որք ռոոգեցան արեամբ և արտասուօք։ Որ և սոյն ՈՂԲ կրկնեցաւ 'ի վեց հարիւր յիսուն և ութ թուին. — քանզի կարծիս առին Ռաչուն և այլ աւագանին ամբարտաւանութեան և ապստամբութեան թագաւորին և իշխանացն Վրաց. և ընդ ձեռամբ անձեալ զԹագաւորն Դաւիթ և զայլ մեծամեծսն՝ կապեցին և հատին վզիւ մահու. այլ 'ի խնամոց վերնոյն արձակեցան 'ի մահուանէ. սակայն անթիւս կոտորեցին՝ և գերեցին գեօղս և ագարակս և գործեցին խայտառականս 'ի կանայս 'ի Հայս, և աւելի յաշխարհն Վրաց [1]։

'Ի վեց հարիւր յիսուն և յինն թուին մեռաւ Նաւագն՝ որդի Իւանէի, և թաղեցաւ 'ի Պղնձահանքն ընդ հօր իւրում — այր անաղահ և պատերազմասէր և աղօթական։

Յեօթն հարիւր թուին շարժեցաւ խնդիր 'ի մեծ պապէն Հռոմայ. և գրեաց յազգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին խոստովանել 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ։ Եւ ոչ եղև հաճոյ Ասորւոց և Յունաց և Վրաց և Հայոց [2], որ քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց 'ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վանականի և զտէրն համախոհ երևելի արանց փառաւորաց — Աթանասի,

[1] Ուռհ. օր. և ընդ յետ մտեալ զԹագաւորն Դաւիթ և զայլ մեծամեծսն՝ կապեցին և գերեցին գեօղս և ագարակս 'ի Հայս և աւելի յաշխարհն Վրաց։ — [2] Մեր օր. և ոչ եղև հաճոյ Ասորւոց և Յունաց, Հայոց, որ քննեցին։

Գրիգորի աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց։

Յեօթն հարիւր և մի թուին մարախ եկն 'ի վերին աշխարհն Հայոց և արար վնաս յոլովից գաւառաց։

Յեօթն հարիւր և երկու թուին Մանկու ղանն հրաման ետ համարել զհնազանդեալ աշխարհս ընդ իւրով իշխանութեամբ 'ի ձեռն առն երևելւոյ՝ Արղուն կոչեցելոյ, և դնել հարկս ըստ գլխոց արանց բաց 'ի կանանց, և 'ի բուն ծերոց և 'ի մատաղ տղայոց։

Յեօթն հարիւն և երեք թուին քրիստոսասէր արքայն Հայոց՝ Հեթում, չոգաւ 'ի Բաթու մեծ թագաւորն հիւսիսոյ՝ համազգի Չանկզ ղանին, և անտի առ Մանկու ղանն և ըստ արժանւոյն պատուեցաւ և մեծարեցաւ [1], և դարձաւ յետ տարւոյ միոյ խաղաղութեամբ յաթոռն իւր։

Յեօթն հարիւր և չորս թուին եկն Հուլաւուն՝ եղբայր Մանկու ղանին, անթիւ զօրօք և մեծաստատ իշխանութեամբ 'ի վերայ Պարսից, Ասորեստանեաց, Հայոց, Վրաց և Աղուանից։ Հրաման ետ նախ եկեալ զօրուն ամենայն աղխիւն իւրեանց գնալ յաշխարհն Հոռոմոց, յորմէ ահէ թողին զվերին աշխարհս և գնացին 'ի հարկէ։ Նա զամենայն միջերկրեայս մինչև 'ի ծովն՝ տիրելով աշխարհացն, որ ընդ իշխանութեամբն սուլտանաց՝ Հոռոմոց կոչեցեալ։ Իսկ մեծն Հուլաւու 'ի նոյն ամի գալստեանն իւրոյ՝ յեօթն հարիւր չորս թուին, չոգաւ յերկիրն Մլհեհաց յԱլամութ [2] կոչեցեալ՝ և առ զնա՝ հանեալ զգլխաւորն. զե

[1] Մեր օր. և ըստ արժանւոյ մեծարեցաւ, և դարձաւ։ — [2] Մեր օր. յԱլամաւթն կոչեցեալ։

յառաջ քան զգալ նորա պաշարեալ և'ի նեղ արկեալ էին զօրք նոցա, որոց գլխաւոր էր Խառաւուր Նուին կոչեցեալ: Իսկ 'ի դառնալն անտի կոչեաց առ ինքն ըզԴաւիթ՝ թագաւորն Վրաց, և զմեծամեծս աշխարհին և սիրով և պատուով տեսեալ զամենեսեան, մանաւանդ զքրիստոնեայս, — զի աւագ նորա՝ Տողուզ խաթունն կոչեցեալ, քրիստոնեայ էր ըստ Ասորւոց ուսմանն, որ և Նեստորըքն կոչին, — սակայն չէր տեղեակ նոցա աղանդոյն, այլ անխարդախ սիրով մեծարէր զամենայն ազգ քրիստոնեայ և խնդրէր աղօթս՝ որպէս և ինքն իսկ Իլղանն կոչեցեալ Հուլաւուն[1]. խորան կտաւեայ 'ի ձև եկեղեցւոյ շրջեցուցանէին ընդ նմա, 'ի ձայն ժամահարի և աղօթից կարգաւորութեան և պատարագաց պաշտէին հանապազորդ քահանայք և սարկաւագունք, և դպիր դպրոցս և ուսմունս մանկանց համարձակութեամբ: Ընդ հանգչէին եկեղեցականք, որ յամենայն կողմանց և 'ի լեզուաց քրիստոնէից գնային խնդրել զխաղաղութիւն և զտանէին եւս՝ և դառնային խնդութեամբ և պարգևօք:

Յեօթն հարիւր և հինգ թուին մեռաւ Բաթու՝ մեծ կողմնակալն հիւսիսի. և 'ի նոյն տարւոջն որդի նորա Սարթախ դեղակուր եղև յիւրոցն եղբարց վասն նախանձու. զի նմա յանձնեցաւ իշխանութիւն 'ի հօրէն և 'ի Մանկու ղանէն յաւելուածով: Իսկ սուգ մեծ եղև մահ նորա քրիստոնէից, զի կատարեալ քրիստոնեայ էր և լինէր պատճառ փրկութեան բազմաց՝ ածելով 'ի հաւատս յիւրոցն և յօտարաց:

[1] Ու. օր. որպէս և ինքն իսկ Եղբանն կոչեցեալ Հուլաւուն:

Յեօթն հարիւր և եօթն թուին քաղն Խուլաւու-էառ զԲաղդատ — զկնի հինգ հարիւր հնգետասան ամի շինութեան նորա — 'ի Պաքրէ և յԻսմայելացւոց 'ի հարիւր իննսուն և չորս թուին Հայոց 'ի վերայ Տիգ-րիս գետոյ, որպէս ասեն՝ հեռի 'ի հին Բաբելոնէ եօ-թըն աւուր ճանապարհ[1]. սպան և զխալիֆայն իւ-րով իսկ ձեռօքն Խուլաւուն, որում անուն էր Մուս-թասար[2] և ապրեցան քրիստոնեայքն որ կային անդ կամաւք և բարեխօսութեամբ Տօղուզ մեծի թագու-հւոյն[3]: Իսկ զի խալիֆայն յետնամնաց ասի ազգին Մահմետի, որ 'ի վախճան թուականին Հայոց երե-ւեցաւ, և տևեաց յետնորդն մինչև յեօթն հարիւր եօ-թըն թիւս: 'Ի դառնալ Ըղղան Խուլաւուին յաւեր-մանէն Բաղդատայ 'ի նոյն թուին պաշարեցաւ Մու-փարղին՝ քաղաքն Մարտիրոսաց, զամս երկու. զի ա-նուանեալ սուլտանն որ անդ՝ ընդդէմ դարձաւ որդւոյ Խալաւուին՝ Իսմուղին[4] և փակեաց զքաղաքն և մար-տեաւ ընդ նմա ևս, որ էր յազգէն Ըղլաց, որ եղև նիւթ բարկութեան Աստուծոյ: Զի 'ի խասալն կե-րան[5] զսուրբ և զանսուրբ անասունս, ապա զաղքատ-սըն, ապա զծնունդս իւրեանց և զմիմեանս՝ զոր կարէ-ին. մինչ զի աւագ և գլուխ երիցանցն[6] որ անդ՝ հար-կեալ 'ի կատաղի բոցոյ որկորին և գազանացեալ՝ ե-կեր յիւրոցն: Իսկ գրեաց խոստովանութիւնս 'ի քար-տիսի և յուսացաւ տեսանել մեզ զգիրն և ողորմու-

[1] Մեր օր. հինգ աւուր ճանապարհ: — [2] Մեր օր. որում անուն էր Մուսթասար: — [3] Մեր օր. բարեխօսութեամբ Տօղուզ մեծի Թագուհւոյն: — [4] Ռ. օր. ընդդէմ դարձաւ որդւոյ Հուլաւուինն և փակեաց զքաղաքն: — [5] Ռ. օր. զի 'ի խասալն կերան: — [6] Ռ. օր. մինչև զի:

թիւն գտանել յՈղորմածէն՝ բնութեանս ստեղծողին:
Եւ ինքն տուեալ զինքն կողկողման և լալեաց[1]՝ վա-
յիւք և հառաչմամբ անդադար ախտատանօք, մինչև
քաղեցաւ շունչն. զորոյ զգիր խոստովանութեան[2] ըստ
յուսոյն իւրոյ տեսաք մեք և ակն ունիմք նմա ողոր-
մութիւն գտանել 'ի գիտողէն և ստեղծողէն բնու-
թեանս[3]. որ մահուամբն ևս կարեկցեաց մեզ գթա-
ծըն հայր և ողորմութեան խոյլքն և սիրոյն անդունդ-
քըն — Նովիմբ կամաւք ողորմեսցի նմա և քաւեսցէ
խորհրդով սուրբ եկեղեցւոյ և ամենեցուն իսկ, որ
զղջմամբ ապաւինեցան և ապաւինեսցին[4] յողորմու-
թիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ պատահեալ-
քըդ սրտի մտօք հայցեցէք՝ զամէնն ասելով[5]:

Յեօթն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլաւուն
յաշխարհն Միջագետաց և առ զքաղաքսն և զգա-
ւառսն զայնոսիկ՝ որպէս և գրեցին մանրապատում
դրողքն: Եկն առ նա պատրիարգն Հայոց կաթողի-
կոսն՝ աւրհնեաց զնա և սիրեցաւ 'ի նմանէ: Ընդ նմա
էր 'ի յառնուլն զամենայն աշխարհն Շամայ և մեր
պսակաւորն Հեթում, ազատելով 'ի մահուանէ ըղ-
քրիստոնեայսն, զեկեղեցականս և զաշխարհականս՝
յամենայն տեղիս լինելով. — որում հատուցէ Տէր
հազարաւոր թողութեամբ մեղաց և յերկարութիւն
կենաց ըստ իւրոց կամաց յորդւոց որդիս: — Դար-
ձաւ Հուլաւուն յիջեվանս 'ի ձմերոցս 'ի դաշտն Մու-

[1] Մեր օր. տանել զինքն կողման և լալեաց: — [2] Մեր օր. զորոյ ըղ-ձիր: — [3] Ու. օր. ողորմութիւն գտանել յողորմածէն բնութեանս: — [4] Ու. օր. որ զղջմամբ ապաւինեսցեն յողորմութիւնն Քրիստոսի: — [5] Ու. օր. աստանօր ունին զայս բան. — Նա և Թովմա վարդապետի և Երէց:

ղանայ և 'ի կայս ամառայնի[1] 'ի Գառնին գաւառ կոչեցեալն, կամ ըստ այլոց 'ի Գառնան դաշտ. զի այլք և բերդուկք քարանց կան անդ[2] շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց և շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում։ Նա խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր՝ մարդ և անասուն փայտս ծանունս 'ի հեռաստանէ բերելով։

Յեօթն հարիւր և ինն Թուին առաւ Մարտիրոսաց քաղաքն զկնի յոլով աշխատից և վնասուց՝ ոչ միայն պաշարեալ քաղաքին, այլ և պաշարողացն զօրաց Թաթարին[3] և քրիստոնէից, որք ընդ նոսա կըռուելով ընդ միմեանս 'ի ներքուստ և արտաքուստ. ուր սպանաւ գեղեցիկ երիտասարդն Աւագ Խաչենեցի՝ որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապէս մարտուցեալ և յայնոսիկ պատկեալ՝ հաւատ և երկիւղ պահելով զԱստուծոյն և զԻշխանին. որում մեան հացէ արեամբ նահատակացն Քրիստոսի՝ պահողացն զհաւատ և զերկիւղ նորա. ամէն։ — 'Ի սոյն Թուին կատարեցան զօրքն, զոր Թողեալ էր Նըլղան Հուլաւուն կողմնապահ երկրին Ռամայ իբրև քան հազար ընդ մեծ զօրագլխին՝ Քիթբուղայ կոչեցեալ, քրիստոնեայ հաւատով. ընդ որ մարտեաւ սուլտանն Մսրայ առ ստորոտով Թաբօրական լերին անԹիւ բազմուԹեամբ։ Նա զի սակաւք էին Բուղեանքն՝ կոտորեցան և գերեցան, և էին որք ցրուեցան Թաքեան և ապրեալ եկին առ Թագաւորն Հայոց։ Նա 'ի նմանէ յոլովք գտեալ մարդասիրութիւն, հանդերձս և երիվարս և ռոճի-

[1] Մեր օր. և 'ի կայս ամառան 'ի Գառնին։ — [2] Մեր օր. կայ անդ։ —
[3] Մեր օր. այլև պաշարողացն զօրացն և Թաթարացն։

կրա՝ եկին գոհութեամբ առ տէրն իւրեանց Թաթարք և քրիստոնեայք։ Իսկ յայնմհետէ յողով փառաւորեցաւ անուն Քրիստոսի յարքայն Հեթում յօտարաց և յընտանեաց։

Յեօթն հարիւր տասն թուին իշխանաց իշխան արքայաշուք Ջալալ, դառն չարչարանաւք կցորդեցաւ մահուն Քրիստոսի և վկայիցն նորա՝ 'ի զրախոս Տաճկացն զուր պարտաւորեալ և մատնեալ Արղունին, տարեալ 'ի Տաճկաստան 'ի Խազվին և անդ 'ի գիշերի օդակոտր արարեալ սպանին, միայն զքրիստոնէութիւնն ունելով պատճառս, պահաւք և աղօթիւք և ողորմութեամբ և զմխաշարաւթան յառնակցութեամբ անցուցեալ զժամանակս իւր մինչև 'ի ծերութիւն։ Վասն որոյ և լուսով 'ի բարձանց պատուեաց զնա Աստուած՝ իջանելով 'ի վերայ յօշեալ անդամոցն, պայծառեցելով և վկայելով զանպարտաւոր մահ նորա ըղմարտիրոսական. զոր տեսեալ սպանողացն ամաչեցեալ ընկեցին 'ի Ջրհոր մի ցամաք, մինչև եկին իւրքն և առեալ թաղեցին յիւր սեպհական վանքն՝ Գանձասար կոչեցեալ, հայրենեաւք տուն գերեզմանի իւրեանց, զնոյն ճառագայթս լուսոյ տեսանելով բերողացն։ 'Ի նոյն քանիս թուականին Հայոց՝ յեօթն հարիւր և տասն, սպանին 'ի դուռն Ուլղան Հուլաւուին[1] զազարապետն Վրաց զԶաքարէ, զորդի Շահնշահին 'ի տիս երիտասարդութեան 'ի գեղ՝ ծաղկի և յառաջադէմ յաջողման ժամանակի յերկանի և ծանօթ ամենեցուն՝ բարուքս իւր եղեալ 'ի վերայ, և զայն ևս՝ թէ խաւսան,

[1] Ցերկաւթ օր. Ուլղան Հուլաւուն։

եղեւ կարգեալ հարկին յիւրում ժամու երեւելոյ յար-քունիս[1] . զորոյ մահն ողորմագին աշխարհանաւք սգա-ցին ամենայն տունն Վրաց Հայաստանեօք մերձաւո-րաւք նոցա[2], քանի առաւել որք ծնանն զնա ծնող-քըն դառնակսկիծ և մարմնատանջ ողբովք։ Վասն որոյ 'ի նոյն աւուրս և 'ի նոյն սեւուսգին արտակոտոր լեալ՝ մեռաւ հայրն՝ Շահնշահ կոչեցեալ, իբրու տէր մայրաքաղաքին Անւոյ, ուր երբեմն նստոց էր ար-քայի, որ աւագն էր Բագրատունեաց թագաւորաց և այլ աշխարհաց, զանուն տեառն Անւոյ Շահն-շահ կոչելով՝ իբր թագաւորաց թագաւոր։ Եւ իւրքս խորհրդաւոր — Եօթն հարիւր, որ է կատարեալ հան-գիստ, և թուն՝ սուրբ իբրև զաւուրբս Աստուծոյ հան-գուցեալն 'ի շաբաթն Աստուծոյ[3], որ առաջի կայ։ — Ասացեալս նշանաւոր է։ — Արդ յայսմ թուաքերու-թեան կատարեալ աղօթս ամենայն սրբոց[4]։

Յեօթն հարիւր մետասան թուին վախճանեցաւ տէր Ներսէս՝ կաթողիկոս Աղուանից, դառն ցաւով Ջրգողութեամբ՝ չգտեալ 'ի բժշկաց դեղ, բայց միայն զմին Յիսուս Աստուած՝ դեղ կենաց անմահութեան. առ որ փոխեցաւ մեծ յուսով, խոստովանութեամբ և անդարձիւ, ըստ արժանւոյն կեցեալ զժամանակս իւր հեզութեամբ և ողորմածութեամբ։

Յեօթն հարիւր երկոտասան թուին հանգեաւ 'ի Քրիստոս անուանի ճգնաւորն և արժանաւորն պա-

[1] Մեր օր. Եւ խափանեալ լարեալ հարկին խորամանկ ժամու երեւելոյ յարգանօքն։ — [2] Ու. օր. զոր մահն ողորմածին աշխարհանօք սփռէին. — Մեր օր. ամենայն տունն Վրաց հառաչանօք մեղմաւորաւ նոցա։ — [3] Մեր օր. հանգուցանէին 'ի շաբաթն Աստուծոյ։ — [4] Երկուսին օր. զասացեալս նշանաւոր որ է. — Մեր օր. որոց յայսմ Թուաքանութեան կատարեալ յաղօթս ամենայն սրբոց։

իւրն, և ընդ այն գործեցան արդիւնքն՝ արժանաւոր ողբոց և արտասուաց, ոչ միայն բանականաց՝ այլ և անբանից, լերանց և դաշտաց, որք ոռոգեցան արեամբ և արտասուօք։ Որ և սոյն ՈՂԲ կրկնեցաւ 'ի վեց հարիւր իննսուն և ութ թուին. — քանզի կարծիս առին Ռաչուն և այլ աւագանին ամբարտաւանութեան և ապստամբութեան թագաւորին և իշխանացն Վ֊րաց. և ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Դաւիթ և զայլ մեծամեծսն՝ կապեցին և հատին վճիռ մահու. այլ 'ի խնամոց վերնոյն արձակեցան 'ի մահուանէ. սակայն անթիւս կոտորեցին՝ և գերեցին զկօղս և ագարակս և գործեցին խայտառականս 'ի կանայս 'ի Հայս, և աւելի յաշխարհն Վ֊րաց [1]։

'Ի վեց հարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն՝ որդի Իւանէի, և թաղեցաւ 'ի Գղնձավանքն ընդ հօր իւրում — այր անագահ և պատերազմասէր և աղօթական։

Յեօթն հարիւր թուին շարժեցաւ խնդիր 'ի մեծ պալատն Հռոմայ. և գրեաց յազգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին խոստովանել 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ։ Եւ ոչ եղև հաճոյ Ասորւոց և Յունաց և Վ֊րաց և Հայոց [2], որ քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց 'ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վ֊անականի և գտին համախոհ երևելի արանց փառաւորաց — Աթանասի,

[1] Ուռհ. օր. և ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Դաւիթ և զայլ մեծամեծսն՝ կապեցին և գերեցին զկօղս և ագարակս 'ի Հայս և աւելի յաշխարհն Վրաց։ — [2] Մեր օր. և ոչ եղև հաճոյ Ասորւոց և Յունաց, Հայոց, որ քննեցին։

Գրիգորի աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց։

Յեօթն հարիւր և մի թուին մարախ եկն 'ի վերին աշխարհն Հայոց և արար մեծ յոլովից գաւառաց։

Յեօթն հարիւր և երկու թուին Մանկու ղանն հրաման ետ համարել զհնազանդեալ աշխարհս ընդ իւրով իշխանութեամբ 'ի ձեռն առն երևելւոյ՝ Արղուն կոչեցելոյ, և դնել հարկս ըստ գլխոց արանց բաց 'ի կանանց, և 'ի բուն ծերոց և 'ի մատաղ տղայոց։

Յեօթն հարիւն և երեք թուին քրիստոսասէր արքայն Հայոց՝ Հեթում, չոգաւ 'ի Բաթու մեծ թագաւորն հիւսիսոյ՝ համազգի Չանկզ ղանին, և անտի առ Մանկու ղանն և ըստ արժանւոյն պատուեցաւ և մեծարեցաւ [1], և դարձաւ յետ տարւոյ միոյ խաղաղութեամբ յաթոռն իւր։

Յեօթն հարիւր և չորս թուին եկն Հուլաւուն՝ եղբայր Մանկու ղանին, անթիւ զօրօք և մեծասաստ իշխանութեամբ 'ի վերայ Պարսից, Ասորեստանեաց, Հայոց, Վրաց և Աղուանից։ Հրաման ետ նախ եկեալ զօրուն ամենայն աղխիւն իւրեանց գնալ յաշխարհն Հոռոմոց, յորմէ ահէ թողին զվերին աշխարհս և գնացին 'ի հարկէ։ Իսկ զամենայն միջերկրեայս մինչև 'ի ծովն՝ տիրելով աշխարհացն, որ ընդ իշխանութեամբն սուլտանաց՝ Հոռոմոց կոչեցեալ։ Իսկ մեծն Հուլաւու 'ի նոյն ամի գալստեանն իւրոյ՝ յեօթն հարիւր չորս թուին, չոգաւ յերկիրն Մլահեաց յԱլամութ [2] կոչեցեալ՝ և առ զնա՝ հանեալ զգլխաւորն․ զէ

[1] Մեր օր. և ըստ արժանւոյ մեծարեցաւ, և դարձաւ։ — [2] Մեր օր. յԱլամուտքն կոչեցեալ։

յառաջ քան զգալ նորա պաշարեալ և 'ի նեղ արկեալ էին զօրք նոցա, որոց գլխաւոր էր Իսաւուր Նուէին կոչեցեալ։ Եւ 'ի դառնալն անտի կոչեաց առ ինքն ըզ-Դաւիթ՝ Թագաւորն Վրաց, և զմեծամեծս աշխարհին և սիրով և պատուով տեսեալ զամենեսեան, մանաւանդ զքրիստոնեայս, — զի աւագ նորա՝ Տողուղ խաթունն կոչեցեալ, քրիստոնեայ էր ըստ Ասորւոց ուսմանն, որ և Նեստորքն կոչին, — սակայն չէր տեղեակ նոցա աղանդոյն, այլ անխարդախ սիրով մեծարէր զամենայն ազգ քրիստոնեայ և խնդրէր աղօթս՝ որպէս և ինքն իսկ Իլխանն կոչեցեալ Հուլաւուն[1]. խորան կտաւեայ 'ի ձև եկեղեցւոյ շրջեցուցանէին ընդ նմա, 'ի ձայն ժամահարի և աղօթից կարգաւորութեան և պատարագաց պաշտէին հանապազորդ քահանայք և սարկաւագունք, և գոյր դպրոցս և ուսմունս մանկանց համարձակութեամբ։ Ընդ հանդչէին եկեղեցականք, որ յամենայն կողմանց և 'ի լեզուաց քրիստոնէից գնային խնդրել զխաղաղութիւն և գտանէին եւ՝ և դառնային խնդութեամբ և պարգևօք։

Յեօթն հարիւր և հինգ թուին մեռաւ Բաթու՝ մեծ կողմնակալն հիւսիսի. և 'ի նոյն տարւոջն որդի նորա Սարդախ դեղակուր եղև յիւրոցն եղբարց վասն նախանձու. զի նմա յանձնեցաւ իշխանութիւն 'ի հօրէն և 'ի Մանկու ղանէն յաւելուածով։ Եւ սուգ մեծ եղև մահ նորա քրիստոնէից, զի կատարեալ քրիստոնեայ էր և լինէր պատճառ փրկութեան բազմաց՝ ածելով 'ի հաւատս յիւրոցն և յօտարաց։

[1] Ու. օր. որպէս և ինքն իսկ Իլխանն կոչեցեալ Հուլաւուն։

Յեօթն հարիւր և եօթն թուին քաջն Հուլաւու էառ զԲաղդատ — զկնի հինգ հարիւր հնգետասան ամի շինութեան նորա — 'ի Գաւրէ և յԻսմայելացւոց 'ի հարիւր յիննսուն և չորս թուին Հայոց 'ի վերայ Տիգրիս գետոյ, որպէս ասեն՝ հեռի 'ի հին Բաբելոնէ եօթըն աւուր ճանապարհ[1]. սպան և զխալիֆայն իւրով իսկ ձեռօքն Հուլաւուն, որում անուն էր Մուսթասար[2] և ապրեցան քրիստոնեայքն որ կային անդ կամաւք և բարեխօսութեամբ Տօղուզ մեծի Թագուհւոյն[3]: Եւ զի խալիֆայն յետնամնաց ասի ազգին Մահմետի, որ 'ի վաթսուն թուականին Հայոց երևեցաւ, և տևեաց յետնորդն մինչև յեօթն հարիւր եօթըն թիւս: 'Ի դառնալ Նշղան Հուլաւուի յաւերմանէն Բաղդատայ 'ի նոյն թուին պաշարեցաւ Մուփարղին՝ քաղաքն Մարտիրոսաց, զամս երկու. զի անուանեալ սուլտանն որ անդ՝ ընդդէմ դարձաւ որդւոյ Հալաւուին՝ Խամուղին[4] և փակեաց զքաղաքն և մարտեաւ ընդ նմա ևս, որ էր յազգէն Եդլաց, որ եղև նիւթ բարկութեան Աստուծոյ: Զի 'ի խասլն կերան[5] զուրբ և զանսուրբ անասունս, ապա զաղքատսըն, ապա զծնունդս իւրեանց և զմիմեանս՝ զոր կարէին. մինչ զի աւագ և գլուխ երիցանցն[6] որ անդ՝ հարկեալ 'ի կատաղի բոցոյ որկորին և գազանացեալ՝ եկեր յիւրոցն: Եւ գրեաց խոստովանութիւնս 'ի քարտիսի և յուսացաւ տեսանել մեզ զգիրն և ողորմու-

[1] Մեր օր. հինգ աւուր ճանապարհ: — [2] Մեր օր. որում անուն էր Մուսաթար: — [3] Մեր օր. բարեխօսութեամբ Տօղուլ մեծի Թագաւորայն: — [4] Բ. օր. ընդդէմ դարձաւ որդւոյ Հալաւուանին և փակեաց զքաղաքն: — [5] Բ. օր. զի 'ի խորան կերան: — [6] Բ. օր. մինչև զի:

թիւն գտանել յՈղորմածէն՝ բնութեանս ստեղծողէն։ Եւ ինքն տուեալ զինքն կողկողման և լալեաց[1]՝ մայիւք և հառաչմամբ անդադար ախտանօք, մինչև քաղեցաւ շունչն. զորոյ զգիր խոստովանութեան[2] ըստ յուսոյն իւրոյ տեսաք մեք և ակն ունիմք նմա ողորմութիւն գտանել 'ի գիտողէն և ստեղծողէն բնութեանս[3]. որ մահուամբն ևս կարեկցեաց մեզ գթածըն Հայր և ողորմութեան խոյլքն և սիրոյն անդունդքըն — նովիմբ կամաւք ողորմեսցի նմա և քաւեսցէ խորհրդով սուրբ եկեղեցւոյ և ամենեցուն իսկ, որ զղջմամբ ապաւինեցան և ապաւինեսցին[4] յողորմութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ պատահեալքըդ սրտի մտօք հայցեցէք՝ զամէնն ասելով[5]։

Յեօթն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլաւուն յաշխարհն Միջագետաց և առ զքաղաքն և զգաւառն զայնուիկ՝ որպէս և գրեցին մանրապատում գրողքըն։ Եկն առ նա պատրիարգն Հայոց կաթողիկոսն՝ աւրհնեաց զնա և սիրեցաւ 'ի նմանէ։ Ընդ նմա էր 'ի յառնուլն զամենայն աշխարհն Շամայ և մեր պսակաւորն Հեթում, աշխատելով 'ի մահուանէ ըղքրիստոնեայսն, զեկեղեցականս և զաշխարհականս՝ յամենայն տեղիս լինելով. — որում հատուցէ Տէր հազարաւոր Թողութեամբ մեղաց և յերկարութիւն կենաց ըստ իւրոց կամաց յորդւոց որդիս։ — Դարձաւ Հուլաւուն յիջեվանս 'ի ձմերոցս 'ի դաշտն Մու-

[1] Մեր օր. տանել զինչ կողման և լալեաց։ — [2] Մեր օր. զորոց ըղձէր։ — [3] Ո. օր. ողորմութեան երեսս յողորմածին բնութեանս։ — [4] Ո. օր. որ զղջմամբ ապաւինեսցին յողորմութեանն փրկարանի։ — [5] Ո. օր. ատամանօր ուանի զայս բան. — նա և Թովմա վարդապետն և երգէ։

ղանայ և 'ի կայս ամառայնի[1] 'ի Գառնին գաւառ կոչեցեալն, կամ ըստ այլոց 'ի Գառնան դաշտ. զի այրք և բերդուկք քարանց կան անդ[2] շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց և շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում: Նա խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր՝ մարդ և անասուն փայտս ծանուանս 'ի հեռաստանէ բերելով:

Յեօթն հարիւր և ինն թուին առաւ Մարտիրոսաց քաղաքն զկնի յոլով աղետից և վնասուց՝ ոչ միայն պաշարեալ քաղաքին, այլ և պաշարողացն զօրաց Թաթարին[3] և քրիստոնէից, որք ընդ նոսա կռուելով ընդ միմեանս 'ի ներքուստ և արտաքուստ. ուր սպանաւ գեղեցիկ երիտասարդն Սևադա Խաչենեցի՝ որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապէս մարտուցեալ և յայնուիկ պսակեալ՝ հաւատ և երկիւղ պահելով զԱստուծոյն և զԻլղանին. որում մասն հասցէ արեամբ նահատակացն Քրիստոսի՝ պահողացն զհաւատ և զերկիւղ նորա. ամէն: — 'Ի սոյն թուին կատարեցան զօրքն, զոր թողեալ էր Իլղան Հուլաւուն կողմնապահ երկրին Շամայ իբրև քան հազար ընդ մեծ զօրագլխին՝ Քիթբուղայ կոչեցեալ, քրիստոնեայ հաւատով. ընդ որ մարտեաւ սուլտանն Մսրայ առ ստորոտով Թաբօրական լերին անթիւ բազմութեամբ: Նա զի սակաւք էին Թուղեանքն՝ կոտորեցան և գերեցան, և էին որք ցրուեցան թաքեան և ապրեալ եկին առ թագաւորն Հայոց: Նա 'ի նմանէ յոլովք գտեալ մարդասիրութիւն, հանդերձս և երիվարս և ռոճի-

[1] Մեր օր. և 'ի կայս ամառան 'ի Գառնին: — [2] Մեր օր. կայ անդ: — [3] Մեր օր. այլև պաշարողացն զօրացն և Թաթարացն:

կըս՝ եկին զոհութեամբ առ ոտըն իւրեանց Թագաւորք և քրիստոնեայք։ Նա յայնմանէ յոլով փառաւորեցաւ անուն Քրիստոսի յարքայն Հեթում յօտարաց և յընտանեաց։

Յեօթն հարիւր տասն թուին իշխանաց իշխան արքայաշուք Պաւղոս, դառն չարչարանաւք կցորդեցաւ մահուն Քրիստոսի և վկայիցն նորա՝ 'ի ղըախօս Տաճկացն զուր պարտաւորեալ և մատնեալ Եղդունին, տարեալ 'ի Տաճկաստան 'ի Խուազմն և անդ 'ի գիշերի օղակոտոր արարեալ սպանին, միայն զքրիստոսաւթիւնն ունելով պատճառս, պահաւք և աղօթիւք և ողորմութեամբ և զմիաշաբաթն յանակացութեամբ անցուցեալ զժամանակս իւր մինչև 'ի ծերութիւն։ Վասն որոյ և լուսով 'ի բարձանց պատուեաց զնա Աստուած՝ իջանելով 'ի վերայ յօշեալ անդամոցն, պըսակելով և վկայելով զանպարտաւոր մահ նորա ըզմարտիրոսական․ զոր տեսեալ սպանողացն սոսկացեալ ընկեցին 'ի ջրհոր մի ցամաք, մինչև եկին իւրքն և տարեալ թաղեցին յիւր սեպհական վանքն՝ Գանձասար կոչեցեալ, հայրենեօք տուն գերեզմանի իւրեանց, զնոյն ճառագայթս լուսոյ տեսանելով բերողացն։ 'Ի նոյն քանիս թուականին Հայոց՝ յեօթն հարիւր և տասն, սպանին 'ի դուռն Եղղան Հուլաւուին[1] զպարապեան Վրաց զԶաքարէ, զորդի Շահնշահին 'ի տիս երիտասարդութեան 'ի գեղ ծաղկի և յառաջադէմ յաջողման ժամանակի յերևանի և ծանօթ ամենեցուն՝ բարուրս ինչ եղեալ 'ի վերայ, և զայն ևս՝ թէ խափան,

[1] Յերկումն օր․ Եղղան հաւլաւին։

եղև կարգեալ հարկին յիւրում ժամու երթալոյ յարքունիս[1]. զորոյ մահն ողորմագին աշխարհանաւք սգացին ամենայն տունն Վրաց Հայաստանեօք մերձաւորաւք նոցա[2], քանի առաւել որք ծնանն զնա ծնողքն դառնակսկիծ և մարմնատանջ ողբովք։ Վասն որոյ 'ի նոյն աւուրս և 'ի նոյն սեւուգին սրտակտոր լեալ՝ մեռաւ հայրն՝ Շահնշահ կոչեցեալ, իբրու տէր մայրաքաղաքին Անւոյ, ուր երբեմն նստոց էր արքայի, որ աւագն էր Բագրատունեացն թագաւորաց և այլ աշխարհացն, զանուն տեառն Անւոյ Շահնշահ կոչելով՝ իբր թագաւորաց թագաւոր։ Թուիւքս խորհրդաւոր — եօթն հարիւր, որ է կատարեալ հանգիստ, և թուն՝ սուրբ իբրև զսուրբս Աստուծոյ հանգուցեն 'ի շաբաթն Աստուծոյ[3], որ առաջին կայ։ — Ասացեալս նշանաւոր է։ — Արդ յայսմ թուաբերութեան կատարեալ աղօթս ամենայն սրբոց[4]։

Յեօթն հարիւր մետասան թուին վախճանեցաւ տէր Ներսէս՝ կաթողիկոս Աղուանից, դառն ցաւով Ջրգողութեամբ՝ չգտեալ 'ի բժշկաց դեղ, բայց միայն զմինն Յիսուս Աստուած՝ դեղ կենաց անմահութեան. առ որ փոխեցաւ մեծ յուսով, խոստովանութեամբ և անդարձիւ, ըստ արժանւոյն կեցեալ զժամանակս իւր հեզութեամբ և ողորմածութեամբ։

Յեօթն հարիւր երկոտասան թուին հանգեաւ 'ի Քրիստոս անուանի ճգնաւորն և արժանաւորն պա-

[1] Մեր օր. Նէ խափանեալ յարգեալ հարկին խարամ ժամու երթալոյ յարքունիս։ — [2] Ո. օր. զոր մահն ողորմագին աշխարհանօք սգացին. — Մեր օր. ամենայն տունն Վրաց հաստատանաւք մերձաւորաւք նոցա։ — [3] Մեր օր. հանգուցանէն 'ի շաբաթն աստուծոյ։ — [4] Ցերկուսին օր. ասացեալս նշանաւոր որ է. — Մեր օր. արդ յայսմ թւաբանութեան կատարեալ յաղօթս ամենայն սրբոց։

տուելի ստանիճանաց և կոչմանց, զոր կոչեաց շնորհքն Աստուծոյ 'ի քահանայութիւն, 'ի վարդապետութիւն և յարքեպիսկոպոսութիւն տանն Գարդմանայ և այլոց բերդից և գաւառաց — այրն անուանի և յերեւանի յաշխարհի՝ տէր Յովհաննէս՝ տուեցին անըւանեալ, որ զերիս յիսնակսն անհաց և անջուր կատարէր և զուրբաթ և զչորեքշաբաթ, և յԵրուսաղէմ գնացեալ բոկոտիւք, և զաւուրս աղուհացիցն յոտըն կալով և անհաց մինչև 'ի յարութիւնն[1] ։ Եւ զարմացուցանէր զազգն Փռանկաց[2] որք անդ էին. զի ոչ միայն յոտն և անկերակուր, այլ և լռութեամբ կեայր. և խնդրէր յԱստուծոյ յայտնի հաւատ համբաւոյն որ գայր յազգս[3], «թէ յիջանել լուսոյն՝ Հայոց կանթեղըն է 'ի վառել, որպէս և ինքն պատմեաց. թէ ոչ ըղկուպայ սուրբ գերեզմանին պահէր[4], սիրէր զմեզ և փարէր զմեզ. և մեք խնդրեցաք 'ի նմանէ զհաւաստիս իրացն ։ Եւ նա ասաց «թէ դու գնա կանթեղս և բեր կախէ քոյին ձեռօքդ»․ և արարի այնպէս ։ Գնեցի երիս կանթեղս և կախեցի 'ի վերայ սուրբ գերեզմանին. յաջմէ՝ յանուն Փռանկաց և 'ի ձախմէ Յունացն և 'ի միջին զՀայոցն՝ որպէս ինքեանք սովոր էին. թերևս փակեցաք զդուռն և մատնեհարեցաք ։ Եւ ետ ցիս պահապանն զմատանին և զբանալին յաւուրն մեծի շաբաթուն յինն ժամուն. մինչ կայաք յաղօթս առ հասարակ ամենայն քաղաքն և աղօթականքն՝ եկեալ 'ի հեռաստանէ, ասէ ցիս պահապանն. «Կուպային տէր,

[1] Մեր օր. յորս չարչ և անհաց 'ի սուրբ յարութեան ։ — [2] Մեր օր. և զարմացայց զազգն Փռանկաց ։ — [3] Ո. օր. որ եղայր յազգս ։ — [4] Ո օր. որ կուպային սուրբ գերեզմանին պահէր ։

հրամայէ և բաց, զի իջաւ լոյսն»։ Նա չոգայ, բացի՝ 'ի վեր առեալ զմատանին. և ճշմարտապէս առանց կարծեաց միջին կանթեղն վառեալ բորբոքէր անսպառ-ռելի գեղով։ Նա այսու սքանչելեօք փառաւորեցաւ համբաւեցաւ այրն այն»։ Տէր Յոհաննէս ասաց ինք-նեան և զայս բան, «եթէ չոգայ 'ի սուրբ Բեթղեհեմ և տեսի անդ զսուրբ առաքելոց պատկերս՝ նկարեալ 'ի պարիսպ եկեղեցւոյն, և Տաճիկք 'ի պատճառս անար-գութեան փորեալ էին զաչսն, և տրտմեցայ ընդ իրսն. և աղօթեցի առ սուրբ առաքեալսն, աղաչելով յայտ-նել ինձ, եթէ հաճոյ է նոցա ամենայն ուրեք նկարել զնոսա։ Նա յորժամ դարձայ յԵրուսաղէմ, յայնմ գիշերի տեսի 'ի տեսլեան երկու արս փառաւորս, զի գային առ իս. և ելի ես ընդ առաջ նոցա և ասացի, «Թէ ո՞վ էք՝ սուրբքդ Աստուծոյ». և նոքա ասեն. «Պետ-րոս և Յովհաննէս, որ աղաչեցեր ցուցանել քեզ վասն ձևակերպելոյն զմեզ քրիստոնէից, որ բնաւ չէ մեզ հաճոյ. և ձանձրացեալ եմք և յայտնեմք ուրեք ուրեք՝ և չլսեն մեզ»։ Ասէր և արեղայն՝ իւր ուղեկից յԵրու-սաղէմ, «եթէ բոկ երեկ մինչև 'ի տեղն[1]. և ապա յա-ւուր միում կոչեաց զիս և ասաց. «տես զոտս իմ, զի ցաւէ և նեղէ զիս[2]»։ Նա 'ի տեսանելն իմ և յորմնել զուռէցն ատաղամբ՝ սրագոյն և ստուար կտորս փշոյ գր-տի[3], որ եղանէր Թարախով ոչ սակաւ. և զարմանք կա-լաւ զմեզ, զի ոչ յայտնեաց մեզ մինչ 'ի տեղին՝ առ ակին Աստուծոյ և սուրբ տեղեացն, առ ոչինչ համարելով

[1] Ռուսմ. օր. Եթէ բոկ էր եկն մինչև 'ի տեղն։ — [2] Ռ. օր. Զի ցաւէ և նեղէ զիս։ — [3] Ռ. օր. և յորմնել 'ի յատակին ատաղձամբ սրածոյն և ստուար կտորս փշոյ գրտի։

զկսկիծն[1]»: Այսպիսի զաւռ 'ի վեր և նեղ ճանապար-
հաւ[2] կացեալ մինչ 'ի խորին ծերութիւնն՝ հանգեաւ
'ի Քրիստոս 'ի հռչակաւոր վանսն «Նոր բերդին» Ա-
նապատ կոչեցեալ. Թաղեցաւ 'ի դուռն եկեղեցւոյն,
զոր իւր իսկ էր շինեալ, և այլ բազում շինուած և ար-
դիւնս վաստակեալ հրամանաւ, կամաւք և ձեռնտու-
ութեամբ Վասակայ Թագաւորազին Բագրատու-
նւոյ. որոյ յիշատակն աւրհնութեամբ 'ի կաթողի-
կէ եկեղեցւոջ կացցէ առաջի Աստուծոյ անշիջանելի
'ի հոտ անուշից յաւիտեանս:

Յեւթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ
Հուլաւու Ղանն 'ի ձեռն շնորհաւոր կոչեցեալ առն
փառաւորելոյ յայնմ ժամանակի յամենեցունց և ա-
ւելի յաշխարհակալացն՝ 'ի Բաթու կուսակալէն հիւ-
սիսոյ[3], ուր չոգաւն և պատուեցաւ նախ, այլ 'ի Հու-
լաւու Ղանէն, որ տարաւ իւրով ծախիւք և դրաւ-
տիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբարք
մեր՝ Սարգիս և Գրիգոր և աւագ երէցն Տփխեաց տէր-
տէրն: Եւ տեսաք զմեծն զայն 'ի մեծի աւուրս ամ-
սամտի և տարեմտի իւրեանց՝ յամսեանն յուլիս ըստ
հռովմայեցւոց և ըստ մեզ արաց: Եւ էր նոցա աւուրք
ուրախութեան իբր լուսին մի, և կոչէին զաւուրսն
զայնոսիկ խուռուլթայ՝ իբր խորհրդատեսս[4], յորս այլ
ղանքն՝ ազգայինք Չանկզ ղանի, առ մեծն եկեալ խոր-
հէին, զոր ինչ պատշաճ տեսանէին համդերձ ամենայն

[1] Մեր օր. առ ուխտն հաւաքեալ զկսկիծն: — [2] Ու. օր. այսպիսի զաւռ վեր ճանապարհաւ կեցեալ: — [3] Մեր օր. 'ի Բաթու կուսակալէն հիւսիսոյ: — [4] Մեր օր. իբր խորհրդատեսս:

աւագանւոյքն [1] իւրեանց, ամենեքեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր որիշ գունով փոփոխս: Ընդ լինէին և ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ և երևելի նուիրօք՝ թագաւորք և սուլտանք, որպէս և 'ի մեր ահսն [2] թագաւորն Հայոց Հեթում և թագաւորն Վրաց Դաւիթ և բրինձն Անտաքու և սուլտանք 'ի Պարսից կողմանց յոլովք: — Իսկ 'ի տեսանել զմեզ՝ ծունր կրկնել ոչ կամուն և ոչ չոքել ըստ սովորութեան իւրեանց, իբր թէ արքայունք [3] Աստուծոյ միայն երկրպագեն: Գինի ետուն օրհնել և 'ի մեր ձեռաց առնուլ: Իսկ խօսք զոր ինչ հրամայեաց՝ առաջին այս է. —

«Կոչել եմ զքեզ, որ տեսանես զիս և ճանաչես և և 'ի սրտաց աղօթես վասն իմ». և աւելորդ է թերևս զամենայն գրել: Շատ խօսեցաւ, և մեք տուաք պատասխանի: Իսկ նստուցին զմեզ, և գինի ետուն, և շարական պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ, և Վրացիքն զիւրեանց պաշտօնն, և Ասորիք և Յոյնք զիւրեանցն: Յայնժամ տեսին զեկեալն [4] յամենայն կողմանց՝ մինչ ասել Նշանին [5], «Թէ զքեզ միայն եմ կոչեցեալ, զի՞նչ է այս նշանս, որ ոչ յառաջ և ոչ յետ, այլ մի աւուրբ յամենայն կողմանց եկին [6] ընդ քեզ տեսանել և աւրհնել զիս»: Իսկ յառաջեաց հրամայեաց ինքն. «Թուի թէ նշան է, որ Աստուծոյ սիրան լաւ է ինձ»: — Ասացաք. «զմեզ այլ կալաւ զարմանք,

[1] Մեր օր. զոր ինչ պարգևացն փեսանէին ամենայն առաքեալին իւրեանց: — [2] Մեր օր. որպէս և մեր գեան Թագաւորն Հայոց Հեթում: — [3] Ու. օր. և ոչ չոքել ըստ սովորութեան իւրեանց. — Մեր օր. էիր թէ արքայանէին աստուծոյ միայն երկրպագեին: — [4] Մեր օր. զէ զայն տեսին զիջեալն: — [5] Ցերկաւին օր. մինչ ասել այլ զանին: — [6] Ցերկնաւին օր. որ ոչ յառաջ և ոչ յետ, և մի աստղն յամենայն կողմանց եկին:

և պատճառք զոր դուք հրամայեցիք»։ —Ասա հրամայեաց, «թէ ծածուկ բան ունիմ առ քեզ»։

Ու յաւուր միում արար անապատ յոյժ. —և հեոյ կացուցեալ զամենայն բանակն՝ և երկու տրամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար[1]՝ յիւր ծննդենէ հետէ և 'ի մօրէ[2], որ քրիստոնեայ էր՝ ասէ. «Ու թէպէտ դայեակ սնուցանէ զտղայն, իբր 'ի հասակ գայ՝ զիւր մայրն սիրէ. չենք օտար 'ի սիրոյ քրիստոնէից—զոր ինչ ունիս ասելոյ՝ ասա»։ և բռնեալ էր զեմ ձեռքըս։ Ու մեք ասացաք զինչ Աստուած երետ ասել բան, «թէ որչափ 'ի վեր ես դու քան զայլ մարդիկ՝ մօտ ես յԱստուած։ Աստուծոյ աթոռն արդար դատաստանաւ է հաստատ։ Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի և փորձեալ։ Մինչ 'ի քեզ աշխարհաւեր են լեալ, և աղքատաց՝ անողորմ ծանր շալակ են դրեալ. Նոքա հոգոց են հանեալ և լացեալ առաջի Աստուծոյ[3]. —Աստուած առեալ է զիշխանութիւնն և յայլ ազգ տուեալ։ Թէ դուք աշխարհաշէն լինիք և աղքատաց ողորմած՝ 'ի ձեզանէ չառնու Աստուած զոր տուեալ է, թողու առ ձեզ. և զոր տալ կամի՝ զայն այլ տայ։ 'Ի քո դրան[4] հանց մարդ կայ, որ յԱստուծոյ երկնչի և զձեզ սիրէ, որ զլալով եկած տառապեալն[5], որ աղերս չունի և կաշառք՝ ուրախ 'ի տուն յուղարկէ և քեզ յիշեցնէ։ Ու զաշխարհս տուր հանց մարդոյ, որ յստակ տեսանէ՝ կու-

[1] Մեր օր. և հետոյ կացուցեալ զամենայն բանակն՝ տրամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար։ — [2] Մեր օր. յիւր ծննդենէ հետէ և մօրէ։ — [3] Ու. օր. նոքա հոգւոց են հանել և լացել առաջի աստուծոյ։ — [4] Ու. օր. 'ի քո դրանդ հանց մարդ կայ։ — [5] Մեր օր. որ լալով եկեալ տառապեալն։

բանայ ոչ՝ կաշառօք, և քեզ տաէ զերան»։ — Նոյն յայս կարգիս շատ խօսեցաք։

Հրամայեաց թէ, «'ի սրտումս դրի զքո խօսեցեալքդ[1]. — ո՞նց է որ զամէն զայն ասացեր, որ իմ սիրտս կայր, որ ինձ դուր թուաց[2]։ — Աստուած խօսեցեա՞լ է ընդ քեզ[3], երևեա՞լ է քեզ»։

Ասացաք թէ, «չէ՝ մենք մեղաւոր մարդ ենք. այլ զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացեալ ենք[4], և սիրտք թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ են»։

— «Աստուած յայտնեա՞լ է[5] քեզ առանց գրոց»։ —

Այլ ասացաք թէ — «առաջի Աստուծոյ խօսք մի եմ լսել[6], որ Աստուած լսէ և այլ դու, որ սուտ չկայ 'ի նմա»։

Հրամայեաց թէ — «ասա»։

Ասացի թէ — «զինչ քրիստոնեայ կայ և արքայունք[7] ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրան հետ քեզ լաւ են[8], և քեզ օգուտ են առնում[9]»։

Հրամայեաց թէ — «հաւատալ եմ որ հանց է, այլ յԱստուծոյ ճանապարհն չեն արքայունքն՝ ինձ ինչ օգուտ առնեն. և թէ առնեն՝ Աստուած երբ լսէ, մէջում արքայութիւնն[10] զաստուած յերկնից յերկիրս բերէ չբերէ՝ ասացէք, որ յաստուծոյ ճանապարհն կենան և օգուտ առնեն։ Մեր եղբարքն հետ մեզ վասն այն

[1] Մեր օր. 'ի սրտումս դրիր զքո խօսքդ։ — [2] Մեր օր. որ իմ սիրտս կայր, որ դիւր թուաց։ — [3] Մեր օր. Աստուած խօսեցե՞լ է քեզ։ — [4] Մեր օր. կարդացել ենք։ — [5] Մեր օր. Աստուած յայտնել է քեզ առանց գրոց։ — [6] Ռ. օր. առաջին Աստուծոյ խօսք մի իմ սալել։ — [7] Մեր օր. փայփայանք։ — [8] Մեր օր. ամենայն սիրտ քեզ լաւ են։ — [9] Ռ. օր. և քեզ օգնէ են յառնում։ — [10] Մեր օր. միջում արքայութիւնն։

են 'ի կռուիլ[1], որ մենք զքրիստոնեայ սիրենք[2] և քրիստոնէութիւն կայ 'ի մեր տանս. նոքա տաճկասէր են և տաճկութիւն կայ 'ի նոցա տանն»: — Ապա ասէ ցմեզ. — «ոչխարենի էր ես զգեցեալ և ոչ ոսկի»:

Եւ իմ ասացեալ թէ — «մեք մեծ մարդ և աստիճանի տէր չենք, լուկ աղքատ միայն եմք[3]»:

Եւ հրամայեաց թէ — «մեծացուցանեմ զքեզ ոսկի զգեստիւ, և շատ ոսկի տամ»:

Եւ մեք ասեմք — «ոսկին և հողն մեզ մի են[4]. մեք այլ մեծ ուզեմք[5], որ վայել է քո մեծութեանդ՝ — ողորմութիւն 'ի վերայ աշխարհի»:

Եւ հրամայեաց թէ — «մեջումս քթէթ կարեմ քեզ՝ խիստ գէշ և խիստ փոքրիկ լուկ այնչափ, որ խուանկ դնես եկեղեցոյն. թէ չէ եկիր՝ ի՞նչ ասեն, թէ Արղանն ո՞նց տեսաւ զքեզ[6]: — Եւ զայդ՝ զոր ասացեր, առնեմ, և մարդիկք յղարկեմ, որ տեսանեն զաշխարհս»:

Իսկ երբ հրամանն ուզեցաք գնալոյ՝ այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ, և ունէր 'ի ձեռին բալեշ մի և երկու հանդերձ էր կարել տուել[7]: Յիշեցուցաք թէ — «Արղան՝ այդ քո դրանդ հատանի և հանդերձդ մաշի, մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգևք»:

Եւ հրամայեաց թէ — «առաջի օրն զքո խօսքդ լսեցի. — առլեխ եմ գրել տուել՝ կարդալ տուր, և զինչ քո սրտիդ պիտի աւելի՝ զայն այլ գրել տուր:

[1] Ուսմ. օր. վասն այն են խօսուիլ: — [2] Ու. օր. որ մենք քրիստոնէից ենք սիրենք: — [3] Մեր օր. լոկ աղքատաց միայն եմք: — [4] Մեր օր. ոսկի մեզ և հողն մի է: — [5] Մեր օր. մեք այլ մեծ ուզենք: — [6] Մեր օր. մեջումս քթէթ կարեմ խիստ գէշ և խիստ փոքր՝ լոկ այնչափ, որ խուանկ գնես եկեղեցոյն, թէ չէ եկիր ինչ ասեն թէ Արղանն ո՞նց տեսաւ: — [7] Մեր օր. և երկու հանդերձ էր կարել տուել:

Եւ 'ի սախալթու և 'ի շահաբատին [1] եմ յանձնել զեր-
կիրդ և զքեզ — զոր ինչ ասես [2]՝ առնեն»:

Եւ մեք շնորհակալ եղաք և եղաք [3]: — Թէպէտ ա-
ւելորդ թուիցի՝ գրելով զայս. այլ վասն բարեսէր [4] և
քաղցրաբարոյ մերոյ մեծի Խուլաւուին յիշատակի
գրեցաք յօգուտ կամ յօրինակ այլոց որ գալոց են [5] յետ
մեր, ո՞ գիտէ: — Վասնզի 'ի թուականութեան Հա-
յոց 'ի մտանել եօթն հարիւր չորեքտասանին՝ եհաս
մեծին այնորիկ մեծազոյն հրաւիրակ, և եհար զաւա-
զան զօրեղ զքաջն զայն յաղթազգեաց Խուլաւուն,
և ժամանեաց նմա վճիռ նախահօրն: — Վասնզի որդի
էր և նա Ադամայ, ու էարբ 'ի բաժակէն, յորմէ ա-
մենեքեան ճաշակեցին և ճաշակեն: Թէպէտ դառն էր
նմա՝ էարբ զլեղին մահու՝ ոչ ուրախութեամբ որպէս
Տէրն և յուսացեալքն 'ի նա: Զի խաբէին զնա աս-
տեղագէտք և քուրմք պատկերաց ոմանց՝ Շակմոնիա
կոչեցեալ, որ է ասեն ասուած երեք հազար և քա-
ռասուն ամաց [6], կալոց է դեռ այլ ևս երեսուն և եօ-
թըն թումանս [7], — որ է թումանն տասն հազար —
և ապա հանէ զնա՝ ասեն, միւս Մանդրին անուն [8]:
Տոյինք կոչէին զքուրմն զայնոսիկ, որոց հաւատայր.
և նոցա հրամանաւ եղանէր 'ի պատերազմ կամ չեղա-
նէր. որք ասէին [9] թէ յերկար մնալոց ես 'ի մարմնդ
յայդ, և յորժամ յերկար ծերանաս՝ այլ նոր մարմին

[1] Ուռմ. օր. և 'ի սախալմաս և 'ի շամբանդրին եմ յանձնել: — [2] Մեր օր. որ ինչ ասես: — [3] Մեր օր. և մեք շնորհակալ եմք և եղաք: — [4] Մեր օր. այլ բարեսէր և քաղցրաբարոյ: — [5] Մեր օր. յօգուտ կամ յօրինակ այլոց են յետ մեր: — [6] Մեր օր. երեք հազար և քառասուն համաց կալոց է: — [7] Մեր օր. երեսուն և հինգ թումանս: — [8] Մեր օր. միւս և Մանդրին անուն: [9] Մեր օր. որք ասեն թէ:

զգենուս։ Շինել ետուն նմա մեհեան պատկերացն այնոցիկ. և երթայր անդ յաղօթս՝ և դիւթէին նմա զոր ինչ կամէին։

Եւ մինչ դեռ սպասէաք մեք այլ ժամանակի և երկրորդ տեսութեան և ծանօթութեան աւելագունի առել ինչ նմա պարժանն. այլ և մնայաք 'ի բարեսէր բարուցն և քրիստոնէասէր[1] ցուցանել նմա Աստուծոյ[2] նշան ինչ ձեռնտու քրիստոնէից, առել ինչ նմա վստահութեամբ, — քանզի վարժեալ էր 'ի բանս նոցա, — և (յորժամ) հիւանդացեալ[3]՝ Թաղեայ պատկերաց խօսել տային և ձիոց. և յղոմ էր 'ի նոսա արուեստ խաբէութեան և հմայութեան։ — Եւ էին պարկեշտ 'ի կերակուր և 'ի հանդերձ, և 'ի կուսութիւն և 'ի չափաւոր ամուսնութիւն և 'ի խառնակութիւն[4]։ Քըսան ամաց կին առնել առեն մինչ 'ի յերեսուն ամն[5]։ Շաբաթն երեք հետ լուանէին[6]. և անտի մինչև 'ի քառասուն ամն յամնեանն երեք. և անտի մինչև 'ի յիսուն՝ տարին երեք, և ընդ յիսուն անցեալ[7]՝ բնաւ ասեն ոչ մերձենալ — ուստի մանաւանդ կարէին խաբել։

Եւ յայսոսիկ գայր հասանէր օրհասն, և կոխէր ընդ բարձր զայն բլուր լայն ոտամբն մահ՝ և փլուցանէր հաւասարէր իւրոցն նախնեաց[8]։ «Քանզի լեառն, որ փլանելոց է՝ փլցի», ասէ Գիր։ Եւ լինէր հաւասա-

[1] Մեր օր. և քրիստոնէասէր։ — [2] Ու. օր. ցուցանել նմա նշան ինչ յԱստուածոյ քրիստոնէից. — Մեր օր. ցուցանել նմա յաստուածոյ նշան ինչ յԱստուածոյ քրիստոնէից։ — [3] Ու. օր. և հիւանդացեալ քանզի Թաղեալ պատկերաց խօսել տային։ — [4] Մեր օր. 'ի չափաւոր ամուսնութեան և յխառնակութեան։ — [5] Մեր օր. մինչև յերեսուն ամն։ — [6] Մեր օր. շաբաթն երեք հետ լուանային։ — [7] Ու. օր. և ընդ այն անցեալ։ — [8] Մեր օր. փլուցանէր հաւասարել իւրոցն նախնեացն։

րիմ քան մարգարէին՝ ամենայն փառք մարդոյ լինել իբրև զծաղիկ խոտոյ: Այլ հաւատարիմ է Տէր և ար-դար [1] հատուցանել նմա զմասն բարւոյն, զոր օրինօք բնութեան ստացեալ ունէր և զԻւրեանց հայրենիս պահելով. զի ասախն՝ որպէս ասէին ինքեանք կոչելով զեդեալ սահմանսն 'ի Չանկզ զանէն — սուտ չասել, չգողանալ, յայլոյ կին չխառնակիլ [2], սիրել զիրեարս հաւասար անձին, յիշոցք չունել և չգիտել բնաւ, ըղ-կամաւ հնազանդեալսն ապրեցուցանել, զերկիր և ըղ-քաղաք և զանուանեալ տունս աստուծոյ և զկոչեցեալ նորա ծառայս զհարդ և իցեն՝ ազատ թողուլ 'ի հար-կաց, և դնել պատիւ, — զոր և նա հրամայէր պահել և պահէր:

Այլ և յիշեմք զոր ասացն թէ — «մեք որ պատ-ուիրեմք ազօթել վասն մեր՝ ոչ թէ 'ի մահուանէ զեր-ծանել, զայն չգիտենք — այլ խնդրեք յաստուծոյ, որ 'ի մեր թշնամեաց ձեռացն չմեռանիմք»: — Իւէ կա-տարեցաւ՝ զայն Աստուած գիտէ. զի համբաւեցին [3] նախ՝ թէ դեղով և հնարիւք սպանին, և յետոյ ծած-կեցին զըրոյցն: Սակայն Տօղուզ խաթունն կոչեցեալ՝ նախ քան զհամբաւել մահուն, առաքեաց առ մեզ գաղտ, «թէ աստուած սիրեաց զԻշլ զանն [4] և տարաւ աստի, և զինչ որ աստ սիրէր և զայս աշխարհս տուեալ էր նմա՝ նոյնպէս և արդ զայն աշխարհն երետ նմա — պատարագ լինի՞, թէ ոչ»: — Եւ ասացաք թէ — «չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն և հար-

[1] Մեր օր. այլ հաստատարիմ է և արդար հատուցանել: — [2] Մեր օր. յայլոց կին չխառնակիլ: — [3] Ի օր. զոր համբաւեցին նախ: — [4] Մեր օր. աստեղաց առ մեզ, թէ ասացուած սիրեաց. — Ի. օր. զայլ զանն և տարաւ:

կաց թեթևութիւն առնէք»․ զի Ասորիքն ասացեալ էին, թէ պատեհ է։

Հարցեալ և վասն Ապաղանին, որ աւագ որդին էր Հուլաւուին, «թէ պարտ է զնա դնել, զի ան֊դարձ նմա արար»։ Իսկ մեք պատուիրեցաք որ 'ի Գր֊րոց է — «զաւակն դնել, և անդարձն անկրկնելի կոչի ստուգաբանութեամբ»․ որպէս և եղեն իսկ։ Իսկ իւր֊եանց ազգայինն, որ և նա կոչէր Ալղան Տակութար[1], երթեալ նստուցանէր զԱպաղայն կոչեցեալ 'ի թախտն և 'ի գահոյս հօրն․ — և հաւանեցան զօրքն ամենայն։

Սակայն և մեղքն մեր անչափ էին — չեղև սուգն մեր չափով․ զի յերից ամաց[2] 'ի նոյն թուին փոխեցաւ 'ի Քրիստոս քրիստոսասէր թագուհին՝ Տօղուզ խա֊թունն[3], և սրտակտուր միջաբեկ եղեն ազգք քրիս֊տոնէից բազմապատիկ սգով և տրտմութեամբ։ Զի նորա կենօքն[4] վաղվաղակի ողջանալ սկսաւ խոցն Իլ ղանին՝ ակն ունելով առաւել պայծառանալ քրիստո֊նէութեան․ որքան և էր[5]՝ պատճառն նա իսկ էր՝ ըստ մեր կարծելոյն։ Այլ քանզի Աստուած իսկ է ամե֊նայն բարեաց պատճառ՝ զայսն չէ պարտ հատանել մեզ։ Քանզի կացոյց նա 'ի տեղի իւր միւս ևս հաւա֊տարմացեալ ազգական իւր՝ կին բարեպաշտօն, կոչե֊ցեալ Թուխթան[6]։ — Իսկ բերեալ եղև 'ի Յունաց կին Ապաղային՝ Դեսպինա անուն, — դուստր թագաւո֊րին, զոր Վատածն ասէին — և պատուէր, թէ կրն֊

[1] Ուռմ. օր. որ և նա կոչէր այլղան փախաթար։ — [2] Մեր օր. զի յերից ամաց։ — [3] Մեր օր. Տօղուզ խաթուն։ — [4] Ցերկուսին օր. զի նմա չէնօքն վաղվաղակի ողջանալ սկսաւ խոցն։ — [5] Ցերկուսին օր. զորօքն և էր։ — [6] Մեր օր. չէն բարեպաշտօն կոչեցեալ Թոախթանն։

քի Եպաղայն և ապա առնու։ Նա և համբաւն նոյնպէս, եթէ մկրտեցաւ և առ զնա 'ի փառս Քրիստոսի։

Յաւուրս յայս 'ի մեղաց իմոց անկաւ գրքոյկս 'ի ձեռս հարամեաց տղայոց մեր, և յողորմութենէն Յիսուսի ապրեցան տղայքն առժամն. և յետ ամի և կիսոյ գիրքս 'ի Տփխիս 'ի վաճառ բերեալ՝ և գնեալ 'ի տանէ եղբօր մերոյ միոյ Մելէր կոչեցելոյ։ Վասն այսր ողորմութեան՝ Տեառն մերոյ փառք 'ի սուրբս ամենայն և յարարածս, և գնողին զսա գթութիւն 'ի Քրիստոսէ։

Իսկ 'ի մտանել թուին եօթն հարիւր հնգետասան՝ կողմնակալն Հիւսիսի՝ կոչեցեալն Բարքայ, որ ունէր զտեղի Բաթուին և զՄարդախին և հաւանեալ էր օրինացն Տաճկաց, լուեալ զմահուանէ մեծի Հուլաւուին՝ գայ բազմութեամբ առ Կուր գետով և ցուցանէ զինքն յայսմ կողմանէ կացեալ զօրացն Եպաղային և եղբօր իւրոյ Խամուտին՝ իբր թէ կենդանի է յետ մահու հօր իւրոյ[1]։ Նա գայ կոխէ զնոսա և անցանէ գնայ անհոգութեամբ մինչև 'ի հաճն[2] աղօթել անդ յուրախութիւն ամենայն Տաճկաց. յորմէ զարհուրեալ յայսմ կողմանէ կացելոցն՝ ցանկեն զերկայնութիւն գետոյն աստի, զոր շիբարն կոչէին՝ և զգուշացան ամենայն պատրաստութեամբ զաւուրս ձմերայնոյն։ Իսկ Բարքայն վրիպեալ 'ի յուսոյն՝ դառնայ 'ի տեղիս իւր և յաւուրս ամարայնոյն վճարէ ըզկեանս, զոր ասեն լինել բարուք՝ ոչ խռովարար և ատեցող արեանհեղութեան։ — 'Ի նոյն թուին մերձ յաշնան եղանակն բացաւ մեզ աման դառն քացախոյն և մրուր բարկութեան Աստուծոյ հայկազարմ

[1] Մեր օր. յետ մահու հօր նոցա։ — [2] Մեր օր. մինչև 'ի հաճն։

ազգիս. քանզի սուլտանն Մուրայ՝ Փնտխտար [1] անուն, խնդրէր զքերդմն, զոր Թաթարին ուժովն առեալ էր Հայոց թագաւորն Հեթում: Նա 'ի չտալն աւելի վասն Թաթարին բարկանայր յոյժ և զօրս գումարէր բազում յոյժ, և առաքէ 'ի ձեռն զօրագլխի իւրում Մսլմէթ անուն [2], յերկիրն Կիլիկեցւոց. որ և յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՍիս մայրաքաղաքաց զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ 'ի նմա [3], և գտանէ զտունն գեռնափոր գանձուցն և առնու յոյժ բազում, զոր 'ի միում ամանի լինել ասեն վաթսուն հազար կարմիր [4]: Նա գնայ աւերմամբ մինչև յԱտանայ. և ապա լսէ համբաւ յերկրէ երկիւղի [5], և դառնայ աւարաւ և գերութեամբ քառասուն հազարաւ՝ բաց 'ի կոտորելոցն. որ գլուխ և խոց անողջանալի կոտորելոցն Թորոս արքայորդին՝ գեղեցիկ ծաղիկ 'ի մատաղ հասակի [6] մերձ 'ի փթթիթս մօրուաց, վկայեալ յամենայն բերանոյ անպակաս 'ի բովանդակ բարւոյ, և կուսութեամբ շտեմարանեալ 'ի ծրարս շնորհացն Աստուծոյ. որ յօժարութեամբ ևս դիմեալ 'ի պսակն արեան Քրիստոսի [7]: Զի հարցեալ զմէն՝ ոչ ետ զանունն հօրըն. զի կենօքն գերեալ՝ մի լեցի բեռն հօրն և աշխարհին ընդ անդրանիկ եղբօրն՝ Լևոնի, պսակելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեան առ կենօք հօրն:

[1] Մեր օր. սուլթանն Մուրադ Խնդխարայ անուան: — [2] Ռ. օր. 'ի յետն զօրավիլնի խուրում Սմլմէթ անուն: — [3] Մեր օր. այրէ զնա եկեղեցականօքն որ 'ի նմա: — [4] Ցերկոսէն օր. զոր 'ի միում ամանի լինել սուին վաթսուն հազար կարմիր: — [5] Մեր օր. և ապա լսէ համբաւ երկիւղի և դառնայ: — [6] Ռ. օր. և խոց անողջանալի կոտորեցն Թորոս արքայորդին գեղեցիկ 'ի մատաղ հասակի: — [7] Ռ. օր. և դիմեալ 'ի պսակն արեան, զի հարցեալ զմէ:

Քանզի նա եղև գլուխ գերելոյն մեր և հուր աղեկէզ և լերդաչարչար[1] և սրտակտուր աշխարհիս մեր և ազգիս, որք կամք շնչարգել և յերերման՝ (մինչ) հասանէ ձեռն վերին։ Որ եհարն ցասմամբ՝ նոյն բժշկէ ողորմութեամբ՝ տածելով զմեծաբաց խոցսն[2], առնելով զերեդարձ զոր տարան ընդ այլսն՝ հինգ և տասն օր յամելով յաշխարհն և լնլով աղետիւք զնոսա, և զմեզ խոցոտիչ համբաւովն։

Իսկ 'ի վերանալ թուին մերոյ եօթն հարիւր վեշտասան 'ի կատարման քառասնորդաց աղուհացիցն[3] 'ի լնուլ վեցերորդ շաբաթուն 'ի յարութեան աւուր Պազարու՝ սահմի ամսեանն 'ի քսան և վեց, փոխի յաշխարհէ զգալւոյս յիմանալին տէր Կոստանդին պատրիարգն Հայոց՝ ծերացեալ և լի աւուրբք ըստ մարմնոյ և առաւել ևս ըստ հոգւոյ և ըստ կամացն Աստուծոյ. յամենայն ազգաց և 'ի լեզուաց վկայեալ, կուսութեամբ անփուտ մնացեալ յիմանալի և զգալի մարդն և 'ի զգայութիւն և 'ի զգայարանս և 'ի բոլոր անդամս մարմնոյ. կրակից և վշտակից և սգակից[4] ազգիս եղեալ 'ի մեղսաբեր[5] և 'ի ցասմնահար դարուս և 'ի ժամանակս ցաւալից և կսկծահար. զբոլորն յինքըն տարեալ և ըստ կարի թեթևացուցեալ[6], սիրտ և բան և գանձ ծախելով առատաբար և անխնայ։ Վասըն որոյ և յարմարի նմա ասել Տեառն իւրոյ. «Ընցաք մեք ընդ հուր և ընդ ջուր զանազան փորձանաց 'ի

1 Ուսմ. օր. քանզի նա է գլուխ գերելոյն մեր. — Մեր օր. և հուր աղեկէզ և լերդաչարչար։ — 2 Մեր օր. տածելով զմեծաբաց խոցսն։ — 3 Մեր օր. կատարման քառասնորդաց աղուհացիցն։ — 4 Ու. օր. կրակից և վշտակից և սգակից։ — 5 Մեր օր. 'ի մեղսաբեր և 'ի ցասմնահար դարուս։ — 6 Ու. օր. և ըստ կարի թեթևացուցեալ։

յայրիչ և՛ ի խեղդիչ որոգայթից»․ որ ճաշակեաց իսկ և 'ի թանձրացեալ և զմռսեալ վերջնոյ լեղւոյս մերձ 'ի կատար կենացն[1] տեառնաբար՝ զդղրդումն թագաւորութեան մերոյ, զսուր և զգերութիւն բռնական ծննդեան աշխարհին[2], մտեալ 'ի փորձ հնոցի[3] գեհենահոտ հրոյն բորբոքման՝ ձեռնասուն արքայորդեացն կորստեան, ոյք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա՝ որպէս և արարին տագնապել ասիպման շնչոյն[4], բորբոքելով զծարաւ լուծման յոգնաթախիծ կենցաղոյս.— զոր տեսեալ Յիսուսին իւրոյ և Աստուծոյ՝ ընդ Ղազարու հանէ արտաքոյ այսքան դժնդակ կրրիցս յանպատումն *:

[1] Ռուս. օր. մերձ 'ի կատարէ կենացն: — [2] Մեր օր. բռնական ծննդեան և անձնդեան աշխարհին: — [3] Մեր օր. մտեալ 'ի դարձ հնոցի: — [4] Ռ. օր. որք մանաւանդ մերձ բերին զօրհասն՝ որպէս և արարին տագնապել ասիպման շնչոյն. — Մեր օր. որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա և արարին տագնապել ասիպմանն շնչոյն:

* Ոչ աւելորդ դատիմ յառաջ բերել աստանօր զերրորդ պատճէն վերջին հատուածոյս, զոր արդոյ բարեկամն մեր՝ պ. Յ. Միրակով, ըստ խնդրոյ մերոյ ընդօրինակեալ 'ի գրչագիր օրինակէ գրատան Էջմիածնի՝ առաքեաց առ մեզ: Եւ զայս ունի կերպարան յիշեալդ հատուած Էջմիածնի, որոյ Թուականն մեզ անյայտ.— ,,Իսկ 'ի վերանալ Թուոյն մերոյ ՉԺԶ 'ի կատարման քառասնորդաց աղուհացիցն՝ 'ի լինել վեցերորդ շաբաթուն 'ի յարութեան աւուր Ղազարու առհմի ամսեան ԻԷ՝ փոխէ յաշխարհէ զգալւոյ յիմանալին տէր Կոստանդին պատրիարգն Հայոց՝ ծերացեալ և լի աւուրբք ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ և ըստ կամացն Աստուծոյ՝ յորովայնէ ընտրեալ և ընդ ամենայն աստիճանս յառաջանալով անցեալ ամենեքումբք և հաճոյացեալ յամենայն ազգաց և 'ի լեզուաց վկայեալ կուսութեամբն, անփոյթ մնացեալ յիմանալի և զգալի մարգն, ըղսուր և զգերութիւն իւրոյ ծննդեան և անձնդեան ձեռնասուն արքայորդւոյն կորստեան, ոյք մանաւանդ մերձ բերեն զօրհաս նորա և արարին տագնապիլ ասիպմամբ շնչոյն բորբոքելով զծարաւ լուծման յոգնաթախիծ կենցաղոյս. զոր տեսեալ Յիսուսին իւրոյ և Աստուծոյ՝ ընդ Ղազարու հանէ արտաքս յայսքան դժնդակ կրիցս յանպատումն'':

ՎՐԻՊԱԿՔ

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
11	14	զի պահեսցեն 'ի պնակիտան	զի պահեսցին 'ի պնակիտան
17	15	սարաղօք	սարաղօք
20	5	և յայլ ամենայն լեզուաց	և այլ ամենայն լեզուաց
79	13	սեպուհն Սիւնեաց Յազգ	սեպուհն Սիւնեաց Յազգ
81	14	'ի գաւառէ Խլաւախայ	'ի գաւառէ 'ի Ջաւախաց որ
88	10	որ կոչի Կորել	որ կոչի Կորեշ
121	8	ուէր Թէոդոս ամս մետասան	ուէր Թէոդորոս ամս մետասան
122	19	'ի կողմանս Տահրաց	ի կողմանս Տաշրաց
133	16	առնու փոխան ... և զԿիզու	առն փոխանն .. և զԳիզու
»	20	և զդքսութիւն Միջագետացն	ատամնօր յերկ. օր. մեր պակասի բառ ինչ. բառ մեզ՝ պարտ է ընթեռնուլ ,,և ընդունի զդքսութիւն Միջագետաց'':
141	15	և Կուրտ ոմն	և կուրտ ոմն
142	4	որոց Թոռունք	որոյ Թոռունք
151	12	'ի Կոկաց գաւառին	'ի Մոկաց գաւառին
169	8	Եւ էր 'ի յՈւձնայ 'ի հօր վանիցն Գեորգա անուն 'ի լինել գործոյն ։	բառ մեզ՝ ընթեռնուլ պարտ է զայդ բան՝ աղճատեալ 'ի գրչաց , այսպէս . ,,Եւ էր 'ի յՈւձնայ հայր վանիցն Գեորգ անուն 'ի լինել գործոյն
»	11—12	...կատարեաց պատրիարգն Ներսէս զվարս իւր՝ եօթն ամս պաշտեալ զպատիւն եօթն եպիսկոպոս ձրի...	...կատարեաց պատրիարգն Ներսէս զվարս իւր՝ եօթն ամ պաշտեալ զպատիւն ։ Եօթն եպիսկոպոս ձրի...
171	10	Խղլամնայ	Խղլաղլմնայ
181	3	և զանայն և զառատն	և զանայն և առատն
186	25	զորոյ երիվարին ածեալ զՋիլն իշխան ոմն	զորոյ երիվարին ածեալ զՋիլն իշխան ոմն
204	12	'ի ձեռն չնորհաւոր կոչեցեալ առն	'ի ձեռն Շնորհաւոր կոչեցեալ առն
»	15	այլ 'ի Հուլաւու Էլղամնէն	այլ և 'ի Հուլաւու Էլղամնէն
210	15—16	Քսան ամաց կին առնել աանն մինչ 'ի յերեսուն ամն ։ Շաբաթն երեք հետ խառնէին ։	Քսան ամաց կին առնել աանն , մինչ 'ի յերեսուն ամն շաբաթն երեք հետ խառնէին .

M. Esares

[illegible]

1869

Aslmoli

Mason de son

M. A. P.

UNIVERSITY OF MICHIGAN
3 9015 041